

# ԷՋՄԻԱԾԻՆ



Դ  
1999



ՀԵՆ 196



ԾԵՍԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ  
ԱՄՍԱԳԻՐ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԱԹՈՒՈՅ  
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Երբեմն  
1999



### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գարեգին Ա Անենայն Հայոց Կաթողիկոսի Չարկական պարզամը.  
 Յարութեան իմաստը այսօրուան մեր կեանքին մէջ..... 3  
 Հայրապետական խօսք Ապրիլեան եղեռնի ոգնկոյնան առիթով ..... 8

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Փրկչի հրաշափառ եւ Սուրբ Հարության րոնի առթիվ Անենայն Հայոց  
 Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետի եւ քույր Եկեղեցիների.  
 Հայ Եկեղեցու նվիրապետական Արոճների. պետական պաշտոնական  
 անչանց միջիւ փոխանակված ողջույնի ու բարեմաղթանքների  
 նամակներն ու հեռագրերը..... 10  
 Ավագ Շարաքը Մայր Արոճում..... 13  
 Անենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի շնորհավորական ուղերջը  
 Ռորերը Զոյարչանին..... 19  
 ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ - «Նորոգող հնութեանց.  
 նորոգեա՛ եւ գիւ. նորոգ գարդարեա՛» (խոսք Նորավանքի օման առիթով)..... 20  
 Հայրապետական խօսք զնահապետանքի..... 22  
 Հայրապետական պարզամ Ամերիկահայոց Արևիլեան թնի  
 հոգնտրականաց համագումարին..... 23  
 Հայրապետական պարզամ Ամերիկահայոց Արևիլեան թնի  
 րարեկան պարզամավորական ժողովին ..... 24  
 ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը  
 Տիգրան եւ Դիանա Համեթյաններին «Ա. Գրիգոր Լուսավորիչ»  
 շքանշանով պարգնատրելու մասին..... 25  
 ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Բանապետնդոնիի  
 Միվա Կապուրիկյանին «Ա. Մահակ-Ա. Մնարոպ» շքանշանով  
 պարգնատրելու մասին..... 27  
 ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը  
 Արիին Փնիվանյանին «Ա. Մահակ-Ա. Մնարոպ» շքանշանով  
 պարգնատրելու մասին ..... 28  
 ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը  
 րիար Վայեն Ավիտիայանին «Ա. Ներսես Ընորհալի» շքանշանով  
 պարգնատրելու մասին..... 29  
 ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը  
 րիար Մորիս Պննեթյանին «Ա. Ներսես Ընորհալի» շքանշանով  
 պարգնատրելու մասին..... 30  
 ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը  
 րիկին Ռոգ Հակոբյան Բննրլորին «Ա. Ներսես Ընորհալի»  
 շքանշանով պարգնատրելու մասին..... 31  
 Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս

Ներսիսյանի խոսքը Միլվա Կապուրիկյանի ծննդյան 80-ամյակի առիթով  
Ազգային օպերայի եւ քալիդի քալորոնի դահլիճում կազմակերպված  
հանդիսության ժամանակ..... 32

ԱՐԹՈՒՐ ՄԱՐԿԱՎԱԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ - Մեծ եղեռնի 84-րդ տարեկիցը..... 34

ԱՐԹՈՒՐ ՄԱՐԿԱՎԱԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ - Կաթողիկոսական Ընդհանուր  
Փոխանորդ Տ. Գարեգին Կարբեպետ. Ներսիսյանը մասնակցեց  
Հ. Մորգենբաուի գերիզմանահողի տեղափոխության արարողությանը..... 35

Ամհնայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսին շնորհիվեց Վանաչորի  
Վազգին Առաջինի անվան կրթահամալիրի մեղալը..... 36

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա Վեհափառ Հայրապետի այցը  
Մայր Արոտ Ս. Էջմիածին..... 37

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամհնայն Հայոց Կաթողիկոսի գահակալության  
4-րդ տարեդարձը..... 38

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - Նորավանքի օծումը..... 47

**ԿՐՈՆԱԿԱՆ**

Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզայայանի քարոզը՝ խոսված  
Մայր Տաճարում Հարության ճրագալույցին..... 50

Տ. Միքայիլ Ծ. վարդապետ Աջապահյանի քարոզը՝ խոսված  
Մայր Տաճարում Ավագ ուրբաթ, Հսկման գիշերը..... 53

Տ. ՇԱՀԵ ԶԱՀԼԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ - Ավագ Շաբաթ..... 56

ԱՐԹՈՒՐ ԳՊԻՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ - Հոգևոր-քարեպաշտական  
ավանդություններ..... 62

**ՊԱՏՄԱՒԱՆԱՍԻՐԱԿԱՆ**

ՀՐԱՆՈՒՑ ԽԱՌԱՏՅԱՆ - Մեծ Պատից՝ Չարիկ..... 67

**ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԶԵՒՍՏՈՆԵՌՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ 1700-ԱՄՅԱԿԻՆ**

ՀՐԱՉ ԲԱՐԹԻՎՅԱՆ - «Ազգն Կարքնդունայեցի իշխանութեանն»  
առեղծվածի լուծումը..... 85

ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ - Հայոց Մեծ եղեռնը եւ Յոհաննես Լիփսիուսը..... 95

**ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ**

ՄԱՄՎԵԼ ՄՐԿ. ԿԻՐԱՎՈՍՅԱՆ - Ապրիլի 23-ը՝ նահապակ  
հոգևորականների ոգեկոյնան օր..... 113

ԱՆՆԱ ԵՓՐԵՍՅԱՆ - Սանկիր-Պետրոպոլի հայ գաղթօջախը..... 115

Լուրեր Գերմանիայի հայոց քննից..... 119

1700-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

ՖԼՈՐԱ ԿԱՐԱՂՅԱԼ - Մկրտություն Ճավ գեղում..... 121

ՖԼՈՐԱ ԿԱՐԱՂՅԱԼ - Կարողի կանչ..... 123

ՅՈՎՆԱԼ ԱՐՁԵՊԻՄԿՈՊՈՍ ՏԵՏԵՐԵԱԼ - Ուխտագնացություն  
 Հայ Երոսաղեմ..... 125

Ուխտագնացություն դեպի Օջուն..... 128

ՄԻՋԵԿԵՂԵՅԱԿԱՆ

Եկեղեցական կյանք..... 130

Ղպրի Ուղղափառ Եկեղեցի..... 134

ՄԱՅՐ ԱԹՈՂՈՒՄ - Եկեղեցական քնն լուրեր..... 136

“Эчмиадзин” официальный журнал Эчмиадзинского Католикосата ..... 141

“Etchmiadzin” official monthly of Holy Etchmiadzin..... 144

“Etchmiadzine” organe officiel du Saint-Siège d’Etchmiadzine ..... 147

ԽՄԲԱԳՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐՇԱԿ ԱՐԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՅԵԼ  
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ  
 «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
 Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».  
 Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie.  
 ԳԱՍԻՉ՝ 77764


ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Բ

Տ. Տ. Գ Ա Ր Ե Գ Ն Ի Ա Ռ Ա Ջ Ն Ո Յ

Վ Ե Հ Ա Փ Ա Ռ Ի Ե Ի Ս Ր Բ Ա Ջ Ա Գ Ո Յ Ն

Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս Ի Ա Մ Ե Ն Ա Յ Ն Հ Ա Յ Ո Յ



ՏՐԻՆ  
1907



**ԳԱՐԵԳԻՆ Ա  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ՉԱՏԿԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԸ**

**ՅԱՐՈՒԹԵԱՆ ԻՄԱՍԵ ԱՅՍՕՐՈՒԱՆ  
ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ ՄԵՉ**

« Յարեաւ, չէ՛ ատտ »

(« Յարութիւն ատաւ, այստեղ չէ »)

(ՄԱՐԿ. ԺՁ. 6)

Երեք բառեր:

Կարճ, կտրուկ, անսեթևեթ, պարզ ու մեկին:

Հաստատումը իրողութեան մը, դէպքի մը, երևոյթի մը, որուն փորձառութիւնը վեր կը մնար - և կը մնայ - մարդու կեանքի պարունակէն: Մեռելայր, գերեզմանի մէջ երեքօրեայ ամփոփեալը, հսկայածանր վէմով կնքեալը, հոռմէական լէգէոնական պինուորներով պահպանեալն ու հսկեալը ահա դուրս էր եկեր գերեզմանէն, յարութիւն էր առեր մահացեալ գոյավիճակէն և նոյնիսկ երևացեր էր բազմիցս և բազմաց՝ բարեպաշտ իղաբեր կիներէն սկսեալ մինչև առաքեալները և հարիւրաւոր պարզ մարդիկ:

Քրիստոսի քարոզութիւնները իր խաչելութեամբ ու թաղմամբ « աւարտուած », իր անմիջական շրջանակի մէջ շատ շատ յիշողութեան մը պիտի վերածուէին՝ ինչպէս Իրմէ առաջ և իր ժամանակ շատերու քարոզութիւններու ճակատագիրը եղած էր: Գեղեցիկ մտածումներ, քարոյական բարձր սկզբունքներ, քաղցր դէմքի մը ժպիտին հետ պիտի մնային որպէս Քրիստոսի ժառանգութիւնը դարերու տարեգրութեանց մէջ իրենց յատուկ տեղը ունեցող:

Եթէ...

Եթէ պատահած չլիար աներևակայելի, աննախընթաց և անիմանալի յարութիւնը ի մեռելոց: Յարութիւնը եղաւ կնիքը, կամ այլ բացատրութեամբ՝ գազաթնակէտը, գնբէթացումը իր ուսուցումներուն և անոնց մէջէն բերած և մարդոց փոխանցած ճշմարտութիւններուն:

Բոլորդ ալ լաւ կը լիջէք Աւետարանի էջերէն թէ ինչպէ՛ս Յիսուսի դատապարտութեամբ, խաչելութեամբ և մահուամբ Երուսաղէմի մէջ ծայր տուած խոռովքը վերջ գտած էր, այնկոծուած ծով բազմութիւնը խաղաղած էր և Յիսուսի պատմութեան վերջակէտն էր դրուած: Նոյնիսկ իր Առաքեալները և անմիջական ալ հետևողներ յուսահատ վիճակի մը մատնուած էին: Ճիշդ էր, որ իրենց Վարդապետը խօսած էր իր յարութեան մասին: Բայց մարդկային պարզ բանականութեամբ՝ դժուար էր հաւատալ, մանաւանդ ունայր կը պարմանային թէ Յիսուս ինչպէս չկարողացաւ ինքզինք ազատել խաչի մահէն:

Անկարելին եղաւ կարելի.

Աներևակայելին մարմին զգեցաւ.

Յիսուս յարեա՛ւ ...

Որքան ալ մարդկային միտքը իր բնական կարողութեամբ անպօր է ճանչնալու այս ճշմարտութիւնը, տուեալ իրականութիւնը սակայն վեր է միտքի հասողութենէն: Յարութիւնը մարդոց համար, որոնք Յարուցեալը տեսան, այլևս կասկածէ վեր իրողութիւն էր, անդիմադրելիօրէն հպօր ոյժ մանաւանդ յուսահատեալներու համար, ինչպէս էին Իրեն առաջին հետևորդները:

\*\*

Ահա անցեր են երկու հազար տարիներ այն առաւօտէն առդին, երբ Յիսուս գերեզմանը թողոց և անմահութեան կեանքի դուռը բացաւ: Չինք գերեզման դրին առանց գիտնալու, որ լոյսը, ճշմարտութիւնը, արդարութիւնը գերեզման չեն հանդուրժեր: Իր յարութեամբ խորքին մէջ Ինք գերեզմանեց մեղքը և այն բոլորը, որ մահուան հետ են առնչուած:

Երիտօնէական պատմութեան երկհազարամեայ այս շրջանին բնականօրէն եղան մարդիկ - և այսօր ալ կան շատեր- որոնք յարութեան հաւատքին տաք տեղ մը չգտան իրենց հոգիներուն մէջ: Իրենց միտքի մաղէն չանցաւ յարութեան գաղափարը. մահուրնէ ետք կեանքի գաղափարը ներս չթափանցեց իրենց



հոգիներու խորքերը: Բայց ի՞նչ փոյթ: Եկեղեցին միշտ կենդանի պահեց այդ հաւատքը իր ժողովուրդի կեանքին մէջ: Եկան հալածանքներ, բազում քրիստոնեաներ իրենց երկրաւոր կեանքը տուին որպէս գինը իրենց հաւատքին, շատ սուղ գին մը, շատերու համար անհասկնալի և անկարելի: Քրիստոնէութիւնը օրէ օր աճեցաւ և ահա յաջորդ տարի կը պատրաստուինք տօնելու անոր Հիմնադիրին՝ Յիսուս Քրիստոսի մարդեղութեան 2000-ամեակը:

Երկու հազար տարիներու քրիստոնէական կեանքը յարութեան տօնին մէջ գտաւ իր պօրութեան ներքին աղբիւրը: Ինչպէս Պօղոս Առաքեալ կը յիշեցնէ մեզի. «Եւ եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ՝ ընդունայն է քարոզութիւնն մեր, ընդունայն են և հաւատքն ձեր» (Ա. ԿՈՐԻՆԹ. ԺԵ. 14): Այո՛, եթէ Յիսուս յարութիւն առած չլլար՝ դատարկութիւն պիտի ըլլար քրիստոնէական կրօնի քարոզութիւնը, և, ինչ որ աւելի ծանր է, դատարկութիւն պիտի ըլլար և քրիստոնեաներու հաւատքը: Եւ ինչպէ՞ս կրօնք մը կրնար յաղթականօրէն աճիլ և ներգործել այնպէս ստեղծագործականօրէն ողջ մարդկութեան կեանքին մէջ և այսքան դարեր, եթէ հիմնուած ըլլար դատարկութեան վրայ...:

Որքան ալ գիտութիւնը յառաջացած ըլլայ՝ ան երբեք ոյժ չունի - իր բնութեամբը և նպատակովն իսկ երբեք պիտի չունենայ - հաւատքի տարածքին մէջ մտնելու: Մարդը աւելի է, քան իր միտքը, այսինքն սոսկ տրամախոհական կարողութիւնը: Ճրանսացի մեծ փիլիսոփայ և գրագէտ Փասքալ ըսած է. «Սիրտը ունի իր տրամաբանելու (իրայատուկ) եղանակները, զորս տրամաբանութիւնը չի ճանչնար»: Եւ արդարև մարդիկ կան, որոնք գիտնականներ են, բնագէտներ, քիմիագէտներ, տիեզերագէտներ, հիւլէագէտներ, որոնք խոր հաւատք ունին: Բազում վկայութիւններ կարելի է մէջբերել: Հսկայ հատորներ կան գրուած այդ մասին: Բայց ի՞նչ փոյթ: Ճշմարտութիւնը շքեղօրէն պայծառ է: Եկեղեցւոյ կեանքը և ստեղծագործութիւնը անցնող քսան դարերու ընթացքին յարութեան երգ մըն են, պիտի ըսէի՝ համերգ մը կամ համանուագ մը, մշտահունչ և առինքնող, հակառակ այդ Եկեղեցիի մէջ որոշ շրջաններու որոշ անձերու բերած ստուերներուն և փոշիներուն:

Մեր ժողովուրդը յարութեան հաւատքով յաջողեցաւ յաղթահարել բոլոր տեսակի վտանգներն ու կործանարար ոյժերը, որոնք կը սպառնային մեր գոյութեան: Շատեր ջանացին այդ հաւատքը մեր մէջէն պոկել՝ քաջ գիտնալով, որ անոր մէջ է գաղտնի ոյժը մեր դիմադրականութեան և ստեղծագործականութեան՝ անմահութեան գաղափարով լիցքաւորուած և զսպանակուած: Անհատներ կրնան ըլլալ, որոնք զուտ տրամաբանական հիմքերու վրայ դժուարութիւն կրնան ունենայ հաւատալու յարութեան: Եղեր են

միշտ նման անձեր բոլոր դարերուն: Բայց Եկեղեցին, հաւատացեալներու համայնութիւնը, միշտ կենդանի պահած է այդ հաւատքը իր կեանքին մէջ: Եւ այդ համայնութիւնն է բուն Եկեղեցին:

Քրիստոնէական հաւատքին ուսուցումը եօթը տասնամեակներ շարունակ վրացուեցաւ մեր ժողովուրդին, ինչպէս ուրիշ ժողովուրդներու, խորհրդային հակաստուածեան վարդապետութեան և բռնակարգին բերումով: Բայց ահա շուրջ մէկ տասնամեակէ ի վեր երկաթէ վարագոյրը հալած է և պատուութեան շունչը մեր հայրենի օդին խառնուած...: Աւետարանը ջինջ հայելի է, անբիծ և անբեկ: Մեր հայրերու քրիստոնէական ժառանգութիւնը բաց գիրք է առանց չարափոխութեան և նենգափոխութեան...:

Միրելիք, անցեալը ամսոսալու ժամանակը այլևս անցած է: Նորը կերտելու ժամանակն է մեր նոր Հանրապետութեան այս շրջանին: Նորի կառուցման, հինին - բայց ոչ հնացեալին - վերականգնման և վերաբարեկարգման պահն է, որուն մէջ կը գտնուինք որպէս նոր բանուորները ապատ ու անկախ Հայութեան:

Նախ հարկ է քաջութիւնը ունենալ անձնապէս փոխուելու: Այլևս դադրիլ ըսելէ. «չենք իմանում», «մեզ չեն սովորեցրել», «մեզ հակառակն են սովորեցրել»: Եթէ սկսանք փոխուիլ մեր գործառնութեանց, տնտեսական, ճարտարուեստական, ճարտարաշինական եղանակներուն մէջ, եթէ սկսանք փոխուիլ ընկերային կեանքի այլապան տարածքներու մէջ, ուրեմն անհրաժեշտ է, նոյնիսկ առաջնային կարևորութիւն ունի, հոգևոր փոփոխութիւնը՝ մեր կրօնական ըմբռումներուն և բարոյական հասկացողութեանց փոփոխութիւնը: Եւ այս բնագաւառի մէջ հսկայ դեր ունի Յարութեան խորհուրդը: Որովհետև ան, որ կը հաւատայ անմահութեան, տարբեր իմաստով, եղանակով և արդիւնաւորութեամբ կ'ապրի իր կեանքը, քան այն անձը, որ կեանքը կ'ըմբռնէ զուտ երկրաւոր երևոյթ մը և կ'ապրի «կեր, արք և ուրախ լեր» նշանաբանի հրամայականի ներքն:

Վերադառնանք դէպի մեր ինքնութեան հարապատ աղբիւրները: Վերագտնենք մեր քրիստոնէական իսկատիպ պատկերը: Մաքրենք օտարներէ և կամ մեզմէ աւելցուած անհարապատ, վատահաղորդ տարրերը, որոնք կը քանդեն մեր կեանքը բարոյական ապականութեամբ: Ազգի մը թշնամին միայն երկրի սահմաններէն անդին չի գտնուիր: Այդ թշնամին կրնայ գործել - և յաճախ կը գործէ - մեր ներքին աշխարհին ու կեանքին մէջ: «Աճերնոյթ թշնամին» է այդ, որուն դէմ պետք է պայքարիլ: Վերջ տալ շահագործումներուն, վերջ դնել վեղծումներուն, իսպառ հեռացնել եղբայրասպան արարքները: Քրիստոնէայ հայու

կերպարին յատուկ պատիւով պէտք է ապրիլ Աստուծոյ տուած կեանքը, որպէսզի ան դառնայ երջանկութեան աղբիւր մեր նոր հայրենիքին նոր կեանքին մէջ:



Ահա թէ ի՜նչ խորհրդածութիւններով և հայրական յորդորներով կ'ողջունենք մեր ողջ Հայ ժողովուրդը մեր բոլորի հաւատքի հայաստանեան օրրանէն՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն, որ ինքնին յարութեան շարական մըն է մեր ներքին աշխարհի ընկալումին մէջ:

Մեր եղբայրական սիրոյ ողջոյնները Հայց. Եկեղեցոյ Նուիրապետական Աթոռներուն և անոնց գահակալներուն՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Երուսաղէմի և Կ. Պոլսոյ Պատրիարքութեանց՝ աղօթելով առ յարուցեալ Փրկիչն մեր, որ նոր շունչով առաւել ևս կենսաւորէ և զօրացնէ զիրենք, իրենց հոգևորական դասով և հաւատացեալ ժողովուրդով:

Մեր հայրական սիրոյ ողջոյնները մեր բոլոր Թեմակալ Առաջնորդներուն, Թեմական Ազգային-Եկեղեցական Իշխանութեանց, համայնքային կազմակերպութիւններուն և հաստատութիւններուն, որպէսզի օրէ օր առաւել ևս բարգաւաճին որպէս «Տիրոջ այգի»ներ Հայաստանի, Արցախի և արտասահմանի բոլոր անկիւններուն մէջ:

Սիրոյ նոյն զգացումներով կ'ողջունենք մեր հայրենի Հանրապետութիւնը, անոր վսեմաշուք Նախագահը, Ազգային Ժողովը, Կառավարութիւնը, մեր բանակը և պետական բոլոր կառոյցները, որպէսզի բարւոք և ատոք արդիւնաւորութեամբ յառաջ տանին մեր հայրենիքի կեանքը խաղաղութեան, միասնութեան և ներդաշնակ ու անձնուէր գործունէութեան մէջէն:

Ժողովուրդ հայոց, որ ի Հայաստան, լՍրցախ և ի սփիւռս աշխարհի, նորոգութի՛ր յարութեան հաւատքով և ապրի՛ր յարութեան շունչով, որպէսզի կեանք ունենաս, ինչպէս Աւետարանը կը բնորոշէ՝ «առաւել կեանք», յաւիտենական կեանք. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՕՍՔ ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Սա պահը, բառի իսկական առումով, հսկումի պահ է: Համախմբուել ենք ոգեկոչելու համար անմտաճանաչի յիշատակը առաւել քան մէկ եւ կէս միլիոն մեր այն հարազատներին, որոնք 1915 թուի ցեղասպանութեան զոհ գնացին:

Ենչու է, որ 20-րդ դարը բացուեց հայ ժողովրդի կեանքում սեւ ամպերի մահաժին ծանր շուքի ներքոյ: Ապրիլեան եղեռնը եկաւ, մանգաղեց մեր ապրող ազգի ծիւերը եւ հասկերը արմատախիլ ընելով շատերը աքսորեց հայրենի հողէն դուրս, եւ Միփիոք ստեղծելով մեր հասմայնական կեանքի մէջ, հայու բեկորները ցրտ ու ցամ ընելով աշխարհի չորս տարածքին:

Մենք անցնող դարու ընթացքին շարունակեցինք հաւատարիմ մնալ անոնց մարտիրոսութեան գաղափարին: Ահա նոյն այս դարու վերջաւորութեան մեր սպասումը պսակուեցաւ ազատ ու անկախ Հայաստանի Հանրապետութեան ստեղծումով:

20-րդ դարու այս վերջին տարին վերջին անգամ չէ սակայն, որ մենք պիտի վերակենդանացնենք մեր նահատակներու ոգին, հաւատքը, ազատօրէն ապրելու կամքը: Մարդոց կողմէ հնարուած ժամանակի միաւորները՝ օր, տարի, դար, ոյժ լուսին յիշատակի կենդանութեան եւ գաղափարի, իրաւունքի, արդար դատի հետապնդման համար:

Մենք որքան հայու շունչ ունինք մեր մէջ, այնքան հայ դատի գաղափար եւ նուիրում ունինք մեր կեանքին մէջ: Հայ ազգը մահուան դատապարտողները պիտի իմանան, որ իրենց ձեռքերուն մէջ չէ նման հակաստուածեան եւ անմարդկային ծրագիրներու իրականացումը:

Մեր պատմութեան սա հանգրուանին հայ ժողովրդի արդար դատը պաշտպանել կը նշանակէ՝

- Զօրացնել, ամրացնել, զարգացնել մեր նոյն Հանրապետութիւնը: Առանց սեփական եւ ազատ ու անկախ պետութեան՝ դժուար է դատ պաշտպանել այս աշխարհի դրութեան մէջ:

- Զօրացնել կարողականութիւնը մեր ժողովրդի երիտասարդ սերունդին թէ Մայր Հայրենիքի եւ թէ արտասահմանի մէջ: Ի վերջոյ, իրենք են որ աւելի նպաստատր տուեալներով պիտի հետապնդեն այդ դատը:

- Մուտք գործել եւ գործօն դառնալ օտար պետութիւններու եւ միջազգային քաղաքական կազմակերպութիւններուն մէջ, աշխարհի այլազան մասերուն մէջ եւ ներկայ՝ ընել մեր դատը մեր հասարակական գործունէութեան մէջէն:

Մուգի, ողբի օրերը անցած են: Գործի, աշխատանքի, գործնապաշտ իրապաշտութեամբ մեր դատով զբաղելու լուրջ ժամանակն է:

Մեր հայրական իղձն է որ երբ մտնենք 21-րդ դար, շնորհաբար որ հայ

ժողովրդի իրատունքներու հարցը 20-րդ դարու հարց չէ: Այդ հարցը հարց է մինչեւ անոր արդար եւ ամբողջական լուծումը:

Ահա թէ ի՞նչ զգացումներով կ'ողջունենք ձեզ Ապրիլեան Եղեռնի այս ոգեկոյման առթիւ եւ կը յորդորենք որ նման մեծ խտէպներու առջեւ ազգային միութիւնը դառնայ մաս եւ քաժին մեր մարմնոյն եւ մեր արեան:

Չօրացէ՛ք հոգով, նայեցէ՛ք պայծառ այրերով դէպի հայոց ապագան: Չեր նահատակ եղբայրներն ու քոյրերը ձեզի կը նային երկիւնքէն յոյսի այս ուժեղագոյն զգացումով ծիածանուած:

Հայրական ողջունիւ

**ԳԱՐԵԳԻՆ Ա**

**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ**

23 Ապրիլի 1999

# ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

**ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ  
ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա  
ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ,  
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՈՆԵՐԻ,  
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՉԱՆՑ ՄԻՋԵՎ  
ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆՆԻ ՈՒ ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐԻ  
ՆԱՄԱԿՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱԳՐԵՐԸ**

- Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Զահանայապետ, Նորին Սրբություն  
**ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊ /Հռոմ/**
- Կոստանդնուպոլսի Հուճազ Տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն  
**ԲԱՐԴՈՂՈՄԵՈՍ /Ստամբուլ/**
- Դպտի ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն  
**ԱՄԲԱ ՇԸՆՈՒԴԱ Գ /Կահիրե/**
- Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն  
**ԱԼԵՔՍԻՅ Բ /Մոսկվա/**
- Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս, Նորին Սրբություն  
**ԻԼԻԱ Բ /Թբիլիսի/**
- Ասորական Արեւելյան Եկեղեցու Կաթողիկոս-Պատրիարք,  
Նորին Սրբություն  
**ԽԱՆԱՆԻԱ ՄԱՐԴԻՆԿԱ IV /Նորտոն Արուվ, ԱՄՆ/**
- Անտիոքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք,  
Նորին Սրբություն  
**ԻԳՆԱՏԻՈՍ ՉԱՔՔԱ Ա ԻՎԱՍ /Դամասկոս/**
- Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն  
**ԱԲԲԱ ՊԱՌԻԼՈՍ /Ադիս Աբեբա/**

Հնդկաստանի Մալաբար Ասորի Ուղղափառ Եկեղեցու պետ,  
Նորին Սրբություն

**ՄԱՏԹԵՈՍ Բ** /Դեկի/

Ռումին Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն

**ԹԵՈԿՏԻՍ** /Բուխարեստ/

Անտիոքի եւ Համայն Արեւելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք,  
Նորին Սրբություն

**ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԶԻՄ Դ** /Համասկոա/

Երուսաղեմի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք,  
Նորին Սրբություն

**ԳԻՈՂՈՐՈՍ** /Երուսաղեմ/

Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն

**ՄԱՔՍԻՄ** /Սոֆիա/

Սերբիայի Պատրիարք, Նորին Սրբություն

**ՊԱՎԼԵ** /Բելգրադ/

Աթենքի եւ Համայն Հելլադայի Արքեպիսկոպոս,  
Նորին Գերաշնորհություն

**ՍԵՐԱՋԻՄ** /Աթենք/

Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն

**ԽՐԻՍՈՍՏՈՍՏՈՍ** /Նիկոսիա/

Ալեքսանդրիայի եւ Համայն Աֆրիկայի Պապ եւ Պատրիարք,  
Նորին Սրբություն

**ՊԵՏՐՈՍ** /Եգիպտոս/

**ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻՑ՝**

Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո, Նորին Սուրբ Օծություն

**ԱՐԱՄ Ա** / Անթիլիաս/

Պատրիարք Հայոց Երուսաղեմի,

Նորին Ամենապատվություն

**ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ** /Երուսաղեմ/

Պատրիարք Հայոց Կ. Պոլսի,

Նորին Ամենապատվություն

**ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ** /Ստամբուլ/

Թեմական բոլոր Առաջնորդներից եւ Թեմական խորհուրդներից ու համայնքներից:

Մի շարք հեռագրեր են ստացվել Զույր Եկեղեցիների մյուս պետերից. կարդինալներից, մետրոպոլիտներից եւ նաեւ առաջնորդներից, եկեղեցական միջազգային տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներից:

### ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻՑ՝

Հայաստանի Հանրապետության Նախագահ. Վսեմաշուք

**ՈՌԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի նախագահ. Մեծահարգ

**ՆՈՍՐՈՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վարչապետ. Մեծահարգ

**ՎՐՄԵՆ ՂԱՐԲԻՆՅԱՆ**

Սահմանադրական դատարանի նախագահ. Մեծահարգ

**ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահ. Վսեմաշուք

**ԱՐԿԱԳԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Վարչապետ. Մեծահարգ

**ԺԻՐԱՅԻՐ ՊՈՂՈՍՅԱՆ**

Կառավարության անդամներից, մարզպետներից, քաղաքապետներից, ակադեմիական եւ համալսարանական շրջանակներից, իրավագետներից եւ քաղաքական գործիչներից, Հայաստանում գործող քաղաքական կուսակցություններից եւ հասարակական կազմակերպություններից, Միջազգային «Կարմիր Խոշ»-ի կենտրոնից, ինչպես նաեւ միջազգային տարբեր կազմակերպությունների հայաստանյան գրասենյակներից, «ՀԱՅԱՍՏԱՆ» համահայկական հիմնադրամից, Հայկական Համագումարից, ՀՕՄ-ից, Կյուրպենկյան հաստատությունից.

Շնորհավորականներ են ուղարկել Հայաստանում գործող դիվանագիտական հաստատությունների ներկայացուցիչները, արտասահմանյան երկրներում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպանները, Սփյուռքում գործող հասարակական-քաղաքական, համայնքային եւ կրթամշակութային կազմակերպությունները:



## ԱՎԱԳ ԾԱԲԱԹԸ ՄԱՅՐ ԱԹՈՂՈՒՄ

Քրիստոսի երկրավոր կյանքի ամենասրտագրավ ու հուզականությամբ լեցուն պահերն են իրենցում ներառում վերջին շաբաթվա դեպքերը: Աստվածորդու վարդապետական եռամյա գործունեությունը երբևէ այդքան շեշտակի ու սուր հակասություններով չի երանգներ չէր ստացել, որքան այդ օրերին: Մի քանի օրերի ընթացքում Քրիստոս դարձավ հրեա ժողովրդի ուշադրությունն ու համակրանքը վայելող մի «երկրավոր ու երկնային արքայազն» և նույնքան կարճ ժամանակահատվածում էլ մինևույն ժողովրդի կողմից դատապարտվեց ու անարգվեց: Հրեա ամբոխը մոլեգնությամբ ու չարությամբ աղաղակում էր՝ «*՛ի խաչ հան զդա*», հռոմեական կուսակալը դիվանագիտական խուսանավումներով ձեռքերն էր լվանում ժողովրդի առջև ու կրավորական «արդարամտությամբ» պատասխանում. «*Քառեալ եմ ես յարե՞նէ արդարոյոյ այդորիկ, դուք զհիպասջիք*» (Մատթ. ԻԷ 24):

Յուրտ ու մոռյլ էին այդ օրերը, այդ վերջին շաբաթը...

Կյանքի ու մահվան, ցերեկվա ու գիշերվա, լույսի ու խավարի, Քրիստոսի ու աշխարհի ոգորումները մարդկանց՝ Քրիստոսի աշակերտներին ու հավատացյալներին մերթ խանդավառ ու հոգեխինդ, մերթ էլ հուսահատական ու նվաղուն զգացումներ էին բերում: Եվ վերջապես դառն ու կսկծալի ապրումները տեղի են տալիս. կանայք ու առաքյալները, ովքեր սրտաբեկ ու հուսախաբ, հոգևոր վերջնական փլուզումի եզրին էին հասել, լսում են աշխարհացունց ավետիսը. «*Չէ սասք, այլ յարեա՞ն*»:

Քրիստոս հարություն էր առել մեռելներից:

Ամեն անգամ, երբ մոտենում են Ավագ շաբաթվա արարողությունները, նույն տրամադրություններով ու ապրումներով են պարտրվում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հավատացյալ գավակների հոգիները:

Եկեղեցու տոնակարգում Քրիստոսի երկրավոր կյանքի վերջին շաբաթը սրբերի Ավագ տոների հետևողությամբ ստացել է Ավագ շաբաթ անվանումը: Այն իր մեջ ամփոփում է Ծաղկագարդին հաջորդող յոթ օրերը, մինչև Տիրոջ Հրաշափառ Հարությունը: Այս օրերից յուրաքանչյուրին կցվում է Ավագ անվանումը: Թեև Ծաղկագարդը ներառված չէ Ավագ շաբաթի մեջ, սակայն ամբողջովին ներդաշնակվում է Ավագ շաբաթվա դեպքերի տրամաբանական ու ժամանակագրային շղթային:

### ԾԱՂԿԱԶԱՐԴ

Ուրախությունն ու ցնծությունն էր գերիշխում Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հավաքված մեծաթիվ հավատացյալների սրտերում, երբ Առավոտյան ժամեր-

գության ընթացքում հնչեցին Ավետարանական, ոսկեղենիկ խոսքերը.  
**«Որհնեալ որ գաաղ յանուն Տեան»:**

Շաղկազարդ է...

**«Շերքն ոստովք չիքհնեօք**

**Եւ փղայք ոստովք արմաւենեօք»:**

Շուրջ երկու հազար տարիներ առաջ էր, որ տեղի ունեցավ «Մուտն ի Երուսաղէմ» և այսօր կրկին օվսանմաներ ու ցնծագին բացականչություններ: Մեծ թե փոքր, ձեռքներին ուտենու օրհնված ճյուղեր, ամեն մեկը յուրովի ընդառաջ էր գնում Քրիստոսին: Առավոտյան ժամերգության ավարտին Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի նախագահությամբ կատարվեց «Ամոզատան»-ի կարգ. որի ընթացքում օրհնվեցին աշխարհի չորս կողմերը: Ապա բոլոր մանուկները հավաքվեցին ատյանում, և կատարվեց մանուկների օրհնության արարողություն:

Երեկոյան ժամը 17.30-ին կատարվեց «Դոնքացեք»-ի գեղեցիկ արարողությունը: Ասենք, որ «Դոնքացեք»-ի ամբողջ արարողությունը պատկերավոր վերարտադրությունն է Քրիստոսի կողմից այդքան կարևորված Վերջին Դատաստանի, որի իրական լինելն ավելի շոշափելի է դառնում արարույթյան հուզականությամբ ու դրամատիզմով լեցուն երկխոսություններով:

**«Բա՛ց մեզ, Տէր. քա՛ց մեզ, Տէր զդուռն ողորմութեան».** - թախանձագին հնչում էր մեղեդին, և լուսարարապետ Սրբազան Հայրը՝ Տ. Հուսիկ արքեպս. Մանթուրյանը, արտասանում էր հոգեշունչ խոսքերը.

*Մա է դուռն երկնից.*

*Արդարոց հանգիստ.*

*Մեղաւորաց քաւարան.*

*Քրիստոսի արքայարան.*

*Հրեշտակաց բնակարան.*

*Սրբոց ժողովարան.*

*Տեղի ապաւինի*

*Եւ Տուն Աստուծոյ:*

Ապա «Չողորմութեան քո գոտին բաց մեզ, Տէր» շարականի հնչյունների ներքո բացվում է Ավագ Ս. Սեղանի վարագույրը:

## **ԱՎԱԳ ՀԱՐԱԹ**

Ավագ շաբաթվա օրերից յուրաքանչյուրը նվիրված է Քրիստոսի կյանքի վերջին շաբաթվա ընթացքում տեղի ունեցած դեպքերից մեկին:

Ավագ երկուշաբթի, Ավագ երեքշաբթի և Ավագ չորեքշաբթի, որոնց ընթացքում կատարվում են Տերունական օրերին բնորոշ սովորական ժամերգություններ, ամփոփում են Ավետարանական հետևյալ դրվագների հիշատակները.

Ավագ Երկուշաբթի ընթերցվում են «Չորացած թզնու» և «Այգու տիրոջ ու չար մշակների» առակները:

Ավագ Երեքշաբթի ոգեկոչվում է Տասը կույսերի հիշատակը: Երեկոյան ժամերգության ընթացքում տասը ճեմարանցիներ, ձեռքներին մեկական մոմ, կանգնեցին Ավագ Ս. Սեղանի առաջ՝ խորհրդանշելով Ավետարանական առակի հինգ իմաստուն ու հինգ հիմար կույսերին:

Ավագ Չորեքշաբթի Տիրոջ մատնության օրն է, որը հետագայում, ի նշան սգո, պահոց օր կարգվեց: Նույն օրն էր նաև, որ Քրիստոս Բեթանիայում իջևանեց Սիմոն քորոտի տանը: Մայր Տաճարում աղոթասաց հոգևորականի կողմից ընթերցվեց Ավետարանական համապատասխան հատվածը: *«Կին մի, որ ուներ շիշ իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ ևս բեկեալ գշիշն եհեղ ի վերայ գլխոյ նորս»* (Մարկ. ԺԴ. 3) - ասվում է Ավետարանում՝ ակնարկելով պոռնիկ կնոջը, ում մասին Քրիստոս ասաց, թե *«նոր էլ քարոզվի այս ավերարանը՝ սրա ( այս կնոջ) հիշատակի մասին պէտք է խոսվի»*:

### ԱՎԱԳ ՀԻՆԳՉԱՐՔԻԻ

Ավագ շաբաթվա օրերի շարքում առանձնանում է Ավագ հինգշաբթին: Այն ամփոփում է Պասեքի զենման, Տերունական ընթրիքի և Ս. Հաղորդության խորհրդի հիշատակն: Հին ժամանակներում Արևելյան Եկեղեցիներում Ավագ հինգշաբթի օրը մատուցվում էր երկու, երբեմն նույնիսկ երեք Պատարագ: Հայոց Եկեղեցում Ավագ հինգշաբթի օրը մատուցվել է մեկ Պատարագ:

Ահա, Մայր Աթոռում Ավագ Հինգշաբթի օրը, ապրիլի 1-ին, ի հիշատակ Ս. Հաղորդության խորհրդի հաստատման, մատուցվեց Ս. Պատարագ:

*«Առեք, կերեք, այս է իմ մարմինը.*

*Առեք, խմեցեք, այս է իմ արյունը»* (նմտ. Մատթ. ԻԶ 26-27):

Ավագ Ս. Սեղանից կրկին անգամ հնչեցին Աստվածորդու հոգեճորոգ խոսքերը:

Պատարագից էր Գևորգյան Հոգևոր Ծեմարանի տեսուչ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը, ով օրվա խորհուրդը լուսաբանող քարոզ խոսեց:

### ՈՏՆԼՎԱՍ

Ետմիջօրին Մայրավանքում կատարվեց Ոտնվայի արարողություն, որի ընթացքում հավատացյալները ևս մեկ անգամ վերապրեցին Քրիստոսի խոնարհությանը ու ծառայասիրությանը շաղախված Ավետարանական դրվագը:

*«Նա վեր կացավ ընթրիքի սեղանից, մի կողմ դրեց զզեպոնները և մի սրբիչ վերցնելով մեջքին կապեց: Եվ ապա ջուր վերցնելով լցրեց կոնքի մեջ և սկսեց իր աշակերտների ոտքերը լվանալ և սրբել մեջքին կապած սրբիչով»*. - գրում է Հովհաննես Ավետարանիչը (ԺԳ. 4-5):

Այս անգամ խոնարհության այս օրինակը ներկաներին փոխանցեց Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը: Արարողությանը ներկա էր նաև Վեհափառ Հայրապետը: Սրբազան Հայրը Քրիստոսի աշակերտներին խորհրդանշող ճեմարանցիների ու ԵՊՀ Աստվածաբանական ֆակուլտետի ուսանողների ուղքերը լվանալուց և օծելուց հետո, խորհուրդը մեկնաբանող քարոզ խոսեց: Հավարտ Ունըվայի արարողության հնավատագյալներին բաժանվեց օրհնված յուղ:

## ԱՎԱԳ ՈՒՐԲԱԹ

### ՀՍԿՈՒՄ

Ինչպես Ավագ չորեքշաբթի օրը, իր մեջ կրելով Տիրոջ մատնության խորհուրդը, պահոց օր հռչակվեց Եկեղեցում, նույնպես և Ավագ ուրբաթը, որը Հայոց Եկեղեցու Տոնացույցում բնութագրվում է որպես «Յիշատակ չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Ի հիշատակ Քրիստոսի կրած չարչարանքների ու խաչելության, Մայր Աթոռում երեկոյան ժամը 18.30-ին սկսվեց «Հսկում»-ի կարգը: Քանի որ եկեղեցաբանորեն օյր սկսվում է Երեկոյան ժամերգությունից հետո, ուստի և Հսկման կարգը կատարվում է Ավագ հինգշաբթի, Երեկոյան ժամերգությունից հետո:

Նախ սկսվեց Գիշերային ժամերգությունը, Մայրավանքի միաբանների կողմից ընթերցվեցին Հուդայի մատնությունը, Տիրոջ չարչարանքները, Պետրոսի ուրացումը, Պիլատոսի հանցավոր թուլակամությունը, հրեա քահանայապետերի ու ամբոխի մոլեգին զրպարտությունները պարունակող Ավետարանական վեց հատվածներ, որոնցից յուրաքանչյուրի ընթերցումից հետո շիջվում էին խորանի վրա վառվող 13 մոմերից երկուսը (Մոմերը խորհրդանշում էին Քրիստոսի առաքյալներին, սև մոմը՝ մատնիչ Հուդային, իսկ մեջտեղում լուցվող մեծ մոմը՝ Քրիստոսին): Աստիճանաբար բոլոր մոմերը շիջվեցին և մնաց միայն մեծ մոմը, որը խորհրդանշում էր Քրիստոսի ամենքից լքված ու միայնակ լինելը:

Առավոտյան ժամերգության ընթացքում, «Տեր յերկնից» շարականից հետո, հանգցվեցին Մայր Տաճարի բոլոր լույսերը:

Օրվա խորհրդի առիթով քարոզ խոսեց Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը (տես էջ 53):

«Փառք ի բարձունս» օրհներգի վերջին «Ծագեա գողորմութիւնս քո» երգեցողության ընթացքում լույսերը կրկին վառվեցին:

Հավարտ արարողության Մայր Աթոռի միաբանները առյանում երգեցին «Խաչի ըո Քրիստոս» շարականը:



ՄԻ ԳԵՐՈՒՄ ԵՐԱՅԻՄ ԵՄԻՆՆԻՍԻԱՆԻ ԵՊԻՍԿՈՍՈՍԻ ԵՐԱՅԻՄ ԵՄԻՆՆԻՍԻԱՆԻ



ՎԵՅԱԺԱՌ ԳԱՅՐԱՊԵՏԻ ԶԱՏԿԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԸ ԸՆԹԵՐՑՈՒՄ Է  
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԳՅԱՆՈՒՐ ՓՈՒԱՆՈՐԳ  
Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻԱՅԱՆԸ

**ԿԱՐԳ ԽԱՉԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԹԱՂԱՄԱՆ**

Ավագ ուրբաթ, առավոտյան ժամը 11-ին, պաշտպեց ճաշու ժամերգություն, որի ընթացքում Մայրավանքի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթրոբյանի հանդիսադրությամբ կատարվեց Տիրոջ Խաչելության կարգը: Միաբանները հաջորդաբար ընթերցեցին Ավետարանից հատվածներ, որոնք պատմում էին Քրիստոսի նկատմամբ կայացրած մահվան դատավճռի, Պիղատոսի մոտ տարվելու և այլ դեպքերի մասին:

Երեկոյան, վաճառման միաբանների և մեծաթիվ հավատացյալների ներկայությամբ ու մասնակցությամբ, կատարվեց Քրիստոսի թաղման խորհրդանշական արարողությունը: Հանդիսադիրը Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանն էր: Սրբազան Հոր նախագահությամբ միաբանական թափուրը, առջևից ունենալով Քրիստոսի խորհրդանշական գերեզմանը՝ երփներանգ ծաղիկներով ու եղևնու ճյուղերով զարդարված, «Պարգևատում» շարականի հնչյունների ներքո պտույտ գործեց Մայր Տաճարի շուրջ և ապա կրկին ուղղվեց դեպի Իջման Ս. Սեղանի առջև: Երգվեց «Խաչի քո Քրիստոս» շարականը, և «Պահպանիչ» աղոթքով արարողությունը եզրափակվեց: Հանդիսապետ Սրբազան Հայրը համառոտ խոսքով դիմեց ներկաներին՝ բացատրելով արարողության իմաստը և խորհուրդը:

**ԱՎԱԳ ՀԱՔԱԹ**

Ավագ շաբաթը Հայոց Եկեղեցում Մեծ Պահքի վերջին օրն է, երբ երեկոյան մատուցվող Ս. Պատարագից հետո հավատացյալներն աշխարհասասան ավետիսի արձագանքն են ստանում իրենց հոգիներում. «*Քրիստոս յարեալ ի մեռելոց*»: Մայր Աթոռում Ս. Զատկական ճրագալույցի Պատարագին նախորդեց Երեկոյան ժամերգությունը: Ժամերգության ընթացքում ընթերցվեցին Սուրբգրային հատվածներ, և Դանիելի թղթի եղանակավոր արտասանության ավարտով սկսվեց Ս. Պատարագը:


Պատարագին էր Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: «Անավոր Խորհուրդ»-ի միջնամասում պատարագիչ Սրբազան Հայրը Հայրության կենսական նշանակությունը պարզող քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի միաբանական թափուրը, «Այսօր յարեալ ի մեռելոց»-ի երգեցողությամբ, ուղղվեց դեպի Վեհարան՝ «Տնօրհներ»-ի կարգ կատարելու: Վերջում սեղանատանը տրվեց Խթման երեկոյի ընթրիք:

**ԶԱՍԻԿ**

Անցան մռայլ ու թախծալի օրերը

Քրիստոս անարգվեց, խաչվեց, մահացավ ու գերեզման դրվեց, բայց...



**«Ո՞ր է մահը քո հաղթանակը**

**Ո՞ր է դժոխքը քո խայթոցը»** (Ա Կորնթ. ԺԵ 55):

Այս տարի, ապրիլի 4-ին, Հայոց Եկեղեցում Քրիստոսի հրաշափառ Հարության տոնն է: Մայր Տաճարում կրկին Ս. Պատարագ էր մատուցվում: Դպրաց դասը հաղթական ու խանդավառ հռչակում էր.

**«Մահվամբ մահը հաղթեց**

**և իր հարությանբ մեզ կյանք պարգևեց»:**

Պատարագիչն էր Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը: Չատկական պատարագին ներկա էին Վեհափառ Հայրապետը, ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը, վարչապետ Ա. Դարբինյանը, բարձրաստիճան այլ հյուրեր:

Պատարագիչ Սրբազան Հայրը «Հայր մեր»-ից առաջ ընթերցեց Վեհափառ Հայրապետի Չատկական պատգամը (տես էջ 3):

Հավարտ Ս. Պատարագի կրկին հնչեց Հարության ավետիսը՝ փոխադարձվելով **«Յրհնեալ է յարութիւնն Քրիստոսի»** կենսապարզ քառերով:

Քրիստոս հարություն է առել մեռելներից:





ՉԱՏԿԱԿԱՆ ՈՒՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՉԸ ՌՈՐԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական ուղերձ է հղել Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանին՝ ընտրության եւ նախագահական երդման արարողության մեկ տարվա առիթով:

Ուղերձում մասնավորապես *ասվում է.*

*«Մրտի խոր գոհամակութեամբ ողջունում ենք Ձեզ մեր Եկեղեցու Հագնոր Կեդրանից եւ սրբավայրից՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, որպէս Հայաստանի Հանրապետութեան նախագահ Ձեր ընտրութեան եւ պաշտօնի հանդիսատր ստանձնման առաջին տարեդարձին առիթով:*

*Յիշում ենք այն պահի, երբ 9 Ապրիլ 1998-ին Օպերայի շքեղ սրահում տեղի ունեցաւ Ձեր երդման արարողութիւնը: Ահա տարի մը անցաւ, եւ Դուք տքնաջան աշխատանքով Ձեր գերագոյն կարելին յի գործ դրիք մեր հայրենիքի ապահով պահպանման եւ տնտեսական պայմանների բարելավման համար:*

*Աղօթում ենք առ Ամենակալն Աստուած, որ Ձեզի շնորհէ երկար տարիներ, որպէսզի առաւել եւ յարաճուն արդիւնաւորութեամբ յառաջ տանիք Ձեր նուիրական գործը առհասարակ տարածուիջանի մէջ պայրգում դժուարին պայմանների ներքոյ: Թող Աստուած իմաստութեան եւ գոհաբերութեան զգացումներով եւ առաքինութիւններով զօրացնէ Ձեզ եւ Ձեր բոլոր զարձակիցները:*

*Ողջո՛յն հայրապետական եւ օրինաւոր ին հայրական Ձեզի եւ Ձեր ընտանիքին ու բոլորիս մայր Ընդհանրական Ընտանիքին՝ Հայոց Ազգին եւ Հայրենիքին ու Պետութեան:*

*Աղօթարար՝*

**ԳԱՐԵԳԻՆ Ա  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

**ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ**  
**ՆՈՐԱՎԱՆՔԻ ՕԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ**  
 (18 ԱՊՐԻԼ 1999)

**«ՆՈՐՈԳՈՂ ՀՆՈՒԹԵԱՆՅ.**

**ՆՈՐՈԳԵԱՒ ԵՒ ԶԻՍ.**

**ՆՈՐՈԳ ԶԱՐԿԱՐԵԱ.**

Այս պահը յուզախառն ապրումներու մի քաջատիկ պահ է ինձ համար: Սա պահին, աչքերիս կողմից համընդգրկումը այս քարերին, ձեռքերիս հպումը սա վեճերին, տարբեր երանգ կու տան պատմութեան, եկեղեցուն, հայրենիքին եւ մշակոյթին իմ հասկացողութեան եւ ընկալման: Քարերը սա բլուրների վրայ դիպուած, տարադնուած, երբեմն ժայռացած ուրիշ քան են, քան ինչ որ քարն է: Նորավանքի եկեղեցին վանակամ, յուշախօսային այս համոյթը կենդանի քարերի մի հասնեղ է ունկնդրել գիտցող հաւատացեալին եւ սրբութիւնից այցելուող ուխտաւորին համար: Կենդանի քարեր են սրանք, ըստ Աստուածաշունչ մատենանի խօսքին (Ա. Պետր. Բ. 5): Նրանք ունին իրենց յատուկ լեզուն, որ անջնջելի է, որովհետեւ իր մէջէն կը խօսին հաւատքը, սէրը, Աստուծոյ անստուեր ներկայութիւնը, աղօթքին մղումը, շարականի մեղեդին, մամի իւղը, խումկին քայրը, արեւին շողը, քրտինքին հոտը, նոյնիսկ երբեմն արեան գիծն ու գոյնը:

Այդ բոլորը սակայն անմիջական հաղորդութենէ զուրկ էին, որովհետեւ աչքի տեսք էին մագաղաթ գիրքի մէջ, լուսանկար, «ամանճնակամ» մի գոյութիւն, որ կը «խօսէր» մեզի առանց քարքառելու: Կը խօսէր պատմութեան էջերէն, կը խօսէր իշխաններու սաղաւարտներէն եւ սուրբերէն, աղեղներէն եւ նիզակներէն, կը խօսէր վարպետ քարտաշներու մուրճի հարուածներու կշռութաւոր եւ հոգիէն ճառագայթող ապրումներու իմաստաշեշտ ընթացքէն, կը խօսէր «գրիչ»ներու, «ծաղկող»ներու, «տակող»ներու վրձինսահար մեղմ հպումներէն մագաղաթներու վրայ տփզոյն: Կը խօսէր նոյնիսկ եւ վերջերս մանաւանդ աւերակներու քեկքեկեալ լեզուով, եւ սակայն թելադրական անօրինակ զօրութեամբ:

Այսօր ան կը թողու աւերակներու այդ լեզուն եւ կը խօսի իր հարազատ եւ անբողջական լեզուով: Միջին դարերու մեր մշակութային ժառանգութեան անենն նշանակալից այս շրջանը Օրբելեան մեծ աւատապետական իշխանութեան քաջալերանքին տակ եւ Միւնեսց մետրոպոլիտական Աթոռի անմիջական հոգածութեան ներքեւ փտահաբար առաւել խոր հասկացողութեան պիտի բարձրանայ Նորավանքի այս գեղատեսիլ վանական համալիրի նորագարդ պայծառացեալ տեսքովը, որ ինքնին ներշնչման աղբիւր է ունի պարզ դիտողի համար այս լեռնալանջի տարածութեանը մէջ:

Սա այլեւս յուշարձան չէ, սա հաւատքի եւ մշակոյթի օճախ է: Սա ճարտա-

րապետական եւ քանդակագործական կոթող չէ. սա դպրոցէ (մի շքույլ, ինչպէս այնքան կը սիրէր ըսել Նաղդակեանց, Պոռշեանց, Օրբելեանց եւ աւատապետական այլ մեծ գերդաստաններու պատմութեան հմուտ մասնագէտ Գարեգին Կթղ. Յովսէփեանց), ուր պիտի գան սերունդներ այստեղ գտնելու համար աղբիւրը հաւատքի, գեղեցկութեան եւ հոգեւոր ու մտաւոր ճառագայթումի: Սա այլեւս սոսկ անցեալի յուշարար չէ, այլ ապրող, շնչող ուխտատեղի, ուր մեր ժողովուրդի զաւակները պիտի գան յաճախակի հերթականութեամբ, դպրոցականներ, համալսարանականներ, որպէսզի քարեղէն գիրքերու մէջէն հոգեղէն ճշմարտութեան արժէքները քաղեն, միախառնեն իրենց հոգեբանութեան եւ գիտութեան մէջ եւ դառնան Նորավանքի նոր «հաւատացեալ»ները:

Այսօրուան օծումը մի նոր անկիւնադարձ կը բանայ Նորավանքի դարագնաց պատմութեան մէջ, այնպիսի անկիւնադարձ, որ հիմին կ'ըսէ. «Դու հնացեալ չես», եւ նորոգեալին, բարեգարդեալին կ'ըսէ. «դու ծաղկազարդի մի նոր դրուագ ես, կուգաս Յիսուսի նման եւ սրբութիւն կը ցանես այս լեռնալանջերուն»:

Բնականօրէն Նորավանքի հիմնական վերականգնումը իր սկզբնային պատկերին մէջ՝ արդիւնք է ամենէն առաջ մեր պետական հոգածութեան, յատկապէս այն գիտնականներու, որոնք տարիներ շարունակ յոգնաջան աշխատանքով կատարեցին հարկ եղած ուսումնասիրական, հետազոտական աշխատանքներ, որպէսզի մնայ հարազատ եւ անվտանգ՝ հայ հոգու այս շքեղաձայն եւ «անլուծելի զանգակատունը»: Բոլորին կը յայտնենք Մեր հայրական ամենաջերմ սէրը եւ Հայրապետական բարձրագոյն գնահատանքը:

Հայց, Եկեղեցւոյ պաշտօնական հիմնադրութեան 1700-ամեակի ծրագրելու շարքին մէջ յատուկ տեղ եւ նշանակութիւն ունի այս եկեղեցական վանական համալիրին վերաշինութիւնը: Դալար եւ ուժեղ մնան օրհնեալ ձեռքերը մեր քարտաշներուն, տաղանդաւոր ճարտարապետներուն եւ քանդակողներուն:

Մեր գնահատանքի խօսքը 1700-ամեակի Գործադիր Յանձնախումբին եւ անոր նուիրեալ աշխատողներուն, որոնք ամէն ինչ ի գործ դրին առանց դադարի եւ գործը ի գլուխ հանեցին:

Վերջապէս Մեր հայրական սիրոյ ջերմագին խօսքը Մոնթրէալի (Գանատա) մեր անձնուէր եւ եկեղեցասէր քարեկամներուն՝ Տէր եւ Տիկին Տիգրան եւ Տիանա Հաճէթեաններուն, որոնց նիւթական գոհադութեան գեղեցիկ պտուղն է, որ կը վայելենք այս օրերուն, եւ յատկապէս այս կիրակի, որ մեր Հայց, Առաքելական Ս. Եկեղեցւոյ համար «Կանաչ Կիրակի» կը կոչուի փոխաբերականօրէն այնքան մերշնչողական իմաստով: Թող Աստուած արեւու լոյսին պէս երջանկութիւն ցանէ իրենց կեանքին մէջ:

Թող Նորավանքը թարմօրէն միւտնեալ, նոր շունչ, նոր հաւատք, նոր տեսիլք ցանէ ձեր եւ զալիք ուխտատուներու կեանքերուն մէջ:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**

**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ**

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՕՍՔ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

Հայրական քաղցրագոյն սիրով ենք ողջունում այս պատուաբեր հանդիսութիւնը, որով նշում է տասնամեայ վաստակը Հայ Օգնութեան Ֆոնտին (Հ.Օ.Ֆ.), որ բարիքների առատահոս մի աղբիւր եղաւ մեր Մայր Հայրենիքի տառապահար ժողովրդին. Գիւմրիի շրջանում պատահած ահաւորագոյն և աղետալի երկրաշարժին հետևանքով:

Անցնող տասը տարիների ընթացքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ամենէն կենսունակ թեմերից Ամերիկահայոց Արևելեան թեմը հաստատեց այդ ֆոնտը. որ մեր ժողովրդի ողբերգական ծանր վիճակը թեթևանայ, և մեր հայրենիքն ու ազգը չընկճուին այդ աննկարագրելի աղէտից: Մնունդի, ջուրի անմիջական մատակարարում, հագուստի և դեղորայքի հայթայթում, դպրոցների վերաշինութիւն, դպրոցական երեխաների լայն օժանդակութիւն և բազում այլ տեսակի մարդասիրական, ընկերային, բարեգործական շարունակական օգնութիւններ իսկապէս փրկարար դեր կատարեցին մեր բազմաչարչար և զրկեալ ժողովրդի գաւակներին ամենուրեք:

Մեր Հայց. Առաքելական Եկեղեցին Բրիստոսի օրինակին՝ «Բարի Մամարացոյ» կերպարի ներքոյ կատարեց և կատարում է իր պարտքը՝ մղուած Աստծու և հայ ժողովրդի սիրուց: Որովհետև քրիստոնէական հասկացողութեամբ ՄԷԲ կը նշանակի գոհողութիւն, ծառայութիւն, գործ ի բարին ի վայելում կարօտեալներին:

Մենք մեր հաւատքի օճախից, Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Մեր օրինութիւնն ենք առաքում թեմի ժուջան Առաջնորդին, թեմական իշխանութեան, Հայ Օգնութեան Ֆոնտի Յանձնախումբին, Հայ Օգնութեան Ֆոնտի անձնակազմին իրենց նուիրեալ աշխատանքի համար:

Աղօթում ենք առ Ամենաբարին Աստուած, որ ցաւը, վիշտը, տառապանքը օրից օր պակասին, և փոխարէն, բարեկեցութիւնը իր տեղը վերգտնի մեր ժողովրդի կեանքում:

Ողջ լինուք ի Տէր, գորացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մեզ, ամէն:

**ԳՄԲԳԻՆ Ա  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

19 Ապրիլի 1999

Ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին

**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ  
ԱՍԵՐԻԿԱՀԱՅՈՅ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՍԻ  
ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՅ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ  
(Ապրիլ 26-29, 1999)**

Ուրախութեամբ տեղեկացանք Ամերիկահայոց Արեւելեան թեմի բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպս. Պարսամեանէն, որ ապրիլի 26-29-ին (1999) Ուոթըրվիլի Նիւ Եորքի Ս. Պետրոս Հայոց եկեղեցւոյ մէջ պիտի գումարուի թեմի Հոգեւորականաց Տարեկան Համագումարը:

Արքուքին Արքոջ Սուրբ Էջմիածնէն եւ Ս. Գրիգոր Լուսաւորչի լուսարաշխ Աջէն ձեզի կ'ուղղենք Մեր հայրական սիրոյ ողջոյնն ու օրհնութիւնը՝ կատարեալ յաջողութիւն մաղթելով ձեր աստուածահաճոյ աշխատանքներուն՝ հոգեւոր, կրօնական, եկեղեցական, դաստիարակչական եւ ընկերային մարզերուն մէջ:

Մեր հոգւոյ հայեացքը բեւեռած ձեզ վրայ, լաւատես յոյսով կը սպասենք, որ դուք՝ աւանդապահ սպասատրուները Հայաստանեայց սրբազնասուրբ Եկեղեցւոյ, Սուրբ Հոգիով լեցուած, բարեխիղճ յանձնառութեամբ նուիրուիք ձեր ծառայութեան՝ հաստատակամ եւ ամրապնդեալ, Աստուծոյ փառքին եւ մեր սիրելի ժողովուրդին օգուտին համար:

Աներեք կանգնած մեր հայրերու պայծառ հաւատքի վէմին վրայ, քինջ ու անաղօտ պահեցէք մեր ժողովուրդի ոգին՝ իր հայկական եւ քրիստոնէական ազգային արժէքներով, միշտ յառաջընթաց տեսիլքով եւ հայեացքով: Այս պէտք է ըլլայ Սփիւռքի տարածքին վրայ գործող հոգեւորականաց կարեւորագոյն ու մշտական մտահոգութիւնը, տեւական ու կայուն մտասեւեռումը, հովուական գործունէութեան կեդրոնական առանցքը:

Գիտենք, որ այս ճանապարհը յաճախ երկար է եւ յոգնեցուցիչ, փշոտ ու տառապալից, սակայն այս է ճանապարհը Երկնից Արքայութեան:

Գ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ շէն ու պայծառ պահէ մեր աղօթքի տունները, որ անփորձ ու անփտանգ, մէկ ու անբաժան պահէ համայն հայ հաւատացեալ ժողովուրդը, որ յԱմերիկա:

Թող Աստուած նոր շնորհներ բաշխէ ձեզի ամենքիդ, որպէսզի միշտ լուսատատ մնայ մեր Սուրբ Եկեղեցին աշխարհի չորս ծագերուն մէջ:

«Հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատօս, ժրացարուք, զօրացարուք, ամենայն ինչ ձեր սիրով լինիցի» (Ա Կոմբ. ԺՁ 13-14), Ամէն:

**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ  
ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ  
ՏԱՐԵԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՌՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ**

**(Ապրիլ 29 - Մայիս 1, 1999)**

Գոհունակ սրտով իմացանք Ամերիկահայոց Արեւելեան բեմի բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպս. Պարսամեանէն, որ Ապրիլ 29-Մայիս 1-ին Ուոթըրվիլի Նիւ Եորքի Ա. Պետրոս Հայոց եկեղեցւոյ մէջ պիտի գումարտի բեմիդ Տարեկան Պատգամատրական Ժողովը:

Մեր հայրական ջերմ սիրոյ ողջոյնն ու հայրապետական օրհնութիւնը կը յղենք Ժողովի բոլոր աստուածասէր եւ եկեղեցանուէր անդամներուն, որոնք այս օրերուն պիտի հաւաքուին՝ քննարկելու անցնող տարուայ գործունէութիւնը եւ կազմելու յառաջիկայ տարուայ աշխատանքային ծրագիրը:

Հայաստանեայց Եկեղեցին հայ ժողովուրդի հոգւոյն ծննդավայրն է. իսկ Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ կենդանի հաղորդակցութիւնը՝ այդ հոգւոյն կենսունակութեան երաշխիքն ու գրուակները: Ուստի եւ Միածնաէջ Աթոռին վրայ կը մնանք աղօթող եւ գործող Հայ Եկեղեցւոյ պայծառութեան, անսասանութեան, ինչպէս նաեւ անխախտ ու անալալիելի սիրութեան եւ միասնութեան համար:

Խորապէս վաւատի ենք, որ ձեր այս ժողովը երջանիկ առիթ մը պիտի ըլլայ անգամ մը եւս վերանորոգելու ձեր ուխտը՝ նուիրուած եւ բարեխղճօրէն աշխատելու, ձեռք ձեռքի տուած, եղբայրական անկեղծ զգացումներով տոգորուած եւ մանաւանդ մեր Սուրբ Եկեղեցւոյ աննուազելի շահերու գիտակցութեամբ: Այս յանձնառութեամբ է, որ անաղօտ ու լուսաւոր կը մնան հայոց պայծառ հաւատքը, հայ ոգեկանութեան հոգեւոր ու մշակութային արժէքներն այնպէս, ինչպէս մեզի աւանդեցին մեր լուսարնակ հայրերը:

Այսօր, երբ կրօնական ու բարոյական արժէքները վտանգաւոր շրջանէ մը կ'անցնին, մենք պիտի աներեր մնանք նահատակութիւններով սրբագործուած եկեղեցական-ազգային աւանդութեանց ապառաժին վրայ, առանց օրորուելու նորաթուխ մակերեսային երեւոյթներէ: Ժամանակի ամենադառն սխալներէն է այն մօտեցումը, թէ ամեն նորութիւն յառաջդիմութիւն է. չկայ իրական յառաջդիմութիւն՝ առանց դարերու քրտինքով նուիրագործուած արժէքներու:

Մեր աղօթքն է, որ այս գիտակցութեամբ պայծառացած սկսիք ձեր գործունէութեան նոր շրջանը:

«Այսուհետեւ, եղբարք իմ սիրելիք, հաստատուն եղերուք, անշարժ կացէք, առաւել լեռուք ի գործս Տեառն յամենայն ժամ» (Ա Կորնթ. ԺԵ 58). Ամէն:

**ԳՐԵԳՈՐ Ա  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ

### ՏԻԳՐԱՆ ԵՎ ԴԻԱՆԱ ՀԱՃԵԹՅԱՆՆԵՐԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

#### ՄԻՐԵՑԵԱԼ ԶԱՒԱԿԱՅ ՄԵՐՈՅ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՑ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ ՍՐՔՈՅ ԷԶՄԻԱՏՆԻ ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՏԻԳՐԱՆ ԵՒ ՏԻԱՆԱ ՀԱՃԵԹԵԱՆԻՆ ՈՐ Ի ՄՈՆԹՐԵԱԼ Ի ԳԱՆԱՏԱ

Այսօր, 18 Ապրիլ, Ձեր կեանքի ամենէն զեղեցկագոյն եւ երջանկալից պահերէն մէկն է, երբ Ձեր աչքերով կը տեսնէք Ձեր աստուածահաճոյ ու հայրենաշէն իրագործումներէն մէկը եւ բերկրանքի գերազանց զգացումով կը հրճուիք Ձեր ընտանեկան հարազատներու եւ քարեկամներու հետ միասին:

Երկար տարիներ ի վեր Ձեզ ճանչցած ենք որպէս մեր Եկեղեցոյ, ազգի, Հայրենիքի եւ մշակոյթի նուիրուած ամուլ մը, որ զիտցած է իր ծնողներէն ժառանգել մեր ազգի ընտրելագոյն առաքինութիւններէն մէկը՝ ՍԷՐ հանդէպ Աստուծոյ, Եկեղեցիին եւ Հայրենիքին:

Դուք ունեցաք յմաստնութիւնը եւ քաջութիւնը այդ Սէրը գործի՝ վերածելու, ուրկէ բարիքները աղբերացան եւ կ'աղբերաման մեր Եկեղեցոյ եւ ազգի կեանքին մէջ ի Մոնթրէալ եւ այլուր:

Մայր Հայրենիքը՝ Հայաստանը, մշտական ներկայութիւն եղաւ Ձեր կեանքին մէջ: Եւ ահա Դուք Ձեր լիառատ նուիրատուութեամբ Ձեր բաժինը բերիք մեր Եկեղեցոյ ծաղկման մեր մայր հողի վրայ՝ ստանձնելով բարերարութիւնը հիմնական վերանորոգման Նորավանքի Բուրբելյաշէն Ս. Աստուածածին Եկեղեցիին, որ մեր Եկեղեցոյ եւ ճարտարապետութեան ամենէն յանկուցիչ կեդրոններէն մէկն է եղած դարեր շարունակ Սիւնեաց աշխարհի մէջ եւ ողջ Հայաստանի տարածքին վրայ: Մեր Առաքելական Ս. Եկեղեցոյ պաշտօնական հիմնադրութեան 1700-ամեակի շքեղ իրագործումներէն մէկն է անոր այդ ամբողջական վերականգնումը եւ շրջապատի քարեզարդումը, որ պիտի խօսի յաջորդող սերունդներուն յատուկ գրաւչութեամբ:

Ի զնահատութիւն Ձեր այս օրինակելի բարերարութեան, այսու Հայրապի-



տական Կոնդակալ Չեզի կը շնորհենք Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարձրագոյն կարգի շքանշանը՝

### Ս. Գ. Բ. Գ. ՈՐ ԼՈՒՍ ԸՆԻՈՐԻՉ:

Կ'աղօթենք, որ Աստուած Չեզի եւ Չեր ընտանիքի անդամներուն պարզեւ քաջատողջ եւ երջանկալից կեանք: Թող Ամենաբարին Աստուած օրհնէ յիշատակը Չեր ծնողաց՝ Լեւոն եւ Անժէլ Հաճեքեաններու եւ Յովհաննէս Ստեփանեանի: Բի՛ւր օրհնութիւն Չեզ ի Ս. Էջմիածնէն:

Ողջ լիբուք ի Տէր. գորացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, եւ յաւետ օրհնեալ ի Մենջ. Ամէն:

### Գ ԱՐԵԳԻՆ Ա

### ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

*Տուալ Կոնդակալ ի 18 Ապրիլի  
Յամի Տեառն 1999 եւ ի Թուին Հայոց ՌՆԽԸ  
ի Մայրավանս Արքոյ Էջմիածնի  
Ընդ համարաւ Է/225*

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԳՎԿԸ  
 ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՀԻ ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻՆ «Օ. ՍԱՀԱԿ-Ս.  
 ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՄԻՐԵՑԵԱԼ ՍՊԱՍԱՌՐԻՆ ՀԱՅ ԳՊՐՈՒԹԵԱՆ  
 ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՈՑ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ  
 ՄԵՇԱՆՈՒՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՀԻ ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻՆ  
 ՈՐ ՁԵՐԵՒԱՆ. Ի ՀԱՅԱՍՏԱՆ**

Ձեր ծննդեան վաստակաբեռն ութսունամեակի սա օրերուն սիրով կ'արձա-  
 նագրենք, որ տարիներ շարունակ Դուք հայրենիքը ներկայացրեցիք Սփյուռ-  
 քում եւ Սփյուռքը՝ Հայրենիքում, գծագրելով աշխարհասփիտ մեր ժողովրդի  
 հոգու եւ քարտեզի գոյներու խճանկարը:

Հայաստանեան ընթերցողներու սրտերուն մէջ Դուք վառ պահեցիք  
 կարօտն ու յիշատակը մեր կորսուած հայրենիքին, իսկ անոր սփիւռքուած  
 բեկորներուն խանդավառեցիք հայրենի կեանքին այլազան քնազաւառներուն  
 մէջ տարեցտարի այրձանագրուող նոր յաջողութիւններով:

Ձեր «Նօսք իմ որդուն» սքանչելի բանաստեղծութիւնը որպէս մշտատեւ մի  
 պատգամ, շարունակ կը հնչէ «օտար եւ ամայի» ճամբաներուն վրայ քայլող  
 սփիւռքեան քարտաններուն համար:

Ի զնահատութիւն Ձեր գրական ու հասարակական բոլորանուէր  
 ծառայութիւններուն եւ հայոց մշակոյթին ու դպրութեանը բերած մեծ նպաստին,  
 այսու Հայրապետական Կոնդակաւ, յանուն մեր ազգի քրիստոնէական ծննդա-  
 վայրի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Ձեզի կը շնորհենք

**Ս. ՍԷՇԷԿ - Ս. ՄԵՍՐՈՊ 2<sup>1</sup> անշահե:**

Ի խորոց սրտի կ'աղօթենք առ Ամենաբարձրեալն Աստուած, որ Ձեզի  
 պարգեւէ ստեղծագործական արգասաբեր աշխատանքի երկար տարիներ,  
 քաջատողջութիւն եւ երջանկութիւն անձնական կեանքում, ի ծառայութիւն  
 հայոց «փոքր ածու»ի «բանական անդաստանին»:

Ողջ լերուք ի Տեր, գորացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, եւ յաւետ օրհնեալ ի Մենջ.  
 Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա  
 ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

*Տոսա Կոնդակա ի 15 Ապրիլի  
 Յամի Տեան 1999 եւ ի Թուիս Հայոց ՌՆԽԸ  
 ի Մայրապանս Արքոյ Էջմիածնի  
 Ընդ համարաւ Է/229*

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԳՐԱԿԸ  
ԱՐՓԻՆԵ ՓԵՂԼԻՎԱՆՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ»  
ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՄԻՐԵՅԵԱԼ ԳՍՏԵՐ ՄԵՐՈՒՄ ԵՒ  
ՀԱՐԱՋԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԾՈՌՈՅ ՍՐՔՈՅ ԷՋՄԻԱՇՆԻ  
ՏԻԿԻՆ ԱՐՓԻՆԷ ՓԵՂԼԻՎԱՆԵԱՆԻՆ  
ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՃԵԼԵՍ, ԱՄՆ**

Սրտի խոր գոհունակությամբ իմացանք Ամերիկայի Արեւմտեան քեմի բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Վաչէ Աղբալիսկոպոս Յովսէփեանէն, որ լրացել է Ձեր երաժշտական եւ ուսուցչական նուիրեալ գործունէութեան 40-ամեակը:

Անձնապէս մօտէն ծանօթ եղած ենք Լիբանանի մէջ երկար տարիներ Ձեր երաժշտական տաղանդներով եւ ուսուցչութեամբ մատուցուած ծառայութիւններուն եւ մեր երիտասարդ սերունդին մէջ երաժշտութեան նկատմամբ սէր եւ հետաքրքրութիւն ստեղծելու աշխատանքներին:

Լոս Անճելես հաստատուելէն ետք ալ, Դուք շարունակեցիք Ձեր հետեւողական ու անսակարկ ծառայութիւնը՝ զանազան ամիսներով հրապարակային ելոյթներ ունենալով եւ խանդավառելով մեր ժողովուրդը:

Խորապէս ուրախ ենք, որ ի գնահատութիւն Ձեր նուիրեալ ծառայութեան, Ձեր նախկին աշակերտներէն եւ գնահատողներէն մասնատոր յանձնախումբ մը կազմուած է՝ յատուկ հանդիսութեամբ նշելու Ձեր կեանքի այս կարելոր հանգրուանը:

Մենք նոյնպէս մեծապէս կը գնահատենք Ձեր բազմաբեղուն ծառայութիւնները եւ այսու Հայրապետական կոնդակաւ Ձեզի կը շնորհենք մեր բոլորի Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

**Ս . ՍԱՀԱԿ - Ս . ՄԵՍՐՈՊ 24-12-1999:**

Ի խորոց սրտի կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի պարգեւ բազառողջ եւ երկար կեանք, որպէսզի շարունակէք Ձեր սպասն ընծայել ազգին եւ արդարօրէն վայելէք Ձեր անձնուէր գոհողութեանց բարիքները:

Ողջ լեռուք ի Տէր, գորացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, եւ յաւեւ օրինեալ ի Մէնջ. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

*Տոսա Կոնդակս ի 20 Ապրիլի  
Յամի Տեառն 1999 եւ ի բովին Հայոց ՌՆԽԸ  
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի  
Ընդ համարաւ է/228*

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ  
ՏԻԱՐ ՄՈՐԻՍ ՊԵՆՆԵՔՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ»  
ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՍԻՐՑԵԱԼ ՈՐԴԻՈՑ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ  
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐՔՈՅ ԷԶՄԻԱՇՆԻ  
ՏԻԱՐ ՄՈՐԻՍ ՊԵՆՆԵՔՅԱՆԻՆ  
ՈՐ Ի ԼԻՈՆ, Ի ՅՐԱՆՍԱ**

Հոգեկան ուրախութեամբ տեղեկացանք Երուսալյի Կաթողիկոսական Պատուիրակի Լիոնի շրջանի Փոխանորդ Գերաշնորհ Տ. Նորվան Եպիսկոպոս Զաքարեանին, որ բազում տարիներ օրինակելի հետետղականութեամբ եւ հաւատարմութեամբ Ձեր անբողջական եւ անվերապահ մասնակցութիւնը բերած էք Լիոնի մեր Եկեղեցոյ վարչութեան մէջէն ազգային-եկեղեցական կեանքին: Ձեր սպասարկութեան ընթացքին պարտականութեան եւ համեստութեան առաքինութիւնները եղած են Ձեզ առաջնորդող սկզբունքները Եկեղեցոյ հանդէպ Ձեր սիրոյն ամստուէր սիրովը:

Ի գնահատութիւն Ձեր բազմամեայ և օգտաշատ ծառայութեանց, այսու Հայրապետական Կոնդակա Ձեզի կը շնորհենք Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

**Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ 24-22-22:**

Կ'աղօթենք առ Ամենակալն Աստուած, որ երկար տարիներ պարգևէ Ձեզի, քաջառողջութեամբ, որպէսզի շարունակէք առաւել օգտակար գործերով Ձեր սէրը արդիւնաւորել ի հաճոյս Աստուծոյ և ի պայծառութիւն Լիոնի մեր Ս. Եկեղեցոյ:

Ողջ լիբրուք ի Տէր. գորացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, եւ յաւետ օրհնեալ ի Սէնց. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

*Տուալ Կոնդակս ի 5 Մարտի  
Յամի Տիառն 1999 եւ ի Թուին Հայոց ՌՆԽԹ  
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի  
Ընդ համարաւ Է/223*

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԳՐԵԳՐ  
ՏԻԱՐ ՎԱՅԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ «Ա. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ»  
ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՄԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱՉԱՍԻՆ  
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՇԻ  
ՏԻԱՐ ՎԱՅԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ  
ՈՐ Ի ՅԼՈՐԻՏԱ, Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱ ԱՄԵՐԻԿԱՅԻ**

Մյուսի խոր գոհունակութեամբ իմացանք Ամերիկայի Հայոց Արեւելեան թեմի բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեանէն Ձեր երկար տարիներու հետեւողական ու անսակարկ ծառայութեանց մասին:

Դուք եղած էք հիմնադիր եւ գործօն անդամներն թեմի Հայ Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան: Հախաւային Ֆյորիտայի համայնքի կազմութեան եւ հաստատութեան համար ջերմ կերպով աշխատելէն ետք, երկար տարիներ եղած էք Ճիսական Խորհուրդի անդամ եւ թեմական պատգամատր:

Մասնատրապէս որպէս Ֆյորիտա հաստատուած առաջին հայորդիներէն մեկը ըլլալով, ամեն ջանք ի գործ դրած էք նորեկներու գործի եւ բնակութեան յարմարութիւններ ստեղծելու մէջ: Ձեր ժամանակն ու կարողութիւնները անձամբոյն ու նուիրեալ կերպով ի սպաս դրած էք եկեղեցւոյ բոլոր կառոյցներու մէջ, Ձեր պարտականութիւններու մէջ եղած էք անթերի եւ բարեխիղճ:

Ի գնահատութիւն Ձեր բազմաբեղուն ծառայութիւններուն, այսու Հայրապետական Կոնդակա Ձեզի կը շնորհենք մեր բոլորի Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

**Ա. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ 24-2-2000**

Ի խորոց սրտի կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի եւ Ձեր ընտանիքի բոլոր անդամներուն շնորհէ քաջառողջ եւ երկար կեանք, եւ արեւու ճառագայթներուն պէս երջանկութիւն ցօղէ Ձեր կեանքի ամբողջ տեւողութեան վրայ:

Ողջ լերուք ի Տէր, գորացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, եւ յաւետ օրհնեալ ի Անճջ Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

*Տոսա Կոնդակա ի 20 Ապրիլի  
Յամի Տեսան 1999 եւ ի Թուին Հայոց ՌՆՆԸ  
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի  
Ընդ համարաւ Է/227*

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԳՐԱԿԸ  
ՏԻԿԻՆ ՌՈԶ ՀԱԿՈՐՅԱՆ ԲԵՆԸԼՏՁԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ»  
ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՄԻՐԵՑԵԱԼ ԳՍՏԵՐ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ  
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐՔՈՅ ԷԶՄԻԱՇԻՆ  
ՏԻԿԻՆ ՌՈԶ ՅԱԿՈՐԵԱՆ ԲԵՆԸԼՏՁԻՆ  
ՈՐ Ի ՅԼՈՐԻՏԱԼ Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՍԵՐԻԿԱՅԻ**

Սրտի խոր գոհունակությամբ իմացանք Ամերիկայի Հայոց Արեւելեան թեմի բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպս. Պապսամեանէն Ձեր երկար տարիներու հետեւողական ու անսակարկ ծառայութեանց եւ պարկեշտ ու տոկուն աշխատասիրութեան մասին:

Երիտասարդ տարիներէն իսկ դուք եղած էք հաւատարիմ Ձեր հայկական ոգիին եւ նախանձախնդիր՝ Հայ Եկեղեցւոյ առաքելութեան:

Առաջինն էք եղած Հարաւային Ֆլորիտայի մէջ, որ աշխատած էք Հայ Եկեղեցւոյ նոր ծովսի հաստատման համար: Աշխոյժ կորովով ձեռնարկած էք պահանջուած թիով ստորագրութիւններ հաւաքելուն, որով եւ հաստատուած է տեղւոյն եկեղեցական համայնքը:

Համայնքի հաստատումէն ետք ամբողջ տարիներ կամատր կերպով եւ ձեռնհասօրէն վարած էք համայնքի քարտուղարուիի պաշտօնը՝ երկար տարիներ լինելով նաեւ Ծխական Խորհուրդի անդամ եւ թեմական պատգամատր:

Ի գնահատութիւն Ձեր բազմաբեղուն ծառայութիւններուն, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք մեր բոլորի Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

**Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ շխնչանք:**

Ի խորոց սրտի կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի պարգեւէ քաջառողջ եւ երկար կեանք՝ որպէսզի շարունակէք Ձեր սպասը ընծայել ազգին ու եկեղեցուն եւ արդարօրէն վայելէք Ձեր անձնուէր գոհողութեանց քարիքները այժմ եւ միշտ:

Ողջ լերուք ի Տէր, գորացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, եւ յաւեւ օրհնեալ ի Սէնջ. Ամեն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

*Տօաւ Կոնդակս ի 20 Ապրիլի  
Յամի Տեանն եւ ի Թուին Հայոց ՌՆԽԸ  
ի Սայրավանս Սրբոյ Էջմիածնի  
Ընդ համարու Է/226*

**ԿԱԹՈՂՎԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ  
Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ  
ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՍՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ  
ԱՁԳԱՅԻՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԹԱՏՐՈՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ**

(19 ապրիլ, 1999 թ.)

Մեծագնիվ հոբելյար.

Հարգարժան ներկաներ.

Հանուն Վեհափառ Հայրապետի. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության և հավատացյալների հաճելի պարտականությունն ունենք ջերմորեն ողջունելու հոբելյանական այս հանդիսության բոլոր մասնակիցներին և օրհնություն ու քարեմաղթանքներ բերելու սիրելի հոբելյարին՝ հայ մեծանուն և վաստակաբեռն բանաստեղծուհի տիկին Միլվա Կապուտիկյանին:

Դժվար է ճանաչում ձեռք բերելը, առավել դժվար՝ գնահատված ու սիրված լինելը: Համընդհանուր ճանաչումն ու սերը անխուսափելիորեն գալիս են, երբ ձեռաց գործերում, հոգու և մտքի արարումներում կիզակիտվում են հայրենի երկրի և ժողովրդի ձեռքբերումներն ու կորուստները, սլացքներն ու սպասումները, քաջահայտվում է մարդն իր ներաշխարհով: Այսպիսին է Միլվա Կապուտիկյանի ստեղծագործական կյանքի պատկերագիրը՝ նրա գրական, հրապարակախոսական, թարգմանական երկարամյա և բեղուն ժառանգությունը, որն առանձնանում է պարտքի և պատասխանատվության ընդգծված ապրումով, և որում տեսանելի է Հայրենիքի ու աշխարհասփյուռ հայության կշռույթներով ապրող պարտավորված անհատը:

Սևակ, Շիրազ, Դավթյան, Էմին, Մաթևոսյան և քանկագին ուրիշ անուններ... Եվ այս շարքում՝ Միլվա Կապուտիկյան. գրչի ու մտքի մշակներ, ովքեր իրենց ստեղծագործական երկունքներում տասնամյակներ շարունակ փայլափայտում էին հայոց անկախության Մանկանը, կորուսյալ պետականության վերածննդի նվիրական երազը: Արդարև, երանյալ եք Դուք, մեծարգո հոբելյար, քանզի տեսաք հայոց անկախությունը, և երիցս երանյալ, որ ինքնիշխան մեր պետությունն ու ժողովուրդն այսօր մեծարում են Ձեզ՝ վաստակյալ Ձեր կյանքին ընծայելով հաղթության դափնիներ:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, նրա արժանըմտիք գահակալ Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը, քարծր գնահատելով հավատավոր իր դստեր՝ Միլվա Կապուտիկյանի վաստակը և հայադյուն ոգին, որ աստվածամերձ ժամանակներում առաջնորդում էր նրան դեպի Մայր Աթոռ

Սուրբ Էջմիածին, պարզևատրել է Ամենայն Հայոց Հայրապետության քարձր՝ «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանով:

Մեծագնիվ հոբելյար, ուրախ ենք հայտնելու, որ շքանշանը և Հայրապետական օրհնագիրը Ձեզ կհանձնեն Մայր Աթոռում, հատուկ հանդիսավորությամբ:

Կրկին մեր շնորհավորանքները բերելով Ձեզ, աղոթքով առ Բարին Աստված, մաղթում ենք ստեղծագործական նորամոր ներշնչանքներ և լիազգաց երջանկության բազում առիթներ: Թող Ձեր գրչով փառաբանված աստվածապարզև մեր հողում իրական դառնան իղձերն ու երազները մեր ժողովրդի: Թող ամենուր «խոսք իմ որդուն» պատգամը հարատև արձագանքի հայ մանուկների մաքուր ու վճիտ հոգիներում՝ սրբաբանվելով նրանց շուրթերին:

Արևշատ կյանք Ձեզ, նոր հոբելյաններ:

Օրհնությամբ՝

**ՎԱՐԵՉԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆ**  
Կարողիկոսական Ընդհանուր Փոխանորդ



## ՄԵՃ ԵՂԵՌՆԻ 84-ՐԳ ՏԱՐԵԼԻՅԸ

Ամեն տարի ապրիլ 24-ը նորից ու նորից հիշեցնում է մեզ 1915 թ. կատարված արևմտահայության անմարդկային ու դաժան կոտորածը: Ինչպես կարող ենք չհիշել այն մեկ ու կես միլիոն հայ զավակներին, ովքեր իրենց ամենդարյունը թափեցին Տեր-Ջորի անապատում, Մասնո լեռներում և Մշո դաշտերում: Գաժան է ապրիլյան այս օրն ամեն մի հայորդու համար. երբ նա «Սուրբ, սուրբ»-ի հոգեթով մեղեդու հնչյունների ներքո, քախիծը դեմքին, դանդաղ քայլերով ուղղվում է դեպի կրակն անմար՝ խոնարհվելու եղեռնագոհ հայորդիների սուրբ հիշատակին: Հայոց պատմության այս սև ու դժբախտ օրը ոչ ոք և ոչինչ երբեք չի կարող ջնջել հայ սերունդների հիշողությունից:

Այս տարի ապրիլ 24-ը, ինչպես ամեն տարի, տխրություն ու քախիծ քերեց հայորդիներին: Մեծ ու փոքր, ահել ու ջահել, տխուր դեմքերով, դանդաղ քայլերով գալիս էին դեպի կրակն անմար՝ կրկին անգամ խոնարհվելու Հայոց Մեծ եղեռնի զոհերի խնկելի հիշատակին:

Ժամը 10.30-ն էր, երբ Վեհարանի գլխավոր մուտքից, Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսյանի գլխավորությամբ, Մայր Աթոռի միաբանները ճանապարհվեցին դեպի Եղեռնի հուշարձան՝ Ծիծեռնակաբերդ, ևս մի անգամ խուճկ և աղոթք մատուցելու զոհվածների անմահ հիշատակին: Հասնելով հուշարձանի մոտ, միաբանները քափոք կազմած Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, ՀՀ վարչապետի և Ազգային Ժողովի նախագահի հետ դանդաղ քայլեցին դեպի անմար կրակը, ուր զետեղվելու էին Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Գարեգին Ա-ի, ՀՀ նախագահ Ռ. Ջոխարյանի և պետական-պաշտոնատար այլ անձանց կողմից դրվելիք ծաղկեպսակները: Իսկ հետո Տ. Գարեգին Արքեպիսկոպոսի հանդիսատեղությամբ կատարվեց Հոգեհանգստյան արարողություն՝ ի խաղաղություն զոհված ամենդ հոգիների:

Վերջապես միաբանները վերադարձան Մայր Աթոռ՝ մասնակցելու Սուրբ Պատարագի արարողությանը, որ մատուցվում է ամեն տարի, ապրիլ 24-ին, բոլոր հայկական եկեղեցիներում: Պատարագի ընթացքում պատարագիչը՝ Տ. Միքայել Ժ. վրդ. Աջապահյանը, խորանից ընթերցեց Վեհափառ Հայրապետի ոգեկոչման խոսքը՝ նվիրված նահատակների հիշատակին (տես էջ 8):

Պատարագի վերջում, Գարեգին Արքեպիսկոպոսի հանդիսատեղությամբ և հավատացյալների հոծ բազմության ներկայությամբ, Տաճարից դուրս, Եղեռնի խաչքար-հուշարձանի առջև, կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Եվ այսպես, ամեն տարի ապրիլ 24-ը հիշում է յուրաքանչյուր հայորդի և չի մոռանում, թե ինչպես այդ օրհասական օրը բազմաբլուր ամենդ հայորդիներ գոհ դարձան չարի ու խավարի ուժերին և բուրբակյան յաթաղանին:

Խուճկ և օրհնություն Ապրիլյան ամենդ զոհերի հիշատակին:

**ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ**  
**Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՍ. ՆԵՐՍԻՍՅԱՆԸ ՄԱՆԱԿՑԵՑ**  
**Հ. ՄՈՐԳԵՆԹԱՈՒԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՀՈՂԻ**  
**ՏԵՂԱՓՈՒՍՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ**

Սույն թվականի ապրիլի 23-ին Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսյանը մասնակցեց Երևանում, Եղեռնի հուշարձանի մոտ, տեղի ունեցած Հենրի Մորգենթաուի գերեզմանահողի տեղափոխության և հուշարձանին կից հուշապատի մեջ զետեղման արարողությանը, որը կազմակերպել էր Գիտությունների Ազգային Ակադեմիան:

Հենրի Մորգենթաուն (1856-1946 թթ.) ամերիկյան դիվանագետ էր և գործարար: Մասնագիտությամբ իրավաբան էր: 1913-1916 թթ. ԱՄՆ-ի դեսպանն էր Թուրքիայում, իսկ Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուց հետո պաշտպանել է նաև Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Իտալիայի, Բելգիայի շահերը Օսմանյան կայսրությունում: 1915 թվականից Մերձավոր Արևելքում Ամերիկյան Օգնության կոմիտեի (Ամերկոմ) փոխնախագահն էր: Մեծ եղեռնի օրերին, հանդիպելով Թալեաթ և Էնվեր փաշաների հետ, ապարդյուն կերպով փորձել է կանխել արևմտահայության տեղահանությունն ու կոտորածը: Իր հուշագրություններում Հ. Մորգենթաուն փաստական մանրամասնություններով նկարագրել է արևմտահայության ողբերգությունը՝ այն համարելով պատմության ամենասարսափելի էջերից մեկը:

Արարողությանը ներկա էին նաև Ազգային Ժողովի նախագահ Խոսրով Հարությունյանը, Հայաստանում ԱՄՆ-ի դեսպան Մայքլ Լեմոնը, ինչպես նաև՝ Մորգենթաուի թոռը, երկու ծոռները և օտարերկրյա հյուրեր: Նախ քանցան խոսքով հանդես եկավ ակադեմիկոս Գ. Բյուսյանը: Ապա հաջորդեցին այրն. Խոսրով Հարությունյանի և հրավիրվածներից մի քանիսի խոսքերը՝ նվիրված Մորգենթաուի հիշատակին: Վերջում իր սրտահույզ շնորհակալական խոսքով հանդես եկավ Մորգենթաուի թոռը:

Արարողության ավարտին, Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսյանի հանդիսադրությամբ և երեք քահանաների ու երկու սարկավագների մասնակցությամբ, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ  
ՇՆՈՐՀՎԵՑ ՎԱՆԱՉՈՐԻ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ԱՆՎԱՆ  
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՄԵԳԱԼԸ**

Մայրիկի 26-ի երեկոյան Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Նորին Սրբություն Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսին հանձնվեց Վանաձորի Վազգեն Առաջինի անվան կրթահամալիրի «Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջին» մեղալը:

Վեհափառ Հայրապետին, որպես կրթօջախի Պատվավոր հոգաբարձուի, կրթահամալիրի առաջին այս մեղալը շնորհվեց դպրոցի կայացման եւ կրտսեր դպրոցի ցածր դասարանների աշակերտների համար կառուցվող մասնաշենքի շինարարության ֆինանսավորման գործում Նորին Սրբության գլխավորությամբ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ունեցած ներդրման համար:

*ՄԱՍԼՈ ՂԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ*

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ**  
**ԱՐԱՄ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՅԸ**  
**ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ**

Ապրիլի 14-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին տեսակցելու և շուտափույթ ապաքինման ու առողջության Իր քարեմադրանքներն անձնապես փոխանցելու նպատակով Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետը:

Հաջորդ օրը, ապրիլի 15-ին, Նորին Սրբությունը, ընկերակցությամբ Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, ընդունվեց ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի կողմից:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին Հայաստանի ներկա կացությանը վերաբերող խնդիրներ:

Ապրիլի 17-ին Արամ Ա Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Գևորգյան Հոգևոր Ծեմարանի ուսանողության հետ՝ քաջխելով իր օրհնությունները:

Նույն օրը, երեկոյան, Նորին Սրբությունը մեկնեց Լիբանան՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության մտտավայր:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 4-ԻՆ ՏԱՐԵԳԱՐՉԸ

Բանաստեղծական երեսակայությունը ժամանակը նմանեցրել է ջրերի հոսքի, որն անկասելի ընթացքով առաջ ու առաջ է վազում: Աննկարագրելիորեն արագ են հոսում ջրերը՝ հետագծում թողնելով կա՛ն ջրառատությունից հափրացած ու ճահճուտի վերածված տարածքներ եւ կա՛ն էլ կանոնավորապես սնուցված փարթամ մարգագետիններ:

Նույնն է պարագան նաեւ ժամանակի մեջ գործող մարդկանց, որոնց անցած ճանապարհին կա՛ն վարդեր են բուսնում եւ կա՛ն էլ համատարած ամայության են վերածվում մույնիսկ արեւադարձային ճոխության պարտեզները:

Ահա Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի գահակալության չորրորդ տարեդարձի այս օրերին հետահայաց մայվածքով երեսան են գալիս ու հառնում Նորին Սրբության բազմակողմանի գործունեության այն պատկերները, որոնց միջից խոսում է անապատը օազիսի վերածող մեծ մարդը, հայ ժողովրդի ու Հայ Եկեղեցու արժանի գավակն ու Հայրապետական Աթոռի գահակալը:

Չորս տարիներ առաջ, ապրիլի 9-ին էր, որ Վեհափառ Հայրապետը «կամօքն Աստուծոյ եւ ընտրութեանը ազգիս Հայոց» արժանավորապես բազմեց Լուսավորչի գահին՝ ուխտի համբույրը դրոշմելով Ս. Էջմիածնի Մայր Տաճարի Իջման սրբազնասուրբ Սեղանի ծաղկյա խաչին:

Եվ այս չորս տարիների վաստակն ու քրտինքը երախտագիտություն դարձրած Մայրավանքի միաբանության սրտերից քաղված ոգուն ենք առ Նա՝ Հայրապետը Հայոց.

**Հարգա՛նք քեզ, Հովիվ,  
Հարգա՛նք քեզ, Ծառա,  
Հարգա՛նք քեզ, Թարգման՝  
Չբառակերտված մեր լուռ իղձերի:**

Ապրիլի 4-ին, Վեհափառ Հայրապետի գահակալության չորրորդ տարեդարձի առիթով, հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ողջ միաբանության, Ջատկական Ս. Պատարագի ընթացքում, Ավագ Ս. Սեղանից Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը, դիմելով Նորին Սրբությանը, շնորհավորանքի ու բարեմաղթանքի հեռելյալ խոսքն ասաց.

*«Միրելի բարեպաշտ հայրորդիք,*

*Ջրհարոսի Հրաշափառ Հարության, Միրո հաղթության, Այանքի շքահանդեսի այս օրը թե՛ մեր եւ թե՛ մեր ժողովրդի համար ունի նաեւ մեկ այլ ուրախություն: Չորս փարիներ առաջ Լուսավորչի գահին բազմեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին*

Ա ազգընտիր Հայրապետը: Չորս տարիներ՝ Հայրապետական անսակարկ սպասավորության, անհուն աշխատանքի ու նվիրվածության տարիներ, որոնք արգասավորվեցին խոսքի ու գրչի բազմաշնորհ ու բազմաբեղուն արդյունավորությամբ, միջհիկեղեցական ու միջպետական մի շարք հանդիպումներով, հովվապետական մեծաթիվ այցելություններով, որոնց միջոցով ազգիս Հայրապետին իր հայրական խոսքն ուղղեց մեր ժողովրդին՝ ի մխիթարություն եւ ի գործացումն նրա հոգեւոր առաջադիմության, ի պանծացումն մեր Եկեղեցու հեղինակության օտար՝ միջհիկեղեցական ու միջպետական ասպարեզներում, որպեսզի շինանա մեր հայրենին, գորանա հայոց պետականությունը եւ պայծառանա Հայ Եկեղեցին:

Վեհափառ Տեր, հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ողջ միաբանության, հանուն Գերագույն Հոգեւոր Խորհրդի, մեր հավատարմացյալ ժողովրդի, գալիս ենք որդիաբար շնորհավորելու Ծեզ՝ գահակալության 4-րդ տարեդարձի առթիվ, մեր աղոթքը վերառաքելու ու Ծեզ համար Տիրոջից հայցելու երկար տարիների կյանք, որպեսզի հովվապետական ու հայրապետական լուսավորչահասարար Աթոռն ու Գավազանը առաջնորդեն մեզ ու մեր ժողովրդին դեպի բարին ու խաղաղությունը:

Կյանք, արհիւարություն եւ խաղաղություն Ծեզ, Վեհափառ Տեր»:

Ապրիլի 9-ին Մայր Տաճարում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 4-րդ տարեդարձի առթիվ, հանդիսավորապես կատարվեց «Հայրապետական մաղթանք»՝ մասնակցությամբ թեմակալ առաջնորդների, եպիսկոպոսաց դասի, Մայր Աթոռի միաբանության: Արարողության հանդիսադիրն էր Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը:

«Հայր մեր»-ին հետեւեց «Հրաշափառ» հոգեշունչ շարականի երգեցողությունը: Գեորգյան Հոգեւոր Ենծարանի տեսուչ Տ. Հայկազուն Ժ. վրդ. Նաջարյանն ընթերցեց «Ես եմ հովիվն քաբ...» Ավետարանական հատվածը, որից հետո երգվեց «Հոգիդ Աստուած» հոգեգմայլ մեղեդին:

Այնուհետեւ Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանն ընթերցեց աղոթք, կատարվեց «Անդաստան»:

Միաբանության ամուճից շնորհավորանքի խոսք ասաց Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթրոյանը.

«Միրեցյալ միաբանակից եղբայրներ ի Քրիստոս՝ Գերաշնորհ, Հոգեշնորհ, Արժանապատիվ Հայրեր, Բարեշնորհ Սարկավազներ, հավատարմացյալ ժողովուրդ, այսօր կարարեցիք «Հայրապետական մաղթանք» մեր սիրեցյալ Հայրապետի գահակալության 4-րդ տարեդարձի առթիվ: Այս շորս տարիների ընթացքում Վեհափառ Հայրապետը կարողացավ բազում նշանակալի գործեր կատարել՝ հոգուր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ու հայ ազգի: Հայրապետի անուպառ կորովն ու աշխատասիրությունը, նրա անմնացորդ նվիրումն իր Եկեղեցուն ու ժողովրդին մեր հոգեւոր կյանքին ու գործունեությանը մի նոր շունչ հաղորդեցին: Նրա գրչից ծնված աշխատությունները ոգեշնչեցին մեզ:

Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնը՝ իր քարոզչական ծավալուն գործունեությանը, Օշականում Ս. Մեսրոպ Մաշտոցի հիշատակին նվիրված դպրատունը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի փայտանոց՝ իր աստվածաբանական, հոգևոր ու հայագիտական հրատարակություններով, Մայր Աթոռի սոցիալական բնույթի զարգացման ծրագրերը Վեհափառ Հայրապետի շրջանայա գործունեության իտսուն վկաներն են:

Վերաբացվեց Գեորգյան Հոգևոր Ենմարանը, կրթօջախ, որը մեծ հոգևորականներ է փոխել ու համոզված ենք, որ դեռևս նման մեծություններ կպարզելի մեր ժողովրդին: Այս ամենի փառասպակը, գազաբնակներն է լինելու Երևանի Մայր եկեղեցու կառուցումը, որը, անշուշտ, համայն հայության համար պիտի լինի ուխտի ու աղոթքի Տաճար:

Ընդհատված Վեհափառ Հայրապետին՝ մաթթիով քաջառողջություն, Հայրապետական գահակալության երկար փառքներ: Թող նրա շնորհում մեզ առաջնորդող Հայրապետական գավազանը ժողովուն լինի, և Տերն իրականություն դարձնի Վեհափառի բոլոր երազանքները, ամեն»:

Այնուհետև դպրաց դասի կատարմամբ հնչեց «Ամեն հայի» Հայրապետական մաթթերգը, ու միաբանները թափօրով շարժվեցին դեպի Վեհարան՝ այնտեղ համդիսավորապես շնորհավորելու Վեհափառի գահակալության տարեդարձը:

Մայր Աթոռի միաբանության, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների և բազմաթիվ հավատացյալների անունից Վեհափառ Հայրապետին շնորհավորանքի և բարեմաղթանքի խոսք ասաց Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գաբրիել արքեպս. Ներսիսյանը:

«Վեհափառ Տեր, մեծարգո նախարար, Գերագույն Հոգևոր Խորհրդի հարգարժան անդամներ, սիրելի հոգևոր եղբայրներ, պաշտոններուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և բարեպաշտ ժողովուրդ,

Այսօր հավաքվել ենք մեր սիրելի ծնողի՝ Վեհափառ Հայրապետի գահակալության 4-րդ փառնդարձի առթիվ, հավաքվել ենք, թերևս, ոչ այնքան շնորհավորելու Հայոց Հայրապետին և անդրադարձ ունենալու անցած չորս փառքների ընթացքում իր արչանագրած հաջողություններին, կատարած աշխատանքներին ու գործերին, որքան արդաշայտելու մեր որդիական սերը հանդեպ Հայոց Հայրապետը, նորոգելու ծառայության մեր ուխտը իր և մեր ժողովրդի առջև, մեր աղոթքները վերադարձելու առ Բարչրայակ Աստված՝ հայցելով Երկնավոր Տիրոջից երկար կյանք ու արեւշարություն Հայոց Հայրապետին:

Վեհափառ Տեր, ինչպես ասացի, առանցնակի շպիտի անդրադառնանք Քրիստոսի Հարության խորհրդի վրա խարսխված Ձեր կյանքին ու գործին՝ ուղղված հայրենիքի պայծառությանն ու Եկեղեցու շինությանը: Այս օրերին այդ խնդրին շարերը պիտի անդրադառնան, գրեն, զնահարեն, վերլուծեն: Մենք պարզապես ցանկանում ենք արդաշայտել հայրության այն զգացումը, որը վերջին յոթ ամիսների ընթացքում մեր զգացումների մեջ

տիրապետողը եղավ: Դա բխում է նրանից, որ հոգևոր նոր ուժեր ու կորով բացահայտեցինք Ձեր անչի մեջ: Երկու ծանր վիրահատություններ տարաք, կյանքին սպառնացող վրանգի առջև գրնվեցիք, սակայն ես, որ Ձեր կողքին էի, նույնիսկ այդ դժվարին պահերին հանչին Ձեզ տեսա քաջ, անվեհեր, հերոս մի հոգեւորականի, Հայ Եկեղեցու Պեպի, Հայ Եկեղեցու սպասավորի: Այդ զգացումը մի նոր հոսանք, ոգի եւ գուրեպնդում է հաղորդել ինչ, իմ կոչմանը նորովի նվիրվելու մղում եղել ինչ համար:

Վեհափառ Տեր, Ձեր գահակալության այս ուրախ, պայծառ փոնի առիթով, հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնետնության, Գերագույն Հոգևոր Խորհրդի, մեր եպիսկոպոսաց դասի, միաբանակից եղբայրների, Ձեզ ենք բերում մեր լավագույն բարեմաղքանքները եւ, իբրեւ այդ ամենի արտահայտություն, ցանկանում ենք ընծայաբերել Հակոբ Կոջոյանի բնանկարներից մեկը»:

Հանդիսության ընթացքում իրենց ոգեշունչ ու զեղեցիկ կատարումներով Վեհափառ Հայրապետին քավականություն պատճառեցին Արարատյան Հայրապետական թեմի Հայոթյաց տների սաները, «Մանկունք» եւ «Հայկազունք» մանկական երգչախմբերը:

Այս Տ. Խորեն արեղա Հովհաննիսյանը Կանդիսավորայես ընթերցեց Վեհափառ Հայրապետի խոսքը.

«Ահա լրիվ չորս տարիներ անցան այն օրից, երբ Ս. Էջմիածնի Մայր Տանաթի Արքագնաստրք Խորանի վրայ ծունկի եկայ եւ ուխտս կատարեցի որպէս Նորընտիր Կաթողիկոս Ամենայն Հայոց՝ շարունակելու իմ սպասարուրութիւնը Հայց. Առաքելական Ս. Եկեղեցույ պատասխանատուութեան Բարձրագոյն աստիճանի վրայ:

Այսօր համախմբուած էք Վեհաբանի շքեղ այս տեսին մէջ շնորհատրելու համար 4-րդ տարեդարձը: Ընորհակալութիւն չեզ չեր այս զեղեցիկ եւ օրինակելի ոգոյն համար:

Բայց այս տարի 4-րդ տարեդարձը ուրիշ իմաստ եւ տարողութիւն, ուրիշ արչագանք ունի իմ մէջ չեր բոլորին ծանօթ առողջական պատճառներով: Երբեք պիտի չուզէի, որ այս վիճակիս մէջ ընդունէի չեզ: Բայց Աստուծոյ կամքն է, ինչպէս առածը ասում է. «Մարդը կ'առաջադրի՝ Աստուած կը տնօրինի»:

Ես փառք կուրում Աստուծոյ, որ այս չորս տարիները շնորհեց ինչ Ս. Գրիգոր Լուսատրչի հեղինակութեան եւ պարտատրութեան գաեից ծառայել իմ ժողովրդին յարկապէս Մայր Հայրենիքի հողի վրայ եւ այլուր՝ Արցախի եւ սիւրբան հայկական համայնքներին: Թէ ի՞նչ կատարուեց այս չորս տարիների ընթացքում՝ թող Աստուած եւ պարտութիւնը լինեն զերագոյն ճանաչողը եւ արժուորողը: Ես մի բան զիտնմ, ինչ ալ կեանք ունենամ եւ գործելու հնարատրութիւն՝ այդ ընծայելու եմ մինչեւ կեանքիս վերջին շունչը Աստուծուն, իմ ժողովրդին, իմ հայրենիքին:

Աղօրում եմ, որ Բարձրեայն Աստուած զօրացնի չեզ բոլորիդ, որպէսզի



յարութեան շունչով առաջնորդուած առաւել հաւատարացնէք եւ ճիւղացնէք յիր սպասը Հայց Առաքելական Ս. Եկեղեցւոյն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջից:

Ողջ լիրութ ի Տէր. գորացիս շնորհօք Սուրբ Հոգւոյն. եւ յաւեր օրհնեալ ի Մէջ. ամէն»:

Նորին Արքեպիսկոպոս իր շնորհակալական խոսքն ուղղեց նաեւ Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանին. ով անակնկալ կերպով եկավ եւ ներկա գտնվեց հանդիսությանը:

Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության 4-րդ տարեդարձին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում անդրադարձ եղավ նաեւ ապրիլի 11-ին, Կրկնազատկի կիրակի օրը, հրճբացս հանդիսավոր Ս. Պատարագի: Վեհափառ Հայրապետի գահակալության տարեդարձի առիթով հավեր պատշաճի քարոզ խոսեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պապապալյանը.

*«Խնդրեցէք ի Բրիւրոսէ գի շնորհեցէ  
զուս մեզ ընդ երկայն ատուս»*

*«Յանուն Հօր եւ Ռդույն եւ Հոգւոյն Արքոյ. ամէն»*

Միւրեւի՝ հավարացյալներ, փակավին մենք գրնվում ենք Բրիւրոսի հրաշափառ Հարության շնորհների շրջանում: Անգյալ կիրակի փոնեցինք մեր Տիրոջ՝ Հիսուս Բրիւրոսի հրաշափառ Հարության փոնը: Նա մեզ համար իաշվեց, քաղվեց, սակայն իր քաղումից երեք օր հետո, ինչպես մարգարեներն էին գուշակել, մեռելներից հարություն առավ:

Բրիւրոսի Հարությանը հաջորդող կիրակին մեր Հայրապետները կոչել են Կրկնազատիկ կամ Նոր կիրակի:

Մեր Տերը՝ Հիսուս Բրիւրոս, մեռելներից իսկապես հարություն առավ եւ Իր հարությանը նորոգեց մարդկային կյանքը եւ Իր նորաստեղծ Եկեղեցու կյանքը: Բրիւրոսի հարությունն Իր նոր Եկեղեցու հիմնադրությունն է, որովհետեւ աշխարհում ապրող հուսահար մարդկությունը, նրա հրաշափառ հարությանը, հավիրենական կյանքի ու մեռելներից հարության հույսով նորոգվեց:

Կա՞ր արդյոք ավելի մեծ պարգիւ՝ Աստուծու կողմից մարդկությանը շնորհված, քան Աստվածորդու մահվամբ մեզ շնորհված Բրիւրոսի փառավոր հարությունը: Այն հաղթանակ էր՝ փարված մահվան սեւ կապանքների դեմ: Չարկական այս օրերին հավիրենական կյանքի հույսի ճրագն է, որ մեր էության մեջ վերառկայծում է եւ լուսավորում ամբողջ մեր էությունը, ներկան եւ ապագան: Նոր կիրակիի այս օրը մեզ համար հոգեւոր անժխտելի ուրախության ու ցնծության օր է, որովհետեւ Աստուծու կամքով շոքս փարի առաջ, այս օրերին, Հայաստանայց Եկեղեցին ունեցավ իր ազգընտիր մեծ Հայրապետը, Լուսավորչի Աթոռի նոր գահակալը՝ հանչին Գարեգին Ա Ծայրագույն Պատրիարքի եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Հայոց Հայրապետի գահակալությունը եւ այդ առթիվ փառավոր հանդի-



საგარეო ურთიერთობების მინისტრი დიმიტრი გვამყრელიძე (მარჯვნივ) და მისი თანადროშის წევრები.

ստորյունները հղան նոր կյանքի սկիզբ, եւ հավանաբար, նախախնամության կամքով՝ այս տարի եւս Նոր կիրակի օրը փառքով եւ պատվով հիշատակում ենք նրա գահակալության չորրորդ տարեդարձը: Մենք մեծ սիրով եւ վերանորոգ հույսերով մեր ժողովրդի եւ Եկեղեցու հոգևոր կյանքի առաջնորդությունը վստահել ենք մեր սիրելի Վեհափառ Հայրապետին: Մեր նորոգ կյանքի այս երջանիկ օրերին նոր տեսիլներով լիցուն Հայրապետ ունենալը մեզ համար ու՛ հույժ կարևոր է. ու՛ շար թանկ ու միաժամանակ՝ պատվաբեր:

Չորս տարի է անցել Հայոց Հայրապետի գահակալության օրվանից: Նա, որպես հոգատար հովվապետ, առաջին հերթին այցելեց ներքին բոլոր թևերը, եղավ նաև Արցախում, Վրաստանում, Ռուսաստանում, Ուկրաինայում, Ռումինիայում, Ֆրանսիայում, Հեռավոր Արևելքում, Ավստրալիայում, Մինգապուրում, Հոնկոնգում, Անգլիայում եւ Միացյալ Նահանգներում, ինչպես նաև Վարիկանում:

Հելյոյ չէ չորս տարվա ընթացքում այսքան ճամփորդելը, միաժամանակ, որպես Հայրապետ, պատասխանատու անչ, շունչ սպառելը, քարոզներով, պարզամենքով ու հայրական խրատներով իր ժողովրդին նորովի ոգևորություն պարգևելը: Դյուրին չէ նաև ամբողջ հայության խոսունակը եւ ներկայացուցիչը լինել ոչ միայն հայության, այլև մանավանդ միջազգային հանրության առջև: Որ էլ որ գնաց Վեհափառը, հայ ժողովրդի վարկն ու պատիվը շար բարձր պահեց: Նրան հանդիպած բոլոր ասպարեզների մարդիկ այն կարծիքը հայտնեցին. թե որքան բախրավոր են հայ ժողովուրդը եւ Հայաստանյայց Եկեղեցին, որ հայրապետական գահին ունեն բազմած այսպիսի իմաստուն, զարգացած, գործունյա, հեռատես, դիվանագետ մի կարողիկոս:

Վեհափառ Հայրապետը մեր Մայրափանքում նոր շունչ բերեց, վերանորոգեց միաբանական կյանքը, միաբաններին ծառայության, խոնարհության, սիրո, զոհողության եւ նվիրումի կոչեց՝ կենդանի օրինակ դառնալով նրանց համար:

Նա նոր շունչ ու ոգի փչեց հոգևոր դպրոցներին, շար կարևորեց հոգևոր դաստիարակության կոչված ուսուցիչների վերապարտաւորումը, որպեսզի նոր սերունդը կարողանա նրանց միջոցով սրանալ այն, ինչ կորցրել էր անցած 70 տարվա ընթացքում:

Միքելի՝ հավատացյալներ, Վեհափառ Հայրապետի կյանքն ու գործունեությունը, թերևս, կարելի է մի քանի բնագավառների բաժանել, սակայն ես այսօր դրանցից մի քանիսի մասին միայն կհիշատակեմ:

Վեհափառ Հայրապետն առաջին հերթին գրի ու գրականության, գրչի եւ գրքի մարդ է: Նա ոչ միայն արեղծագործում է, այլև քաջալիրում բոլոր գրողներին եւ արեղծագործողներին: Դրա արդյունքը խիստ շոշափելի է: Այս չորս տարվա ընթացքում Մայր Աթոռի տպարանում լույս են տեսել կրոնական եւ հոգևոր՝ դաստիարակչական բովանդակությամբ ավելի քան 200 անուն գրքեր ու գրքույկներ: Դրանց նպաստն անժխելի է նոր սերնդի դաստիարակման կարևոր գործում:

Վեհափառ Հայրապետին արվեստի և մշակույթի մարդ է: Նրա սիրտը բարբախտում է հայ մշակույթի ոգու զարգացման զարկերով. նա ճշմարտապես ոգևորվում է հայ մշակույթի արժեքներով, և ինքը քաջալիրում է դրանց սրեղծունև ու գործադրումը՝ ինքը հու լինելով սրեղծագործ արվեստագիր:

Վեհափառ Հայրապետը նաև դաստիարակ է և ուսուցիչ: Երկար տառապանքներ նա ուսուցանել է: Նրա մտքը համառ կարելի է տեսնել ոչ միայն Հոգևոր Ծննդանի մեծ ու փոքր սաներին, այլ կրթական հաստատությունների ուսանողներին, ովքեր սիրով ունկնդրում են Վեհափառի դասերը, հայրական իրավունքն ու հորդորները՝ կյանքում դրանք անպայման իրականացնելու վճռականությամբ: Ինքը՝ Վեհափառ Հայրապետը հու այցելում է քաղում կրթական հաստատություններ և ուսուցանում ուսանողությանը: Նա սիրում է քաջանել իր խոհերն ու մտածումները, իր գիրելիքները նրանց հետ, որպեսզի նոր սերունդն անի ու մեծանա որպես աստվածավախ, եկեղեցաւեր, քաղաքակիրթ և քաղաքավար սերունդ, որպեսզի նա սիրի իր հողը և նվիրվի իր հայրենիքին ու ժողովրդին, իր մշակույթին ու սրբություններին: Վեհափառը նոր սերնդի ուսանողությանը համարում է ապագայի սերնդացուներ և դաստիարակներ:

Հայոց Հայրապետը նաև ճանաչված էկունենիստ է, համաշխարհային քրիստոնեական Եկեղեցիների միութնական աշխատանքների ջարագով: Նորին Սրբությունը և՛ Աստվածաշնչային ընկերության գործունեության շրջանակում, և՛ հարկապես Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդում ու Մերչանտր Արեւելքի Եկեղեցիների միության մեջ երկա՛ր-երկա՛ր տարիներ շար կարևոր ու երախտաշար ծառայություն է մարտցել՝ ի փառս Հայ Եկեղեցու, ազգի և հայ մշակույթի: Այս ամենով, այնուամենայնիվ, հնարավոր չէ Վեհափառի գործունեությունն ամբողջական կերպով ընտրագրել և ներկայացնել: Վեհափառը ճշմարիտ հովվապետ է, նվիրված հովիվ է՝ մտածող և մտահոգվող իր հորի, իր ժողովրդի հոգևոր կյանքով և նրա հոգևոր սննդով, համաշայն Ավետարանական «Հովիտ քաջ զանչն իր դճէ ի վերայ ոչխարաց» խոսքերի:

Իր՝ շուրջ 50 երկար տարիների հոգևոր կյանքը նա առավելապես ծառայեցրել է հովվական գործին, մարդկանց հոգիները փրկելու, նրանց դաստիարակության և նրանց հոգիների սերնդացանը լինելու աստվածային սրբազան գործին՝ հերեւելով Ավետարանի պարզամիտ. «Հունչք քաղում են և մշակք՝ սակար»: Նա, իրրի իսկական հոգևորական և հովվապետ, միշտ չգրել է մարդկանց վեր բարչրացնել առոյա հոգւերից ու մտահոգութուններից, չգրել է մարդկանց հոգիներն ու սիրտը բարչրացնել դեպի Աստված՝ վեր նյութական առոյայից: Եվ դա վարահորին հաշոդվել է մեր Վեհափառ Հորը:

Միրելի՛ հավատագրյալներ, այսօր Հայաստանայց Եկեղեցու համար շար էական, կարևոր օր է: Ընտրակալ ենք մեր Տիրոջից, որ մեզ շնորհեց Գարեգին Առաջին Կաթողիկոսի նման մի հովվապետ, որ հովվի Սուրբ Գրիգոր Լուսա-

վորչի՝ իրեն հանչնված հուրը եւ առաջնորդ լինի այդ հուրի քրիստոնեական ոգով դաստիարակության գործին եւ ճակատագրի բերմամբ՝ նրա շար դառն օրերի դառնություններն ամոքի եւ վերանորոգելով հասարակի տարիների ընթացքում խախտված նրա եավարը ի Տեր մեր Հիսուս Քրիստոս:

Այսօր նա իր ժողովրդի հոգուն ու մտքին ամուր հենարան է դարձել, այն հոգուն, որ երկար տարիներ շարունակ փորձել են դատարկել, եւ այն մտքին, որ սրիպել են ամլանալ: Այսօր այս ամենը մեզ համար հացից ավիլի կարեւոր է:

Ինքը՝ Վեհափառը, ջերմ հավատալիքն է այն ճշմարտության, որ հոգին՝ առաջնային է մարմնից: Մարդու համար շար ավիլի անհրաժեշտ է Աստու հետ հաղորդակցվելը: Աստու շնորհներով լցվելը, քան թե առօրյա սովորական հոգուներն ու մտահոգությունները հոգալը: Հոգին է, որ կենդանարար է այս աշխարհում, առանց հոգու մարմինը փչացման ենթակա կդառնա:

Միջիլի՝ հավատացյալներ, գահակալության այս տարեդարձի ուրախ օրը շնորհավորենք Ամենայն Հայոց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետին՝ մաղթելով նրան աստվածային անուպատ ուժ ու ծոանդ, Ահարոնի աղոթքի գործությունը, Մովսեսի տեսիլքը, Դավթի ծառայության գիտակցության ուժը, ինչպես նաեւ Սողոմոն Իմաստունի երկնային իմաստությունը՝ հովվելու եւ առաջնորդելու համար Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու նավը դեպի խաղաղ նավահանգիստներ:

Աղոթենք եւ խնդրենք հարուցյալ Փրկչից մեր, որ Իր հրաշալի հարությանը Հայաստանյայց Եկեղեցուն եւ նրա Հովիտակներին պարզեւի նորոգ կյանք՝ բազում տեսիլներով, քաջառողջություն, վերագրնումն իր առողջության եւ երկար-երկար կյանք:

Փառք Բարձրյալն Աստուն: Երկար քաջառողջ կյանք Հայոց իմաստուն Հայրապետին, ամեն»:

\* \* \*

**Խմբագրության կողմից** - Հատկանշական է, որ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության չորրորդ տարեդարձին նախորդեց «Հոռմ-Հայաստան» ցուցահանդեսը, և հաջորդեց Նորավանքի Նորովի վերհասնումը:

Գահակալության հետ հարաբերվող ժամանակային այս պարզ համընկնումների մեջ իսկ արտացոլված են Վեհափառ Հայրապետի գործունեության երկու ամենահատկանշական կողմերը: Առաջինը՝ Եկեղեցիների համեղաբայության գաղափարի շեշտումն ու կարևորումն է այսօրվա աշխարհայնության և նյութականության ալիքների դեմ տեղի տվող հոգևոր արժեքների պահպանության գործում և Հայոց Եկեղեցու բերած նպաստը ընդհանուր քրիստոնեական մշակույթին:

Երկրորդը՝ Նորավանքով ընդգծումն է այն մտքի, որ մեր Եկեղեցին այսօր ևս կենդանի ժառանգորդն է անցյալի իր հոգևոր-մշակութային արժեքների, որոնք ստեղծվել են Գայոց Եկեղեցու կամարների ներքո, և այսօրվա վանքերը նույն կերպ կենդանի ներշնչումի աղբյուրն են լինելու Վեհափառի այնքան սիրելի արտահայտությամբ՝ «Գայ ստեղծագործ ոգու»:

Եթե վերստին ներքին մի խորհուրդ որոնենք դեպքերի ժամանակագրական ընթացքում, ապա կտեսնենք հատկանշական մի իրողություն. գահակալության չորրորդ այս տարեդարձին նախորդող վերջին մեկ տարվա ընթացքում, սկսյալ 1998 թ. ապրիլից, ԱՄՆ-ում բժշկական քննությանը զուգընթաց, Վեհափառ Գայրապետը մասնակցեց Ամերիկայի Գայոց թեմի հիմնման 100-ամյակի նախապես ծրագրավորված հանդիսություններին, թեև բուժման հաջող ընթացքի տեսանկյունից առավել նախընտրելի կլիներ կենսական ուժերն ու եռանդը պահել ապաքինման համար: Նույն կերպ ծանր վիրահատությունից հետո վերադառնալով Մայր Աթոռ և ապա դարձյալ մեկնելով ԱՄՆ՝ այնտեղ նոր վիրահատության նախօրեին նախագահեց Սիացյալ Գայակական Ֆրոնթի 100-րդ թոհչքի առիթով կազմակերպված հանդիսությունը, այստեղ մի քանի ամիս ֆիզիկական դաժանագույն փորձությունների ենթարկվելու ընթացքում իսկ կատարելով միջեկեղեցական հարաբերություններին և ազգային-եկեղեցական կյանքին վերաբերող բոլոր այն տնօրինությունները, որոնք վերապահված են հայրապետական բարձրագույն իշխանությունը:

Վեհափառ Տեր, այսպիսով Ձեր եկեղեցական ու հոգևոր-մշակութային բարգմարդյուն գործունեության կողքին գահակալության այս վերջին մեկ տարվա ընթացքում բացահայտվեց նաև Ձեր մարդկային անձնվիրության կարևոր մեկ հատկանիշը ևս, և ֆիզիկական այս փորձությունների ընթացքում Ձեր բոլորանվեր գործունեությամբ Դուք խոսուն կերպով վկայեցիք ու հավաստեցիք Ամենայն Գայոց Կաթողիկոս ընտրվելուց մինչև գահակալության այս հանդիսությունը Ձեր քանիցս ասած այն խոսքերը, թե որքան էլ «կյանք ունենամ և գործելու հնարավորություն՝ այն ընծայելու եմ մինչև կյանքիս վերջին շունչը Աստծուն, Գայոց Եկեղեցուն, իմ ժողովրդին ու Գայրենիքին»:

«Էքմիաժին» ամսագրի խմբագրության կողմից շնորհավորելով Ձերոջ Արքունիքանը գահակալության չորրորդ տարեդարձի առիթով՝ մաղթում ենք քաջատողջություն ու լիակատար ապաքինում և երկա՛ր-երկա՛ր տարիների կյանք՝ շարունակելու բոլորանվեր այս ընծայումն ի փառս Աստծու, մեր Եկեղեցու և հայ ժողովրդի, որ ի Գայաստան, յԱրցախ և ի սփիւռս աշխարհի:

## ՆՈՐԱՎԱՆՔԻ ՕԾՈՒՄԸ

Ապրիլի 18-ին, Կանաչ կիրակիին, ձեռամբ Նորին Սրբություն Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի, տեղի ունեցավ Նորավանքի Ս. Աստվածածին և Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցիների օծումը, մատուցվեց Ս. Պատարագ:

Նորավանքի վանական համալիրը, որ ժամանակին եղել է Սյունյաց մետրոպոլիտների աթոռանիստը, Օրբելյանների հոգևոր կենտրոնն ու դամբարանավայրը, նաև հայ եկեղեցական ճարտարապետության ամենանշանավոր իրագործումներից է: Վանական համալիրը, որը տեղացիները «Կարմիր վանք» են անվանում, չէր գործում շուրջ մեկ դար: Վանքի Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցին պետականորեն վերականգնվել էր 80-ականների սկզբին: Իսկ Ս. Աստվածածին եկեղեցին, անցյալ դարի կեսերին կիսով չափ ավերված լինելով երկրաշարժից, վերականգնվել էր միայն մասնակիորեն: Եվ ահա, Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի անմիջական հովանավորությամբ, Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանի և Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանի գլխավորած 1700-ամյակի գրասենյակի կազմակերպմամբ, կանադահայ բարերարներ տեր և տիկին Տլզրան և Դիանա Հաճեթյանների բարերարությամբ, երկու տարվա ընթացքում, 1996-1998 թթ., իրականացվեց Մոմիկ ճարտարապետի նախագծով կառուցված եկեղեցու ամբողջական վերականգնումը:

Մինչև եկեղեցու օծումը, ապրիլի 16-ին, Վայոց Ձորի մարզկենտրոն Եղեգնաձորում սկսվեց «Նորավանք-99» գիտաժողովը, որի առաջին նիստը վարեց Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը:

Գիտաժողովին զեկուցումներով հանդես եկան Տ. Շահեն արքեպս. Աճեմյանը, ակադեմիկոս Վարդգղատ Հարությունյանը, գիտությունների դոկտորներ, թեկնածուներ, Մատենադարանի և ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատողներ: Ներկա էին եկեղեցու բարերարները, Սյունյաց թեմի հոգևոր դասը, Եղեգնաձորի մտավորականության ներկայացուցիչներ: Նույն օրը Հայաստանի ազգային պատկերասրահի՝ տեղի մասնաճյուղում բացվեց «Մոմիկ» միության և շրջանի նկարիչների՝ ժամանակակից հայ քրիստոնեական արվեստը ներկայացնող ցուցահանդես, իսկ քաղաքի երկրագիտական թանգարանի սրահում կայացավ Կանադայում հրատարակված «Նորավանք» գրքի շնորհանդեսը: Ապրիլի 17-ին գիտաժողովի աշխատանքներն ամփոփող ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի

տնօրեն Արամ Զալանթարյանն ընդգծեց զեկուցումների գիտական և ողջ ծրագրի կազմակերպչական բարձր մակարդակը:

Ապրիլի 18-ի վաղ առավոտից Եղեգնաձորից, շրջակա քաղաքներից ու գյուղերից, Երևանից, Արցախից ու այլ վայրերից դեպի Նորավանք շարժվեցին հազարավոր ուխտավորներ: Այստեղ՝ ամբողջությամբ վերականգնված Ս. Աստվածածին եկեղեցում մատուցվեց առաջին Ս. Պատարագը: Պատարագիչն էր Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը:

Շուտով, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան հայրերի ուղեկցությամբ, Նորավանք ժամանեց Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսը՝ կատարելու Ս. Աստվածածին և Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցիների օծումը:

Արարողությամբ ներկա էին նաև ՀՀ մշակույթի նախարար Ռուսնդ Շառոյանը, տարածքային կառավարման և օպերատիվ հարցերի նախարար Դավիթ Ջաղդյանը, ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը, Ս. Աստվածածին եկեղեցու բարերարներ տեր և տիկին Հաճեթյանները, հազարավոր ուխտավորներ Հայաստանից և Սփյուռքից: Նորավանք ուխտի էր եկել նաև ԼՂՀ պատվիրակությունը՝ ԱԺ նախագահ Օլեգ Եսայանի գլխավորությամբ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ սրբալույս մյուռոնը հեղվեց գավաթի մեջ, որը դարաց դասի երգեցողությամբ հանդիսավորապես տարվեց Ս. Աստվածածին եկեղեցի: Ըարականների ու սաղմոսների երգեցողությամբ Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը, Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը, Տ. Պարզև եպս. Մարտիրոսյանը, Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը, Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանը, Տ. Առաքել եպս. Զարամյանը կատարեցին Ս. Աստվածածին եկեղեցու օծումը, որից հետո բափոռն ուղղվեց դեպի Ս. Ստեփանոս՝ օծելու նաև այս եկեղեցին:

Հավարտ եկեղեցու օծման՝ երախտիքի խոսք ասաց Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանը: Եկեղեցու քանալիներից մեկը Սրբազան Հայրը հանդիսավորապես հանձնեց Վեհափառ Հայրապետին, երկրորդը՝ եկեղեցու բարերարներ տեր և տիկին Տիգրան և Դիանա Հաճեթյաններին, իսկ երրորդը կնճա եկեղեցու:


Շնորհավորանքի խոսքեր ասացին նաև Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարզև եպս. Մարտիրոսյանը, Վայոց ձորի մարզպետ Պանդուխտ Մանուկյանը, ԼՂՀ մշակույթի նախարար Արմեն Սարգսյանը:

Ապա Նորավանքի օծման առիթով Վեհափառ Հայրապետի խոսքն ընթերցեց գերշ. Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը (տես էջ 20):

Ավարտելով խոսքի ընթերցումը՝ Մեսրոպ Սրբազանը Կանաչ կիրակին հռչակեց որպես Նորավանքի ուխտի օր:

Ապա Տ. Արաակ արք. Տիգրանյանն ընթերցեց Վեհափառ Հայրապետի





ՆՈՐԱԿԱՆՔՆ ԱՅԼԵՎՍ ՄԻԱՅՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԳՈՒՀԱՐՉԱՆ ԶԷ



אחרי חתימת הסכם השילומים, מנכ"ל ממשלת ישראל, יצחק מרדכי, מציג את הסכם השילומים לראש הממשלה, דוד בן-גוריון.

կոնդակը. որով Ս. Աստվածածին եկեղեցու բարերարին շնորհվում է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բարձրագույն պարգևը՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը:

Հանդիսավոր մասից հետո ներկայացվեց մշակութային ընդարձակ հայտագիր. ելույթ ունեցան մարզի պարային խմբերը, իրենց ստեղծագործությունները ցուցադրեցին տեղացի և Երևանից ժամանած արվեստագետները:

Երևի վեց-յոթ դար Նորավանքի ձորը չէր տեսել այդքան մարդկային բազմություն: Նորավանքի ձորը կյանք էր առել, որովհետև վերաքաղվել էր նրա մարգարիտը՝ Նորավանքը:

Ցանկանք, որ օծումից հետո Նորավանքում շուտով ավարտվեն մահ հարակից շինությունները և, Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանի բաղձանքի համաձայն, այն դառնա կանոնավորապես գործող վանք:

*ԿԱՐԵՆ ՄԱՅԵՎՈՍՅԱՆ*

# ԿՐՈՆԱԿԱՆ

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶՄՊԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝

ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ  
ՀՎՐՈՒԹՅԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՅՅԻՆ

(3 ապրիլի, շաբաթ, 1999 թ.)

*«Այսօր յարեալ ի մեռելոց, Փեսայն անմահ  
եւ երկնաւոր. քեզ աւետիք խնդութեան հարսն ի  
յերկրէ եկեղեցի, օրհնեալ ի ծայն ցնծութեան,  
զԱստուած քո Աիոն»:*

*(Շարական)*

«Յանուն Գօր եւ Որդւոյ եւ Գօղոյն Արքոյ. ամեն»:

Այսօր, սիրելի, հավատացյալներ, շարականագրի խոսքերի համաձայն, ավետվում է մեզ, որ մեր Տերը՝ Գիտուս Քրիստոս, մեռելներից հարություն առավ: Եվ շարականագիրը շարունակելով ասում է, թե՛ «Յնծացեք, ով ժողովուրդ, եկեղեցի, որովհետև Փեսան անմահ և երկնավոր հարություն առավ, դուք, իբրև ժողովուրդ, հարսն եք երկրից երկինք փոխադրվող»:

Ապաշխարության շրջանը, ահավասիկ, իր ավարտին հասավ: Անցյալ կիրակի Ծաղկազարդի տոնն էր: Մեր Տերը՝ Գիտուս Քրիստոս, թագավորական հանդիսավորությամբ և փառավորապես մուտք գործեց Երուսաղեմ: Ծերերը և երիտասարդները, երեխաները և պատանհները, ձիթենու և արմավենու ոստերը ձեռքներին, դիմավորեցին իրենց փառավորյալ Տիրոջը, որ գալիս էր Աստծու անունով: Իսկ Ավագ շաբաթվա ընթացքում մենք հետևեցինք մեր Տիրոջ ոտնաքայլերին, որոնք գալով Բեթանիայից, ուղղվեցին Երուսաղեմ՝ դեպի Տաճար, և քաղաքի Չիթենյաց լեռան լանջին մեր Տերը տազնապալի պահ ապրեց ենթարկվելով փորձության: Որպես հողեղեն շինվածք, աստվածայինն իր մեջ փառավորվեց իր գոհողությամբ, իր պատրաստակամությամբ: Եվ Տերն ասաց. «Անցո գբաժակս գայս յինէն, բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու կամիս» (Մարկոս ԺԴ 36): Մարմինը հողեղեն էր, հոգին՝ աստվածային: Եվ իսկապես, երբ մեր Տերը դատապարտվեց, ծաղկվեց և Պիղատոսի առջև տարվեց, քահանայապետերի որոշումով նրան մահվան դատապարտեցին և Գողգոթայի բարձունքում խաչեցին: Բայց Իր մահվանից երեք օր հետո, միաշաբաթվա, կիրակի օրվա արևը դեռ չծագած, երբ Մարիամ

Մագդաղենացին մյուս կամանց հետ գնում էր գերեզման՝ խնկով և գմուռսով Քրիստոսի մարմինը օծանելու և պատելու, հանկարծ տեսնում է, որ այն քարը, որով փակված էր գերեզմանի դուռը, տեղաշարժված է, և գերեզմանի քարի վրա նստած է հրեշտակը, ով ասում է. «Ձի՛ խնդրեք գկենդանին ընդ մեռեալս, չէ աստ, այլ յարեալ» (Ղուկաս ԻԴ 5-6): Բնության ինչպիսի՛ հրաշք է սա, որ մեր Տերը՝ Դիսուս Քրիստոս, կարողացավ Իր մահվամբ մահին հաղթել և Իր հարությանը կյանք պարգևել մեզ բոլորիս:

Պողոս առաքյալը Կորնթացիներին ուղղած իր առաջին նամակում իրավամբ ասում է, որ եթե Դիսուս Քրիստոս հարություն առած չլիներ, ձեր հավատքը և մեր քարոզչությունը ընդունայն կլիներ (հմմտ. Ա Կորնթ. ԺԵ 14): Եվ իսկապես, մեր Տերը դարերի ընթացքում ամեն Ձատկի ճրագալույցի երեկոյան խորհրդապես հարություն է առնում մեռելներից, որպեսզի ուսուցանի մեզ, որ մահվանից չվախենանք: Մահը վերջ չէ մարդու համար, այլ հավիտենական մի նոր կյանքի սկիզբ: Եվ նրանք, ովքեր ապաշխարությամբ, աղոթքով, բարեգործությամբ, զոհողությամբ, խոնարհությամբ, հեզությամբ կկարողանան իրենց համար գանձեր դիզել երկնքում, նրանց համար է առաջին հերթին հավիտենականության ու հարության պատգամը: Նրանք կարող են մեռնել մարմնով, բայց անմահ են հոգով: Եվ նրանց հոգիները մահվանից հետո գնալու-միանալու են հարուցյալ Դիսուս Քրիստոսին և Նրա հետ վայելելու արքայության բոլոր բարիքներն ու պարգևները:

Սիրելի հավատացյալներ, ահավասիկ Ձատիկը եկավ, բնությունը զարթնեց, արեգակն իր պայծառ ճառագայթներով ցերմացնում է աշխարհը: Ծիլերը և ծաղիկները, ծառերը և հունդերն իրենց աչուկներն են բացում, գեղեցիկ ժպտում են մեզ և ամենուր գարունն են ավետում: Այս ամենը վկայում է, որ մեր կյանքում սկսել է հարության, վերազարթոնքի և կյանքի տոնը: Այս երջանիկ առիթով քրիստոնյաներս պետք է Քրիստոսի Դարության հույսով և հավատով զորացած նայենք մեր ապագային, պայծառատեսությամբ լեցուն, և մեր ապագան կարողանանք կերտել այսօրվանից՝ մեր արդար քրտինքով, մեր հավատով և մեր հայրենիքի վերաշինության, մեր ժողովրդի բարօրության համար ամեն տեսակի զոհողություն հանձն առնենք և ոչ թե անհույս և անհավատ մարդկանց նման հազիվ ճանապարհածախս ձեռք բերելուն պես, թողնենք և փախչենք մեր հայրենիքից:

Մենք պետք է դառնանք այս երկրի իսկական տերը: Եվ նրանք, ովքեր չեն ուղղվում, ճշմարտությանը չեն ծառայում, նրանք, ովքեր խարդախ միջոցներով հարստություն են դիզում, որպես քրիստոնյաներ նրանք դեմ ծառանանք և ցույց տանք ճշմարտության պատգամը: Ժամանակն է գիտակցելու, որ անցնող 70 տարիները չեն եղել փրկության տարիներ, այլ հոգևոր իմաստով ուժանալու տարիներ, և ժամանակն է արթնանալու, զգաստանալու և եկեղեցու մեզ տված պատգամները սիրով ընդունելու և դրանց հետևելու: Միայն այս ձևով է հնարավոր ժողովրդի մեջ վերստին հարության շունչն արթնացնել, ինչպես այս պահին ամենքիս հոգու մեջ հարության շունչը կենդանություն է առել և մեր հոգիներին տալիս է ուժ, հավատք և գորություն: Միասնական քանքերով քայլ առ քայլ դիմենք դեպի աստվածային բարությունը՝ այն դարձնելով մեր առօրյան և կյանքի նպատակը:

Այս պահին, սիրելի հավատացյալներ, երբ հավաքվել ենք Մայր Տաճարի սուրբ կամարների տակ, բոլորիդ տալիս եմ Քրիստոսի Սուրբ Հարության պատգամը. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ գնահ կոխեաց եւ յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց»: Այս երջանիկ առթիվ «Տեր ողորմեայ»-ի պահին միասին աղոթենք մեր բոլոր հիվանդների համար և հատկապես աղոթենք Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Գարեգին Ա Հայրապետի առողջության համար: Թող Աստված Իր Որդու հարությամբ այս պահին այցելի բոլոր հիվանդներին, ծերունիներին, որոնք անօգնական են, երեխաներին, ումքեր որբ ու թափառական կյանք են վարում: Թող Աստված բոլորին օգնության հասնի Իր Որդու հարության պահին և բոլորին հարության շունչը պարգևի, որ անմահությունն ինքն իսկ է:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց, ձեզ եւ մեզ մեծ աւետիս, ամեն»:

**ՄԻՔԱՅԵԼ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԶԱՊԱՀՅԱՆԻ  
ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ  
ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ, ՀՍԿՄԱՆ ԳԻՇԵՐԸ**

(1 ապրիլի, 1999 թ.)

«Եւ էր գիշեր»:  
(«Եվ գիշեր էր»):  
(ԳՈՎԳ. ԺԳ 30)

«Յանուն Գօր եւ Որդւոյ եւ Գոգւոյն Սրբոյ, ամեն»:

Պերճախոս, կերճաբան, աստվածաբան ավետարանիչը Գիսուսի մատնութեան մթնոլորտը և միջավայրը ներկայացնում է սոսկ այս երկու բառով. և գիշեր էր: Աստվածաբան Գովհաննեսը մանրամասն մեզ է ներկայացնում Աստվածորդու վերջին օրերը: Երկար շարադրում է Աստվածորդու՝ մեզ փոխանցած պատգամները, ներկայացնում Գիսուսի և իր առաքյալների ողջ երկխոսությունը, վերլուծումներ և դիտողություններ կատարում տեղի ունեցած իրադարձությունների մասին և սակայն Գիսուսի մատնության միջավայրն ու մթնոլորտը բնութագրում է սոսկ այս բառերով. և գիշեր էր:

Գուդան վերջին ընթրիքի ավարտին, Գիսուսի սիրո արտահայտություններն ընդունելուց հետո, ուրիշ բան չունեցավ անելու, եթե ոչ դուրս գալու և հեռանալու Գիսուսի ներկայությունից: Եվ, այո՛, գիշեր էր, որովհետև պետք է տեղի ունենար մատնություն, գիշեր էր, որովհետև դավաճանության ոճիր պետք է գործվեր, գիշեր էր, որովհետև սիրո փոխարեն ատելությամբ պետք է փոխհատուցվեր, գիշեր էր, որովհետև ոճրագործը գիշերվա մթության քողի տակ է սողոսկում և գիշերվա մթության քողի տակ է իր մութ և սև գործը կատարում: Ինչպես Գիսուս ասաց՝ *«քանզի մարդիկ սիրեցին խավարն առավել, քան զլույս, որովհետև իրենց գործերը չարության գործեր էին»*:

Գուդան մատնելու էր իր Վարդապետին: Որպես կատարյալ մի դերասան և կեղծավոր՝ նա թաքցնում էր իր ողջ էությունը բոլոր ընկերներից՝ առաքյալներից, ներկայանում էր որպես հավատարիմ ու հավատավոր աշակերտներից մեկը, և որպեսզի կատարեր սև մատնության գործը, իրեն մթություն և գիշեր էր հարկավոր: Այդ իսկ պատճառով երբ թանձր խավարն իջավ Պաղեստինի վրա, Գուդան շտապեց: Շտապեց՝ իր սև գործը կատարելու, շտապեց՝ մատնելու իր Վարդապետին, շտապեց՝ սիրո փոխարեն ատելությամբ հատուցելու:

Եվ գիշեր էր: Սակայն աստվածաբան ավետարանչի այս տողերի ետևում սոսկ բնության երևույթ չէ, որ նկարագրվում է, ավելին՝ ավետարանիչը լուծում է բնության երևույթների և եղանակի մասին: Մենք չգիտենք՝ փոթորկո՞ւտ էր այդ գիշերը արդյոք, թե՞ անձրևոտ, լուսի՞ցն էր շողում երկնքում, թե՞ ամպամած էր: Աստվածաբան ավետարանչի համար այդ չէր կարևորը, որովհետև «գիշեր էր» արտահայտությունն ավելի քան պերճախոս և ավելի քան խոսուն է, որովհետև

Հոգիանճես ավետարանիչը՝ աշակերտը, ում սիրում էր Հիսուս, ուզում է ցույց տալ, որ Հիսուսից բաժանումը ոչ այլ ինչ է, եթե ոչ քայլ դեպի մթություն, քայլ դեպի գիշեր, քայլ դեպի խավար: Եվ Հուդան կատարեց այդ քայլը: Կատարելով այն՝ ոչ թե սոսկ խորասուզվեց բնության ստեղծագործած գիշերվա մթության մեջ, այլ խորասուզվեց իր հոգու գիշերվա և մթության մեջ, որովհետև հեռացավ Հիսուսից: Եվ ահա այստեղ է, որ կա մեկ այլ գիշեր՝ հոգու գիշերը, մտքի և սրտի գիշերը: Հիսուսից հեռացման ամեն մի քայլ տանում է դեպի այդ խավարը, տանում է դեպի այդ մթությունը և տանում է դեպի կորուստ:

Եվ գիշեր էր: Դարեր անցան Հիսուսի մատնության և չարչարանքից հետո: Շարունակաբար նորանոր Հուդաներ գիշեր փնտրեցին և գիշեր երազեցին՝ իրենց սև գործը կատարելու համար: Երկու հազար տարի շարունակ աշխարհը և այս աշխարհի իշխանը շղաղարեցին նորանոր Հուդաներ ծնել և ուղարկել մարդկանց մեջ՝ սև գործ անելու, քայքայելու համար սերը և բարությունը, լուսի փոխարեն մթություն ցանելու: Սակայն մոռացան խոսքն աստվածային այդ բոլոր հին ու նոր հուդաները, թե՛ «*Իժի՛ ծնունդներ, ինչպե՛ս եք փախչելու զհենի դատապարտությունից*»:

Եվ գիշեր էր: Այո՛, գիշեր էր Հայաստան աշխարհում յոթանասուն տարի շարունակ, և յոթանասուն տարի շարունակ Քրիստոսին հարյուրամյակներ պաշտած ժողովուրդն ուրացել էր, ուրացության ու մատնության ուղին էր բռնել: Յոթանասուն տարի շարունակ գիշեր էր Հայաստան աշխարհում: Գետո այդ յոթանասուն տարին անցավ: Այդ յոթանասուն տարուց հետո անցավ ևս տասը տարի: Սակայն Հայաստանում, Հայոց աշխարհում այսօր դարձյալ և վերստին գիշեր է: Դարձյալ և վերստին գիշեր է, որովհետև այսօր մատնության և չարչարանաց այս խորախորհուրդ պահը մեր ժողովրդի բազմաթիվ զավակներն ապրում են ոչ այն զգացումով ու ոչ այն ապրումով, ոչ այն հոգեվիճակով, ինչով ապրեցին իրենց նախնիները երկու հազարամյակ շարունակ: Այսօր ամբողջ օրը, առավոտյան ժամերգությունից սկսած, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իր կամարների տակ հրավիրեց հայորդիներին: Առավոտյան նշվեց Վերջին ընթրիքի արարողությունը, ոգեկոչվեց հիշատակը Հաղորդության Սուրբ խորհրդի հաստատման, և Մայր Տաճարը կիսադատարկ էր: Երեկոյան Ռոմվայի արարողությունը տեղի ունեցավ. Հիսուսի խոնարհության, ամենկնեի խոնարհության մի արտահայտությունը, և այդ արտահայտության հիշողությունը: Եվ շատերը եկեղեցում չէին: Այսօր, գիշերվա այս պահին, եկեղեցին լեփ-լեցուն է: Սակայն շատերը չեն եկել այստեղ Հիսուսի մատնության և չարչարանքի խորհուրդն ապրելու, այլ եկել են, որովհետև... գիշեր է, եկել են, որովհետև իրենց գայթակղել է գիշերվա խավարի և մթության իրողությունը: Եկել են ամեն տեսակ վատ, չար մտածումներով, եկել են խանգարելու հավատացյալների աղոթքը, խոկումը և բաժնեկից են այն մատնիչ Հուդային, որ, քրեորով և սրբորով զինված ամբոխի հետ երկու հազար տարի առաջ, գիշերվա մթության քողի տակ, մոտեցավ Վարդապետին և համբուրելով մատնեց Նրան:

Հիսուսի մատնության և չարչարանաց խորախորհուրդ պահն ապրվում է աղոթքով, ապրվում է աղոթքի մեջ եղող սարսուռով, որովհետև Հիսուս այսօր մատնվում է և չարչարվում մեզ համար: Սակայն մեզանից շատերն այսօր էլ



ապրում են նույն այն գիշերը, որ ապրեցին Գուդան և իր նմանները: Այսօր մեզանից շատերը շարունակում են ուրանալ Գիսուսին, շարունակում են ապրել մատնության այս պահը՝ Գիսուսին մատնող ամբոխի հետ միասին:

Սակայն Ավետարանը սիրո Ավետարան է: Սենք Գիսուսի սիրո Ավետարանն է, որ փոխանցում ենք ամենքին՝ անկախ այն բանից և այն մտածումից, թե ինչն է մղել մեր ժողովրդի այս կամ այն զավակին այս պահին ոտք դնելու եկեղեցու սրբազան շենից ներս, որովհետև Գիսուսի վերջին պատգամն ուրիշ բան չէր, եթե ոչ՝ «սիրեցե՛ք միմյանց»:

Ավետարանական ճշմարտության լույսի տակ մենք տեսնում ենք, որ այսօր, այս գիշեր, Գիսուս մատնվում է աշխարհի կողմից, Գիսուս լքվում է աշխարհի կողմից, Գիսուս դավաճանվում է աշխարհի կողմից, սակայն չի մատնում ոչ ոքի, չի լքում մեզանից ոչ մեկին, ինչպես երեկ, այնպես էլ այսօր չի դավաճանում մեզանից որևէ մեկին: Եվ այսօր, գիշերվա այս խորախորհուրդ պահին, մենք՝ ժողովուրդ Դայոց, պետք է այդ սիրո, այդ գթության և այդ ողորմության շարժառիթներով մոտենանք և ըմբռնենք խավարման այս երեկոն, խավարման այս գիշերը, որովհետև քիչ անց եկեղեցու լույսերը կվառվեն, և այն մարդիկ, ովքեր խավարի համար էին եկել եկեղեցի, լույսի առաջին իսկ բռնկումից հետո, խավարասերների նման, կթողնեն եկեղեցին, և կմնան միայն նրանք, ովքեր լույսի համար են եկել, ովքեր եկել են այս խավարի մեջ լույս քաղելու Գիսուսից, որովհետև այս խավարից հետո կարողանում են տեսնել Գիսուսի Դարության արշալույսը:

Եվ մենք՝ ժողովուրդ և հավատացյալներ Դայոց, այս պահին ծնկում ենք Գիսուս Զրիստոսի անմեկնելի չարչարանքների առջև, աղոթում և հայցում ենք Նրա ողորմությունը: Տեր Գիսուս Զրիստոս, Որդի՛ Աստուծո, Դո՛ւ, որ խաչվեցիր մեզանից, Դո՛ւ, որին մենք մատնեցինք, Դո՛ւ, ում մենք շարունակում ենք ուրանալ Պետրոսի նման, մի՛ լքիր մեզ, մի՛ մատնիր մեզ չարի ձեռքը, մի՛ թող մեզ, որ սայթաքենք այս աշխարհում: Այո՛, գիտենք, հաճախ ուրանում ենք Քեզ, հաճախ մոռանում ենք Քեզ, սակայն չենք ուզում լինել մատնիչ Գուդայի կողմնակիցների մեջ, այլ ուզում ենք լինել Պետրոսի նման՝ ուրացող, սակայն ոտքի կանգնող, Քո անմեկնելի արդարության և գթության մասին մտածող: Փորձում ենք քայլել Քո ճանապարհով, օգնի՛ր և գթա՛ մեզ, ցույց տուր մեզ այն ճանապարհը, որ Դու ես: Տո՛ւր մեզ այն կյանքը, որ Դու ես: Մեր սրտերի և հոգիների առջև բացիր այն լույսը, որ Դու ես: Եվ ուրիշ աղոթք չունենք առաքելու Քեզ, ուրիշ խունկ չունենք ծխելու դեպի Քեզ, եթե ոչ այս պարզ և երբեք չմաշվող խոսքերով ենք փորձում դիմել քեզ: Տեր Գիսուս Զրիստոս, Որդի՛ Աստուծո, ողորմյա՛ մեզ՝ մեղավորացս. ամեն:

## Տ. ՇԱԿԵ ԲԱՆԻ ԱՎԱԳ ԾԱԲԱԹ

### ԱՎԱԳ ԾԱԲԱԹ

Ճշմարիտ Աստվածապաշտության միաբանական վայրը եկեղեցին է: Այս նպատակով դեռևս առաքելական շրջանից հաստատված են տոներ ու ժամերգություններ: Ժամերգությունների միջոցով հարաբերվում ենք Աստվածային տնօրինություններին ու խորհուրդներին, իսկ տոների ժամանակ՝ թե՛ Քրիստոսի, թե՛ առաքյալների ու մարգարեների և թե՛ եկեղեցու կյանքի նշանավոր դեպքերի հիշատակների հետ, որոնցով կազմում ենք մի միություն թե՛ միմյանց և թե՛ նախնյաց հետ:

Աստվածապաշտության մաս են կազմում նաև պահքերը: Տարվա զրեթե կեսը պահք է՝ բաժանված օրապահքերի, շաբաթապահքերի և քառասնօրյա Սեծի պահոց շրջանի:

Սեծ պահքին անմիջապես հաջորդում է Ավագ շաբաթը կամ, ինչպես երբեմն անվանում են, Չարչարանաց շաբաթը:

Չարչարանքի շաբաթ է կոչվում, որովհետև մեր Տեր Դիսուս Քրիստոս այս շրջանում էր, որ կրեց կամավոր չարչարանքներն ու մահը մեր փրկության համար:

Եկեղեցու Սուրբ Դայրերն Ավագ շաբաթվա մեջ տեսել են «մեծամեծ» խորհուրդներ. *«Շարաթն այս Սեծ կամ Ավագ է կոչվում, որովհետև իր մեջ պարունակում է չորս մեծ խորհուրդ»*.

*Առաջին այս շաբաթվա ընթացքում է, որ սրեղծվեց երկիրը:*

*Երկրորդ այն խորհրդանշում է Արարչության յոթ դարերը (հազարամյակները):*

*Երրորդ՝ Քրիստոսի չարչարանքների օրերը:*

*Չորրորդ այս շաբաթվա խորհրդի մեջ տեսնում ենք նաև վերջին օրն ու աշխարհի վախճանը<sup>1</sup>:*

Ավագ շաբաթվա, այն է՝ Ծաղկազարդից մինչև Չատիկ ընկած ամեն մի օր Ավագ անունն է կրում:

*Ավագ երկուշաբթի* - կրում է հիշատակը աշխարհի արարչության, Ադամի՝ դրախտից արտաքսվելու, ինչպես նաև Աստվածային այն խոստումի, ըստ որի Դայր Աստված Իր Միածին Որդուն կառաքի աշխարհ, Ով կփրկի մարդկությանը դժոխքի տանջանքներից և երկնքի Արքայության ժառանգորդ կդարձնի: Առավոտյան ժամերգության ընթացքում ընթերցվում է Սատթեոսի Ավետարանից անպտուղ թզենու չորացման հատվածը: Եկեղեցու հայրերն այս թզենու խորհուրդը զուգահեռի մեջ են դիտում Օննդոց Գրքի հետ, ուր ասվում է, թե

<sup>1</sup> Տես Գրիգոր Տաթևացի, Զմեռան հատոր, Կ. Պոլիս, 1740, էջ 493-494:

Ադամն ու իր կողակիցը ծածկեցին իրենց ամոթույքը: Իսկ Զիսուս այս անպտուղ բզեմու չորացումից, այսինքն՝ առաջին Ադամի մեղքի ոչնչացումից հետո, մեզ քաջալերում և մղում է հավատքով աղոթքի. «*Ճշմարիտ եմ ասում չեզ. եք հավատ ունենաք եւ չերկնվեք. ոչ միայն կանեք այդ բզեմուն պատահածը, այլ բեկուզեւ այդ լերանն ասեք՝ ելի՛ր ու ծովն ընկիր, այն կհատարվի: Եվ ամեն ինչ, որ ուզեք աղոթքի մեջ հավատով, կստանաք*» (Մատթ. ԻԱ 21-22):

Այնուհետև երեկոյան ժամերգության ընթացքին Ճննդոց գրքի, Սողոմոնի Առակաց գրքերի և Եսայու մարգարեության համապատասխան հատվածների ընթերցումներից հետո կարդացվում է ավետարանական այն դրվագը, որտեղ Զիսուս իր աշակերտներին պատմում է գալիք դեպքերի մասին. «*Ահավասիկ երուսաղեմ ենք բարչրանում, եւ Մարդու Որդին պիտի մաքնվի քահանայապետների ու օրենսգետների յեռքը, եւ Նրան մահվան պիտի դատապարտեն ու պիտի հանչենն հերանոսներին ժաղրվելու, ծեծվելու եւ խաչ բարչրացվելու համար, սակայն Նա երրորդ օրը հարություն պիտի առնի*» (Մատթ. Ի 18-19):

Իսկ ընթերցվածի վերջում հաստատվում է աստվածային տնօրինության նպատակը. «*Մարդու Որդին չեկավ ծառայություն ընդունելու, այլ ծառայելու եւ իր անչը փաշու որպես փրկանք շարերի փոխարեն*» (Մատթ. Ի 28):

*Ավագ երեքշաբթի* - հիշատակն է ջրհեղեղի և տասը կույսերի: Այն իր մեջ ամփոփում է նաև Սիեղ Ղատաստանի խորհուրդը, որով սովորեցնում է մեզ արթնություն բարեգործության մեջ: Այս նպատակով է ընթերցվում քանքար շահողների և քանքարաթաքույց ծառայի առակը: Առավոտյան ընթերցված Ավետարանից տեսնում ենք, թե ինչպես փարիսեցիներն ու հերովդեսականները կեղծավոր ու նենգ ձևերով փորձում են Աստվածորդուն, որպեսզի մատենն Նրան իշխանությունների ձեռքը: Սակայն Զիսուս աստվածային իմաստությամբ բացահայտում է նրանց կեղծիքը և տալիս իմաստուն պատասխաններ, ինչպես, օրինակ, երբ Զիսուսին հարցնում են. «*Ասա մեզ, օրինավոր՞ է հարկ փայ կայսրին, թե՞ ոչ, փա՞նք, թե՞ չփանք*», հասկանալով նրանց կեղծավորությունը և ասում է. «*Ինչո՞ւ եք ինչ փորչում, կեղծավորներ, ինչ մի դահեկան բերեք, որ փեսենեմ*»: Եվ նրանք բերեցին: Եվ նրանց ասաց. «*Ո՞րն է այս պատկերը կամ գիրք*»: Եվ նրանք ասացին. «*Կայսրինը*»: Զիսուս պատասխան տվեց և ասաց նրանց. «*Գնացե՛ք, փվե՛ք կայսրինը՝ կայսեր, եւ Աստծունը՝ Աստծուն*» (Մարկ. ԺԲ 17):

Իսկ երեկոյան ժամերգության ընթացքում, երբ կարդացվում է Մատթեոսի Ավետարանը, ըստ մեր եկեղեցական տոնացույցի հրահանգի «*Զգեցուցեն զԺ (10) մանկունս, եւ փացեն ի չեռս նոցին մտնեղէնս վառեալս՝ յօրինակ ժ (10) կուսանացն, որք եկեալ կանգնեացին առաջի Աւետարանին*»<sup>2</sup>:

Սուրբ Եկեղեցու հայրերը հինգ իմաստուն և հինգ հիմար կույսերին նմանեցնում են մարդու հոգու հինգ գորությունների և մարմնի հինգ զգայությունների հետ: «*Սա ցույց է փայխս, - գրում է Գրիգոր Տաթևացին, - նրանք, ովքեր*

<sup>2</sup> Տոնացույց, Վաղարշապատ, 1906, էջ 42:

այս տարբերակներով կույս են և սուրբ. այսինքն սրբվում են մարդով հոգով, մարմնով և զգայությամբ. նրանք կարծանանան վերին առազաստի: Եվ որովհետև հինգը հիմար են կոչվում և մնացյալ հինգը՝ իմաստուն. ապա իմացքը, որ իմաստուն են հոգու գորությունները. և հիմար մարմնի հինգ զգայությունները<sup>3</sup>:

**Ավագ շորեքշաբթի** - հիշատակն է Սողոմի և Գոմորի կործանման, որոնց մասին աստվածաշնչական համապատասխան հատվածների կրկին անգամ ընթերցմամբ հիշեցվում է Աստծու անաչառ դատաստանը չապաշխարողների նկատմամբ: Այսօր ընթերցվում են նաև մեղավոր կնոջ կողմից Գիսուսի գլուխն օծելու և Գուդայի մատնության ավետարանական տեղիները. «Եվ Հուդա Իսկարիովարացին տասներկուսից մեկը. զնաց քահանայապետների մոտ, որ Հիսուսին մարմնի նրանց: Երբ նրանք լսեցին, ուրախացան և խոստացան նրան դրամ տալ. և նա առիք էր փնջվում. թե ինչպես հարմար ժամանակ մարմնի նրան»:

Իսկ յուրով օծումը տեղի ունեցավ Բեթանիայում, ուր Գիսուս սեղան էր նստած թորոտ Սիմոնի տանը. «Եկավ մի կին, որ հեղին ուներ մարդուսի ազնիվ մեծարժեք յուղի մի շիշ. և շիշը կոտրելով յուղը քափեց Հիսուսի գլխին» (Մարկ. ԺԴ 3): Եկեղեցու վարդապետներն ու սուրբ հայրերն այս դրվագի վերաբերյալ գրել են բազում քարոզներ ու ճառեր՝ խոսելով այն մասին, թե ինչպես Զրիստոս անունը հայերեն թարգմանվում է Օծյալ: «Առաջին օծումը տեղի ունեցավ Սուրբ Կույս Սարիամ Աստվածածնի որովայնում, քանի որ Բանն Աստված Իր մարդեղությունն օծեց՝ Աստվածության հետ Իր միավորմամբ: Աստված մարդացավ և երևաց մեզ: Նրա մարդկությունը կատարյալ Աստված էր և այդպես օծված էր Աստվածությամբ:

Կրկին անգամ Սուրբ Գոգին օծեց մարդկությանը, երբ Գորդանան գետում իջավ աղավնակերպ և հանգչեց Նրա վրա, ինչպես որ Գործք Առաքելոցում ասվում է. «Նազովրեցի Գիսուսը, որին Աստված օծեց Սուրբ Գոգով և գորությունք»: Օծյալ է կոչվում նաև, որովհետև նյութական յուրով օծվեց կանանց միջոցով<sup>4</sup>:

Իսկ Գիսուս օծող կնոջը հանդիմանող աշակերտներին ասաց. «Դա ինչ որ կարող էր, արեց. խնկավետեց իմ մարմինը ի նշան պատանքվելու: Շշմարիտ են ասում ձեզ, ամբողջ աշխարհում ուր էլ որ քարոզվի այս ավետարանը, ինչ որ նա արեց, այդ ևս պիտի պատմվի նրա հիշատակի համար» (Մարկ. ԺԴ 8-9):

**Ավագ հինգշաբթի** - հիշատակն է Խորհրդավոր ընթրիքի, որ կատարվեց Վերնատանը, ուր Զրիստոս գտնվում էր Իր աշակերտների հետ: Այս պահին էր, որ Զրիստոս հաստատեց Գաղղղության փրկարար խորհուրդը և սկիզբ դրեց Նոր Ուխտին. «Եվ մինչ նրանք դեռ ուսում էին, Գիսուս հաց վերցրեց, օրհնեց ու կտրեց և տվեց աշակերտներին ու ասաց. «Առեք, կերեք, այս է իմ մարմինը»: Եվ բաժակ վերցնելով գոհություն հայտնեց, տվեց նրանց ու ասաց. «Խմեցե՛ք դրանից բոլորդ, որովհետև այդ է Նոր Ուխտի իմ արյունը, որ թափվում է

<sup>3</sup> Տե՛ս Գրիգոր Տաթևացի, Չմեռան հատոր, էջ 511:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 515:

չատերի համար՝ իրենց մեղքերի թողության համար» (Մատթ. ԻԶ 26-28): Հին Ուխտի գոհերի փոխարեն Քրիստոս մեզ մատուցեց իր սուրբ Սարմինն ու Արյունը: Եթե նախորդ երեք օրերին ճաշու ժամերգության ժամանակ ասվում է երեք Ողորմյաներ, ապա այսօր Առավոտյան ժամերգության վերջում կատարվում է «Ապաշխարողների արձակման» կարգը: «Ճաշոց» ծիսամատյանում կա պարտադիր ցուցում այն մասին, թե անկախ նրանից ապաշխարող «իցե և թե ոչ՝ զկարգն կատարել պարտ է»: Ընթերցվում են Սարգարեական գրքեր, Առաքելական թղթեր, Ավետարան, որից հետո ավագազույն հոգևորականը կարդում է ապաշխարության մասին Բարսեղ Կեսարացու աղոթքը: Ա. Պատարագից առաջ Սուրբ Սեղանը ծածկված է լինում և բացվում միայն «Հավատամբ»-ի ժամանակ: «Ճաշոց» մատյանը մեզ հուշում է, որ նախքան «Հայր մեր»-ը. «Ելցէ Աւագ երեցն ի բենն»: Եւ, ձեռքին ունենալով խաչ և Ավետարան, կարդում է Հաղորդության խորհրդին վերաբերող Ս. Բարսեղի աղոթքը՝ ասելով, թե այս խորհրդին «մի նայեք որպես թե հացի և գինու, քանզի սա է Աստծո Որդու Ճշմարիտ Սարմինն ու Արյունը»:

Երեկոյան կատարվում է Ունըվայի կարգը, ըստ Քրիստոսյան պատմիրանի. «Գիտե՞ք, թե այդ ինչ արեցի ձեզ: Դուք ինձ Վարդապետ և Տեր եք կոչում. և լավ եք անում, քանի որ իսկապես եմ. իսկ արդ, եթե ես՝ Տերս և Վարդապետս, լվացի ձեր ոտքերը, դուք էլ պարտավոր եք միմյանց ոտքերը լվանալ. որովհետև մի օրինակ տվի ձեզ, որ, ինչպես ես ձեզ արեցի, դուք էլ նույն ձևով անեք» (Հովհ. ԺԳ 12-15): Ունըվայի արարողության մեջ եկեղեցու Սուրբ Հայրերը տեսել են խորհուրդ և տվել են բազում մեկնություններ: Այս կարգը, որ հաստատեց Հիսուս, ցույց է տալիս Աստծու գթառատությունն ու մարդասիրությունը: «Ինչ կերպով որ Ադամը գործեց հանցանքն ու դարձավ մարդկության կորստյան պատճառ, այդ նույն ճանապարհով Բանն Աստված մարմնացավ և այցելեց իր կորուսյալ պատկերին: Ադամին վերաբերող բազում պատուհաններից մեկն այն էր, որ Աստված ասաց անհիժայլ օձին, թե «Մարդը պիտի օխտախիք քո գլուխը, իսկ դու պիտի խայթես նրա գարշապարը»: Բանի որ ոտքով ընթացան դեպի ծառը և հեպո նոր կերան (արգելված) պտուղը: Դրա համար նախ ոտքը պատուհասվեց խփելով օջին: Բայց եկ և րեւ, թե որքան բարի է բարևարարի թե՛ պատուհասը և թե՛ փրկությունը: Աստված օջի գլուխը դարչրեց մարդու ոտքով հարվածելու սիրախ, քանի որ օջն ապապանքեց մարդու դեմ, իսկ մարդը իշխան է կարգված նրա վրա, այսինքն նրա գլուխն էր: Ադամն էլ իր հերթին զանց առավ Աստծու պատվիրանը, որն իր գլուխն էր և հնազանդվեց կնոջը: Եվ քանի որ կինը լսեց օջին, որն իշխանությանը նրանց ոտքի տակ էր, դրա համար էլ մարդու ոտքը պետք է օխտախիք օջին:

Այժմ նույն Տերն ու Արարիչը կամենցավ գործած հանցանքի անեծքը վերացնել այսպես: Նախ վերցրեց ցուրը և լվաց մարդու ոտքը և թժկեց Ադամի գարշապարի խոցված վերքը»<sup>5</sup>:

Ունըվայի կարգը խորհրդավոր մի քարոզ է սիրո և հեզության՝ ուղղված

<sup>5</sup> Տես նույն տեղում, էջ 566:

ընկերոջը, դիմացիմին: Եվ ինչպես Գովհաննես Առաքյալն է ասում, «այդ սերը արտահայտված պիտի լինի ոչ թե միայն խոսքով, այլև գործով ու ճշմարտությամբ»:

*Ավագ ուրբաթի* բնութագրումն ամենասեղմ խոսքերով տալիս է Տեր Ատեփանոս քհն. Մանդիկյանցը. «Յիսուս Բրիստոսի դարը եւ դաստիարակութիւնը, խաչելութիւնը եւ մահը, խաչէն իջուցանելը եւ քաղուելը»<sup>6</sup>:

Օրհնարարողական կարգով և աստվածպաշտությամբ Ավագ ուրբաթը ամբողջովին տարբերվում է մնացած տարեկան տոներից: Փակ վարագույրի առջև միայն խաչելության պատկերն է: Կեսգիշերին ընթերցվող ավետարանական վեց հատվածներում ներկայացվում են Բրիստոսի կրած չարչարանքները: Տասներեք վառվող մոմերը զույգ-զույգ հանգցվում են ամեն մի Ավետարանական հատվածի ավարտից հետո, որոնց մեջ պատկերվում է թե ինչպես աշակերտները թողեցին Գիսուսին և փախան: Վերջում մնացած միակ վառվող մոմը խորհրդանշում է Գիսուսի միայնակությունն ու անօգնականությունը: Գիշերային այս պաշտամունքը մեզ հուշում է խորհրդավոր ընթրիքից հետո գալիք անցքերի, այն է՝ Գեթսեմանիի պարտեզում երեք անգամ աղոթելու, զինվորների հետ Գողթայի գալը և մատնությունը, Գիսուսի՝ քահանայապետերի առջև ծեծվելու, ապտակվելու, մինչև առավոտ անարգվելու, Պետրոսի երեք անգամ ուրացման ու զղջման մասին:

Իսկ ցերեկը, ճաշու ժամերգության ժամանակ, ասվում են երեք Ողորմյաները, այնուհետև կատարվում է խաչելության կարգը: Այս պահին (սուրբգրային ընթերցվածների շարքում) կարդացվում են Պողոս առաքյալի հետևյալ խոսքերը. «Սակայն քալ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տեր Գիսուս Բրիստոսի խաչով, որով աշխարհը խաչված է ինձ համար, ես էլ՝ աշխարհի համար» (Գաղատացիս Զ 14): Այս ամենով նույն կերպ, ինչպես տասը դար առաջ, այնպես էլ այսօր մեզ համար.

*Օրհնյալ և լուսանորոգ օր է Մեծ պասեքի ուրբաթը սարսափելի,*

*Երբ եղան երկու արդարակշիռ ընտրությունները սասանած բոլոր արարածների,*

*Վերածելու նրանց անփոփոխելի ու երկնակենցաղ մի այլ տության,*

*Բարձրացածներին խոնարհեցնելով ու վեր հանելով ընկածներին:*

*Եվ բարեպատեհ ժամը եկավ-հասավ,*

*Գրելու ինձ այս նվազը ողբածայն՝ զվարձախառն երկյուղով:*

*Չարչարանքներիդ մասին եմ ուզում խոսել այժմ ես:*

*Որոնք դու կրեցիր իմ փոխարեն, Աստված՝ բոլորի՛:*

Ավագ ուրբաթ օրը պատարագ չի մատուցվում, որովհետև հավիտենական քահանայապետ Բրիստոս է ինքն իրեն պատարագում խաչի վրա Գայր Աստծուն, և ինքն է միջնորդ և բարեխոս առ Գայրն Աստված մեր փրկության համար:

<sup>6</sup> Ատեփանոս քհն. Մանդիկյանց, «Աստուածպաշտութիւն Գայաստանայց Ուղղափառ եկեղեցոյ», Վաղարշապատ, 1872, էջ 165:

<sup>7</sup> Գրիգոր Նարեկացի, «Մատյան Ողբերգության», Երևան, 1960, էջ 328:

Իսկ երեկոյան կատարվում է թաղման կարգը:

**Ավագ շաբաթը** հիշատակն է Քրիստոսի թաղման, նրա գերեզմանում դրվելու և դժոխք իջնելու: Եկեղեցու Սուրբ Հայրերը զուգահեռներ են անցկացնում Հովնան մարգարեի՝ կետի փորում երեք օր մնալու և Քրիստոսի գերեզմանում դրվելու միջև. «Ինչպես Հովնան մարգարեին Աստված հրամայեց քարոզել Նինվեում, այդպես էլ Հայր Աստված առաքեց Բանն Աստծուն քարոզելու աշխարհի փրկության համար: Հովնան մարգարեի նավի վրա քնելը խորհրդանշում է Քրիստոսի հանգչելը խաչի վրա: Հովնանի ծովի մեջ ընկղմվելը՝ Քրիստոսի թաղումն է խորհրդաբար: Կետը կուլ տվեց Հովնանին, դժոխքն էլ ընդունեց Քրիստոսի Հոգին: Կետի փորի մեջ կենդանի և անապական մնաց Հովնանը, նմանապես էլ գերեզմանում և դժոխքում անմահ ու անապական էր Քրիստոս հոգով ու մարմնով: «Եվ Տերը հրամայեց վիշապ ձկանը, և ծուկը նրան ցամաք նետեց» (Հովնան Բ 11) -որը ցույց է տալիս Հիսուսի հարությունը»<sup>8</sup>:

Ավագ շաբաթի երեկոյան տեղի են ունենում ճաշու և երեկոյան ժամերգություններ, ընթերցվում են Օճնդոց և Սարգարեից գրքերից համապատասխան հատվածներ, և սարկավագի «Օրթի»-ով բացվում է վարագույրը և մատուցվում է ճրագալույցի Պատարագը: Իսկ Պատարագի ավարտին կատարվում է Հարության նախատոնակը: Եվ մարդիկ, ինչպես յուզաբեր կանանց Հարությունն ազդարարող հրեշտակը, ավետում են մեկը մյուսին. «Քրիստոս հարյավ ի մեռելոց»:

<sup>8</sup> Տես Գրիգոր Տաթևացի. Չմեռան հատոր, էջ 599:

ԱՐԹՈՒՐ ԴՊԻՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ  
ԳԵՆՐԱԳՅԱՆ ԳՆՈՒՄԻՆԱԿԱՆ ԳՆԱԿԱՆ

## ՀՈԳԵԿՈՐ ԲԱՐԵՊՈՒՅՏԱԿԱՆ ԱԿԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա

### ՈՒՌԵՆՈՒ ՈՍՏԵՐԸ՝ ՀԱԳԹՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԳԱՆԻՇ

*«Արդարներն արմավենու պես կծաղկեն ... և  
պտղաքեր ձիթենու նման» ... կտնկվեն Տիրոջ տանը»:  
Սաղմ. ԴԱ 13-14, ԾԱ 10՝*

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, ինչպես նաև Ընդհանրական Ա. Եկեղեցու մաս եղող մյուս Եկեղեցիների հոգևոր գեղեցիկ ավանդություններից է Ծաղկազարդի տոնին հավատացյալներին օրհնյալ ճյուղեր բաժանելը:

Այս ավանդությունը ձևավորվել է Աստվածորդու Երուսաղեմ մուտքի իրողության հիման վրա, երբ հրեաները ձիթենու<sup>1</sup> և արմավենու ճյուղերով Քրիստոսին ընդառաջ գնացին<sup>2</sup>:

Ոստերի ընծայումը խորհրդանշում էր<sup>3</sup> նախ՝ Աստծու ողորմությունը (ձիթենու ճյուղեր) մարդու հանդեպ, և Քրիստոսի խաչելությամբ ու հարությանբ՝ հաղթանակը (արմավենու ճյուղեր) մեղքի, մահվան ու սատանայի դեմ: Երկրորդ քանի որ նախկինում մարդկությունը ծառերին էր

<sup>1</sup> Թեև Ավետարաններում չի նշվում, որ արմավենու ճյուղերի *Բովի. ժբ 13/* հետ եղել են նաև ձիթենու ճյուղեր, սակայն Ավետարանների այն վկայությունը, թե «իսկ ուրիշներ ծառերից ճյուղեր էին կտրում» /Սատք. ԻԱ 8, Մարկ. ժԱ 8/, Ա. Գրիգոր Տաթևացուն հիմք է տալիս եզրակացնելու, որ այդ ճյուղերը ձիթենու ոստեր են եղել. «Թեպետ ոչ յիշեն թե ուստի հատանեին, այլ զի ի Չիթենեաց լեռոն էին՝ որ լցեալ էր ձիթենեօք, զի երևի թե՛ յայնցանէ հատանեին», տես «Գիրք քարոզութեան, որ կոչի Չմեռան հատոր», Կ. Պոլիս, 1740, էջ 491:

<sup>2</sup> Սատք. ԻԱ 1-11, Մարկ. ժԱ 1-11, Ղուկ. ժԹ 28-40, Գովի. ժբ 12-18:

<sup>3</sup> Տես «Անկնութիւն Սուրբ Անետարանին որ ըստ Մատթեոսի արարեալ ի սրբոյն Ներսիս Ընդհալտոյ մինչ ի համարն 17. հինգերորդ գլխոյն, և անտի արարեալ յերանելոյն Յօհաննու: Երգկացւոյ որ և կոչի Ծործորեցի», Կոստանդնուպոլիս, 1825, էջ 443 - 444: Նաև՝ Ա. Գրիգոր Տաթևացի. *Նշվ. աշխ.*, էջ 470 - 471: Այլև՝ Իգնատիոս վարդապետի «Անկնութիւն Արքայ Անետարանին ըստ Ղուկասու», Կոստանդնուպոլիս, 1824, էջ 380 - 381:



երկրպագում և դրանց ուստերը կուռքերին ընծայում<sup>4</sup>։ Պատի երբ հրեաները Սուրբ Գոգու մերշնչանքով իմացան, որ Հիսուս Քրիստոս է ճշմարիտ Աստված, ուստերը Նրան ընծայեցին, ինչպես Ճննդյան ժամանակ մոզերի խորհրդավոր նվերները՝ ոսկին, կնդրուկն ու զմուռը։ Երրորդ՝ որովհետև նախածնողների մեղանշման պատճառով Տերն անհօծեց երկիրը՝ «փուշ ու տատասկ թող աճեցնի քեզ համար երկիրը»<sup>5</sup>, ուստի որպեսզի այն փշաբերության անեծքից ազատվի՝ երբայցի ծերերն ու մանուկները Տիրոջ առջև ուստեր էին փռում։ Չորրորդ՝ քանի որ հնում օլիմպիական խաղերի ժամանակ հաղթողներին ուստերով էին պսակում, ուստի հրեաները, հասկանալով, որ Հիսուս Քրիստոս Ղազարոսին հարություն<sup>6</sup> տալով մահվանը հաղթել է, Նրան, իբրև հաղթող թագավորի, ընդառաջ ելան արմավենու ուստերով։ Այլև՝ ուստերը խորհրդանշորեն հորդորում են, որ աղամորդին Տիրոջ փրկագործական առաքելությունը գիտակցելով և Նրան անսալով՝ ծաղկի ու պտղաբերի Տիրոջ պատվիրանների կատարմամբ և բազմապատկի իրեն պարզված աստվածային շնորհները, ըստ այնմ, թե «արդարներն արմավենու պես կծաղկեն ... "և պտղաբեր ձիթենու մման" ... կտնկվեն Տիրոջ տանը։ Ղրանք պտղաբեր կլինեն նաև ծերության ժամանակ՝ գիրգ ու փափուկ, որպեսզի ավետեն, թե ճշմարիտ է Տերը, և Նրա մեջ անիրավություն չկա»<sup>7</sup>։

Ուստի հնավանդ ավանդույթի համաձայն, Ս. Եկեղեցիներում, ի հիշատակ Երուսաղեմ Տիրոջ հաղթական մուտքի, հավատացյալներին բաժանվում են ձիթենու և արմավենու օրհնված ճյուղեր։ Սակայն քանի որ Հայաստան աշխարհում ձիթենի ու արմավենի չի աճում, այդ պատճառով մեր երանելի հայրերի տնօրինությամբ, դրանց փոխարեն Հայոց Եկեղեցում նախընտրվեցին ուռենու ուստերը<sup>8</sup>, որոնք էլ առավոտյան ժամերգության ընթացքում, Անդաստանի կարգից<sup>9</sup> հետո բաժանվում են հավատացյալ հայորդիներին։

<sup>4</sup> Նախաքրիստոնեական Հայաստանում ընդհանրացած էր սոսյալ ծառերի պաշտամունքը։ Բացի այդ, հայ իրականության մեջ ընդունված էր նաև կուռքերին պսակներ ու թավ ուստեր ընծայելու սովորույթը. «[Տրդատ] թագավորը հրաման տվեց Գրիգորին. որ պսակներ ու ծառերի թավ ուստեր նվիրաբերի Անահիտի արձանի բազմինն», տես Ազաթանգեղոս, «Հայոց պատմություն», աշխարհաբարի թրգմ. և ծնթ.։ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, էջ 39։

<sup>5</sup> ԾՆՆՂ. Գ 18։

<sup>6</sup> Գովի. ԺԱ 30 - 46։

<sup>7</sup> Աաղմ. ՂԱ 13 - 16, ԾԱ 10։

<sup>8</sup> Նշենք, որ Ռուս Ուղղափառ Եկեղեցում Ծաղկազարդի տոնին նշտատերև ուռենու ճյուղեր են բաժանում. նախ՝ որովհետև այնտեղ էլ ձիթենի ու արմավենի չի աճում, երկրորդ՝ քանի որ նշտատերև ուռենին, ի տարբերություն վաղ գարնանային այլ ծառերի, ավելի շուտ է բողբոջում։ Ուստի Ռուս Եկեղեցում «Երուսաղեմ Տիրոջ մուտքը» կոչվում է նաև "Неделя Ветна", "Цветоносия" կամ պարզապես "Вербное воскресенье", տես С. В. Булгаков, "Настольная книга для священно-церковно-служителей", тт. 1, стр. 584.

<sup>9</sup> Անդաստանը Հայոց Եկեղեցու կարևորագույն արարողություններից է, որի ընթացքում քահանա հայրերը Ս. Խաչով, Ս. Ավետարանով և օրվա շնորհով՝ Գոր, Որդու և Սուրբ Գոգու անունով Տեառնագրում ու օրհնում են

ա. աշխարհի արևելյան կողմն ու Հայոց Հայրապետությունը.

բ. աշխարհի արևմտյան կողմն ու քրիստոնյաների թագավորությունները.

գ. աշխարհի հարավային կողմը, հողերը, այգիներն ու տարվա պտուղները.

Թե ինչո՞ւ նպատակահարմար նկատվեցին ուռենու և ոչ այլ ծառերի ոստերը. Ս. Գրիգոր Տաթևացին բացատրում է ութ պատճառներով. որոնցից առաջինը պայմանավորված է Հայաստանի բնակլիմայական յուրահատկություներով. «որովհետև ուռենին բոլոր տեղերում լեռներում ու դաշտերում, հեշտությամբ է գտնվում»:

Եւէնք, որ օրինյալ ճյուղերը, ընդունված ավանդույթի համաձայն, պետք է պահվեն-ողջ տարվա ընթացքում, մինչև հաջորդ Օադկազարդ (հին ոստերը նորերով փոխարինելիս պետք է այրվեն, իսկ մոխիրը, տարվա պտղաբերության արդյունավորության համար, պետք է ցանել այգում կամ բանջարանոցում<sup>†</sup>): Ցանկալի է, որ օրինյալ ճյուղերով զարդարվի տան որևէ սրբապատկեր<sup>‡</sup>:

Հույժ խրախուսելի է, որ հավատացյալներն իրենք ևս մասնավոր օրհնության համար ուռենու ոստեր տանեն Ս. Եկեղեցի:

Վերջում ցանկանում ենք նշել, որ խոտելի է. երբ Տաճարում գտնվողները, ճյուղեր ստանալու համար, իրենց անհամբերությամբ, աղմուկով ու անպատշաճ պահվածքով իրարանցում են առաջացնում՝ Եկեղեցու անդորրը խախտելով և աղոթալից մթնոլորտը խափանելով<sup>†</sup>:

Թեև երուսաղեմ Տիրոջ հաղթական մուտքն անկանոն բազմությունն էր ողջունում, սակայն ոստերի ընծայումը ոչ թե «վայրապար» ու անպատշաճ էր, այլ՝ խոնարհությամբ ու երկյուղածությամբ, այսինքն՝ ինչպես «խորհուրդ Աստուածավայելուչ»:

Արդ, քանի որ մենք Տիրոջ սիրով ու երկյուղով դաստիարակված հավատացյալներ ենք, և մանավանդ որ Ս. Եկեղեցում ենք գտնվում, որտեղ հանապազ անճառելիորեն ներգործում է Սուրբ Հոգին, ուստի պետք է բարեպաշտությամբ ու ամենայն ակնածանքով մոտենանք և Ս. Եկեղեցում ծառայողից մեզ հասանելիք ուտը վերցնելով՝ առանց շտապելու և հրմշտելու դուրս ելնենք Աստծո Տաճարից:

Ահավասիկ Տիրոջ Ա. Եկեղեցում մման արժանավայել վարքի.

դ. աշխարհի հյուսիսային կողմը, վաճառքը, անապատները, քաղաքներն ու գյուղերը և այստեղ բնակվող մարդկանց:

Միով բանիվ, քանի որ անդաստանի արարողությունը Հայոց Եկեղեցում սկսվում է զարման սկզբից և տևում մինչև աշուն, ուստի այդ կարգը հիմնականում կատարվում է իբրև պտուղների և բույսերի օրհնություն:

<sup>†</sup> Երանք, ուվքեր հողագործ չեն, կամ էլ գյուղում չեն բնակվում. նույնպես պետք է ճյուղերն այրեն, իսկ մոխիրը լցնեն հոսող ջրի մեջ:

<sup>‡</sup> Օրհնված ճյուղերը, բացի իրենց խորհրդանշական իմաստներից, նաև Տիրոջ անճառելի զորությամբ օժտված ոստեր են: Այդ պատճառով Ծաղկազարդի ճյուղերը միշտ արժևորվել են առավելաբար հայ շինականների կողմից՝ իրենց այգիները և հողամասերը չար ուժերից պաշտպանելու համար: Որքե՞ր ցանկալի է, որ այսօր էլ հայ գյուղացին, իր նախնիների հետևողությամբ, մեծ բարեպաշտությամբ ու ակնածանքով Ս. Եկեղեցի գնա և իրեն հասանելիք ուտը վերցնի:

<sup>†</sup> Նմանատիպ իրավիճակներից խուսափելու համար, հույժ ցանկալի է, որ յուրաքանչյուր Եկեղեցու հովիվ նախապես միջոցներ ձեռնարկի թե՛ անհրաժեշտ թվով ոստեր ունենալու և թե՛ դրանք բաժանելիս Տաճարում կարգուկանոն պահպանելու համար: Անհրաժեշտության դեպքում կարելի է ճյուղերը նաև Եկեղեցու բակում բաժանել:

վարվելակերպի ու Տաճարի կանոններին հնազանդվելու համար Տերը մեզ կրկնակի օրհնությամբ կօրհնի՝ ի փառս Ամենասուրբ՝ Երրորդության ու Ա. Եկեղեցու ծաղկելու և պտղաբերելու:

## ՀԱՎԿԻԹԸ՝ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԳԱՆԻԸ

*«Կարմիր հավկիթը մեր ձեռքերի մեջ առնելով,  
հայտնապես մեր փրկությունն ենք ազդարարում»:  
Ղ. Գրիգոր Տաթևացի/*

Հոգևոր գեղեցիկ ավանդություններից է նաև Ա. Ձատկի նախօրեին ձու ներկելը:

Նախ նշենք, որ Հայոց Եկեղեցու հայրավանդ սովորության համաձայն, Ա. Ձատկի տոնը կամխող Սեծ Պահջը լուծվում է կթեղենով (հավկիթ, կաթնեղեն) ու ձկնեղենով: Ուստի եթե ընդհանրական Ա. Եկեղեցու մաս եղող Եկեղեցիներում ընդհանրացած սովորույթ է, ի նշան Քրիստոսի հարության, միմյանց կարմիր հավկիթներ նվիրելը, ապա Հայոց Եկեղեցում ձուն ոչ միայն իբրև Հարության նշանակ է, այլև հիմնականում Ա. Ձատկի ճրագալույցի հսթան<sup>9</sup> ընթրիքի կերակուր:

Տակավին նախաքրիստոնեական շրջանում ձուն եղել է բնության վերագարթոնքի ու կյանքի խորհրդանշան<sup>10</sup>: Այդ պատճառով, իբրև Քրիստոսի հարության վառ արտահայտություն, Ա. Եկեղեցում, Ա. Մարիամ Մազաղեմացու օրինակի՝ հետևողությամբ, աստիճանաբար ընդհանրացել է Ա. Հարության տոնի նախօրեին հավատացյալների կողմից միմյանց ողջունելիս՝ կարմիր հավկիթներ նվիրելու սովորույթը:

Ձուն նախ և առաջ, ըստ Ա. Գրիգոր Տաթևացու, «ողջ աշխարհի օրինակն է, և ինչպես որ իմաստուններն են ասում՝ «*Դոսի կեղևը երկնքին է նման, բաղանքը՝ օդին, սպիտակուցը՝ ջրին, իսկ դեղնուցն էլ՝ երկիրն է*»: Իսկ կարմիր ներկը խորհրդանշում է, թե այս աշխարհը Քրիստոսի արյամբ զնկեց: Եվ մենք, կարմիր հավկիթը մեր ձեռքերի մեջ առնելով, հայտնապես մեր փրկությունն ենք ազդարարում»<sup>11</sup>: Արանից զատ ձուն նաև խորհրդանշում է ադամորդու

<sup>9</sup> Ա. Ծննդյան և Ա. Ձատկի ճրագալույցի Ա. Պատարագից հետո, երեկոյան, կթեղենով ու ձկով Սեծ Պահջի լուծման ընթրիքը. տես «Նոր Բառագիրը Հայկազգեան լեզուի», Երևան, 1979, հտ. Ա. էջ 943:

<sup>10</sup> «Ազգային տոներ», Երևան, 1996, էջ 19: Նաև «Լոյս», 1905, էջ 385:

<sup>11</sup> Ավանդության համաձայն, երբ Ա. Մարիամ Մազաղեմացին ներկայացել է Հոռոմի Տիբերիոս կայսեր՝ նրան կարմիր ձու նվիրելով՝ ավետել է. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Ի դեպ, հնում թե՛ հեթանոսների և թե՛ հրեաների մոտ եղել է մի սովորույթ, համաձայն որի երբ որևէ մեկը ներկայացել է կարևոր մի պաշտոնյայի, հատկապես առաջին անգամ, իբրև հարգանքի ու սիրո նշան նրան մի ընծա է մատուցել: Այդպիսի իրավիճակներում հայտնված աղջատ մարդիկ, ըստ ավանդության, նվիրել են պտուղներ ու ընտանի թռչնի հավկիթներ: Ահավասիկ Ա. Մարիամ Մազաղեմացին, որ իրեն նվիրել էր առաջելական գործին՝ հրաժարվելով ունեցվածքից ու մնայուն կացարանից, Տիբերիոս կայսեր ներկայանալիս նրան պատվել է ինչպես մի աղջատ կին:

<sup>11</sup> «Գիրք քարոզութեան, որ կոչի Զմեռան հատոր», «Քարոզ մեծի շարաթին», էջ 606:

երկու վիճակը՝ ներկան ու ապագան. նախ՝ ինչպես ծվի մեջ ապագա էակի սաղմն է ամփոփված. որն ինքնին կենդանություն է, սակայն ամբողջապես չի հաղորդակցվում արտաքին աշխարհի հետ: Երկուսն էլ ապագան և աղանորդին թեև այս իրական աշխարհային վիճակով է պարունակում, բայց նա տակավին չի կարող թե ֆիզիկապես և թե՛ հոգեպես հաղորդակից լինել բարձր հոգևոր արժեքներին, անձառելի ճշմարտություններին, կատարյալ բարությանն ու երջանկությանը: Երկրորդ՝ ինչպես ծվից ելած արարածն սկսում է ամբողջական կյանքով ապրել՝ իր տարատեսակ ընդունակություններին ու ցանկություններին հազարոց տալով, սույնպես և մարդը՝ Տիրոջ երկրորդ Պալատյամբ, ընդհանրական Գարությունից հետո, կատարյալ, հավիտենական կյանք է մուտք գործելու և այնտեղ, Բարձրյալ Աստծու կամքով, հասնելու է աստվածային ճշմարտությունների կատարյալ ճանաչողության, ինչպես նաև Ամենասուրբ Երրորդության ներկայությամբ վայելելու է անանց երանությունը:

Կարևոր ենք համարում նշել, որ Ս. Գարության հավկիթները պետք է միայն ու միայն կարմիր գույնով ներկվեն. նախ՝ «կարմիր ներկը խորհրդանշում է, թե այս աշխարհը Քրիստոսի արյամբ գնվեց»<sup>12</sup>: Երկրորդ՝ որովհետև կարմիր գույնը մեզ հիշեցնում է, որ մեր նորոգված կյանքը Հիսուս Քրիստոսի անարատ արյամբ է գնվել: Երրորդ՝ քանի որ կարմիր գույնը պատկանում է լուսե ու վառ գունախմբին, ուստի, ի նշան մեր ցնծության, հավկիթները պետք է կարմիր ներկվեն. չէ՛ որ Քրիստոս իր մահվամբ մեղքին հաղթեց, մեզ սատանայից փրկագնեց և իր հարությամբ աղանորդիներին հավիտենական կյանք պարգևեց:

Ահավասիկ ամենևին խրախուսելի չէ, որ հավատացյալ հայորդիները Ս. Գարության խորհուրդը տեսանելի կերպով ներկայացնող հավկիթներն այլ գույներով ներկեն:

Պետք է նկատենք նաև, որ մեր ժողովրդի կենցաղում մի սովորույթ է ընդհանրացել, որն անհիմն է ու անընդունելի, այն է՝ եթե տանը մինչև Ս. Ձատիկ մահացած անդամ կա, ապա տանեցիները ձու չեն ներկում<sup>13</sup>: Հիրավի սա ոչ թե հանգուցյալի նկատմամբ հարգանքի արտահայտություն է, այլ անտեղյակության հետևանք. զի ձուն, լինելով Գարության, կյանքի հավերժության խորհրդանշան, առավելաբար պիտի ներկվի հենց այդ իրավիճակում հայտնված ընտանիքներում՝ իբրև հոգևոր մխիթարություն՝ ի նշան կորցրած հարազատի հոգվու անմահության և երկնքի Արքայության համար հարություն առնելու:

Շատ ցանկալի կլիներ, որ հավատացյալ հայորդիները Ս. Ձատիկ ճրագալույցին մասնակցելիս իրենց հետ Ս. Եկեղեցի ներկված հավկիթներ բերին, որպեսզի դրանք Ս. Պատարագից հետո քահանա հայրերի կողմից օրհնվեին, ապա տուն տարվեին և ճրագալույցի խթան ընթրիքի ժամանակ ճաշակվեին:

<sup>12</sup> Երկու տեղը:

<sup>13</sup> Գարկ ենք համարում նշել, որ, քացի վերը նշված նախապաշարունից, Ս. Ձատիկ տունի հետ առնչվող նաև այլ նախապաշարուններ կան մեր ժողովրդի կենցաղում (օժանդակ ձեռքերը չեն լվանում, լվաքք չեն անում ևն): Պետք է նշենք, որ մասնատիպ սնուտի երևույթները քրիստոնյային քնավ հարիչ չեն: Ուստի իբրև ԼՈՒՄՈՒ որդիներ՝ զորացած Քրիստոսի սիրով, մասնատիպ մուլտրություններով չխաբվենք և Աստծու քարերար նախախնամությունից ինքներս մեզ զրկված չկարծենք:

# ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՀՐԱՆՈՒՑ ԽԱՈՒՍՑԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

## ՄԵԾ ՊԱՍԻՑ՝ ՉԱՏԻԿ

(Ազգագրական ակնարկ)

Հայաստանի հասարակական կյանքում ցայտուն արտահայտված հետաքրքրասիրություն է դիտվում ազգային արժեքների նկատմամբ, որոնց դրսևորումներից մեկը, եթե ոչ՝ ամենակարևորը, հայկական ժողովրդական և եկեղեցական տոներն են: Իրականում դրանք գլխավորապես միասին, միահյուսված են հանդես եկել դարեր շարունակ, միմյանց լրացրել են և որպես մի ամբողջություն՝ ցայտուն արտահայտել մեր ժողովրդի աշխարհընկալումը, հասարակական ու անհատական վարքագծի նորմերը, գեղագիտական ըմբռումները, դրսևորել հավաքական ստեղծագործական կարողությունները, ներդաշնակ ապրելու հնարավորությունները: Պատմական իրադարձությունները 20-րդ դարի սկզբին խաթարեցին դրանց բնականոն զարգացման ընթացքը: Այս փոքրիկ հոդվածը մի համեստ փորձ է այդ ընդհատված ժամանակին վերադառնալու և հիշեցնելու, թե հայ ժողովրդի տոնական կյանքի մի փոքր հատվածը ինչ դրսևորումներ ուներ 70 տարի առաջ: Այստեղ կներկայացվի միայն Մեծ Պասից մինչև Չատիկ ընկած ժամանակահատվածի տոնածիսական ընթացքը, մի շրջան, որ անմիջապես հաջորդում էր Բարեկենդանին, տարեկան տոնաշարի ամենաուրախ և անհոգ երկշաբաթյա շրջանին:

Մեծ Պասով անհոգ ուրախությանը, զվարճախաղերին, անհագուրդ խրախճանքներից, կենցաղային թեթևամտությանը, հասարակական նորմերի ավանդական կարգի խախտումներին փոխարինելու էր գալիս հասարակական ու ընտանեկան հարաբերությունների դարերով մշակված նորմերին վերադառնալու խորհրդանշական շրջանը: Որպես խորհրդանշական ու անցումային շրջան՝ այն հասարակության կողմից մշակված հոգևոր արժեքները դրսևորում էր խտացված ձևերով: Պա ինքնամաքրման, ինքնազոհաբերման, ապաշխարության, մաքրակենցաղության, ժուժկալության ու պահեցողության յոթաբաթյա շրջանն էր, որ հայտնի էր «Մեծ Պաս» անունով, Մեծ՝ որովհետև այն տարեկան պասերից ամենաերկարն էր ու տևում էր յոթ շաբաթ: Մեծ Պասի հենց առաջին օրը հաշտություն, համերաշխություն սահմանելու օր էր, գժտություններն ու թշնամությունները մեղմելու, հասարակության մեջ ներդաշնակ բարեկամական հարաբերությունները վերականգնելու օր: Սիջնորդները գործի էին անցնում, հաշտեցնում նույնիսկ թշնամիներին: Ոչ ոք չէր

կարող խուսափել այդ սովորույթից, այլապես կզրկվեր Մեծ Պասի ավարտին հաղորդվելու իրավունքից:

Նույն օրը հոգևոր մաքրությանը ուղեկցում էր առարկայական մաքրության սովորույթը: Բարեկենդանը վերջացել էր և Մեծ Պասի հենց առաջին օրը ջանում էին վերացնել Բարեկենդանյան զեխության հետքերը՝ վաճառ ամանները, վաճառ անել, լողանալ, մաքրել տան ու բակի բոլոր անկյունները և այդպես մաքուր դիմավորել ինքնագազապման շրջանը: Այդ օրը հայտնի էր «վաճաքարուք-արբեցարուք» և «կրճոնքի օր» անուններով: Այլևս պաս էր, արգելքի տակ էին կենդանական ծագում ունեցող բոլոր ուտելիքները, դրանց փոխարինելու էին զալիս բանջարեղենն ու ձեթը: Հարկավոր էր «վաճառ-սրբել» բարեկենդանյան տոնական հետքերը, միայն անչափահասներին էր թույլ տրվում ուտել-վերջացնել «կրճոնք» /5,258/: Պասը պահելը և պասին համապատասխան ժուժկալ, զուսպ, համեստ վարքը և հատկապես ուտեստում ինքնագազապումը շատ լուրջ, խստորեն պահվող երևույթ էր, իսկ պասակերներին հասարակական ծաղրի էին ենթարկում:

*«Պասանկեր,*

*Սև շան ընկեր,*

*Գլոր-մլոր,*

*Շան քաքահոր» /13,44/ և նման այլ երգերով:*

Մեծ պասի առաջին օրվա ուտելիքները սովորաբար շատ համեստ, սակայն միաժամանակ բավական տարբեր էին: Եթե Բալուում «մինակ նոսր, թեթև ու թթվաշ կորկոտ ապուրով մը կը բավականանան» /7,33/, ապա Նոր Նախիջևանում Մեծ Պասի առաջին օրը «սեղանի վերայ սովորաբար դնում են, բացի զանազան սնկի ջրից պատրաստած պասուց ապուրներից, «սիսեռի թփից», արևածաղկի կամ մամանեխի իւղով տապակած կարտոֆիլից և ալիւրաշաղախ արած ու տապակած սնկից, և ձիթապտուղ, խաշած, տրորած ու պաղեցրած «բակլայ, բոհրած կաղին», չոր մոգեղեն, «հալուայ» և անուշահամ «սարայլը» /14,21/:

Մեծ Պասի 49 օրերի ընթացքում սովորաբար պիտի ուտեին լոբուց, ոսպ ու սիսեռից, կարտոֆիլից ու գետնախնձորից, սոխ ու սխտորից, ծավարեղենից, զանազան թթու դրած ու չորացրած կանաչեղեններից պատրաստած խորտիկներ, բայց հատկապես՝ հռչակավոր «մոխտխ» ապուրը: Մոխտխը տարբեր տեղերում տարբեր կերպ էին պատրաստում, բայց այն Մեծ Պասի ուղեկիցը, խորհրդանշական ճաշատեսակն էր ամեն տեղ: Շատ վայրերում կորկոտը լավ եռացնելուց հետո սառեցնում էին, շաղախում թթմորով և լցնում կարասը՝ թողնելով, որ այն խմորվելով թթվի: Ոմանք էլ թթմորով շաղախելուց հետո զնդեր էին շինում ու չորացնում և անհրաժեշտության դեպքում քրով բացում էին այդ զնդերը: Համարյա ամենուր այս ծիսական

\* Տողատակը չձանրաբեռնելու նպատակով հեղինակը օգտագործված գրականության ցանկը համապատասխան համարակալմամբ բերել է վերջում: Հղումների ավարտին փակագծի մեջ առաջին թիվը տվյալ հրատարակության համարն է ըստ հիշյալ ցանկի, իսկ երկրորդը՝ այդ հրատարակության համապատասխան թիվը:

ճաշատեսակի պատրաստմանն ու ճաշակմանը ուղեկցում էին որոշակի ծեսեր: Օրինակ, շատերը հետևում էին, որ պասի ընթացքում մոխոխը ուտելու և հատկապես պատրաստելու թիվը զույգ չլինի, այլ անպայման՝ կենտ, այլապես «օջախին վնաս կգա» /5,259/: Ուրիշները մոխոխը պատրաստելուց և կարասը լցնելուց հետո կանչում էին երեխաներին, որ նրանք կարասի մոտ մի քանի անգամ էշի նման խտանչեն, իբրև մոխոխի շուտ թթվելու համար: Իսկ Կարնո հայերը հատուկ Մոխոխապուրի պար ունեին, որ պարում էին միայն Մեծ Պասի առաջին օրը: Մոխոխապուրի պարը պարել են բացառապես տղամարդիկ, ընդ որում՝ համայնքի, գյուղի բոլոր տղամարդիկ, հիմնականում չափահասներից մինչև ծերերը, պարել են՝ մոխոխապուրին նվիրված երգը երգելով, առանց նվագի: Մոխոխապուրի պարերգով գովերգել են Մեծ Պասը, նրա հիմնական ճաշատեսակը՝ մոխոխը: Պարը կատարել են խումբ-խումբ, կլոր-փակ շրջանով: Յուրաքանչյուր խումբը կատարել է յոթ պտույտ և հեռացել պարատեղից՝ տեղը զիջելով հաջորդ խմբին: Ինչպես իրենք՝ Կարնո հայերն էին ասում, «կանանց օրենք չէր, որ պարեին, ամոթ էր, սուրբ օր էր: Պարել են խաղասելով (երգելով), այդ օրը տիգ, չալդի (երաժշտական գործիքներ) անելու իրավունք չկար» /10, 93/:

Այդքան կարևոր մոխոխը, սակայն, Մեծ Պասի ընթացքում այնքան էին ուտում, որ պասը բացելիս արդեն երազում էին հրաժեշտ տալ այդ ուտելիքին: Նույնիսկ երգեր կային այդ մասին, ինչպես.

*«Ծառագարդը մոտեցավ, մոխոխ ապուրն հոտեցավ,  
էլ մի ուտե ձիթով խավիժ, թե չէ փորդ շատ կցավի»* /11,232/:

Նույն Կարնո հայերը «Մոխոխապուրի» պարից զատ, նույն օրը, նույն կազմով պարում էին նաև «Ինչով ծեծենք սոխն ու սխտոր» պարը, սոխն ու սխտորը, որ առարկայացնում էին Մեծ Պասի դժվարությունները: Այս պարի ժամանակ պարի ղեկավարը հետևում էր պարաձևի ճիշտ կատարմանը և, պարի ընթացքում շարժումները հարմարեցնելով պարերգի խոսքերին, ցույց տալիս, թե ինչով և ինչպես պետք է ծեծեն սոխն ու սխտորը: Մյուսները հետևում էին նրա օրինակին:

Եվ այսպես երգելով պարում էին այնքան, մինչև «սոխն ու սխտորը, կանաչ կխտորն ու ջուխտ մանանեխը» ծեծում էին «քընթով», «բերնով», «ձեռքով», «դիրքըգով (արմունկով)», «օռով», «ծընգով», «վօղկօվ» /10,93/:

Մեծ Պասի ուտելիքների ծխական շղթան, սակայն, սկսվում էր առաջին օրը յոթ հատ անալի, ձեթով բաղարջ թխելուց, որը խորհրդանշում էր այդ երկարատև պասի յոթ շաբաթները /11,23/: Իսկ լոռեցիները հավատում էին, որ եթե առաջին օրը աղանձ չուտեն, ապա պասի ընթացքում բերանները կհոտի կամ շրթունքը կճաքի /5,259/: Առհասարակ այդ օրը աղանձ, հատիկ ուտելը ընդունված էր շատ տեղերում: Մշեցիներն, օրինակ, այդ օրը ցորեն ու սխեռ էին խաշում, որը կոչվում էր հատիկ, ինչպես նաև՝ անխաշ բաղարջ, որն էլ կոչվում էր «խուկլի», ուտում էին այն ու երգում.

-«Խուկլի հաց ու հատիկ,

Բարով իգա մեր Ձատիկ» /13,44/:

Սակայն Մեծ Պասի առաջին օրվա կարևորագույն գործը պասը խորհրդա-

նշող «Ակլատիզ» կախելն էր: Այն առարկայորեն մի սոխ էր. վրան աքաղաղի լոթ փետուր խրած, և թելով առաստաղից կախ տված: Հայտնի են ինչպես անվան, այնպես էլ առարկայական տարբերակներ: Հայտնի են Ախալոճ, Մխըլոճ, Ախլոճ, Ախըլոջ, Սխացել, Սխելոճ, Ակլատիզ, Աջլատիզ, Ախիլպապ, Գոգոռոզ, Խուխուլիճ, Խուլուճիկ, Խորփոլոզ, Մոռմոռոզ, Մոռոաս, Մեծպաս, Պապի պուլուլ, Պապի պլոր, Որոջբեկ /Պաս բեկ-13,44/, Ֆռիկ անունները: Ամենուր այն ընդունվում էր որպես պաս Պապ, Լոռիում նույնիսկ այն կախելիս երգում էին.

- Տատը գնաց շերեփը ձեռին,  
Պապը եկավ չոմբախն ուսին /5, 258/:

Այս պատը Կարնո հայերի մեջ մարմնավորում էր տիկնիկի տեսքով ծերունին: Տիկնիկը պատրաստվում էր տղամարդու հագուստով, փաթթամ ու սպիտակ բեղ ու մորուքով, միտամնի, որի ծայրին խրվում էր սոխը յոթ փետուրներով, պարզած թևերով, որոնցից քարեր էին կախվում /1,449/: Ուրիշները ոլորած ճիպտի ծայրին գլուխ սոխ էին ամրացնում, սոխի վրա այծի մազից բեղ ու մորուք սարքում, սոխի մեջ յոթ գույնզգույն փետուր խրում /3,280/: Այն կախելու ժամանակ երեխաները երգում էին.

«Ակլատիզ, չվանը վիզ,  
եկավ մեզ հյուր՝ կախվավ երդիս»:

Այլ վայրերում պարզեցված տարբերակն էր: Կախվում էր ուղղակի փետուրներ խրած սոխը, որին երբեմն փոխարինում էր գետնախնձորը, կարտոֆիլը, կավից կամ խմորից արված պարզ գունդը: Ըստ մշեցիների՝ փետուրները պետք է սև լինեին, որպես թե ծյունը շուտ հալվելու և գարունը գալու նկատառումով /13/: Ուրիշները փետուրներից չորսն սպիտակ գույնի էին դնում՝ որպես Մեծ Պասի առաջին չորս շաբաթները ծնոան հետ համապատասխանության նշան, մեկը՝ խատուտիկ, որպես անցումային շաբաթվա նշան, երկուսը՝ լրիվ սև, որպես Մեծ Պասի գարնանը համապատասխանող վերջին երկու շաբաթների խորհրդանշան: Նոր Նախիջևանում էլ «Մըռըռասի փետուրները զարդարում էին գույնզգույն ժապավեններով, ըստ յոթ շաբաթների խորհրդանշանի: Օրինակ, Ձատկինը կարմիր էր, Ծաղկազարդինը՝ կանաչ, Լուսավորչինը՝ սպիտակ, մյուս շաբաթներինը՝ սև» /14,22/:

Շատ տեղերում փետուրների գույներին կարևորություն չէր տրվում: Ամենուր Ակլատիզ-Պաս պապին հատկացվում էր պատը հսկող դեր: Նրանով վախեցնում էին երեխաներին, որ հանկարծ սրանց ուտիսի կերակուրներ չուտեն: Շատ տեղերում պատմվում են զանազան պատմություններ Ուտիս տատի և Պաս պապի հակադրության մասին, որն արտահայտվում էր նրանց մշտական վեճով. պապը (պաս) լոբաճաշի մեծ շերեփով խփում էր տատի (ուտիսի) գլխին և դուրս անում տմից այն թանի համար, որ նա երեխաներին յուղալի-մսեղեն կերակուրներով է կերակրում և հոգին տկարացնում գեր մարմնի մեջ, իսկ պասի վերջում տատն էր գալիս և մածնի շերեփով խփելով Պաս պապի գլխին՝ դուրս անում նրան՝ պասից միհարած երեխաներին փրկելու համար: Լոռիում պապը տատին /պատը ուտիսին/ դուրս էր անում



հետևյալ խոսքերով. «*Գնա, հեռացիր, անզգամ, բավական է, որքան որդիներիս պարարտացրիր, ճարպերը ավելացրիր, հանցանքների մեջ՝ ձգեցիր:*

*Ժամանակն է, որ այժմ թողնեն այդ մարմնական զվարճությունները և մի քիչ հոգեկան սնունդով սննդվելով հավիտենականության համար պատրաստվեն:* Տատը հնազանդվում է և դուրս փախչում: Սակայն մի առ ժամանակ հետո ուրախ և առույգ տատը, ձեռքին մածուցի ահագին եղակուլը շերտեր մտնում է ներս և դուրս անում-նիհար, չորացած պապին, մի քանի հարված տալով նրա փետրած «պլորին» /5,223/: Որոշ վայրերում այս պատմությունները կերպարանք էին առնում իրական կատարումների ձևերով և պասի վերջում Պաս-պապ-Ավլատիզին «երեկոյան առնում են տան երիտասարդները, տանում կալերը և դագանակների հարվածներով դես ու դեն քշելով՝ քուրը գցում, ազատվում»: Շիրակցիները այդ միջոցին երգում էին.

*«Չմեռն անցավ, գարունն եկավ,*

*Պասը գնաց, ուտիսն եկավ,*

*Քաշվի, կորի, Չատիկն եկավ»:*

Այնթափցիները, ովքեր փետրագարդ սոխը կոչում էին ուլունճիկ, Սեծ Պասի վերջի օրը այն թաթախում էին մածուցի մեջ և նետում տանիքը: Ըստ նրանց պատկերացումների, սոխը դառնում էր մկաններ, խոփվը՝ թևեր, ինքը՝ հուլունճիկն ամբողջովին՝ թռչուն, որ թռչում-գնում էր՝ հաջորդ տարի վերադառնալու պայմանով: Ամենուր Սեծ Պասի ընթացքում ծլած սոխի ծիլը կտրում էին և գցում Ձատիկին եփվող կերակրի մեջ: Որոշ հետազոտողներ Պաս պապի կերպարը նույնացնում են մեռնող և հարություն առնող աստվածությունների կերպարի հետ /է,450/, որ հիրավի գարնանային այս տոնաշարի գլխավոր դեմքն էր:

Ավլատիզի յոթ փետուրները, որ Սեծ Պասի յոթ շաբաթներին էին համապատասխանում, յուրատեսակ օրացույցի դեր էին կատարում, յուրաքանչյուր շաբաթվա վերջում մեկ-մեկ հանվում էին: Շատերն ամեն շաբաթվա փետուրը հանելիս ուղեկցում էին բնորոշ երգերով: Շիրակում յուրաքանչյուր փետուրը հանելիս ասում էին. «*Ճիճու, ճիճվարանքը դուրս, ցորեն, գարին ներս*», և քարդում ու մի կողմ էին նետում փետուրը: Նախավերջին՝ վեցերորդ փետուրը հանելիս, երկար պասից հոգնած ու նեղված «քար քաշելուց էլ ծանր» վերջին շաբաթն է նկատի ունենալով, ասում էին.

*«Դետին շաբաթ քարքաշան,*

*ճճեր հալան ու մաշան...» /13,44/:*

Սեծ Պասի առաջին օրվա սովորույթները դրսևորվում էին նաև տան առատության ապահովմանը, չարիքը վերացնելուն կամ կանխելուն ուղղված գանազան արարողություններով: Օրինակ, նորահարսները, որ մինչև Սեծ Պաս քրի չէին գնում, այդ օրը գնում էին առաջին անգամ և ետ դառնալիս իրենց հետ մի քանի չոփ էին բերում: Այդ չոփերը կոչվում են «դովաթի չոփեր», պահվում էին մինչև ամառ և կաթը եփելիս գցում էին կրակի մեջ, որպեսզի կաթը մշտապես առատ լինի: Իսկ լոռեցիները այդ օրը տանը «ճլորթի» էին կախում, մի քանի անգամ ճոճում երեխաներին, ապա հանդիսավորապես ճլորթուն բազմեցնում տան մեծ կնոջը՝ նանին: Նանը գոգի մեջ մի մեծ քար էր դնում,

որից հետո հարսները ճլորթին ուրրում էին իր առանցքի շուրջ՝ պտտելով նստած նանին, ու բաց թողնում: Թնկի ուրրքը քանդվում էր՝ իր հետ հիմա էլ հակառակ ուղղությամբ պտտեցնելով նանին: Այդ պահին նա գոգի քարը գցում էր մի կողմ և ասում: «Այսքան յուղ ինձ»: Հարսները՝ քաթն ամմիջապես վերցնում ու կրկին գոգն էին դնում: Պտույտը սկսվում էր, և քարը երկրորդ անգամ գցելով՝ նանը ասում էր: «Այսքան յուղ այս հարսիս»՝ տալով հարսի անունը: Սա շարունակվում էր այնքան, մինչև նանն ապահովում էր բոլոր հարսների յուղի առատությունը: Այս ծեսը կոչվում էր «եղհանել» / 5,258-259/:

Չարիքը, քարը վերացնելու ձևերը նույնպես տարբեր էին: Դրանցից մեկը վնասակար կենդանիները, միջատներն աղալ-վերացնելու ծեսն էր: Այն կատարվում էր հետևյալ կերպ. մինչ կանայք տանը զբաղված էին մաքրությամբ, տղա երեխանեցից մեկը բարձրանում էր տանիք և երկու քար երկանքի քարերի նման մեկը մյուսին քսելով՝ բարձրածայն հարցնում.

-Աղամ, աղամ, ի՞նչ աղամ:

Բակում կանգնած մեկ այլ տղա պատասխանում էր.

- Օձ ու կարիճ աղա:

Այսպես հարց ու պատասխանով «աղում» էին մուկ, գայլ, աղվես, վնասակար սողուններ ու միջատներ /13,44/:

Այդ նույն ժամանակ տղամարդիկ ստուգում էին իրենց աշխատանքային գործիքները, հատկապես երկրագործները, որոնց բահը, արորը, գութանը ամիսներ շարունակ անգործության էին մատնված: Կարգի էին բերում, փչացած մասերը նորոգում: Սիաժամանակ դուրս էին հանում անասունները, մանրագնին քննում նրանց աշխատունակությունը /7,33/:

Ճատ-չատերը Սեօ Պասի առաջին ողջ շաբաթը «կիրակի» էին պահում, այսինքն՝ շաբաթվա այդ օրերին որոշակի աշխատանքներ չէին կատարում: Այսպես, առաջին օրը՝ երկուշաբթի, պահում էին «կրակի կիրակի», կրակի հետ գործ չէին անում, այլապես նրանց հագուստը, տունը կամ որևէ կարևոր բան կվառվեր, «կրակի բաժին կդառնար»: Հաջորդ՝ երեքշաբթի օրը «ջրի կիրակին» էր, ջրի հետ գործ ունեցողը կխեղդվեր, կամ հեղեղը տունը կքշեր: Այդ օրը նաև մեծ քանակությամբ հաց էին թխում, այնքան, որ բավարարեր Սեօ Պասի ողջ ընթացքում: Այնուհետև մինչև Ջատիկ հաց չպիտի թխվեր: Չորեքշաբթին «մկան կիրակին» էր, այդ օրն աշխատողների հասկը մուկը կկտրեր, ցորենը կուտեր, հագուստը, մանած թելը կփչացներ: Այդ օրը վաղ առավոտյան կանայք եկեղեցի էին գնում, այլապես կզրկվեին ճախարակ մանելու ունակությունից, մանած թելն էլ միշտ կկտրվեր: Հինգշաբթի բոլոր տներում ճախարակ էին մանում: Շաբաթ օրը հայտնի էր «թալալոսի կիրակի» անունով: Այդ օրն աշխատողներն իրենց ենթարկում էին «թալկանալու»՝ ուշագնաց լինելու վտանգին /11,231/: Բիրված օրինակները, սակայն, բոլոր վայրերի համար նույնական չէին: Այսպես, արցախահայերը տարբեր անուններով ու նպատակներով «կիրակի» էին պահում Սեօ Պասի երկրորդ շաբաթվա օրերը: Այդ շաբաթվա երկուշաբթին այստեղ կոչվում էր «գայլ կերածի և կատաղած շան» կիրակի, այսինքն՝ այդ օրն աշխատող մարդուն կարող էր գայլը ուտել կամ կատաղած շունը կծել, երեքշաբթին՝ «սել տարածի» կիրակի, չորեքշաբ-

թին «կայծակ խփածի» կիրակի, և այլն: Այս կիրակիները, ինչպես կտեսնենք, այլ տարբերակներով շարունակվում էին նաև Մեծ Պասի Ավագ շաբաթվա ընթացքում:

Չարիքը կանխելու և առատությունն ապահովելու ծիսաշարքի մեջ էր մտնում նաև սենյակն այլուրով զարդանախշելու սովորույթը: Մշեցիները Մեծ Պասի առաջին օրը բնակարանը լիովին մաքրելուց ու փոշիները վերցնելուց հետո՝ երկար ծողի ծայրին մի քիչ բամբակ կամ մի կտոր լաթ էին փաթաթում, թաթախում այլուրի մեջ և մրից սևացած առաստաղն նախշում այնպես, որ գիշերվա աստղազարդ երկնքի նմանվի: Միաժամանակ այլուրով նախշազարդում էին նաև մրոտ սյուները և «ս»-ի ձևով բամբակի պատրույզները կպցնում վրան, որպեսզի հավերժ թուխս նստելիս այդ նախշերի չափ ծտեր ունենային /13,44/:

Այդ օրից սկսած «Մեծ Պահքի երկայն օրերը կապրեն ոչ միայն նյութականին վրա մտածելով, այլ նույն իսկ կապրեն հոգևոր կյանքն ալ առանց օր մը պակաս թողելու իրենց ներկայությունը առտվան և իրիկվան ժամերգությանց: Մեծով, պզտիկով եկեղեցին են, մինչև Շաղկազարդի իրիկունը...» /7,35-36/:

Մեծ Պասի տոնակաճությունը առաջին օրով կամ առաջին շաբաթով չէր ավարտվում: Քառասունինն օրերի ուղիղ կիսվելը, որը տեղի էր ունենում հինգշաբթի, հայտնի էր «Միջինք» անունով և ուներ արարողությունների իր շղթան: Նախ՝ այդ օրը նշանված աղջիկ կամ տղա ունեցող ընտանիքներում ձեթով բաղարջ էր թխվում և ուղարկվում փոխադարձաբար հարսնացուին կամ փեսացուին: Այդ երեկոն կոչվում էր «Քառասուն մանկունք», և եկեղեցու տոնակարգին զուգահեռ «Քառասուն մանկանք» հիշատակը ժողովրդական մի շարք սովորություններում գտել էր իր դրսևորումը: Այդ երեկո չափահաս աղջիկները գաթա, հալվա էին պատրաստում և գնում իրենց նշանված ընկերուհիների տները: Այստեղ նրանք «քառասուն անգամ քառասուն» ծնրադրում էին «Քառսուն մանուկ, քառսուն կուս, քառսուն մանկանց բարեխոս» խոսքերով: Կարճո հայերը բազմազանություն էին մտցրել այս խոսքերի մեջ, ասելով.

*«Քառսուն մանուկը լմին,  
Թագն ու պսակը մտին,  
Ինչ որ տվիր բաղնեցպանին,  
Անոր կեսն ալ ինձի տուր» /3,281/:*

Ողջ գիշեր քառասուն մանկանց հիշատակին ծնրադրելով, ժամանակ առ ժամանակ իրենց հետ բերած մթերքներով ուժերը վերականգնելով, աղջիկները առավոտյան վաճում էին մեկը մյուսի գլուխը և տանտերերից մի-մի գուլպա նվեր ստանալով՝ ցրվում /3,283/:

Նոր նախիջևանի հայերն էլ կլոր, մեջն ուռուցիկ, մեղրաջուր քսած հաց էին թխում, որ կոչվում էր «պալից» /կամ առանց մեղրաջրի, «Չորակ»/ և բաժանում էին աղքատներին /14,23/՝ զոհաբերության բնույթ հաղորդելով երևույթին:

Շատ ընտանիքներում այդ գիշեր մինչև լույս «լիճք» էին վառում, այսինքն մի ամանի մեջ ձեթ էին լցնում, ոլորած պատրույզը դնում մեջը և վառում:

«Սիջիմք»-ը, պատը կիսելով, նաև զարման գանլստյան ավետաբերն էր: Տարվա այդ շրջանում դաշտերն արդեն կանաչում էին, ուստի «Սիջիմք»-ին հաջորդում էին զանազան ծիսական դաշտագնացությունները: Որոշ վայրերում նորահարսի սկեսուրը իր և նորահարսի մոտ հրավիրում էր բարեկամուհիներին, և պասի բազմատեսակ ուտեստեղենով՝ այդ խումբը դաշտ էր դուրս գալիս զբոսնելու: Այդ զբոսախնջուկը մասնավորեցվել էր «զյաշտ»՝ անունով, նույնիսկ հատուկ երգով:

Վանում այդ օրերին ընտանիքի ամուրի անդամը, լինել երիտասարդ թե պատանի, արևածագից առաջ գնում էր իրենց, ձյունից դեռ չմաքրված, ցորենի կանաչող արտ՝ ավետելու զարման գալուստը հետևյալ խոսքերով. «Աշխարհն լույս տալու եկողը թող քեզ էլ լիություն տա»: Նույն օրը, երեկոյան, տանտիկիները թոմիրը խառնելու երկար փայտի մրոտ ծայրով խաչեր էին գծում տան չորս անկյուններում՝ ասելով. «Պուպուշիկ, դուրս, պուպուշիկ դուրս», ապա նույնը կրկնում մթերանոցում ու մառանում՝ վստահ, որ «տան անկյուններում թաքնված գանգրահեր-փոքրիկ սատանայաճտերը, որոնք պուպուշիկ էին կոչվում, կթողնեն-կփախչեն» /1,453/:

Ղզլարի հայերը նույնպես զարման գալուստը խորհրդանշող սովորույթ ունեին: Մեծ Պասի հինգերորդ շաբաթվա սկզբին մի ամսնում նրանք զարի կամ ոսպ էին ցանում, և երբ հատիկները ծլում, ու ծիլը հինգ մատի չափ բարձրանում էր, կանաչի շուրջը կարմիր ժապավեն էին կապում, չորս կողմը կարմիր ծվեր շարում և դնում սեղանին: Ձատկին այդ սեղանի ամենագեղեցիկ զարդն էր:

Բայց ահա վերջանում է Մեծ Պասը, վեցերորդ կիրակին է, և այդ շրջանի կարևորագույն տոնն է Օաղկազարդը:

### *ՃԱՂԿԱԶԱՐԴ /Ձառզարդար, Ծառկոտրոնք, ճորճարդոր, Ծառզարդար, Ձարդար/*

Նորապսակ երիտասարդները, նշանված տղաները շաբաթ, լույս կիրակի կեսգիշերին, արմատախիլ էին անում նոր բողբոջած ուռենիները և բերում եկեղեցի: Ողջ եկեղեցին զարդարում էին ուռենու բողբոջած ճյուղերով, մի մեծ կույտ ճյուղեր էլ դարսում էին կենտրոնում: Նրանց հետևում էին անչափահաս տղաներն ու պատանիները՝ ձեռքներին զանազան ճոռացող ինքնաշեն խաղալիքներ՝ ճեռեր, կարկաչաներ: Սինչ երիտասարդները զարդարում էին եկեղեցին, սրանք, պտտացնելով, աղմուկով էին լցնում այն: Եկեղեցին աստիճանաբար լցվում էր բազմությամբ՝ տոնական հագնված աղջիկներով ու կանանցով, երիտասարդներով: Ծաղկազարդին, ի դեպ, ծնեռային հագուստները փոխվում էին զարմանայիններով: Դեռատի աղջիկները եկեղեցի էին գալիս այդ օրը հավաքած ծաղիկներով: Այդ գիշեր յոթ բուրավետ ծաղիկներ ու խոտեր դնում էին ջրի մեջ /16,202/:

Գալիս էր քահանան, հնչում էին եկեղեցու զանգերը՝ հրավիրելով ուշացածներին: Եկեղեցի եկողները շրջապատում էին ուռենու ծառերը, իրենց հետ բերած մոմերը վառելով՝ կպցնում դրանց ճյուղերին և հարյուրավոր մոմերի պայծառ լույսի տակ, կեսգիշերին սկսվում էր ուռենու ճյուղերն օրհնելու ծեսը: Եկեղեցում սովորական զսպվածությունն ու հանդարտությունը

չկա, բոլոր կողմերից կատակներ են լսվում, երեխաները ճոռացնում են, բարեկամները գտնում են միմյանց, ողջագուրվում: Խիտ՝ բազմություն է հավաքվում հատկապես նշանված աղջիկների շուրջ, որոնց շրջապատում են ինչպես իրենց, այնպես էլ փեսացուի ազգական կանայք, նվերներ տալիս:

Ճյուղերն օրհնելու պահին փեսացուի կողմից ծառի նման ճյուղաշատ մի հաստ մոմ են դնում նրա ձեռքին: Այդ օրը, Մեծ Պասի ողջ ընթացքում, առաջին անգամ նշանախոսության խոսք է լինում, և հենց եկեղեցում, կեսգիշերին, տեղի են ունենում հանպատրաստի նշանադրություններ: Ժամասացության ավարտին մոտենալիս՝ բոլոր ժամավորները ջանում են հնարավորին չափ շատ ուռենու օրհնված ճյուղեր վերցնել իրենց հետ և, վառված մոմերով դուրս գալով եկեղեցուց, շտապում են գերեզմանատուն, մոմերն ամրացնում իրենց հանգուցյալի գերեզմանաքարին, իսկ օրհնված ուռենու ճյուղերը տուն էին տանում:

Այդ ճյուղերին վերագրվում էր չարխափամ, առատացնող գորություն և ըստ այդմ՝ տարվա ընթացքում դրանք օգտագործվում էին բազմաթիվ առիթներով: Այդ ճյուղերից գցում էին բոլոր մթերքների կարասները, ամբարը, թեթևակի խփում էին անասուններին, դրանցից մեկը պահում էին և ամեն անգամ կարագ հարելիս ստուգում խնոցին: Այդ ճյուղերը հյուսում, օղ էին անում, օղի միջով անցկացնում հավերին, որ դրանք գեր լինեն, խփում էին միմյանց մեջքին՝ «մեջքը տեղը, կամքը՝ տեղը» խոսքերով /14,23/: Փոթորիկի ժամանակ տանը պահված երկու ճյուղեր խաչաձևում և կրակն էին նետում՝ վատահ, որ փոթորիկը կկտրվի:

Ջեսապում կիրակի առավոտյան մի լաթի կտորի վրա յոթ շար շուլալ կար էին անում, յոթ թելերը ծայրում յոթ անգամ կապ գցում և լաթը նետում պարտեզ: Ապա լվացվում էին գիշերը յոթ ծաղիկների գորությունը քաղած ջրով /16,202/: Այդ օրը բոլորը պիտի հատիկ ուտեին, ինչպես նաև նվիրաբերեին տուն այցելող երեխաներին, ուստի տանտիկիմները մեծ քանակությամբ խաշած ցորենից, սիսեռից, չամիչից ու շաքարահատիկներից «հատիկ» էին պատրաստում: Իսկ երեխաների այցերը չէին ուշանում: Երկու-երեք հոգով, երբեմն ավելի սովոր խմբերով, ճեմեր ճոճոացնող երեխաները մի-մի դույլ ու տոպրակ առած շրջում էին տնետուն, Ծաղկազարդի երգեր երգում և որպես պարզև ծու ու հատիկ ստանում: Ձուն նրանց շատ էր պետք, չէ՛ որ առջևում Ձատիկն էր, որը պետք էր հավուր պատշաճի դիմավորել:

Շրջում էին այնքան, մինչև դույլերը ծվով լցնեին: Փոխարենը տալիս էին օրհնված ուռենու մեկական ճյուղ:

Նկարագրված շրջայցերից գատ որոշ վայրերում տեղի էին ունենում Օաղկազարդին բնորոշ խաղեր: Բալուում, օրհնակ, շատ ընդունված էր հետևյալ խաղը. 10-12 տարեկան տղաները նախապես հավաքում էին ուռենու կամ բարդու երկար ձողեր, կարմիր ներկում դրանք: Խաղացողներից մեկը իր ձողը շեղակի դեմ էր անում պատին, մյուսն իր ձողով հարվածում էր: Կտրվածը հաղթողին էր բաժին ընկնում: Առավոտից երեկո խաղացողների հարվածների ծայրն էր լսվում և հաղթողների հաղթական գոչյունները: Կտրվածները պահում էին Ձատիկ թանապուրի տակ այրելու համար /7,234/:

Մնում է ավելացնել, որ Ծաղկազարդն այդ տարի ամուսնացած

աղջիկների ամենացանկալի տոնն էր: Այդ օրը նրանք առաջին անգամ դարձ էին գնում և այն էլ՝ բավական երկար ժամանակով, մինչև Կանաչ կիրակի:

Այնուհետև Մեծ Պասի ավարտին մնում էր մեկ շաբաթ, մեկ շաբաթ մինչև անձկալի Ձատիկը, բայց ոչ ծանձրալի, այլ սպասումներով լի շաբաթ: Գրաչքների այդ շաբաթն այնքան հագեցված էր տոնականությամբ, արարողությունների պարտադիր կարգով, թե՛ եկեղեցական, թե՛ ժողովրդական, որ պասի պարտադրող խստակենցաղությունը տեղի էր տալիս տոնական հուզումին: Ավագ շաբաթվա օրերից յուրաքանչյուրն ուներ իր անունը և ըստ այդմ՝ իր բնորոշ դեմքը: Երեխաներն անգամ գիտեին, որ Մեծ Պասի վերջին շաբաթվա օրերն են՝

*«Քոո երկուշաբթին,  
Պաս երեքշաբթին,  
Չիք չորեքշաբթին,  
Սուրբ հաղորդման օրը,  
Գուրի ուրբաթ օրը,  
Ձատկի շաբաթ օրը,  
Քյուֆթի կիրակին»:*

Երկուշաբթին քրաղացպանների օրն էր, քանզի այդ օրը բոլորը պիտի ցորեն տանեին աղալու: Երեքշաբթին հիմար-իմաստունի վիճակը քաշելու օրն էր, և մարդիկ շտապում էին եկեղեցի՝ իրենց որևէ մտադրությունը գուշակելու: Տասը թղթակտորներից հինգի վրա գրվում էր «իմաստուն», հինգի վրա՝ «հիմար» բառերը, և տասը երեխա վերցնում էին մեկական թուղթ: Մտքում որևէ իղձ պահած անձինք նախապես ընտրում էին երեխաներից որևէ մեկին: Սրան «իմաստուն» վիճակն ընկնելը նշանակում էր իղձի իրականացում, «հիմարի» դեպքում՝ տապալում:

Սակայն կարևորագույն իրադարձություններն սկսվում էին չորեքշաբթի օրվանից, որ ամենուր «չիք» էր կոչվում՝ «չքվել» բառից: Կրակի վրա շարունակ ջուր էր եռում՝ ամանները լվանալու, լվացք անելու, տան բոլոր անկյունները սրբել-մաքրելու, բոլոր տնեցիների լողանալու համար: Տղամարդիկ մաքրում էին ձմեռվա ընթացքում գոմում կուտակված կեղտը, ամեն աղտեղություն, ամեն չար բան այդ օրը պիտի չքվեր-վերանար: Եատերը գնում էին սրբատեղերը ուխտի, որպեսզի այնտեղ թողնեին իրենց տանջող ցավերը, «չքեն» չիք-չորեքշաբթու հետ: Կարո՞ւ հայերը կեսգիշերին «ցավիս վերջ» էին ասում և մինչև մյուս օրվա ժամերգությունը լուռ մնում՝ վստահ, որ չիք-չորեքշաբթին իր հետ ցավերը կտանի /3,285/: Իսկ Ձանգեզուրում այդ օրն էին աղում-չքում վնասատուներին: Երկու քար միմյանց քսելով ասում էին.

*«Չիք, չիք, մոկնը չիք,  
Չիք, չիք, լուռ չիք,  
Չիք, չիք, կարծնը չիք,  
Չիք, չիք, օձը չիք,  
Չիք, չիք, չարակամը չիք, և այլն»:*

Լոռիում այդ օրը մի քանի ձու էին ներկում «չքի աչքը համելու համար», ոմանք էլ եղունգի մեջտեղից գիծ էին քաշում, «որպեսզի իրեց բանը կիսատ պառատ չմնար» /5,261/: Մարաշցիներն էլ այս օրը դաշտերից հավաքում էին «խուրուկ» կամ «նվակ» խոտերը, եփում և ուտում: Սյստեղ այն պատկերացումը կար, որ Մեծ Պասի ընթացքում մարդկանց օրգանիզմի ճարպերը հալվում են, մնում է մշի մեծությամբ մի կտոր ճարպ, որն էլ հալվում է «խուրուկն» ուտելու դեպքում /2,337/:

Վատը, չարը «չքացնող» չորեքշաբթուն հաջորդում էր արդար, առատ, մաքուր հիմզաբքին: Տղամարդկանց առաջին գործն էր բերք չտվող ծառերին սպառնալ՝ իբր պատրաստվում են այն կտրել, մինչև որևէ մեկը ծառի փոխարեն չխոստանար, թե այսուհետև բերք կտա: Շատերը ծառեր էին տնկում՝ վստահ, որ այդ օրը տնկած ծառը խիստ բերքատու պիտի լինի: Լոռիում ոմանք սև թելի վրա յոթ հանգույց էին անում և դնում եկեղեցու պատի ճեղքվածքում, որպեսզի «թռչունները հավի ծագերը թոցենեն» /5,262/: Իսկ կանայք Մեծ Պասի ընթացքում հավաքված մածուկն ու հում սերը սկսում էին հարել խնոցիղվ: Շիրակցիների միջև կայացող հետևյալ հարց ու պատասխանը հստակ ցույց է տալիս այդ օրվա վերաբերյալ պատկերացումները.

-Մամի ջան, ախր էսօր կիրակի է, ճաշակվելու օր, էս դուք խնոցի եք հարում, մեղք չէ՞,- հարցրավ կարոն:

- Դա, բալա ջան, էսօր շատ ծանր կիրակի է, տարվա միջի ամենազիզ կիրակին է, համա խնոցի հարելը մեռչ չէ: Պիտի հարենք, որ Ուտելվային կարագ հասցնենք, համ էլ, որ էսօրվա խերն ու բարաքյաթը շատ է, թե որ էսօր խնոցի հարենք, մածուն մերենք, եղ ու պանրի մայա բռնենք, որ սաղ տարվա մասիլը, թան ու թացանը խերով, բարաքյաթով եղնի:

Խնոցին հարելիս վրան նստեցնում էին մի գեր երեխայի, որ նրա քաշով կարագ լինի, տակն էլ մի խաչերկաթ էին գցում, որ սատամային փախցնեն:

Այդ նույն ժամանակ աղջիկները դուրս էին գալիս դաշտերը զանազան ուտելի կանաչեղեններ հավաքելու: Գինզաբքի օրը բոլորը պիտի նոր դուրս եկած կանաչեղեն ուտեին՝ հում կամ տապակած: Գում կանաչեղենից կարևորագույնը աղբյուրների մոտ աճած դաղձն էր: Գավաքում էին այնքան, որ բոլորին բաժին հասներ, նաև այն ընտանիքներին, ովքեր ինչ-ինչ պատճառներով դաշտ չէին դուրս եկել:

Որոշ վայրերում Ավագ հինգշաբթի «գլուխ չեն լվանում, որ չգժվեն, սապոն չեն գործածում, որ կսկիծ չտեսնեն» /3,285/:

Գիշերը, Ուտելվայի ծեսին, եկեղեցում բոլորը մի-մի կտոր կարագ էին վերցնում և քսում մարմնի զանազան մասերին՝ աչքերին, ականջներին, ճակատին, ձեռքերին և այլն: Առաջին անգամ Մեծ Պասի ընթացքում տեղի էին ունենում շեղումներ հասարակական նորմերից: Գիշերը եկեղեցում, պատարագի ընթացքում, տղաները հանգցնում էին մոմերը և մթության մեջ, ծիծաղի ու կատակների տարափի տակ, կարում կանանց փեշերը միմյանց, համբուրում աղջիկներին /3,286/:

Ավագ հինգշաբթի օրը նաև Ձատկի ծվեր էին ներկում: Ներկում էին առայժմ սահմանափակ թվով ծվեր, ընտանիքի անդամների թվին հավասար կամ յոթ հատ: Դրանցով պիտի թաթախվեին, իսկ բուն Ձատկի համար նախատեսվող

հսկայական քանակությամբ ձվերը պիտի ներկվեին-եփվեին շաքաթ օրը: Շատ տեղերում հավատում էին, որ Ձատկի հինգշաբթի օրը ներկած ձու: ուսողների ատամները չեն ցավի:

Հինգշաբթի յուս ուրբաթ գիշերը հարուստ էր հուզումներով, տագնապալի սպասումներով, նաև գործողություններով: Ուրբաթը Քրիստոսի խաչվելու օրն էր, որոշ վայրերում տարածված էր այն համոզմունքը, որ այդ գիշեր հրեաները խմորից Քրիստոս են շինում և չարչարում, ինչպես նաև սպանում են քրիստոնյա երեխայի, արյունով խմոր շաղախում, հաց թխում և ուտում: Այս հուզումնալի սպասումները ուղեկցվում էին չարխափան գործողություններով: Այսպես, Ջավախքում այդ գիշեր դարբինները «մի ոտի վրա կանգնած, բռնորոպիմ լուռ, յոթ ամրոցի դռներից հավաքած երկաթից շինում են ապարանջաններ, փոքրիկ մատանիներ, որ «անժըմի» են կոչվում: Իսկ մյուս օրը բոլորը եկեղեցու դռանը կանգնած անխոս վաճառում են: Նաև «Անժըմին քաշ են անում երեխաների օրորոցից, իսկ ապարանջանները դնում աղբիկների և կանանց թևերին, որպեսզի չարից ազատվեն» /3,26/: Լոռիում այդ նույն գիշերը դարբինները «անխոս շինում են ուրբաթարուր՝ կեռ երկաթ, որ կարմիր ու կանաչ թելերով կարում են երեխաների ուսերին, որպեսզի չար աչքից ազատ մնան: Ոմանք այդ թելը գրպանում դրած տանում են եկեղեցի, «պատարագին շանց տալի» /5,262/: Նույն Լոռիում «ոմանք էլ չորս մեխ են շինում և պահում մինչև Կանաչ կիրակի, երբ մի ուլ են մատաղ անում և սրա ոսկորները մորթու մեջ փաթաթում-թաղում են և այս մեխերը վրայից խփում, որպեսզի կարկուտ չգա» /5,262/:

Հաջորդ ուրբաթ օրը Քրիստոսի խաչվելու օրն է, ուստի ուրբաթը սգի օր էր և որպես այդպիսին՝ կիրակի, այսինքն՝ այդ օրը բազում աշխատանքներից խուսափում էին: Սեր ժողովրդի մեջ այդ ուրբաթը ավելի հայտնի է Հուդայի ուրբաթ անունով, որ շատ բարբառներում հնչում էր որպես Հուդի-Հութի- Ութի ուրբաթ: Եկեղեցական ծեսերից զատ այդ օրը կատարվում էին նաև մի շարք ժողովրդական արարողություններ, որոնցից կարևորագույնները հետևյալներն էին. վաղ առավոտյան բոլոր հայ դարբինները, առանց խոսելու, գնում էին դարբնոց և երեք կամ յոթ անգամ մուրճով հարվածում զնդանին: Վաղնջական ժամանակներից եկող այդ սովորույթը բացատրվում էր իբրև թե շղթայված Արտավազդի շղթաներն անեն տարի ամրացնելու իմաստով: Այդ օրը նաև կանայք անպայման կար պիտի անեին՝ որպես կանոն դարձյալ «ուրբաթաթուր», այսինքն՝ չար աչքի դեմ երեխաների շորերի վրա արվող հատուկ նախշեր: Տղամարդիկ նույնպես կարևոր գործ ունեին. Ութի ուրբաթին անհրաժեշտ էր թեկուզ մի քանի ակոս վար անել: Ինչպես ասել օգտագործելը /կար անել/, այնպես էլ վար անելը, ըստ ժողովրդական պատկերացումների, մի նպատակ ունեին՝ «ցավ պատճառել Քրիստոսին տառապանքների մատնած դավաճան Հուդային»: Նույն նպատակով Սուշում «հոտաղները դաշտում սուր փայտերով փորփորում էին գետինը՝ Հուդայի աչքերը հանելու համար» /13,45/: Այդ օրը ոմանք նաև ձու էին ներկում, որպեսզի Հուդայի աչքը տրաքվի» /5,262/: Իսկ ի՞նչ չի կարելի անել. «ծուներ չդնել, որովհետև Քրիստոսը խաչին է, խաչ չհանել, որովհետև Քրիստոսը խաչված է, դրամ փոխ չտալ և չառնել, որովհետև Քրիստոսը դրամի համար է մատնված» /5,262/, «մուրճ չբանցնել,



որովհետև մուրճով են բեռեել Տիրոջը, փայտ չտաշել, որովհետև Քրիստոսի խաչափայտը տաշել են» /3,286/: Այդ օրվա ուտելիքները նույնպես այս կամ այն կերպ կապվում են «չարչարանաց», զաղափարի հետ: Օրինակ, Մարաշուն «քացախ ապուր» էին ուտում /քացախով համեմված ոսպապուր/ /2,338/, Լոռիում «բանջար էին եփում, որպեսզի դրա ծակող զորությունը ոչնչանա, որովհետև Քրիստոսին բանջարով են ծեծել» /5,262/, Մուշում «օծի թթու» էին եփում /կաղամբի թթու/... /13,45/ և այլն: Ուրբաթ գիշերը եկեղեցում էին անցկացնում, սգո, տառապանքի, լացի, մթնոլորտում, և վշտի, ցավի այս հավաքական, անկեղծ ու անմիջական ամփոփումը վերջակետ էր դնում դժվարությունների իրական ու ծիսական շղթային նոր, ուրախ կյանքի սկիզբը ազդարարելով. «Ձատկի շաբաթ, կարմիր հավկիթ, կարմիր արև, կանաչ են սար ու ձորեր» իրական, զարման բերած տոնի «կանաչ-կարմիր» կյանքի:

Շաբաթ առավոտվա Պատարագի հետ թեժացվում էին օջախները: Եկել էր ժամանակը Ակլատիզի վերջին փետուրի հետ պասը դուրս անել: Բնության ու հասարակության այս ներդաշնակ պահին է, որ տեղի է ունենում խոստովանությունն ու սուրբ Գաղղորությունը, որից հետո միայն պասի երկար ու ծիգ օրերն ավարտվում են կարմիր ներկված ձվով «բերանները բաց անելով»: Շաբաթը նաև բուն Ձատկի տոնին նախապատրաստվելու օրն էր. կարգի էր բերվում տոնական հագուստը, հարդարվում բնակարանը, թխվում էին խմորեղենները: Գատուկ պատրաստություններ էին տեսնում նշանված տղաների ու աղջիկների ընտանիքներում, որտեղ ներկվող ու զարդարվող ձվերի թիվը մի քանի հարյուրի էր հասնում, թխվող զաթաների ու բաղաջրների թիվը՝ տասնյակների:

Այստեղ էր, որ աղջիկները ցույց էին տալիս իրենց ճաշակն ու հմտությունը ձվանախշերի հորինվածքներում, թելագարո ու ուլունքագարո ձվերի կատարելությամբ: Առատորեն օգտագործվող կանաչ-կարմիր-դեղին բրդյա ու մետաքսյա թելերով «փնջված» ձվերը իրենց նախապատրաստողների վարպետության վկայություններն էին: Բազմաթիվ էին սոխի կծեպով կարճացրած ձվերի վրա արված զարդանախշերը: Նորածիլ կանաչի տերևները կամ իրենց կողմից հորինված թղթե նախշերը ստանձով ամրացնելով ձվին, այն մի քանի ժամով զցում էին թթու թանի մեջ, ապա զգուշությամբ հեռացնում կայքրած նախշը: Դաջվածքի շուրջ թթու թանից գեղեցիկ սպիտակում էր: Գաջող օրվա այցելություններին դրանք մի խնամու տնից մյուսը պիտի գնային ու զարդարեին գատկական սեղանը:

Շաբաթ օրվա երեկոյան, դեռ արևը մայր չմտած, թաթախման ընթրիքի սեղանն էր պատրաստվում: Կարգ էր, որ Օննդյան թաթախման ընթրիքը ճրագի լույսի տակ արվեր, այսինքն՝ մթնով, Ձատկի թաթախման ընթրիքը՝ արևի լույսի տակ, երեկոյան: Ընթրիքի հիմնական բաղկացուցիչներն էին կարմիր ձուն, ձկնեղենը, փլավը, վերջում՝ թանձր եփած թանով սպասը կամ կաթով եփած կորկոտածաշը:

#### ՉԱՍՏԻԿ

Գայոց բոլոր ազգագավառներում Ձատկի անունով հայտնի տոնը եկեղեցական Սուրբ Գարություն տոնին է համապատասխանում: Գիրավի, այս

չքեղ, ուրախ տոնը, փակելով մոռալության, ժուժկալության, ինքնագսպման, «մարման» շղթան՝ վերակոչում է Ակզբի, վերահաստատման և շարունակելիության, առհասարակ հավերժության բոլոր խորհուրդները մարդկանց կյանքի: Քրիստոսի Հարության տոնը, որ կյանքի հարության խորհուրդն է, տոնական ծիսաշարով մարդկանց է վերադարձնում մախ անզուսպ ուրախության, ամուսնությունների, նվագի, երգ ու պարի տոնական իրավունքը, ապա՝ ուրախության առօրեականությունը:

Անծ Պասի վերջին շաբաթվա բոլոր սպասումները, տոնական հուզումները հագուրդ պիտի ստանային այսօր, և հիրավի դրանց լիովին փոխհատուցվում էին: Ձատկի տոնի բոլոր նախապատրաստությունները տեսնվել էին, քայք դեռ չէին ավարտվել, գլխավորը՝ զատկական մատաղը դեռ մնում էր: Այդ մատաղը սովորաբար հասարակական էր, այսինքն՝ համայնքի, գյուղի բոլոր ընտանիքները մասն ունեին այդ մատաղի մեջ: Հավաքված դրամով նախապես գնված մեկ կամ մի քանի եզները, կամ մի քանի ոչխարները շաբաթ երեկո գոհաբերվում էին եկեղեցու բակում և գիշերը եփվում խոշոր կաթսաներում:

*«Էս տարի սաղ գեղը մեկ եղած մէ տեղ էր մորթել ախառը,- նկարագրում է ականատեսը շիրակցիների կյանքից: - Գեղամիջի տուն գլոխ, ինչքան որ սրտերեն կանցներ, իրենց կարողության չափ, մեկ-մեկ, երկու-երկու կոտցորեն ժողովելով՝ ընդուր գնով էրզու մատղացու եզ առան: Իրիկունն այդ եզներու կոտոշներուն չալ ու չառպաստ մոմերը զարկած, վառելով, հետն էլ մի չանաղաղբերին ժամի դուռը Տերտերն էկավ, օրինեց աղը ու մատղցուները: Աղը տվին եզներուն ու տուն գլոխս մէ մարդ թոփ եղած տարան մատաղները կտրելու»:*

Բոլոր ցանկացողները մատաղի արյան մեջ թաթախում էին բոինչ ծառի հաստ ճյուղը և տնկում իրենց այգում կամ արտում՝ այն չար աչքից պաշտպանելու համար: Ձատկական մատաղը, որ համարյա ամենուր «ախառ» էր կոչվում, հսկում էին համայնքի կողմից ընտրված արդար մարդիկ, իսկ եփվող կաթսաների շուրջ հավաքված երիտասարդները մինչև լույս խաղում էին զատկական ամենասիրված խաղը՝ ծվախաղը:

Այդ նույն գիշեր ում տանը երեխա՝ ծնվեր, մեծ բախտավորություն էր համարվում: Ձատկի գիշերը ծնված երեխան եղունգ նայելու և գուշակելու շնորհքով օժտված էր համարվում: Նրա հայրը գառ էր մատաղ անում և թիակները պահում, որպեսզի նորածինը մեծանալուց հետո այդ գառան թիակներին նայելով գուշակություններ աներ, գտներ կորած, գողացված իրերը և այլն /3,287/: Այդ կապակցությամբ նույնիսկ հատուկ օրորոցային երգ կար.

*«Դան արա, դանդան արա,  
Դոչ գառը քի մատաղ արա,  
Օսկոռը քի սայյա արա,  
Մեքը նստն՝ դիվան արա»:*

Վաղ առավոտյան, եկեղեցու զանգերը հնչելուն պես, ողջ հասարակությունը, տոնականորեն հագնված, շտապում էր եկեղեցի: Ժամերգությունից հետո ոճանք, նախապես պայմանավորված լինելով, «ողջունաղբեր» կամ «ողջունաքույր» էին դառնում, այսինքն՝ քահանայի օրհնությունն ստանալով,

եղբայրանում՝ ու քույրանում էին միմյանց հետ: Ձատկական քույր-եղբայրու-թյունը սրբորեն պահվում էր և խորապես հարգվում հասարակության կողմից: Սակայն եկել է մատաղը բաժանելու ժամը. «ժամը որ արձակվեց,- նկարա-գրում է Պերճ Պճոշյանը,- տունը մի մարդ մի-մին փարխաց (դուլլ) ու աղլուխ ձեռներին կիտվեցին մատաղի կշտին ու մի փարխաց մատաղի շորվա ու քանի էլ տանը հոգի կան, ձոկեր երեխիցը բռնած, ընչանք հալիվորներին ու պատավները, ամենի համար մի-մին լոշի մեջ փաթաթած մատաղ առան: Էսօր ամեն տանն էլ անպատճառ պտի մատաղի քրով շորվա ըլի, ընչանք սուրբ ախառով չթաթախվեն, բերանները նշխարք չեն դնիլ, թեկուզ թուր ու սուր խաղացնես երեսներին, շլինքներովն օժ փաթաթվի»: Մատաղ ստացողները մաղթում էին հասարակության ընդհանուր բարեկեցություն. «Այս տարի մեր հորերը ցորեն-գարով լցվեն, արտերում ցորենը թումբ տա» և այլն:

Իսկ Լուսվա Օծուն գյուղում մինչև ախառը բաժանելը հավաքված բազմության առաջ մի քանի մարդ երգելով ավետում էին Քրիստոսի հարու-թյունը՝ երգն ավարտելով հետևյալ բարեմաղթություններով.

*«Օրհնվի և սլախայնվի*

*Չեր դաշտն ու տարը, այժն ու ոչխարը,*

*Կովն ու կթանը, չուփն ու գութանը,*

*Վարն ու վաստակը, գլուխն ու տակը,*

*Չանդն ու հանդստանը, արտն ու այգեստանը,*

*Կալն ու ջաղացը, ցորենն ու հացը,*

*Չին ու էշը, եզն ու գոմեշը,*

*Գառնարածն ու ոչխարածը,*

*Տվարածն ու հորթարածը» 15,263f:*

Այս նույն Օծուն գյուղում գատկական ախառից գատ սովորություն կար նաև «թուրքատարուկ» մատաղ անել: Դա նույն համայնքի հավաքված միջոց-ներով գնված խոզն էր, որի միսը ախառի հետ հավասար բաժանում էին հասա-րակությանը՝ իբրև թե որպես թուրքերի հանդեպ տարած հաղթանակի վկայություն:

Սխառն ուտելուց հետո էր, որ սկսվում էին այցելությունները և շնորհավորանքները: Անհրաժեշտ այցելությունները խնամիների մեջ էին, հատկապես նշանված տղայի ընտանիքի կանայք իրենց բարեկամուհիներով «գատկափայ» էին տանում հարսնացուին, որի բաղկացուցիչներն էին գարդարուն ձվերը, գաթաները, ինչպես նաև տապակած-խաշած հավեր, քաղցրավենիք, որևէ նվեր հարսնացուին: Այս վերջինիս կողմից էլ բաժին էր ուղարկվում փեսացուին, և սրա գլխավոր գարդը հարսնացուի փնջած ձուն էր:

Պայծառ եղանակին պարտադիր այցելություններից հետո, նախապես կազմված ազգականների խմբերով, դուրս էին գալիս դաշտում խնջույքները շարունակելու: Այստեղ է, որ սկսվում էին խաղերն ու պարերը, որոնք Սեժ Պասի երկար ու ձիգ օրերին արգելված էին և որ այսուհետև, կյանքի վերասկզբի հետ, վերսկսվում էին և պիտի շարունակվեին մի քանի օր: Անչափահասներն ու պատանիներն էլ երբ ձանձրանում էին ձու կովեցնելուց ու գլորելուց, դարձյալ երգելով շրջում էին տնետուն, երգեր երգում և կարմիր ձվի նոր պաշարներ հավաքում առաջիկա խաղերի համար:

Ձատկական թե՛ երգերը, թե՛ պարերը, թե՛ խաղերը ստեղծագործական մեծ հնարամտորություն էին տալիս: Համապատասխան, անպաճույճ երգերը, որով մայրերը շնորհավորում էին իրենց զավակներին, զավակները՝ ծնողներին, պարերգերը, որ ծնվում էին տղաների և աղջիկների մրցակից պարող խմբերի միջև, հիրավի ժողովրդական բանահյուսության գեղեցիկ նմուշներ են: Ահա, օրինակ, ինչպես էր մայրը շնորհավորում որդու Ձատիկը.

*«Ա տղո՛ր-տղա,  
Դու ալ կպավոր,  
Դոճգի շալ կապավոր,  
Դու իմ հայոց դաքավոր,  
Բեթլով գինի խտուրն,  
Ասամանի կապավոր,  
Քո Ձաղիքը շնորհավոր»:*

Այս երգն էլ դատերն է ուղղված.

*«Օվսաննա ջան, Օվսաննա,  
Ուրախ Ձաղիք լուսանա,  
Բարիդ գա Հնդստան,  
Բեռներ բերի քաթանա,  
Քաթան դոշազ տակիտ է,  
Ձառ բակալեն հագիտ է»:*

Ու բուլորվում էր պարը, շարունակվում անվերջ, կանաչ դաշտի վրա թափված ձվի կարմիր կենպնեղից կազմված գորգի վրա, ձգվում մինչև մութն ընկնելը՝ առաջիկա երկու օրերին շարունակվելու համար: Շարունակվում էին ձվախաղերը, վարպետ խաղացողներն արդեն դուլլերով ձու էին շահել, բայց չէին հեռանում խաղասպարեզից: Ձատիկ էր:

Ձատիկ էր և ուրեմն նաև տմօրհների օր: Տնից տուն էին շրջում քահանաները, օրհնում իրենց մեկնված մատուցարանները, որոնց վրա շարված էին թթխմոր, աղ, խունկ, հացահատիկ, ջուր, կաթնեղեն, տան կարևորագույն բարիքները: Տանտիրուհին մատուցարանի տակ ևս պահած բաներ ունի՝ ձու, քակոր, ինչը նույնպես կարևոր էր իր համար: Օրհնվում էր բարիքը և տարվա լիությունն ապահովվում էր, իսկ քահանան հեռանում էր լիաձեռն վարձատրված:

Վերջացավ Մեծ Պասը, և սկսվեց մեծ ուտիսի շրջանը: Այլևս մինչև Համբարձման տոնը, քառասուն օրերի ընթացքում, պաս չկա: Հաջորդ օրը, երկուշաբթի, Ձատիկ մեռելոցն էր, տարեկան երկու կարևորագույն մեռելոցներից մեկը: Բուլորը, նորատի հարսներից գատ, գերեզմանատներում էին՝ իրենց հետ ունենալով գատկական կերակուրներ: Շատերն այդ օրը անհատական զոհաբերություններ՝ գառներ էին մատաղ անում, որոնց միսը գերեզմանատուն տարվող առավել անիրաժեշտ կերակրատեսակներից էր կարմիր ներկած ձվերի հետ:

Պետք է ասել, որ անցյալում «մեռելոցը», մասնավորապես Ձատիկ և Սուրբ հաչի, ոչ թե ողբի, այլ ուրախության օր էր: Շատ վայրերում այդ օրերին, հենց

գերեզմանատներում, հացկերույթի սեղաններ էին բացվում, որոնք վեր էին անվում տոնական խնջույքների: Խաղերը և նույնիսկ պարերը ոչ միայն արգելված չէին, այլև «մեռելոց»-ի անհրաժեշտ ծիսակարգի մեջ էին մտնում: Ազի, ողբի օրերը ուրիշ էին՝ քառասունքի, մահացածի տարելիցի, և այլ օրերը, Ձատկի երկուշաբթի և Սուրբ Խաչի մեռելոցներն ուրախ տոներ էին: Գարության, կյանքի, զարթոնքի տոնն էր, իսկ մահը «հանդերձյալ կյանքն է», այս կյանքի մի մասը:

Ձատկին հաջորդող երկու կիրակիները նույնպես զատկական տոնական հանդիսությունների շարունակությունն էին: Առաջին կիրակին կոչվում էր ԿՐԿԵԱԶԱՏԻԿ, իսկ երկրորդը՝ ԿԱՆԱԶ ԿԻՐԱԿԻ: Քչերը գիտեն, որ մինչև հիմա Երևանին հատող Առինջ գյուղի Գետարգել կոչվող վանքում Կանաչ Կիրակի տոնին հավաքվում է ուխտավորների հոծ բազմություն, մատաղներ են արվում և մինչև ուշ երեկո զվարճանում: Իսկ անցյալում Կանաչ Կիրակին ամենաուրախ և սիրված տոներից էր: Այս տոնը նշվում էր բացառապես ուխտավայրերում, բացօթյա: Սիրված ուխտավայրերը բազմաթիվ էին՝ Ա. Սարգսի, Ա. Գևորգի, Ս. Կարապետի, Ս. Գալուստի, Կարմիր վանքի և այլն: Ուխտատեղիների հեռու լինելու դեպքում ուխտավորները ճանապարհ էին ընկնում շաբաթ օրը՝ Կանաչ Կիրակի օրը լիարժեք տոնական տրամադրությամբ անցկացնելու համար: Այդ օրը ուխտավայրեր էին գալիս շրջիկ թափառախմբեր, մանրավաճառներ, և տոնի անբաժան ուղեկիցն էին դառնում հանպատրաստի տոնավաճառները: Չորս կողմից լսվում էր մորթվող գառների մայունը, տարածվում խորովվող ձկան հոտը, հնչում էր զուռնան, և պարող առաջին խմբերը հրապարակ էին իջնում: Մեկ ուրիշ տեղ ձուն նշանակետ ունենալու հրաձգության մրցույթ էր, իսկ հարթ դաշտերում ծխարշավները հաջորդում էին միմյանց:

Երեկոյանում է, հոգնած ուխտավորները պատրաստվում են տուն վերադառնալ: Նորատի հարսների ետևից ամուսնու տնից մարդ է գալիս նվերներով, և «դարձ» գնացած հարսը վերադառնում է ամուսնու մոտ:

Այսպիսով, ընդամենը երկու ամսում վերարտադրվում է կյանքի ողջ շրթան. ընդհատումը, մարումը, հարությունը, զարթոնքը: Խտացված և խտացվածության պատճառով խիստ ցայտուն դարձած ողջ Կյանքը «խաղացվում» է ՄԵԾ ՊԱՍԻՑ՝ ՁԱՏԻԿ:

1. Բդոյան Վ., Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972:
2. Գալուստեան Գ., Մարաշ, կամ Գերմանիկ, Լոնկ Այլընտ Սիթի, 1988:
3. Լալայան Ե., Երկեր, հ. 1, Երևան, 1983:
4. Լալայան Ե., Երկեր, հ. 2, Երևան, 1985:
5. Լալայան Ե., Բորչալուի գավառ, Ազգագրական հանդես /այսուհետև՝ ԱԳ/, 10-րդ գիրք, Թիֆլիս, 1903:
6. Լալայան Ե., Ձանգեզուր, ԱԳ, 4-րդ գիրք, Թիֆլիս, 1983:
7. Սարգիսեան Յ., Բալու, իր սովորոյթները, Գահիրե, 1932:

8. Լիսիցյան Ա., Ձանգեզուրի հայերը, Երևան, 1969:
9. Լիսիցյան Ա., Լեոնային Ղարաբաղի հայերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն /այսուհետև՝ ՀԱԲ/, հ. 12, Երևան, 1981:
10. Խաչատրյան Ժ., Տավախքի հայ ժողովրդական պարերը, ՀԱԲ, հ. 7, 1975:
11. Հակոբյան Գ., Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974:
12. Մանուկյան Ա., Հայ եկեղեցու տոները, Թեհրան, 1994:
13. Մովսիսյան Ա. /Բենսե/, Հարց Աշո Բուլանըխ/, ՀԱԲ, հ. 3, Երևան, 1972:
14. Շահազիզ Ե., Նոր Նախիջևանը և նոր նախիջևանցիք, ԱՀ, 9-րդ գիրք, Թիֆլիս, 1902:
15. Շահազիզ Ե., Աշտարակի պատմությունը, Երևան, 1987:
16. Չոլաքյան Գ., Քեսապ, հ. Բ, Հալեպ, 1998:
17. Քաջբերունի, Հայկական սովորություններ, ԱՀ, գիրք 7-8, Թիֆլիս, 1901:
18. Օդաբաշյան Ա., Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում, ՀԱԲ, հ. 9, Երևան, 1978:

## ՆՎԻՐՎՈՒՄ Ե ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ 1700-ԱՄՅԱԿԻՆ

### ՀՐԱՉ ԲԱՐԹԻԿՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, ակադեմիկոս

## «ԱՉԳՆ ԿԱՐՔԵՂՈՍԱՅԵՑԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՆ»

### ԱՌԵՂԵՎԱԾԻ ԼՈՒԽՈՒՄԸ

Սերբոսի «Պատմության» Նախերգանքը սկսվում է հետելյալ նախադասությամբ. «Եւ եղև ի նուազիլ ժամանակաց տէրութեանն Արշակունեաց ի Չայաստան աշխարհի, ի բառնալ տէրութեանն Վառնապուռի արքայի՝ տիրէ ի վերայ սորա ազգն Կարքեղոմայեցի իշխանութեանն<sup>1</sup>: Խորհուրդ ի ձեռն առեալ<sup>2</sup> ահեղ եւ ահագին՝ հանդերձ միաբանութեամբ դառնաշունչ եւ մեծամեծ քաղեիցն եւ ամենայն գլխաւոր նախարարաւքն թագաւորութեան իւրոյ՝ բառնալ ի Չայաստան աշխարհէ զբարեպաշտութեան պտուղս»:

Չայ միջնադարյան պատմական երկերում քիչ չեն առեղծվածները, որոնք ծառանում են հետազոտողների առջև առանձին տերմինների, անունների, տեղանունների մեկնաբանման հարցում: Սույն առեղծվածը լուծելու փորձը, սակայն, կարելի է ամենաարտաոռցներից համարել: Այնպիսի կարծիքներ են արտահայտվել, բացատրություններ առաջադրվել, մեղմ ասած՝ մեկը մյուսից տարօրինակ ու անհամոզեցուցիչ, ինչու չէ՝ նաև զարմանալի:

Նախքան հարցին անդրադառնալը, հարկ է կանգ առնել այդ առեղծվածային «Կարքեղոմայեցի» բառի գրության ձևին: Սերբոսի «Պատմության» մեզ հասած միակ ձեռագիրը՝ Մատենադարանի թիվ 2639 (1672 թ.) մատյանը, որից 19-րդ դարի կեսին կատարվել են մնացած բոլոր արտագրությունները, տալիս է «Ազգն Կարքեղոմայեցի իշխանութեանն»: «Պատմության» առաջին հրատարակիչ Թադեոս Միհրդատ Տ. Աստվածատուրյան Միհրդատյանցը, օգտագործելով 2639 ձեռագրից 1850 թ. կատարված մի արտագրություն, որտեղ բնագրի

1 «Իշխանութեանն» բառը Զ. Պատկանյանը թարգմանում է «Княжество»/Նոգալի սեռական/, իսկ Առ. Սախախյանը՝ «род Каркедомской династии». История епископа Себаоса, Перевел с четвертого исправленного армянского издания Ст. Малхасянц, Ереван, 1939, с. 26.

2 Թեև տեքստից պարզ երևում է, որ խոսքը Կարքեղոմայեցի «ազգին» է վերաբերում, Զ. Պատկանյանը վստահ է, որ Սերբոսը նկատի ունի Պարսից արքա Չագկերտ Բ-ին: Տես История императора Иракля. Сочинение епископа Себаоса писателя VII века, перевод с армянского [К. Патканяна], СПб., 1882, с. 22.

«Կարքեղոմայեցի»-ն «ուղղված» էր «Կարքեղոմայեցի» Սեբեոսի «Պատմութեան» իր հրատարակության մեջ, բառը բերում է ահա այս «ուղղված» ձևով: «Պատմության» հետագա բոլոր հրատարակիչները կրկնել են այս «ուղղումը», այդ թվում և Գ. Աբգարյանը՝ իր կազմած քննական բնագրում, որտեղ, ինչպես հետագայում կտեսնենք, ճիշտ՝ «Կարքեղոմայեցի» ընթերցումը որպես սխալ նշված է տողատակ, առանց բացատրության՝ ինչո՞ւ է հրատարակիչն այդպես վարվել<sup>3</sup>:

Այդ «ուղղումը», սակայն, կարող էր ուսումնասիրողին տանել թյուր ճանապարհով: «...ղոմայեցի»-ն դառնալով «...ղովմայեցի», հետազոտողին ուղղում է դեպի հունական կամ հունալեզու աշխարհ, ենթադրել տալով, որ գործ ունի Եդարից սկսած հայ թարգմանիչների որդեգրած տառադարձության կանոնների հետ, երբ հունարենի օմեգան (W) տառադարձվում է «ով» (Αισωπος - Եղովկոս, 'Ρωμη-Ռոմվմ, խնդրո առարկա ժամանակաշրջանում, հատկապես աստվածաշնչային անձնանուններում և տեղանուններում՝ Μωσής- Մովսես, 'Ωσαννά - Ովսաննա, 'Ιωάννης - Յովհաննես, 'Ιωάνης - Յովնան, 'Ιωσήφ - Յովսեփ, 'Ηρόδης - Դերովդես, Σιδών - Սիդովն և այլն, և այլն):

Սեբեոսի «Պատմության» հրատարակիչները, թարգմանիչներն ու հետազոտողները, բնական է, չէին կարող «Կարքեղոմայեցի»-ների կողքով անցնել: Ամեն մեկը փորձել է յուրովի լուծել բառի մեջ թաքնված առեղծվածը, մամանավանդ, որ թեև նախադասությունը հուշում է, թե խոսքն անտարակույս վերաբերում է պարսիկներին, այն տեղիք է տալիս մտաբերելու Քաղկեդոն և Կարթագեն տեղանունները: Ուսումնասիրողների տվյալ հարցի վերաբերյալ հայտնած զանազան կարծիքները բարեխղճորեն շարադրել է Գ. Աբգարյանը՝ վերջում հայտնելով իր սեփական կարծիքն ու բերելով բառի «ճշտված» գրությունը<sup>4</sup>:

Ք. Պատկանյանը Սեբեոսի «Պատմության» իր ուսերին թարգմանության մեջ նշում է, որ «թեև այս անվան տակ պետք է հասկանալ պարսիկներին, բայց մենք ոչ մի կերպ չկարողացանք որոշել այս կոչումը»: Թարգմանիչն անդրադառնում է Ըպիզելի վերծանած Պերսեպոլյան արձանագրություններին, որտեղ համդիպում է մինչև վերջինիս ժամանակ դեռևս չվերծանված Karka-ն, որը Ըպիզելը համարում է «Ժողովրդանուն» կամ «ցեղանուն», և որի բնակության վայրի շուրջ յուրաքանչյուր հեղինակ իր տեսակետն է արտահայտում՝ խալկիսը՝ Մակեդոնիայում, Կարթագենը՝ Աֆրիկայում, Կալանիկեն՝ Ասորեստանում, տեղանուն Վրաստանում, պարթևական խարաքս քաղաքը՝ հիշված Իսիդոր խարաքսացու կողմից: Կարծիք է հայտնվել նաև, որ karka նշանակում է «հույներ»: Ք. Պատկանյանն ուզում է մտաբերել «Ըահնանե»-ի Kergesaren-ը, որի «kerga» մասնիկը, ըստ նրա, լիովին համապատասխանում է վերոհիշյալ

3 Թերևս մի պահ ենթադրենք, որ «Պատմության» 16-րդ դարի այժմ կորած ձեռագրում «Կարքեղովմայեցի» էր: Բայց ինչպես Ստ. Մալխասյանցն է ցույց տվել, այդ 16-րդ դարը (ավելի որոշակի՝ 1568 թվականը) վերաբերում է ձեռագրում առկա Գակոթ Սոթնացու արժրքին և ոչ՝ «Պատմության»: Բայց կորած ձեռագրում այդ բառի գրության ձևի մասին դատողություններ անելն անելուրջ գրադժուկ է:

4 Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 224-227:



«karka»-ին, թեև, ինչպես ցույց տվեց Ստ. Մալխասյանցը, դա Շպիգելի կարծիքն էր:

Ստ. Մալխասյանցի «Սեբեոսի Պատմությունը» և Մ. Խորենացի. մատենագրական ուսումնասիրություն» (Թիֆլիս, 1899) գրքի Ս. Կ. սկզբնատառերով ներկայացող գրախոսը փորձ է արել մեկնաբանելու «Կարքեղովմայեցի» բառը: Նախ և առաջ նշելով, որ նման հատուկ ամուս «ոչ մի ուրիշ տեղ» չի հանդիպել, գրում է. «Պարզ է, որ խոսքը Սասանյանց մասին է. ուստի մենք այս բառն այսպես ենք վերլուծում. Պարսք-եղովմայեցի: Եղովմայեցի բառը պետք է լինի Ելամյեցի: Որ մեր պատմագիրները Ելամ. Ելամյեցիք ասելով հասկանում են *Պարսք* (ազգն ու երկիրը) տես Ասողիկ (Ս. հանդես, Դ, էջ 25), այլ և Երեմիա վարդապետի Բառգիրք Չայոց, էջ 489. «Ելամյեցիք և պարսիկք Աճամստան է»: Ուստի Կարք-Պարսք. գլխատառ Պ և Կ տառերի շփոթություն<sup>5</sup>: Կարծում ենք, որ այս բառը, լուսանցքում իբրև բացատրություն Ելամյեցի բառին դրված լինելով, վերջը մի բառ է համարվել. այնուհետև գրչագիր արտագրողին ավելի ծանոթ լինելով Ս. Գրքի *եղովմայեցի* ամուսը, շփոթել է»<sup>6</sup>:

Առեղծվածին անդրադարձավ և Սեբեոսի «Պատմության» ֆրանսերենի թարգմանիչ Ֆ. Մակլերը: Նա գրում է. «Կարքեղովմայեցի»<sup>7</sup> ցեղանունը թվում է, սասանյան հարստությանը վերագրում է կարթագենյան ծագում: Չայտնի է. շարունակում է Ֆ. Մակլերը. «որ իրականում Չաննիբալը<sup>8</sup> փախուստի էր դիմել Բյուբանիա՝ Պրուսիաս թագավորի արքունիքը»: Ֆ. Մակլերը հարց է տալիս. «Կարող է դա ելակետը հանդիսանալ այն լեզվաբանների կամ պատմական ավանդությունների, որոնց համաձայն Չաննիբալը սասանյանների նախնին է եղել»: Ֆրանսիացի գիտնականն այս հարցի վերաբերյալ կանգ է առնում Ղանիել մարգարեի հայերեն պարականոն «Չայտնության» վրա, որտեղ Կարթագենը և պարսից ժողովուրդը, ըստ նրա, նույնանուն են՝ «Կարքեղովմ և ազգ պարսից»<sup>9</sup>: Ղանիել մարգարեի հիշյալ պարականոն «Չայտնության» մասին ավելի հանգամանալից խոսք կլինի սույն հոդվածի վերջում:

Խնդրին անդրադարձավ նաև Ստ. Մալխասյանցը: Նա գրում է. «Բոլոր այս համեմատությունները արժեք չունեն, քանի որ ոչ հնչյունով և ոչ նշանակությամբ չեն հարմարվում Սրտաշիր Սասանյան Ստահրացուն»: Բայց «ազգն Կարքեղովմայեցի իշխանութան» մի՞թե հիմք է տալիս դրա տակ Սրտաշիր Սասանյան Ստահրացուն տեսնելու: Ստ. Մալխասյանցը,

5 Իսկ «ս»-ի «կորստյան» մասին բացատրություն չկա՞:

6 «Սրարատ» ամսագիր, 1899, էջ 315, ծանոթություն:

7 Պահպանում ենք յուրաքանչյուր հետազոտողի և Սեբեոսի Պատմության հրատարակչի սույն բառը ներկայացնելու ձևը, թեև դրա անհրաժեշտությունը չկար. քանզի բոլորն էլ ընդունում են «Կարքեղովմայեցի» գրությունը, և լուկ մենք ենք, որ ճիշտ ենք համարում «Կարքեղովմայեցի»-ն:

8 Կարթագենի՝ հյուսիսային Աֆրիկայում ուղանալից և պետական գործիչ (մ. թ. ա. 247-183): Սահագել է Փոքր Ասիայի Բյուբանիայում: Ըստ Ստրաբոնի և Պլուտարքոսի մոտ պահպանված ավանդության, եղել է Չայաստանում, Սրտաշես Ա-ի արքունիքում, և իր խորհուրդներով օգնել կառուցելու Սրտաշես քաղաքը:

9 Histoire d'Héraclius par L'Évêque Sebas, traduite de L'arménien et annotée par Frédéric Macler, Paris, 1904, p. 156.

չկարողանալով բացատրել «Կարքեղոմայեցին», փորձում է առեղծվածը լուծել քառի մեջ գրչական հնարավոր աղավաղում տեսնելով: «Կարելի է կարծել, - գրում է նա, - թե Կարքեղոմայեցի բառը աղավաղություն է, և սկզբնապես եղել է չար եղովմայեցի»: Անվանի ակադեմիկոսը տալիս է հետևյալ ընդարձակ բացատրությունը: Այսպես. «Քանի որ մի կողմից հին հայ հեղինակները նայել են Սասանյանների վրա, իբրև հայ Արշակունիների դարավոր ռիսերիմ թշնամիների վրա, և մյուս կողմից Ս. Գրքում հաճախ հիշված եղովմայեցիները, իրենց համարելով եսավի սերունդ, անընդհատ թշնամական հարաբերությունների մեջ էին բուն հրեաների (Հակոբի սերնդի) հետ՝ սրա նմանությամբ Սեբեոս եղովմայեցի է կոչում Սասանյաններից՝ հայ Արշակունիների վերաբերմամբ»<sup>10</sup>:

Բացատրությունը ձգձգված է, ի վերա ամենայնի հնագրագիտորեն էլ չի հարմարվում: Ինչպե՞ս կարող է «Կ»-ն շփոթվի «Չ»-ի հետ, և ո՞ւր կորավ քառի «ք»-ն: Հնարավոր է ենթադրել միջնադարյան գրչի կողմից անծանոթ քառի հայերեն իմաստավորում կամ ձևում, բայց հակառակը՝ շատ պարզ ու հասկանալի «չար եղովմայեցի»-ն չէր կարող դառնալ նրա համար միանգամայն անհասկանալի «Կարքեղովմայեցի»:

Պատրաստելով Սեբեոսի «Պատմության» հունարեն թարգմանությունը (այն Աթենքում հանձնվել է հրատարակության դեռևս 1995 թ. վերջին), մենք, բնական է, չէինք կարող չանդրադառնալ «կարքեղոմայեցի» առեղծվածին, հանգել էիք, սակայն, միանգամայն տարբեր եզրակացության, որը և ստորև ներկայացնում ենք ընթերցողներին և մասնագետներին:

\* \* \*

1936 թ. ամերիկյան հնագիտական արշավախումբը ուսումնասիրություններ էր կատարում Իրանի հարավում, Սուսի քաղաքից ոչ հեռու, որտեղ աքեմենյան արքաների դամբարանների հարևանությամբ գտնվում է «Ձրադաշտի քաաբան» ժամանակին մեծ համբավ ունեցող հավանաբար Հրո կամ Անահիտ դիցուհուն նվիրված տաճարը: «Ձրադաշտի քաաբայի» գեղանախարսիսի (ցոկոլի) վրա հայտնաբերվեցին Շապուհ Ս արքայի (241-272 թթ.) և գերագույն քուրմ Կարտիրի արձանագրությունները: Եթե Շապուհի արձանագրությունը դարձավ Իրանի Գ դարի քաղաքական պատմության, պետական կառավարման և դինաստիաների ուսումնասիրության ամենագլխավոր աղբյուրը, ապա Կարտիրի արձանագրությունն այդպիսին դարձավ սասանյան կրոնի և հոգևոր հիերարխիայի ուսումնասիրության համար<sup>11</sup>: Շապուհի արձանագրությունը եռալեզվյան է՝ պահլավերեն, միջին պարսկերեն

<sup>10</sup> Սեբեոսի եպիսկոպոսի Պատմություն, չորրորդ տպագրություն, քաղղատուքեամբ ձեռագրաց, հանդերձ առաջարանի և ծանօթութեամբք ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երևան, 1939, էջ 176-177: Ասենք, որ «եղովմայեցի» ընթերցումը Ստ. Մալխասյանցից քառասուն տարի առաջ առաջարկել էր Ս. Կ.-ն «Արարատ» ամսագրում: Տե՛ս վերը:

<sup>11</sup> В. Г. Луконин, Культура Сасанидского Ирана. Иран в III-V вв. Очерки по истории культуры, Москва, 1969, с. 12-14: См. также с. 62, 126.

և հունարեն: Արձանագրության սկզբում, արքայից արքայի տիտղոսաշարից անմիջապես հետո, ուրվագծվում են Երանշահի «Իրան երկրի» սահմանները: Նրանք ձգվում են հյուսիսում մինչև Կովկասյան լեռնաշղթան և Ալանաց դռները, *արևմուտքում* իրենց մեջ են ներառում ամբողջ Չայաստանը, Իբե-րիան, Կապադովկիան, Կիլիկիան, Եփրատի հոսանքին ընկած նահանգները, *Մեսենեն* (հարավային Միջագետք), իսկ արևելքում հասնում են մինչև Փեշավար<sup>12</sup>:

Իրանի նեստորական քրիստոնյաների 410 թ. կայացած եկեղեցական ժողովի արձանագրությունների համաձայն, Սելևկիա-Տիգրանի մեծ մետրոպոլիտը, այն է՝ Իրանի քրիստոնյա համայն եկեղեցու կաթողիկոսը, որին էր ենթակա որպես «մինիստր» Զաշկարի եպիսկոպոսը, իր ենթակայության տակ ուներ հինգ մետրոպոլիտություններ: Նրանք հաստատված էին Բեթ Լապատում (Գունդեշահպուր), Աուսիանայում, Մծբինում, *Մեսենեի Պրատ դը Սայշանում*, Արբալում և Կարթա դը բեթ Ալոքում (Կերկուկ)<sup>13</sup>: Մեսենն նահանգից հյուսիս ընկած էր Էլիմայիսը և Խուզիստանը:

Սասանյան հարստության հիմնադիր Արտաշես Ա-ի (224-241 թթ.) քաղաքաշինության մասին հիշատակող վաղ միջնադարյան աղբյուրները ցույց են տալիս, որ նա կառուցել է Սելևկիան՝ Տիգրիսի ափին (Վեհ Արտաշիր), *Մեսենեն* (Աստրաբադ Արտաշիր), և ող Արտաշիր քաղաքը Արբելայի շրջանում և ուրիշներ: Արաբ պատմիչ Տաբարին (9-10-րդ դդ.) գրում է. «Արտաշիրի կողմից հիմնադրվել են Պարսում՝ Արտաշիր Խուրրան..., Ախվազում՝ Որմիզդ Արտաշիրը, Սավադում՝ Բեհ Արտաշիրը, *Աստրաբադ Արտաշիրը* (այն կոչում են նաև Կարթա դը Սայշան)»<sup>14</sup>: Նշենք այստեղ, որ Սասանյանների պետության անկումից (651 թ.) հետո, արաբական տիրապետության սկզբնական շրջանում, դեռևս տարածում ունեին Սասանյան շրջանում միջին պարսկերենով գրված գրքերը: Գիշալ գրքերը, այդ թվում Գ-Դ դդ. կազմված «վաթայ-նամակ» խորագիրը կրող պաշտոնական ժամանակագրությունը, արաբ պատմիչների կողմից լայնորեն օգտագործվում էին, և Սասանյան Իրանի մասին նրանց շարադրանքը, հենված լինելով այդպիսի ստույգ աղբյուրների վրա, շատ արժանահավատ է: Արաբ պատմիչ Մասուդին, օրինակ, հաղորդում է 915 թ. Ստահրում տեսած «մի ձեռագրի մասին, որը բովանդակում էր բազում գիտելիքներ և տեղեկություններ պարսից թագավորների և պետական կառավարման մասին»<sup>15</sup>: 955 թ. բույիդ ամիրա Ադուդ ադ-Դոուլեն այցելեց Աքեմենյանների մայրաքաղաք Պերսեպոլիսը: Այնտեղ նա հրամայեց Դարեհի պալատի դռների վրա արձանագրություն փորագրել, որում ասվում էր, որ իր հրամանի համաձայն Կոզերունի մոզ (Գրո տաճարի քուրմ) ոմն Սարաֆանդ, իր համար ընթերցեց

12 M. Sprengling, *Third Century Iran, Sapor and Kartir*, Chicago, 1953: E. Honigmann and A. Maricq, *Recherches sur les Res Gestae Divi Saporis*, Bruxelles, 1953.

13 A. Christensen, *L'Iran sous les Sassanides*, Copenhagen, 1944, p. 271: Լալև, *The Cambridge History of Iran. «The Seleucid, Parthian and Sasanian Periods*, Cambridge, 1983, I, 3(2), p. 932.

14 В. Г. Лухонин, *Иран в эпоху первых Сасанидов*, Ленинград, 1961, с.18: Լալև, Н. В. Пугулевская, *Города Ирана в раннем средневековье*, Москва-Ленинград, 1956, с. 157.

15 В. Г. Лухонин, *Культура Сасанидского Ирана*, Москва, 1969, С. 9.

այստեղ գտնվող բոլոր արձանագրությունները: Մարաֆանդն ընթերցեց նաև Շահաուհ Բ-ի (310-379 թթ.) ժամանակաշրջանին վերաբերող և նույն պալատի ռոնների վրա փորագրված միջին պարսկերեն երկու արձանագրությունները: Իրանում հայտնի են Ժ-ԺԱ դարերին վերաբերող երկու աշտարակներ, որոնց վրա կան միջին պարսկերենով գրված արձանագրություններ և նրանց արաբերեն թարգմանությունները: Հայտնի է նաև վերոհիշյալ թուլիդ ամիրա Ադուդի մեդալիոնը՝ միջին պարսկերեն արձանագրությամբ: Որով անգամ արաբական տիրապետության սկզբից երեք հարյուր տարի անց Իրանում կային մարդիկ, որոնք ի վիճակի էին կարդալ միջին պարսկերենով գրված բնագրեր, որով Սասանյանների մասին արաբ և պարսիկ պատմիչների երկերը հասնում են սասանյան իսկական ավանդության: Հենց այս աշխատություններն էին ուսումնասիրողների հիմնական աղբյուրները վաղ սասանյան շրջանի պատմությունը գրելու համար<sup>16</sup>:

Վերադառնալով Երանշահի արևմտյան շրջանում հիշված Սեսենեին: Պարթևները, տիրելով Իրանին մ. թ. ա. Բ դարում, չէին ջանում հասնել մինչև ծով: Նրանց անմիջական տիրույթները կարող էին սահմանակից դառնալ ծովին միայն Եփրատի գետաբերանում, այն էլ փոքր մի տարածության վրա: Ահա այստեղ նրանք թույլ տվեցին փոքր, բայց հարուստ վասալ պետական մի կազմավորման ստեղծման: Երջանը հունա-հռոմեական աղբյուրներում հայտնի էր որպես Սեսենե (Μεσσηνή)<sup>17</sup>, արաբների շրջանում՝ Մայսան, իսկ պարսիկների՝ Սեշան կամ Մայշան: Դրա գլխավոր քաղաքն էր դարձյալ հունա-հռոմեական աղբյուրների խարաքսը (Χώραξ)<sup>18</sup>, որը, անկասկած, պարսիկների Կարքան է: Այս խարաքսից էլ շրջանը կոչվում է հարակենն: Միջազգային առևտրում այս վասալ պետության թագավորներն ավելի մեծ գործունեություն էին ծավալել, քան պարթևների «մեծ արքաները»<sup>19</sup>: Երջանի կենտրոնը, քաղաք-ամրոցը կոչվում էր Karaka de Mésan<sup>20</sup>: «Կարքա» նշանակում է «բերդ» կամ «ամրացված վայր»<sup>21</sup>, որով Կարքա դը Սեշան (կամ Մայշան) նշանակում

16 Նույն տեղում, էջ 9-10:

17 Այն հիշում է նաև Ստրաբոնը. Страбон, География, перевод Г. А. Стратановского, Москва, 1964, с. 89 /кн. II, 1, 31:

18 В. В. Бартольд, Сочинения том VII. XI. Луристан и Хузистан, Москва, 1971. Մեսենի մասին ուսումնասիրություն է. J. Saint-Martin, Recherches sur l'histoire et la géographie de la Mésène et de la Charesène Paris, 1838: Ավելի նոր գործերից՝ N. C. Debevoise, A Political History of Parthia, Chicago 1938; U. Kahstedt, Artabanus III und seine Erben, Bonn, 1950; E. Honigmann - A. Marieq, Recherches sur les Res Gestae Divi Saporis, Bruxelles, 1953 (Académie Royale de Belgique, Classe des lettres et des Sciences Morales et Politiques, Mémoires t. XLVII, fasc. 4):

19 В. В. Бартольд, у.к. соч.

20 The Cambridge history of Iran, vol. 3(1). The Seleucian, Parthian and Sasanian Periods, 1983, p. 487: Ուսալեզու գրականության մեջ քաղաքի անվանումը բերվում է Karaka de Mešwan և Karaka de Mešwan ձևով Հմմտ. В. Г. Луконин, Иран в Эпоху первых Сасанидов, с. 18: Նույնի՝ Культура Сасанидского Ирана, с. 42: Н. В. Пугулевская, Города Ирана в раннем средневековье, с. 50-51, 147, 220: Այս փաստը վկայում է, որ դա ոչ «ճա» է, ոչ էլ «ճա», այլ այդ երկուսի միջև առկա հնչյուն է: Որով ճիշտ է Ջեմրիջի Իրանի պատմության հատորում բերված գրության ձևը՝ «ճա»: Այն հայերիւում պիտի լինի «դը»:

21 Н. В. Пугулевская, Города Ирана, с. 139.

է Մեսենեի՝ Մեշանի (Մայշանի) բերդ: Մեսենե-Մեշան-Մայշան նահանգի շրջանում գոյություն ունեին նման Կարքաներ եւ: Վաղ միջնադարում Կերկուկը կոչվում էր Կարքա դը բեթ Սելուք<sup>22</sup>: Ըստ ասորական աղբյուրների, Շապուհ Բ-ն կառուցեց Կարքա դը Լեդան<sup>23</sup> քաղաքը: Պրոկոպիոս Կեսարացու հիշատակած *Μαγδαλαθών* (այժմ՝ Թել Սիդդալ) բերդը<sup>24</sup> ասորական աղբյուրներում հայտնի է որպես *Qarqapā de Magdālaye*<sup>25</sup>:

Ինչ էր ներկայացնում Մայշան-Մեշանը քաղաքական առումով<sup>26</sup>: Շապուհ Ա-ի «Ձրադաշտի քաարա»-ի արձանագրության համաձայն Մայշանում իշխում էր արքայից արքա Շապուհ Ա-ի որդի համանուն Շապուհը, որ կրում էր Մեշանի թագավոր (MLK') տիտղոսը, իսկ նրանից հետո՝ վերջինիս կին Դենակը<sup>27</sup>:

Շապուհ Ա-ի հաղթական արձանագրության մեջ արքայից անմիջապես հետո հիշվում է Ադիաբենի թագավորը, այնուհետև գալիս են Կերմանի թագավորը և Մայշանի թագուհի Դենակը: Որդի Շապուհը 262 թ., այսինքն «Ձրադաշտի քաարա»-ի արձանագրության կազմման ժամանակ, արդեն վախճանված էր և նրա «թագավորությունը» կառավարում էր իր կին Դենակը<sup>28</sup>: Դենակի մահից հետո Մեշանի թագավոր դարձավ Ատուրֆարնբազը՝ Շապուհ Ա-ի թոռը<sup>29</sup>: Նա որպես «Մեսենե»-ի թագավոր՝ հիշվում է 293 թ.<sup>30</sup>:

Շապուհ Ա-ի Նաքշ-ի-Ռաջաբի բարձրաքանդակում «արքայից հետո առաջիններից» ներկայացված են իր որդիները, իր կինը, իր գլխավոր մեծամեծները: Արքայից անմիջապես հետո առաջին շարքում պատկերված են «Չայոց մեծ արքա» Որմիզդ-Արտաշիրը՝ թագաժառանգի նշանով իր քուլախի՝ խույրի վրա: Նրա կողքին՝ Մեսենեի թագավոր Շապուհը՝ Շապուհ Ա-ի որդին<sup>31</sup>:

Իրանական արքայազների կալվածները ժառանգական չէին, սակայն *Մեսենեն*, հավանաբար, բացառություն էր կազմում: Շապուհ Ա-ի որդի «Մեսենե»-ի թագավոր՝ Շապուհի մահից հետո, ինչպես տեսանք, նահանգը կառավարման հանձնվեց նրա կնոջը՝ Դենակին<sup>32</sup>:

Մեսենեն քաղաքական առումով մեծ նշանակություն ստացավ հատկապես Գ դարի 70-90-ական թթ.: Ղրա պատճառը՝ Հռոմի հետ իրանի պատերազմի մեջ ներքաշվելու հնարավորությունն էր:

22 Նույն տեղում, էջ 18, 37, 49, 144, 220:

23 Н. В. Пугачевская, Города Ирана, с. 220.

24 Օտար աղբյուրները Չայաստանի և հայերի մասին: Բյուզանդական աղբյուրներ, գիրք Ա, Պրոկոպիոս Կեսարացի: Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Հրաչ Բարթիկյանի. Երևան, 1967, էջ 178:

25 E. Honigmann, Die Ostgrenze des Byzantinischen Reiches von 363 1071, Bruxelles, 1961, S. 15:

26 Մեսենեի մասին պարթևական և սասանյան ժամանակաշրջանում տե՛ս N. C. Debevoise, A Political History of Parthia, Chicago, 1938: U. Kahstedt, Artabanos III und seine Erben, Bern, 1950: E. Honigmann and A. Maricq, Recherches sur les Res Gestae Divi Saporis, Bruxelles, 1953.

27 В. Г. Луконин, Культура сасанидского Ирана, с. 42.

28 Նույն տեղում, էջ 62:

29 Նույն տեղում, էջ 110:

30 В. Г. Луконин, Иран в III в., Москва, 1979, с. 60.

31 В. Г. Луконин, Культура сасанидского Ирана, с. 67.

32 В. Г. Луконин, Иран в III в., Москва, 1979, с. 121.

Անդրադառնանք Կարքա դը Մայշանին որպես զրադաշտական կրոնի խոշոր կենտրոնի և սասանյան պետության մեջ զրադաշտական քրմության խաղացած դերին: Կարտիրի պետության գլխավոր քրմի (քրմապետի) Ձրադաշտի քաաբայի ընդարձակ արձանագրության համաձայն, Կարտիրը Մայշանի սահմաններում անձամբ հիմնադրեց կամ իր օժանդակությամբ հիմնադրվեցին Գրո տաճարներ և հաստատվեց «ՄԱԳՈՒՍՏԱՆԸ» մոզաստանը, մոզերի հաստատությունը<sup>33</sup>: Այս տաճարներին յուրաքանչյուր տարի զոհաբերվում էին մեկ տարեկան գառներ, մատուցվում գինի և ցորեն: Այդ զոհամատուցումները, դատելով արձանագրություններից, կատարում էր անձամբ արքայից արքան, իսկ տաճարները գտնվում էին նրա հովանավորության ներքո<sup>34</sup>:

«Ձրադաշտի քաաբա»-ի արձանագրության մեջ Կարտիրը ցույց է տալիս, որ իր ծառայությունների համար արքայից արքա Շապուհի կողմից արժանացավ մուտք գործելու հզոր և գերագույն ՄԱԳՈՒՍՏԱՆԸ<sup>35</sup>:

Ձրադաշտական հոգևորականությունը կազմակերպվեց խիստ հիերարխիկ: Քրմության գլուխն էր կանգնած գերագույն քուրմը՝ մագուպատան մագուպատը<sup>36</sup>, տիտղոս, որ ձևվեց «արքայից արքա» տիտղոսի նմանությամբ<sup>37</sup>: Նա արքունիքում հսկայական ազդեցություն ուներ<sup>38</sup>: Դատավարությունը գտնվում էր հենց քրմության ձեռքին: Շապուհ Բ-ի իշխանության օրոք եկեղեցի-պետություն հարաբերությունների հաստատման գործընթացը հասավ իր բարձրակետին: Ձրադաշտական հաստատությունը զուգակցվեց միապետության հետ և սեփական հիերարխիայով ունեցավ իր հատուկ տեղը հասարակության մեջ<sup>39</sup>:

Վերադառնանք Ասեսնե-Մայշան-Մեշան նահանգին և նրա մայրաքաղաք Խարաբսին՝ Կարքա դը Մայշանից<sup>40</sup>: Եղիշեն, անդրադառնալով Ավարայրից հետո հայ նախարարների՝ պարսից իշխանությունների կողմից աքսորվելուն, հիշում է և այն վայրերը, որտեղ նրանք տառապել էին: Այսպես, «եւ վասն զի յոյժ խստագոյնս պահէին ի ջերմոջ աշխարհին և անդադար էին ճանապարհորդութեանն ընդ նոյն Շահուղ, ընդ Մեշովն և ընդ Քաշկար և ընդ ամենայն Ասուրեստան և Խուժաստան»<sup>41</sup>: Եղիշեի հիշատակած Մեշովնը, անտարա-

33 «Մագուստանի» Բացատրությունը ըստ M. L. Chaumont-ի. «Magusian»-ը կազմված է magu-stan-ից: «Մագու» նշանակում է մոզ, իսկ «ստան»-ը ածանց է տեղանուններին հատուկ: Գնարավոր է, որ այս տերմինը նախապես աշխարհագրական հասկացողություն էր՝ «մոզերի երկիր», որ անտիկ շրջանի հեղինակները տեղադրում էին Մարաստանում: Սեր դեպքում կասկած չկա, որ խոսքը կրոնական դասին է վերաբերում, որ պահլավական գրքերում կոչվում է asronan – pesak կամ pesak i asronan: M. L. Chaumont, L'inscription de Kartir a la «Kaaba de Zoroastre», «Journal Asiatique», CCXLVIII, 1960, p. 350.

34 В. Г. Луконин, Иран в эпоху первых сасанидов, Ленинград, 1961, с. 17.

35 M. L. Chaumont, L'Inscription de Kartir a la "Kaaba de Zoroastre", p. 345.

36 Գլխավոր մոզպետ-մովպետը:

37 See The Cambridge History of Iran, vol. 3(1), p. 134:

38 М. М. Дьяконов, Очерк истории древнего Ирана, М. 1961, с. 289.

39 Լույն տեղում, էջ 140:

40 The Cambridge History of Iran, vol. 3(1), p. 487.

41 Եղիշեի վասն Վարդանայ և Գայոց պատերազմին: Ի լոյս ընծայեալ բաղդատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ՝ Ե. Տէր-Սինասեան, Երևան, 1958, էջ 188:

կույս, հունա-հռոմեական աղբյուրների Մեսենեն է<sup>42</sup>, արաբական և ասորական աղբյուրների՝ Մեշան (Մայշանը): Ե դարի «Աշխարհացոյց»-ում հանդիպում է մեզ հետաքրքրող տեղանվան մասին և մի այլ հիշատակություն: Պարսից «երեսն եւ ութերորդ» աշխարհում հիշվում է «Փոքր աշխարհ» Մեշունը<sup>43</sup>, որ անկասկած նույնանուն է եղիշեի Մեշովնի հետ, ասել է Մեսենե-Մեշան-Մայշանի:

«Աշխարհացոյց»-ի այլ գրչագրերում անկա է հետաքրքիր մի այլ հիշատակություն. «Յաղագս պարսից աշխարհին» զխում հեղինակը գրում է. «Պարսից աշխարհ ընդ չորս բաժանի այսպէս. ա/ Քուստակ-ի-խորուարան, որ է կողմն *Արևմտեայ*, յորում աշխարհք ինն. *ՄԱՅ*, Մասպետան, Միհրան-Քուստակ, *Կաշկար*, Գարմական, Երանասան-Քարու-Կաւատ, Նոտ-Արտաշիրական, Սարծին, գԱրզուն»<sup>44</sup>: Մայը հիշատակված է այլ գրչագրերում ևս: Այսպես, Մատենադարանի N 582 գրչագրի համաձայն «երեսն եւ եւթերորդ» եղիմացիք են, որ կոչին Քուստ - ի խորասարան, յելից կալով Ղզկաթայ և ի մտից՝ Պարսից. և ռնին եղիմացիք աշխարհս փոքունս, զայսոսիկ. գ խուժաստան, *գՄայ*, գՄասպան, գՄիհրանցստակ, *գՔաշկար...*»<sup>45</sup>:

Արդ, եթե «Աշխարհացոյց»-ում Մայը և Կաշկարը հիշատակված են Պարսից երկրի արևմուտքում, իսկ հայ նախարարները տառապում էին հենց «ընդ Մեշովն և ընդ Քաշկար», ապա տրամաբանական է Մայի և Մեշովն-Մեշունի միջև ընդհանրություն տեսնել: Բայց քանի որ հաստատ չենք կարող պնդել, որ «Աշխարհացոյց»-ի Մայը և Մեշուն-Մեշովնը (նույն տեղանունն է) (ինչպես տեսանք, «Աշխարհացոյց»-ի Մատենադարանի նո. 582 ձեռագրում Մայը հիշատակված է պարսից «երեսն եւ եւթերորդ» աշխարհում, Մեշունը՝ «երեսն եւ ութերորդ»/, մնում է ենթադրել, որ Մեշուն-Մեշովնը Մեսենեն է, նահանգը, Մայը՝ Կարքա դը Մայշանը, նահանգի մայրաքաղաքը (Խարաքսը), արաբական աղբյուրների տվյալներով Արտաշիր Պապականի կառուցած Կարքա դը Մայշանը<sup>46</sup> (Սստրաբոս Արտաշիրը), զրադաշտական հոգևոր կենտրոնը: Ամենայն հավանականությամբ Կարքա դը Մայշանը Սեբեոսը գիտե որպես *Կարքա դը Մայ* (կրճատված է «շան»-ը): Այստեղից էլ անհա նրա «Կարքեղոմայեցի» ազգը, իշխանությունը:

Վերադառնանք Ֆ. Մակլերի կողմից շրջանառության մեջ դրված Դանիել մարգարեի պարականոն «Հայտնությանը»: Ինչպես նշվեց վերևում, ըստ ֆրանսիացի գիտնականի, այնտեղ հիշված Կարթագենը (Հաննիբալի հայրենիքը) և պարսից ժողովուրդը նույնացված են: Կարևոր է նշել, որ սույն պարականոնը, Ֆ. Մակլերի ասելով, ժամանակակից է Սեբեոսին, նշանակում է այդ հանգամանքը ավելի քան կարևոր է Սեբեոսի «Կարքեղոմայեցի» ազգի ինքնությունը որոշելու գործում: Ուրեմն այսպես: Պարականոնի Սեբեոսի ժամանակակից հայ հեղինակը Դանիել մարգարեի բերանով սպառնալիքներ, անեծքներ է թափում պարսիկների վրա: Դանիելի յոթերորդ «Տեսիլքում»

<sup>42</sup> Եղիշե, Կարդանի և Հայոց պատերազմի մասին: Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Ե. Տեր-Սիմոնյանի, Երևան, 1971, էջ 220:

<sup>43</sup> Ա. Արրահամյան, Սմանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 352:

<sup>44</sup> Ա. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 1963, էջ 114-115:

<sup>45</sup> Ա. Արրահամյան, հիշ. աշխ., էջ 352: Հրատարակիչը մեզ հետաքրքրող հատվածը վերծանելիս թույլ է տվել բազում սխալներ, որոնց վրա այստեղ իմաստ չունի կանգ առնել:

<sup>46</sup> The Cambridge History of Iran, vol. 3(1), p. 487.

կարողում ենք. «Կարքեղովն և ազգ պարսից, զինչ հասանէ քեզ, ի վախճան աւուրց, դու ոչ զհտես, և ի կատարածին յաւիտենից, քանի՞ ինչ եղիցի ժամանակ քո. զկնի ամենայն քաղաքաց և գաւառաց, ի սովոյ ապականեսցիր քաղաքդ պաճուճեալ յոսկոյ և յարժաթոյ, և ազգ պճնեալ և զարդարեալ: Անառակութիւնք բազում եղիցին ի քեզ, և տղայք քո չբաւեսցեն ոսկւով, և ապա ի սովոյ ապականեսցին»<sup>47</sup>:

Նույն՝ յոթերորդ Տեսիլքում մեզ հետաքրքրող ցեղանունը հիշվում է մեկ անգամ նա. «...ի զոգ զազանին երեքաւորեալ յազգէ պարսից ի Կարքեղովոյ»<sup>48</sup>:

Միանգամայն հավանական է, որ պարականոնի հայ հեղինակն արդեն զհտե, ակնատես է եղել պարսից պետականության վերացմանը խալիֆաթի հարվածների ներքո և տեղի ունեցածը «կանխագուշակում է» Դանիել մարգարեի բերանով:

Ավարտելով սույն հոդվածը, նշենք եզրակացությունը, որին հանգել ենք: Սերբոսի «Պատմության» մեջ «Կարքեղոմայեցի» անվան մեջ և ոչ մի աղավաղում գոյություն չունի, բոլոր «սրբագրությունները» բացարձակապես չունեն ոչ աղբյուրագիտական, ոչ պատմական և, ամենից առաջ, ոչ մի զրչագրական հիմք: Սերբոսն իր առեղծվածային մախադասությամբ մեջ ասում է, որ հայոց Արշակունիների դիմաստիայի վերացումից հետո Չայաստանի վրա հաստատվում է Կարքեղոմայեցվոց ազգի իշխանությունը: Քանի որ այդ իշխանությունը զրադաշտական պարսիկների ազգի իշխանությունն էր, ապա և քաջ զհտենալով, որ նրա գլխավոր սրբավայրը՝ Մագուստանը, Կարքա դը Մայլջանի-ն է, այդ ազգը նա անվանում է Կարքեղոմայեցվոց ազգ: Այդ ազգը «խորհուրդ ի ձեռն առեալ ահեղ և ահագին՝ հանդերձ միաբանութեամբ դառնաշունչ և մեծամեծ քաղեիցը»<sup>49</sup> և ամենայն զլխաւոր մախարարաւքն թագաւորութեան իւրոյ՝ բառնալ ի Չայաստան աշխարհէ զբարեպաշտութեան պտուղս»: Աշխարհիկ և կրոնական իշխանությունները նպատակ են դրել Չայաստանից քրիստոնեությունը վերացնել: Սերբոսը, ինչպես ժամանակին եղիշնն (կրկնենք այստեղ նրա ասածը. «...տիրեցին Չայոց ազգն Սասանայ պարսկի որ վարեր զիւր իշխանութիւնն օրինօք մոգուցն»), միանգամայն պարզ ցույց են տալիս Սասանյան Իրանում պետության և եկեղեցու միաձուլումն այնպես, ինչպես վերևում հիշված երեքլեզվյան արձանագրությունները և այլ աղբյուրներ՝ արքայից արքա+մագուսպատան մագուսպատ:

Կարքա դը Մայլջանի Մոգուստանը, ամենայն հավանականությամբ, այն էր, ինչ մահմեդականների համար Սեքքան, կաթոլիկների համար՝ Վատիկանը, և այլն:

<sup>47</sup> Թանգարան հին և նոր մախնեաց. Ա. Անկանոն զիրք Չին Կտակարանաց, Վենետիկ, 1886, էջ 239: Բացի Ֆ. Մակլերի ֆրանսերեն թարգմանությունից (F. Macler, Les Apocryphes apocryphes de Daniel), Դանիելի պարականոն Չայստությունը երիցս հրատարակել է անգլերեն թարգմանությամբ Գ. Իսավերդենը. The Uncanonical writings of the old Testament found in the Armenian Mas of the Library of St. Lazarus, Venice. Transl. into English by Rev. Dr. Jacques Issaverdens, Venice, 1901 (նույնը 1907 և 1934 թթ., նույն տեղում): Մեզ հետաքրքրող հատվածը. «O Carthago and thou peopl of the Persians» (p. 251). «by the Persian peopl of Carthago» (p. 257): Գ. Իսավերդենը հատուկ նշում է, թե իր թարգմանությունը տառացի է, և հայերեն ընագրի այս ամբողջ մասը անհասկանալի է» (1934, էջ 257):

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 244:

<sup>49</sup> Ըստ Ք. Պատկանյանի՝ մոգերի:



**ՄՏԵՓՐ ՄՏԵՓՐՅԱՆ***Պաշտական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր***ՀԱՅՈՅ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ԵՎ  
ՅՈՀԱՆՆԵՍ ԼԵՓՍԻՈՒՍԸ**

Հայերի ցեղասպանությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին իրականացվեց աննախադեպ բարբարոսական ձևով: Այսպես կոչված, ռազմական նկատառումներով, դեպորտացիայի (տեղահանության) պատրվակով արևմտահայությունն իր դարավոր հայրենիքից հակամարդկային բոլոր միջոցներով արտաքսվում էր Միջագետքի անապատները և մասնավորապես Տեր-Չոր (արաբերեն՝ Դեր էզ-Չոր): Հայերի տեղահանության բազմաթիվ ակնատեսներ վկայում են, որ երիտթուրքական կառավարության կազմակերպած այդ հրեշավոր քայլը նշանակում էր հայության զանգվածային բնաջնջում: Թուրքական զինվորականությունը և նրա գործիք քրդական հրոսակախմբերը ամենագազանային ձևով տանջահարում ու սպանում էին հայ երեխաներին, կանանց և անպաշտպան տղամարդկանց: Հայկական կոտորածների ակնատես գերմանացիներից մեկը պատմում է, որ «թուրքերը գերազանցում էին բոլոր տիպի դաժանությունները: Նրանք դաժանաբար տանջամահ էին անում, խոշտանգում կանանց ու տղամարդկանց, ծերերին ու երեխաներին, սպանում էին կացիններով կամ խեղդում զանազան միջոցներով, հող կանանց ծծում էին հրացանների կոթերով մինչև նրանց մահանալը, իսկ երիտասարդ կանանց նվիրում էին թուրքական և գերմանական սպաներին»<sup>1</sup>: Սեկ ուրիշ գերմանացու նկարագրությամբ, «խոշտանգումներից սպանված հազարավոր հայերի դիակներ կարելի էր տեսնել Եփրատի ջրերում: Անհամար հայերի քշում-տանում էին անմարդաբնակ վայրեր, երիտասարդ ամուսիններին հեռացնում էին միմյանցից, կանանց բռնաբարում էին ամուսինների աչքերի առաջ, իսկ վերջիններին՝ սպանում արատավորված կանանց ներկայությամբ»<sup>2</sup>: Գերմանացի պատեր (բողոքականների քահանա) Ֆիշերը պատմում է, որ «Վանի շրջանի որբանոցի մի խումբ հայ աղջիկների կախեցին ծառերից և սկսեցին քերթել գլխների կաշին... Մի կնոջ նորածին երեխային կացնով մի քանի մասի բաժանեցին և մոր բերանը մտցնելով խեղդեցին: Որբանոցի մյուս աղջիկներին արատավորեցին և սպանեցին»<sup>3</sup>:

Այդ դաժանություններին զումարվում էին նաև քաղցն ու հիվանդությունները, որոնց զոհ դարձան հարյուր հազարավոր հայեր:

Տեր-Չորում հայկական կոտորածները, բյուրավոր հայերի նահատակու-

<sup>1</sup> Sächsisches Hauptstaatsarchiv Dresden, Außenministerium. Akten-Nr. 1952, Bl. 76.

<sup>2</sup> Ibid.

<sup>3</sup> Deutsches Zentralarchiv. Historische Abteilung 11. Merseburg, Repositur 89. 2.2.1. Königliches Oberstes Zivil Kabinett. Akten-Nr. 1340. Bl. 192.

թյունը երիտթուրքական կառավարողների կողմից հայ ժողովրդին պատճառած մեծագույն ողբեգություններից է, որը չի կարող ջնջվել մարդկության հիշողությունից:

Հայերի զանգվածային ցեղասպանության մասին ցավով ու պատկերավորությամբ է գրել եղեռնից մազապուրծ փրկված Գրիգորիս ծ. վրդ. Պալաքյանը. «Եթե հայ նահատակներու զանկերեն լեռ մը բարձրանար, ապահովաբար շուք պիտ տար ան սուրբ Արարատի հավիտենական ծյունի երկնաբերձ կատարին...»<sup>4</sup>:

Իր «Հայ Գողգոթան» գրքի առաջին հատորի առաջաբանում Գրիգորիս Պալաքյանը հայկական կոտորածները հետևյալ ձևով է բնութագրում. «... զի մարդկորեն անհնար է նկարագրել ահավոր և անպատմելի Մարտիրոսագրությունը մեկ միլիոնե ավելի մեռնող զավակներուդ: Եթե երկրագնդի բոլոր ծովերը թանաք, դաշտերը՝ թուղթ, և եղեգները գրիչ դառնային, դարձյալ մարդկորեն անհնար էր նկարագրել քու փշալից արյունալից վերելքդ դեպի հայ Գողգոթային»<sup>5</sup>:

Հայերի ցեղասպանության ականատես, Թուրքիայում ամերիկյան դեսպան Հ. Սորգենթաուն իր հուշերում գրել է. «Համոզված եմ, որ մարդկության ողջ պատմության մեջ չկան այնքան զարհուրելի փաստեր, որքան այդ կոտորածները: Անցյալում նշմարված մեծ ջարդերն ու սարսափները գրեթե ամենշան են թվում 1915 թվականի հայ ազգի կրած տառապանքների համեմատությամբ»<sup>6</sup>:

Աշխարհի տարբեր լեզուներով հրապարակված բազմաթիվ փաստաթղթերի և ուսումնասիրությունների պատմագիտական ու քաղաքագիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ 20-րդ դարի ցեղասպանությունների շարքում հայոց ցեղասպանությունը առաջին զանգվածային ցեղասպանությունն է, և դրա միջազգային ճանաչումն ու դատապարտումը պատմական դաս է համայն մարդկության համար, նոր ցեղասպանությունների կանխման համար:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, երբ երիտթուրքական պարագլուխները կազմակերպեցին և իրագործեցին 20-րդ դարի առաջին մեծ ոճրագործությունը՝ հայերի տեղահանությունն ու ցեղասպանությունը, Յո. Լեփսիուսը, ի պաշտպանություն արևմտահայության, տիտանական գործունեություն ծավալեց: Նա բազմակողմանի օգնություն կազմակերպեց արևմտահայությանը: Նրա կոչով գերմանական հասարակայնությունը, բացի հազուստից և դեղորայքից, հայերին օգնելու համար պատերազմի օրերին 172000 մարկ հավաքեց<sup>7</sup>:

Արևմտահայության ցեղասպանության ամենասարսափերի օրերին, 1915

<sup>4</sup> Տեր-Ջոր լոյս հազա: Տեր Ջորի Արբոց նահատակաց եկեղեցւոյ օծման առիթով, 5 մայիսի 1991թ., Անթիլաս-Լիբանան. էջ 15:

<sup>5</sup> Պալաքեան Գրիգորիս: Հայ Գողգոթան: Դրվագներ հայ Մարտիրոսագրութենէն. Պեռլինէն դէպի Տեր-Ջոր: 1914-1920. Ա. հատոր. Վիեննա, 1922. էջ 6:

<sup>6</sup> Morgenthau H. Ambassador Morgenthau's story. Garden-City-New York. 1918, p. 325.

<sup>7</sup> «Flugblatt der Deutschen Orient Mission», 1917, Potsdam. S. 7.

քվականի հուլիսին: Յո. Լեփսիուսը կատարում է խիզախ ու համարձակ քայլ, գերմանիայից մեկնում է Թուրքիա և Ստամբուլում, մեծագույն ջանքեր գործադրելով, համոզիպում ենվեր փաշային: Մեծ մարդասերի ու հայասերի՝ Լեփսիուսի և մեծ ոճրագործի ու հայատյացի զրույցը բավականին երկարատև էր: Այն պատկերավոր ձևով շարադրված է Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» գրքում:

Հանդիպման սկզբում Յո. Լեփսիուսը թուրք փաշային ներկայանում է որպես գերմանական արևելյան առաքելության նախագահ և նշում, որ արտաքին գործոց նախարարությունը, ռայխսկանցիլերը հետաքրքրություն են ցուցաբերում իր այցի նկատմամբ, քանի որ վերադառնալիս հայակական հարցի մասին զեկուցումով հանդես է գալու Ռայխստագի պատգամավորների առջև: Յո. Լեփսիուսը անառարկելի փաստեր է բերում հայկական ջարդերի մասին, վկայակոչում Թուրքիայում ամերիկյան դեսպան Չ. Մորգենթաուին, իսկ թուրք փաշան որպես պատասխան հայտարարում է. «Պարոն Մորգենթաուն հրեա է, իսկ հրեաները միշտ էլ մոլեռանդորեն պաշտպան են կանգնում փոքրամասնությանը»<sup>8</sup>:

Գերմանացի մարդասերը անհողողող շարունակում է. «Կարևորը Մորգենթաուն չէ, այլ իրողությունը: Իսկ իրողությունը Դուք չեք ժխտի, չեք էլ կարող ժխտել: Հարյուր հազարավոր մարդիկ արդեն տարագրության ճանապարհն են բռնել: Իշխանությունները միայն զաղթից են խոսում: Բայց ես կպնդեմ, որ դա, մեղմ ասած, բառի չարաշահում է, ուրիշ ոչինչ: Կարելի՞ է զրջի մի հարվածով հողագործներից, արհեստավորներից, քաղաքաբնակ մարդկանցից ու մտավորականներից կազմված մի ժողովուրդ աքսորել Սիջազետքի մի անապատ, օվկիանոսի պես անծայրածիր, ամայի վայրեր, որտեղից նույնիսկ Բեդլին ցեղերն են փախչում... Եվ դա միայն պատրվակ է: Տեղական իշխանություններն այնպես են իրագործում աքսորը, որ թվառներն առաջին իսկ ութ օրվա ընթացում արդեն սովից, ծարավից, հիվանդություններից մեռնում են կամ խելագարվում: Եթե ոչ զինվորականները, ապա քրդերն ու ավազակները սպանում են անպաշտպանունակ պատանհիններին ու տղամարդկանց, իսկ մատղաշ աղջիկներին ու կանանց բռնաբարում են, առևանգում...»<sup>9</sup>:

Թուրք գեներալը իրեն հատուկ երկերեսանությամբ բացականջում է. «Շատ ցավալի բաներ են, բայց մի մեծ պետության գերագույն հրամանատարը պարտավոր է ապահովել իր երկրի ռազմաճակատային գոտու անվտանգությունը»<sup>10</sup>:

Հայերի դեմ ոճրագործությունն արդարացնելու նպատակով ենվեր փաշան ավելացնում է. «Պարոն Լեփսիուս, մի՞թե Դուք չէիք գործադրի ամեն միջոց, որպեսզի արտաքին թշնամիների աշխարհով պաշարված, ծանր պատերազմի մեջ քաշված ձեր ազգը ազատեիք ներքին թշնամուց (նկատի ունեն արևմտահայությանը – Ս. Ա.)»<sup>11</sup>: Այս խոսքերից հետո Յո. Լեփսիուսը

<sup>8</sup> Վերֆել Ֆ., Մուսա լեռան քառասուն օրը, Երևան, 1964, էջ 139:

<sup>9</sup> Լույն տեղում. էջ 139-140:

<sup>10</sup> Լույն տեղում. էջ 140:

<sup>11</sup> Լույն տեղում. էջ 140:

լքված էր ապտակ հասցնելու զայրույթով և առանց վարանելու ասում է. «Եթե իմ երկրի ղեկավարները իրենց այլ ազգի կամ այլ համոզմունքներ ունեցող հայրենակիցների հետ ամարդարացի, ապօրինի, անմարդկային ձևով վարվեին, ես նույն վայրկյանին կիրաժարվեի Գերմանիայից, կհեռանայի Ամերիկա»<sup>12</sup>: Երբ Էնվեր փաշան կատաղած հայտարարում է, որ հայերն ու Չայաստանը խանգարում են թուրանական մեծ տերության ստեղծմանը, Յո. Լեփսիուսն անմիջապես ասում է. «Ուրեմն, խոստովանո՞ւմ եք Չեր մտադրությունը, պատերազմն ուզում եք օգտագործել ամբողջ հայ ժողովուրդը բնաջնջելու համար»<sup>13</sup>:

Հայերի տեղահանությունն ու ցեղասպանությունը դադարեցնելու նպատակով նա դիմում է խնդրանքի, աղերսանքի, առաջարկում է իր ծառայությունները աքսորյալ հայերի քարավանները կազմակերպելու և նրանց ուղեկցելու գործում: Դիմելով Էնվեր փաշային, Յո. Լեփսիուսն ասում է. «Լիազորեցեք, որ ինքս կազմակերպեմ աքսորյալների քարավանները: Աստված ինձ ուժ կշնորհի, իսկ իմ փորձառությունը ոչ ոք չունի: Օսմանյան պետությունից ոչ մի պիաստր չեմ պահանջի: Դրամական բոլոր անհրաժեշտ միջոցները ինքս ձեռք կբերեմ: Գերմանական և ամերիկյան նպաստամատույց ընկերությունները կանգնած են իմ թիկունքին: Ես մի անգամ արդեն նպաստի հետ կապված մեծ գործ եմ գլուխ բերել (նա նկատի ուներ 1890-ական թվականներին հայերի կոտորածների ժամանակ իր հայանպաստ մեծ գործունեությունը - Ս. Ս.): Ինձ հաջողվեց հիմնել բազմաթիվ որբանոցներ ու հիվանդանոցներ... Չնայած պատերազմին, ես կանեմ նույնը և դեռ ավելին»<sup>14</sup>:

Անողորմ արդասպանն առանց այլևայլության կտրականապես մերժում է մեծ մարդասերի բոլոր խնդրանքներն ու առաջարկած ծառայությունները: Ավելին, հղփացած փաշան լկտիությամբ ասում է. «Պարոն Լեփսիուս, ես էլ իմ հերթին մի առաջարկ անեմ: Փող հավաքեցեք, որքան կարող եք, շատ փող հավաքեցեք Չեր ամերիկյան ու գերմանական ընկերությունների միջոցով: Այնուհետև գումարը բերեք ինձ մոտ»<sup>15</sup>:

Այդպիսով, Յո. Լեփսիուսի բոլոր համառ ջանքերն ու բանակցությունները մնացին «ձայն բարբառող յանապատի»:

Հայտնի է, որ Յո. Լեփսիուսին ճանապարհելուց հետո Էնվեր փաշան մտնում է Թալեաթ փաշայի առանձնասենյակ այն պահին, երբ վերջինս տեղական իշխանություններին ուղղված հատուկ հրաման էր ստորագրում, որում գրված էր. «...տեղահանության նպատակը ոչնչացումն է [հայերի]»<sup>16</sup>: Շարունակելով այդ հանցավոր միտքը, Թալեաթ փաշան ասում է. «Այսպես, աշնանն այդ բոլոր մարդկանց կկարողանամ ամենայն անկեղծությամբ պատասխանել. Հայկական հարց այլևս գոյություն չունի»<sup>17</sup>:

<sup>12</sup> Նույն տեղում. էջ 141:

<sup>13</sup> Նույն տեղում. էջ 144:

<sup>14</sup> Նույն տեղում. էջ 147:

<sup>15</sup> Նույն տեղում. էջ 148:

<sup>16</sup> Նույն տեղում. էջ 151:

<sup>17</sup> Նույն տեղում:

Էնվեր փաշայի հետ հանդիպումից շուրջ մեկ ամիս անց Յո. Լեփսիուսը կրկին հայտնվում է Կոստանդնուպոլսում: Այդ ժամանակ արդեն սկսվել էր Մուսա լեռան հերոսամարտը: Այս անգամ էլ նա շարունակում է իր համարձակ քայլերը: Հանդիպում է Պատրիարք Ջավեն Արբազանին, նրանից տեղեկանում իր բացակայության ընթացքում հայերի հետ կատարված ողբերգական դեպքերի մասին: Երբ իմանում է, որ հայերը բարձրացել են Մուսա լեռ, դիմել են ինքնապաշտպանության, իրենց սխրանքերով պարտության են մատնում, հետ են մղում գերակշիռ ուժերով թուրքերին, Յո. Լեփսիուսը բացականշում է. «Աքանչելի՛ է: Եթե մի երեք այդպիսի Մուսա լույս ընկներ, գործն այլ ընթացք կստանար: Ա՛յս, Արբազան, Երանի՛ ես Մուսա լեռան զագաթին լինեի»<sup>18</sup>:

Այդ հանդիպան մասին ինքը՝ Պատրիարքը, իր հուշերում գրում է. «Կեդրոնական վարժարանի տեսուչ փրոֆ. Աստուածատուր հաչատրեանը, որ տակաւին չէր աքսորուած, օր մը ինձի հաղորդեց, թէ Գերմանիայէն Պոլիս եկած էր տոքթ. Լեփսիուս՝ հայասերը և ինձի այցելել կ'ուզէր: Տրուած ժամադրութեան համաձայն տոքթ. Լեփսիուս պատրիարքարան եկաւ: Երկուքս ալ ընկճուած էինք, ես ժողովուրդիս աղէտը տեսնելով՝ անճար մնացած և տոքթ. Լեփսիուս, իր առաքելութեան մէջ ծախողած: Պատմեցի իրեն զաւառի ժողովուրդին աղետը՝ որքան որ տեղեկացած էի, և իմ կատարած դիմումներս թուրք նախարարներուն և գերման դեսպանին, որ խոստացած էր, թէ «ոչ մեկ հայու քիթը պիտի արնուի» մինչև հիմա բոլոր ժողովուրդը քարոզակոտոր կ'ըլլար: Տոքթ. Լեփսիուս, ինքն ալ պատմեց իր դիմումները թուրք նախարարներուն և դեսպան Վանկենհայմին մօտ և յուսահատ իր դառնալու ստիպուած ըլլալը: Փղձկաց գերման մարդասէրը՝ արցունքը աչքերուն մեջ «Աստուած օգնե ձեզի» ըսաւ և մեկնեցաւ»<sup>19</sup>:

Հետաքրքրական է, որ Յո. Լեփսիուսը մտածում էր թուրք հոգևորականների միջոցով հայերին օգնություն ցույց տալու մասին: Այդ նպատակով էլ նա լինում է Կոստանդնուպոլսի մահմեդական կենտրոններից մեկում և զրույցի բռնվում: Շեյխ Սիմեդ Էֆենդին, ճանաչելով նրան, ասում է, որ Յո. Լեփսիուսը հայ ժողովրդի ջերմ բարեկամն է: Յո. Լեփսիուսը որպես պատասխան հպարտությամբ ասում է. «Ես ավելին եմ, քան սոսկ հայերի բարեկամը: Հայ ժողովրդին եմ նվիրաբերել իմ ամբողջ կյանքն ու եռանդը»<sup>20</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին դժվարին պայմաններ ստեղծվեցին «Գերմանա-հայ ընկերության» և նրա ղեկավար Յո. Լեփսիուսի գործունեության համար: 1915 թվականի հոկտեմբերի 9-ին «Գերմանա-հայ ընկերության» ժողովում Յո. Լեփսիուսը հաղորդում է տալիս արևմտահայության ցեղասպանության և տեղահանման մասին: Զնկերության ժողովի մասնակիցները նամակ են ուղարկում Գերմանիայի Կանցլերին, որով խնդրում էին արգելակել հայության մասսայական կոտորածներն ու

<sup>18</sup> Լույն տեղում, էջ 587:

<sup>19</sup> Ջավեն արքեպս., Պատրիարքական յուշերս: Վավերագիրներ և վկայութիւններ: Գահիրե, 1947, էջ 110-111:

<sup>20</sup> Վերջել ֆ., Մուսա լեռան քառասուն օրը, Երևան, 1964, էջ 598:

տեղահանությունը: Գերմանիայի ռայխսկանցլերի դիվանագիտական պատասխանը ոչնչով չէր խանգարում հայության ցեղասպանությանը:

Չնայած ծայրագույն պայմաններին, «Գերմանա-հայ ընկերության» նախագահ Յո. Լեփսիուսը դիմում է մեծ համաքձակության, գրում և հրատարակում է 302 էջանոց գիրք՝ «Ձեկուցագիր թուրքիայում հայ ժողովրդի վիճակի մասին» (Lepsius J. Bericht über die Lage des armenischen Volkes in der Türkei. Potsdam, 1916): Ավելի ուշ վերոհիշյալ աշխատությունը հրատարակվեց «Հայ ժողովրդի մահվան օրհասը» վերնագրով (Lepsius J. Der Todesgang des armenisches Volkes. Potsdam 1919):

1918 թվականի ապրիլի 27-ին «Գերմանա-հայ ընկերություն»-ը հատուկ դիմում ուղարկեց Ռայխստագ, որում կրկին նշվում էր կայգերական Գերմանիայի կողմից հայության ցեղասպանությունը դադարեցնելու ուղղությամբ անհրաժեշտ քայլեր կատարելու վերաբերյալ: Ինչպես միշտ, այս անգամ էլ ընկերության խնդրանքը անկատար մնաց:

Հայաստանի Հանրապետության պետական արխիվներից մեկում պահպանվում են Յո. Լեփսիուսի գլխավորած «Գերմանա-հայ ընկերության» գործունեության փաստաթղթեր: Դրանք անմիջականորեն կապված են Յո. Լեփսիուսի անձնական նախաձեռնությունների, նրա հետևողական հայանպաստ աշխատանքի հետ: Այսպես, 1918 թվականի ապրիլի 27-ին Յո. Լեփսիուսի ջանքերով «Գերմանա-հայ ընկերության» անունից նամակ է ուղարկվում Գերմանիայի Ռայխստագին, որում մասնավորապես վերլուծության են ենթարկվում թուրքյան զորքերի ներխուժումը Արևելյան Հայաստանի տարածքներ, որտեղ իրագործվել են հայ խաղաղ բնակչության կոտորածներ, հայկական բնակավայրերի ավերածություններ ու թալան: Փաստաթղթում նշված է, որ ուր հայտնվում են թուրքական զորքերը, կազմակերպվում են հայկական ջարդեր: Յո. Լեփսիուսն ընկերության անունից հարց է բարձրացնում Ռայխստագի առջև, թե ինչո՞ւ Գերմանիան չի արգելում քրիստոնյա հայ ժողովրդի բնաջնջումը, չէ՞ որ նա Թուրքիայի առավել ազդեցիկ դաշնակիցն է<sup>21</sup>:

Յո. Լեփսիուսի նախաձեռնությամբ 1918 թվականին ստեղծվում է «Հայկական խնդիրը» վերնագրով մի ամբողջական փաստաթուղթ: Նրանում համակողմանիորեն շարադրված են հայկական հարցի բոլոր հիմնական կողմերը և ցույց են տրված խնդրի լուծման ուղիները:

Փաստաթղթում նշված է, որ երիտթուրքերի պարագլուխների ջանքերով տիրապետող դարձավ այն կարծիքը, որով պահանջվում էր առհասարակ ազատվել հայերից, ոչնչացնել ու արմատախիլ անել հայ տարրը<sup>22</sup>:

Այնուհետև այն միտքն է հայտնվում, որ եթե Գերմանիան հայերին չպաշտպանի բնաջնջման գործողություններից, որոնք իրականացնում են թուրքերը, ընդհանուր հասարակական կարծիքը պնդելու է, որ մի քիստոնեական

21 Հայաստանի Հանրապետության հասարակական և քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ, ֆ. 4033, ց.1. գ. 1162<sup>ա</sup>, ք. 140-141:

22 Նույն տեղում, ք. 148:

ժողովուրդը զոհվեց հօգուտ մահմեդական դաշնակցի: Գիշտ է, չի կարելի հերքել Գերմանիայի քաղաքական դժվարությունները համաշխարհային պատերազմում, սակայն անվիճելի է նաև այն իրողությունը, որ Գերմանիան ոչ միայն չօգնեց հայերին, այլև նպաստեց իր դաշնակից Թուրքիային՝ բնաջնջելու հայերին<sup>23</sup>:

Հայոց Մեծ եղեռնը Յո. Լեփսիուսի կողմից հավաստի փաստաթղթերով համակողմանիորեն լուսաբանվել է «Գերմանիան և Հայաստանը» աշխատությունում: Հայկական հարցի, հայերի ցեղասպանության վերաբերյալ դիվանագիտական և այլ փաստաթղթերի այդ մեծագույն ժողովածուն լույս աշխարհ եկավ դժվարին ու բարդ պայմաններում: Յո. Լեփսիուսի նախածեռնությամբ «Գերմանա-հայ ընկերության» ղեկավարությունը 1918 թվականի հոկտեմբերի 14-ին դիմեց Գերմանիայի արտաքին գործերի նախարարության պետական քարտուղար դոկտոր Վ. Չուֆին՝ հայկական հարցի վերաբերյալ պաշտոնական նյութեր հրատարակելու վերաբերյալ: Վ. Չուֆը համաձայնվում է Յո. Լեփսիուսի առաջարկին այն մտքով, որ այդ քայլը կնվազեցնի Գերմանիայի մեղսակցությունը հայերի ցեղասպանության մեջ: Յո. Լեփսիուսը հսկայական աշխատանք է կատարում փաստաթղթերի ուսումնասիրման, ժողովածուի մեջ տեղադրելու գործում: Հասկանալի է, որ անհնարին էր հայկական հարցի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը զետեղել մեկ ժողովածուում: Այդուհանդերձ, նա ըտրում է շուրջ 500 փաստաթուղթ, որոնց հիման վրա էլ ծնվում է «Գերմանիան և Հայաստանը 1914-1918» հայտնի գիրքը, որի գերմաներեն առաջին հրատարակությունը լույս է տեսնում 1919 թվականին Պոտսդամում, իսկ եկրորդը՝ 67 տարի անց, 1986 թվականին Բրեմենում՝ դոկտոր Թեսաս Հոֆմանի ջանքերով: Նոր հրատարակությունում Յո. Լեփսիուսի առաջաբանի կողքին տեղադրված է Թ. Հոֆմանի առաջաբանը և Մ. Ռայներ Լեփսիուսի վերջաբանը: «Գերմանիան և Հայաստանը» գրքի լույս ընծայումը Յո. Լեփսիուսից պահանջեց մեծ զոհողություններ ու զրկանքներ: Բացի դրանից, միայն Յո. Լեփսիուսի անվիճելի հեղինակության շնորհիվ հնարավոր կարող էր դառնալ այս գրքի տպագրությունը: Հեղինակի այս նշանավոր աշխատության մեջ օգտագործված են պաշտոնական, դիվանագիտական փաստաթղթեր, գերմանական հյուպատոսների, զինվորականների, միսիոներների, զանազան գործիչների և իրադարձությունների ականատեսների վկայություններ: Պաշտոնական փաստաթղթերը մերկացնում են հայերի ցեղասպանության մեղավորներին, բացահայտում ճշմարտությունը: Յո. Լեփսիուսը վերոհիշյալ գրքում համակողմանիորեն վերլուծել է հայերի տեղահանության և ցեղասպանության մասին երիտթուրքական կառավարողների ծրագրերը:

Իսկ Սալոնիկի 1911 թվականի հոկտեմբերին «Միաբանություն և առաջադիմություն» կազմակերպության որոշումը դարձավ երիտթուրքական կառավարողների քաղաքականության ու գործողությունների ծրագիր: Յո. Լեփսիուսը իրավացիորեն գրում է, որ այդ ծրագրով «քրիստոնեական «հպատակ» ազգերը, որպես «թափառական» ցեղեր, ոչ միայն հնազանդորեն

<sup>23</sup> Նույն տեղում, ք. 157:

պետք է ենթարկվեին թուրքերին, այլև անվերապահորեն պետք է կատարեին հետևյալ պայմանները. քրիստոնեական ժողովուրդների ընդհանուր զինաթափում, հայ զինվորական ծառայողների աստիճանագրվում, հայ բժիշկների հեռացում պետական հիմնարկներից ու զինվորական հոսպիտալներից, հուլածանքների կիրառում հայ մտավորականների նկատմամբ և այլն»<sup>24</sup>:

Յո. Լեփսիուսը հայերի տեղահանության և ցեղասպանության պատմությունը բաժանում է չորս հիմնական փուլի: Առաջին փուլն սկսվում է 1914 թվականի նոյեմբերի 1-ից, այսինքն Թուրքիայի՝ Առաջին համաշխարհային ատերազմի մեջ մտնելու օրվանից, և շարունակվում մինչև 1915 թվականի ապրիլի 20-ը, երբ Վանում և նրա շրջակայքում ժավավեցին ինքնապաշտպանական մարտեր: Երկրորդ փուլն սկսվում է 1915 թվականի ապրիլի 20-24-ին և շարունակվում մինչև նույն թվականի դեկտեմբեր: Այդ ընթացքում հիմնականում իրականացվում է հայերի թե՛ տեղահանությունը և թե՛ ցեղասպանությունը: Երրորդ փուլն սկսվում է 1915 թվականի դեկտեմբերին և շարունակվում մինչև 1918 թվականի հոկտեմբեր: Այդ ժամանակահատվածում իրագործվում է Արևմտյան Հայաստանում կենդանի մնացած հայերի բռնի իսլամացումը և ֆիզիկական ոչնչացումը: Չորրորդ փուլը վերաբերվում է կոլկասահայության ցեղասպանությանը, որն ընդգրկում է 1818 թվականի մարտի 3-ից, Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրից մինչև նույն թվականի սեպտեմբերի 15-17-ն ընկած ժամանակաշրջանը<sup>25</sup>:

Հատկանշական է, որ Յո. Լեփսիուսը գերմանական դիվանագիտական վավերագրի հիման վրա լուսաբանել է ոչ միայն հայերի ցեղասպանության ու տեղահանության ընթացքը, այլ նաև արևմտահայության մղած ինքնապաշտպանական մարտերը: Հատկապես հանգամանորեն է նկարագրված Վանի հերոսամարտը:

Յո. Լեփսիուսի հրապարակած փաստաթղթերում նշված է, որ գրեթե չորս շաբաթ Վանի հայերը խիզախորեն և անձնուրաց պաշտպանվում էին և դրանով էլ փրկվեցին իրենք և իրենց ընտանիքները: 1915 թվականի հուլիսի 31-ին ռուսական զորքերը անսպասելի դուրս եկան Վանից, և վանեցիները՝ նրանց հետ միասին գաղթեցին Կովկաս<sup>26</sup>:

Գրքում հետաքրքրություն է ներկայացնում Կիլիկիայի Սահակ Բ Կաթողիկոսի տեղեկագիրը Կոստանդնուպոլսի Ձավեն Պատրիարքին: Այդ փաստաթուղթը կազմվել է 1915 թվականի ապրիլի 21-ին: Հաղորդումը գերմաներեն թարգմանությամբ ուղարկված է նաև Ադանայի գերմանական հյուպատոսարան: Փաստաթղթում ականատեսների վկայությամբ ցույց են տրված Ձեթունում և Սարաշում Թուրքական իշխանությունների կատարած վայրագությունները: Նշված է, որ «հայ կամանց ու երեխաներին տանջամահ էին անում, իսկ ոմանց էլ՝ բռնության ու անարգանքի ենթարկում, նույնիսկ անդամահատում էին»<sup>27</sup>: Նկարագրելով տեղահանվածների աղետալի

<sup>24</sup> Lepsius J. Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke., Potsdam. 1916, S. XVII.

<sup>25</sup> Ibid., S. LX.

<sup>26</sup> Ibid., S. XIV-XV.



վիճակը, Կաթողիկոսը գրում է. «Աքսորյալները մերկ ու քաղցած, առանց միջոցների թափառում են կիզիչ անապատում... Սիրով կուզեի մեռնել, քանի որ մահով կարող եմ մոռանալ իմ սրտի խոր վերքերը»<sup>28</sup>:

Էրզրումի հայության տեղահանության ու կոտորածների վերաբերյալ գրքում բերված է գերմանական հյուպատոս Ֆոն Շոյբներ-Ռիխտերի զեկուցագիրը, որն ուղարկվել էր Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպանություն: Հյուպատոսը գրում է. «Չափվի առնելով իրավիճակը, որպես գերմանական կառավարության ներկայացուցիչ, իմ պարտքն եմ համարում լռության չմատնել կառավարության (թուրքական - Ա. Ա.) բիրտ գործողությունները, նրանց հարձակումները հայերի դեմ: Սակայն քանի որ մենք չենք կարող կանխել այդ գործողությունները, զուցե կարողանանք հնարավորին սահմաններում մեղմացնել դրանք: Ես նույնիսկ ոխակի եմ դիմում, որն իմ բնավորության բաղկացուցիչ մասն է, և այդ պարտականությունն իմ վրա եմ վերցնում»<sup>29</sup>:

Կիլիկիայի հայերի կոտորածների մասին Յո. Լեփսիուսը ժողովածուի մեջ մի շարք փաստեր է բերում, որոնցում կան նաև որոշակի մեղադրանքներ գերմանական դիվանագիտական ու զինվորական իշխանություններին: Օրինակ, Ուրֆայի հայերի կոտորածներից առաջ գերմանացի Բարոն Ֆոն Օպպենհայմն առաջարկում է ֆրանսիական, անգլիական և իտալական զինվորականներին՝ ականատես լինել թուրքերի կողմից կազմակերպված բարբարոսություններին:

Յոհաննես Լեփսիուսն այդ փաստը այլանդակություն է համարում գերմանացիների կողմից<sup>30</sup>:

Ուրֆայի հայության տարագրության ու կոտորածների մասին տեղեկությունները բավականին մանրամասնությամբ շարադրված են Յակոբ Կունցերի 1919 թվականի փետրվարի 20-ի (գրված է Ուրֆայում) զեկուցագրում, որը որպես հավելված իր «Deutschland und Armenien» գրքում բերում է Յո. Լեփսիուսը<sup>31</sup>:

Յո. Լեփսիուսի աչքից չեն վրիպել Ջեմալ փաշայի հանցավոր ու խորամանկ հայաջինջ գործողությունները: Բնութագրելով Ջեմալ փաշայի դերը Կիլիկիայի հայերի կոտորածների ու տեղահանության գործում, Յոհաննես Լեփսիուսը մատնանշում է, որ նա «չհակադրվեց կենտրոնական կառավարության կողմից հրամայված հայ ժողովրդի տեղահանությանը և նրա մնացած մասի բռնի իսլամացմանը»<sup>32</sup>:

Ենչտ է, կոտորածների ժամանակ հրապարակվեց Ջեմալ փաշայի հրամանը հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների գործողությունները մեղմացնելու, մասսայական սպանություններին վերջ տալու մասին,

27 Ibid., S. 53.

28 Ibid., S. 57.

29 Ibid., S. 120-121.

30 Ibid., S. 171.

31 Ibid., S. 494-500.

32 Ibid., S. XI-XII.

սակայն այն մնաց միայն թղթի վրա, որովհետև հենց ինքը՝ Ջեմալ փաշան ասում էր մի բան, ամուսն մի այլ բան: Հայերի կոտորածների մեղքը գերմանական ու թուրքական իշխանությունների վրայից վերցնելու համար գերմանական մամուլի մի շարք օրգաններ դեմագոգիկ ձևով հենվում էին Ջեմալ փաշայի վերոհիշյալ հրամանի վրա: Սակայն պետք է նկատել, որ այդ հրամանի մեջ կա մի կոնկրետ պարբերություն, որը ոչ թե կոտորածները դադարեցնելու ու արգելելու մասին է, այլ դրանք թուրքական իշխանությունների համար շահավետ ձևով կազմակերպելու մասին:

Ջեմալ փաշայի հայատյաց ու հայաջինջ քաղաքականությունն ու գործողությունները շարունակվեցին նաև հետագայում: 1919 թվականի հոտեմբերի 5-ին գերմանական «Frankfurter Zeitung» թերթում հրապարակվում է «Zur Frage der greuel in Armenien» վերնագրով հոդվածը, որի հեղինակը Ջեմալ փաշան էր: Այդ հոդվածում նա պնդում է, թե ինքը հայերի դեմ երբեք թույլ չի տվել անկարգություններ ու խժոժություններ: Նա հիշեցնում է մի շարք դեպքեր, երբ ինքը պաշտպանել է տեղահանվածներին: Դա, իհարկե, կեղծիք է: Այդ կեղծ հոդվածի դեմ հանդես եկավ Յո. Լեփսիուսի գլխավորած «Գերմանահայ ընկերության» գործիչ Էվալդ Շտիրը, որն իր «Liman und Djemal» վերնագրով հոդվածում հերքում է Ջեմալ փաշայի հիշյալ կեղծիքը: Հեղինակն իր հոդվածն ուզում է հրապարակել «Frankfurter Zeitung»-ում, սակայն թերթը հրաժարվում է տպագրել հոդվածը: Այդ ժամանակ Էվալդ Շտիրը ստիպված իր հոդվածը հրապարակում է «Գերմանահայ ընկերության» թերթի մեջ<sup>33</sup>, որտեղ նա բացահայտում է Ջեմալ փաշայի այն խորամանկությունը, որով նա իբր նպաստում էր որբանոցների կազմակերպմանը: Ըէ՛ որ այդ որբանոցների միջոցով կենդանի մնացած հայերը մահմեդականացվում էին: Այնուհետև, երբ հայերն աշխատում էին Բաղդադի երկաթուղու վրա, Ջեմալ փաշան հանդես էր գալիս նրանց պաշտպանի դերում, իսկ երկաթուղու շինարարությունն ավարտելուց հետո ամբողջ հայությունը կոտորվեց: Այդ ժամանակ արդեն Ջեմալը չպաշտպանեց հայերին: Ուրեմն նա սկզբից պաշտպանում էր հայերին ոչ թե նրա համար, որ նրանք ապրեին, այլ այն բանի համար, որպեսզի նրանք աշխատեին Բաղդադի երկաթուղու շինարարությունում:

Այս աշխատությունում բերված փաստաթղթերի հիման վրա էլ «Գերմանիան և Հայաստանը» գրքի առաջաբանում Յո. Լեփսիուսը գրում է. «Սև ծովից մինչև Սիրիա քրիստոնյաները (հայերը - Ս. Ս.) բնաջնջված են, եկեղեցիները փակ են, դպրոցները դատարկ են, հոգևորականներն ու ուսուցիչները սպանված կամ աքսորված են... Ամբողջ Անատոլիան խլամացված (թուրքացված - Ս. Ս.) է: Օրացույցներում ջնջված են քրիստոնեական անվանումները և փոխարինված են մահմեդականներով»<sup>34</sup>:

Այդ ամենը քաջ հայտնի էր գերմանական կառավարությանը և գերմանական դիվանագետներին, սակայն նրանք սկզբից նեթ հանդիսացան

<sup>33</sup> «Deutsch-Armenische Korrespondenz», herausgegeben von der Deutsch-Armenischen Gesellschaft (Berlin), Nr. 12, 1. Februar, 1920. S. 2-5.

<sup>34</sup> Lepsius J. Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke., Potsdam. 1919. S. XXXVII.

ոճրագործության մեղսակիցներ: Դա ապացուցված է Յո. Լեփսիուսի գրքում բերված մի շարք փաստաթղթերով: Հայերի տեղահանության և սարսափելի կոտորածների ժամանակ թուրքիայում գերմանական դեսպան Վանգենհայմը կայզերական արտաքին գործերի նախարարությանն ուղարկած հեռագրում (1915 թվականի մայիսի 31-ին) նշում է. «Հայ լրտեսության առջև թունր կանգնելու և նորանոր զանգվածային ապստամբությունները կանխելու համար, ենվեր փաշան մտադիր է օգտվել պատերազմական (բացառիկ) վիճակից և փակել մեծ թվով հայկական դպրոցներ, արգելել հայերեն նամակագրությունը, արգելել հայկական թերթերի հրատարակությունը և այժմ հայերի ապստամբության կենտրոններից քստորել ամեն կասկածելի ընտանիք և արտաքսել դեպի Միջագետք: Նա թախանձագին խնդրում է (խոսքը ենվերի մասին է - Ս. Ս.), որպեսզի մենք նրան խոչընդոտներ չհարուցենք»<sup>35</sup>:

Գրելով այս ամենը, հասկանալի էր, որ դեսպանը չէր կարող նկատի չունենալ այն հանգամանքը, թե համաշխարհային հասարակական կարծիքը կդատապարտեր նաև Գերմանիային՝ թուրքիայի ավագ դաշնակցին: Ելնելով այդ հանգամանքից, դեսպանն իր հեռագրում նշում է. «Այս միջոցներն անշուշտ մեծ խստություն են հայ ժողովրդի նկատմամբ: Սակայն, իմ կարծիքով, մենք դրանք ըստ ամենայնի, անշուշտ, մեղմացնելու ենք, բայց սկզբունքորեն չենք արգելելու: Ռուսաստանի կողմից հրահրված հայկական գրգռությունները (Wohlarbeit) այնպիսի չափերի են հասել, որ սպառնում են թուրքիայի գոյությանը»<sup>36</sup>: Այս տողերի հեղինակն, իհարկե, լավ գիտեր, որ հայ տղամարդիկ հիմնականում թուրքական բանակում էին, իսկ քաղաքներում և գյուղերում մնացել էին միայն ծերերը, կանայք և երեխաները: Սակայն գիտակ լինելով այս ամենին, դեսպանը գրում է. «Կխնդրեմ դուրսը Լեփսիուսին և գերմանահայ կոմիտեին տեղեկություն տրվի, որ, ի նկատի ունենալով թուրքիայի քաղաքական և ռազմական վիճակը, դժբախտաբար, ամխուսափելի են հիշյալ միջոցները»<sup>37</sup>: Իր հեռագրի վերջում Վանգենհայմը հաղորդում է, որ վերոհիշյալի մասին գաղտնորեն տեղեկացրել է Էրզրումի, Ադանայի, Հալեպի, Մոսուլի, Բաղդադի հյուպատոսարաններին<sup>38</sup>: Դրանով չբավարարվեց Հ. Վանգենհայմը: Նա հասավ այն բանին, որ 1915 թվականի հուլիսի 4-ին գերմանական կառավարության անունից Կոստանդնուպոլսի կայզերական դեսպանության կողմից արվեց հետևյալ հայտարարությունը. «Արևելյան Անատոլիայի նահանգների հայ ժողովրդի դեմ թուրքական կառավարության վճռած ճնշիչ միջոցառումները թելադրված լինելով ռազմական պատճառներով և օրինական պաշտպանական միջոց հանդիսանալով, գերմանական կառավարությունը հեռու է դրանց գործադրումը հակադրվելուց, քանի որ այդ կարգադրությունը նպատակ ունի ամրապնդելու թուրքիայի ներքին դրությունը և կանխելու զանազան ապստամբությունների

35 Ibid. S 79.

36 Ibid.

37 Ibid.

38 Ibid.

փորձերը: Այս կապակցությամբ գերմանական կառավարության տեսակետները լիովին համընկնում են այն մեկնաբանություններին, որոնք արվել են Բարձր Դռան կողմից...»<sup>39</sup>:

Իրենց ձեռքի տակ ունենալով նման փաստաթուղթ, թուրքական իշխանությունները ոչ մի նշանակություն չէին տալիս Գերմանիայի այս կամ այն աստիճանավորի որևէ բողոքին: Ընդհակառակը, թուրքական կառավարող շրջաններում և մամուլի օրգաններում պրոպագանդվում էր այն միտքը, որ գերմանացիները ոչ միայն համաձայն են հայկական կոտորածներին, այլև պաշտպանում են դրանք: Անհանգստացած դրանից, կայզերական Գերմանիայի կառավարողներից մեկը՝ Յոհան Լիեբե, 1915 թվականի օգոստոսի 11-ին հատուկ հեռագիր է ուղարկում Կոստանդնուպոլսի դեսպանությանը, Տրապիզոնի, Էրզրումի, Ադանայի, Դալեպի, Մոսուլի հյուպատոսություններին, որի մեջ պարզ նշում է, իրեն հասած տեղեկությունների համաձայն, թուրքական սպաները և զանազան անձիք տարբեր առիթներով պնդում են, թե իբր «մենք մեղավոր ենք այդ հանցանքի մեջ»<sup>40</sup>:

Իր աշխատություններում, հենվելով թուրքիայում գերմանական հյուպատոսների տեղեկագրերի վրա, որոնք թուրքական ոճրագործ քաղաքականության պերճախոս վկաններն են, Յո. Լեփսիուսը ցույց է տալիս, որ ոճրագործի ձեռքերը կասեցնող չի եղել, և որ գերմանական կառավարությունը ոչ մի ազդեցիկ միջոցի չի դիմել՝ հայերի ջարդերը դադարեցնելու համար: Գերմանական իշխանություններն աշխատել են իրենց գործողություններն արդարացնել «պատերազմական պատճառներով», իսկ տեղի ունեցած ոճրագործություններն էլ պատկերել են մենագափոխելով կամ ուղղակի սքողելով:

Յոհաննես Լեփսիուսը մատնանշում է, որ երբ սկսվել էր հայերի տեղահանությունն ու կոտորածը, գերմանական դեսպանությունը չէր ցանկանում այդ ամենին արգելք հանդիսանալ: Յո. Լեփսիուսն այդ բանը բացատրում է նրանով, որ գերմանական դեսպանությունը գործում էր թուրքական կառավարության ազդեցության տակ, «հավատում էր նրա հորինած ամեն տեսակի ստին» և ինքն էլ իր հերթին թուրքական դաժանությունները «ներկայացնում էր որպես արդարացի միջոցառումներ»<sup>41</sup>:

Թըքամուլ Դ. Վանգենհայմը 1915 թվականի հունիսի 17-ին ռայխսկանցյելը Բեթման Յուլվեգին գրած իր նամակում մեջբերում է ներքին գործերի նախարար Թալեաթի այն խոսքերը, որ «Բարձր Դուռը ցանկացել էր օգտվել համաշխարհային պատերազմից, որպեսզի առանց արտասահմանյան դիվանագիտության միջամտության վերջնականապես հաշվեհարդար տեսնի իր ներքին թշնամիների (տեղական քրիստոնյաների) հետ»<sup>42</sup>:

Թալեաթ բեյն այդ բանը հայտարարել էր կայզերական դեսպանությանն առընթեր հավատարմագրված ղոկտոր Մորդանին: Դրանից մի քանի օր անց

<sup>39</sup> Ibid., S. 96-97.

<sup>40</sup> Ibid., S. 125.

<sup>41</sup> Ibid. S. XVI und XXI.

<sup>42</sup> Ibid. S. 84.

հայ Պատրիարքը դեսպանության վերոհիշյալ աշխատակցին հաղորդել էր, որ Ղոան քայլերը նպատակ ունեն թուրքիայից հայ բնակչության շուտափույթ տեղահանմանը, առավել ևս՝ նրա ոչնչացմանը և ոչ թե ժամանակավոր վնասագերծմանը: «Տեղահանությունը նույնպես ծանր է, ինչպես և զանգվածային ոչնչացումը, և զարմանալի չի լինի, եթե հայերը վերջ ի վերջո, նույնիսկ առանց հաջողության հույսի, կսկսեն դիմադրել»<sup>43</sup>:

Տեղյակ լինելով թուրքական կառավարության հակահայկական ծրագրերին ու գործողություններին, 1915 թվականի հուլիսի 7-ին Գ. Վանգենհայմը կանցլեր Բեթման Գոլվեգին հայտնում է, որ թուրքական «կառավարությունը իրականում խնդիր է դրել թուրքական կայսրությունում ոչնչացնել ամբողջ հայ ազգը»<sup>44</sup>: Դեսպանը հաղորդում է, որ «դեռևս 14 օր առաջ հայկական բնակչության արտաքսումն ու տեղահանությունը սահմանափակվում էին մոտավորապես պատերազմական գործողությունների արևելյան թատերաբեմի մերձակա նահանգներով, ինչպես նաև Ադանայի նահանգի մի քանի շրջաններով: Դրանից հետո Ղուռը որոշում ընդունեց այդ գործողությունները տանրածել Տրապիզոնի, Մամուրես ուլ-Ազիզի և Սերաստիայի նահանգների վրա և ձեռնամուխ եղավ իրագործելու վերոհիշյալը, չնայած այն բանին, որ երկրի այդ մասերը որևէ թշնամական ներխուժման սպառնալիքի տակ չեն գտնվում»<sup>45</sup>:

Այդուհանդերձ, Գ. Վանգենհայմը հավատարիմ է մնում իր դիրքորոշմանը և հայերի տեղահանությունն ու կոտորածները ներկայացնում որպես «նախազգուշական լայն միջոցառումներ հայկական շարժման ծավալման նկատմամբ»<sup>46</sup>: Վանգենհայմը նույնը պնդում էր իր հաջորդ հաղորդման մեջ<sup>47</sup>: Ավելին, հայկական կոտորածների ժամանակ, որպես էրզրումի հյուպատոսի վկայությունների պատասխան, հրահանգ է ուղարկում, որպեսզի հյուպատոսները խուսափեն հայերին պաշտպանելու որևէ գործողություններից<sup>48</sup>: Դրա հետ միաժամանակ, կայզերական Գերմանիայի պաշտոնական շրջանները գործադրում էին բոլոր միջոցները, որպեսզի Գերմանիայի, ամբողջ աշխարհի հասարակայնությանը չներկայացվեին թուրքական ոճրագործությունները և արևմտահայության ողբերգական իրադարձությունների մասին իրողությունները:

Յոհաննես Լեփսիուսը մատմանշում է, որ Արևմտյան Հայաստանի և ընդհանրապես հայերի մասին ճշմարիտ տեղեկություններ հրապարակելը գերմանական գրաքննության կողմից արգելված էր<sup>49</sup>:

Յո. Լեփսիուսի գրքում ցույց է տրված, որ Գերմանիայում քիչ բան չտպագրվեց հայերի տեղահանության ու կոտորածների մասին, սակայն կառա-

43 Ibid., S. 84.

44 Ibid., S. 94.

45 Ibid.

46 Ibid., S. 63.

47 Ibid.

48 Ibid., S. 58.

49 Lepsius J. Mitteilungen aus der Arbeit 1917-1918. Potsdam, 1919, S. 119-120.

վարող շրջանները ջանքեր չէին խնայում հերքելու կամ մեղմացնելու այն բարձրարժույթի ունեցող, որոնք կատարվում էին Արևմտյան Հայաստանում:

Յո. Լեփսիուսը և շատ բարի կամք ցուցաբերած գործիչներ գերմանական դեսպանության միջոցով առաջարկում էին կայզերական Գերմանիայի կառավարիչներին, որպեսզի նրանք օգնեն հայերի ցեղասպանությունը դադարեցնելուն: Այդ նպատակով, օրինակ, առաջարկվում էր դեսպան Վանգենհայմին, որ նա հյուպատոսություններ հաստատեր Վանում, Բաղշում և այլ տեղերում, որոնք իրենց վրա կվերցնեին հայերի պաշտպանության գործը: Դեսպան Վանգենհայմը ոչ միայն մերժում էր այդ առաջարկները, այլև իր դիվանագետներից մեկի՝ Շվարցի միջոցով կանցելեին հայտարարում էր, որ թուրքիան այն իր ներքին գործերին միջամտություն կհամարի, և դա այն դեպքում, երբ թուրքական բնակչության մոտ աննպաստ տրամադրություն էր ստեղծվել հայերի նկատմամբ<sup>50</sup>:

Թուրքիայում գերմանական դեսպանների մեջ յուրահատուկ տեղ է գրավում կոմս Վոլֆ Մետերնիխը, որը բավականին բարյացակամ էր տրամադրված հայության հանդեպ և անձամբ դեմ էր հայկական կոտորածների քաղաքականությանը: 1915 թվականի դեկտեմբերի 7-ին, ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին Մետերնիխն անկեղծորեն գրում է. «Բողոքներն օգուտ չունեն, և թուրքական այն ժխտումները, թե իբր նոր տեղահանություն տեղի չի ունենա, անիմաստ են...: Եթե կանխվեն, ապա դրա համար անհրաժեշտ են խստագույն միջոցներ»<sup>51</sup>:

Վոլֆ Մետերնիխը թուրքիայում որպես գերմանական դեսպան աշխատեց 1915 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 1916 թվականի հոկտեմբերի 3-ը: Դեսպանի պաշտոնում իր գործունեության ընթացքում Վոլֆ Մետերնիխը համառորեն բողոքներ էր ներկայացնում թուրքական իշխանություններին՝ հայկական կոտորածները դադարեցնելու համար: Նա պահանջում էր, որ չվերացվեն հայկական որբանոցները, հայ աղջիկները չտարվեն հարեմներ, իսկ հայ տղաները բռնի չտեղավորվեն թուրքական որբանոցներում և չհալամացվեն<sup>52</sup>: Ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին ուղղած նամակում Վոլֆ Մետերնիխը խնդիր էր դնում «մամուլի մեջ հայերի դեմ հալածանքների մասին դժգոհություն արտահայտել»<sup>53</sup>:

Արժե հիշել գերմանական մեկ ուրիշ դեսպանի՝ Բերնշտորֆի գրությունը արտաքին գործերի նախարարությանը: 1918 թվականի օգոստոսի 25-ին դեսպանը գրում է, որ «եթե Հայաստանի կառավարության և բարձրագույն հոգևորականության օգնության հուսահատական կոչերն անլսելի մնան, ապա այդ հին քրիստոնյա ժողովրդի բնաջնջման պատասխանատվությունը ընդմիշտ պետք է ծանրանա Գերմանիայի և Ավստրիայի վրա: Պատմությունը չպետք է և չի կարող ընդունել, թե միջին Եվրոպայի այս երկու մեծ քրիստոնյա

50 Lepsius J. Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke., Potsdam. 1919, S. 48, 26.

51 Ibid. S. 202.

52 Ibid.

53 Ibid.

տերությունները անկարող էին, զոհե այստեղ, որտեղ դրված էր մի ամբողջ ժողովրդի լինելու կամ չլինելու հարցը, իրենց կամքը պարտագրելու իրենց ասիական դաշնակցին»<sup>54</sup>:

Արդարամտությամբ ու մարդասիրությամբ հայտնի էր էրզրումում կայգերական Գերմանիայի հյուպատոս Շոյբեր-Ուիլտերը: 1915 թվականի հունիսի 2-ին Կոստանդնուպոլսում գերմանական դեսպանությանն ուղղված հեռագրում նա պարզ հայտնում էր, որ Արևմտյան Հայաստանից հայերի «այդ մեծածավալ տեղահանությունը հավասազոր է զանգվածային սպանության»<sup>55</sup>: Նա մատնանշում էր, որ «հայերի տեղահանման վերաբերյալ գլխավոր հրամանատարի հետ իր բանակցությունները դրական արդյունքի չհանգեցին: Հայկական բնակչությունը թուրք հարթավայրերից, հավանական է և էրզրումից, պետք է արտաքսվի Դեր էլ Ձորի կողմը... Ռազմական բնույթի պատճառաբանությունները չեն կարող հիմնավորել այդ գործողությունները, որովհետև տեղական հայության ապստամբության հնարավորությունը բացառված է, քանի որ տարագրյալները ծերունիներ, կանայք ու երեխաներ են: Հայերը, որոնք իսլամություն են ընդունում, չեն արտաքսվում: Իմ տեսած հայերի թողած գյուղերը քարուքանդ են արվել, ավերվել է նաև Կիզիլ վանքը, եկեղեցին ամայացվել է»<sup>56</sup>:

Գերմանական դիվանագետների մեջ իր օբյեկտիվությամբ ու մարդասիրությամբ ուրույն տեղ է գրավում Հալեպի հյուպատոս Ռուլերը:

Վերլուծելով արևմտահայության տեղահանության ու բնաջնջման հարցերը, Վոլֆ Մետերնիխը միանգամայն ճիշտ էր նշում, որ հայկական կոտորածները կարելի էր սկզբում կանխել և ապա դադարեցնել թուրքիայի նկատմամբ ոչ սովորական, այլ արտակարգ իրավունքներ ունեցող կայգերական Գերմանիայի կողմից, բայց կոնկրետ ու կտրուկ միջոցներով և ոչ թե դիվանագիտական նամակներով:

Հայոց Մեծ եղեռնը հանգամանորեն լուսաբանվել է Բեռլինյան հայտնի դատավարության ժամանակ Յո. Լեփսիուսի պատմական ելույթում:

1921 թվականի հունիսի 2-3-ը Բեռլինի օկրուգային դատարանում տեղի ունեցավ Թալեաթ փաշայի սպանության համար ամբաստանված ուսանող Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը: Այդ դատավարության նիստում հանդես եկավ նաև 62 տարեկան դոկտոր, ավետարանական իրավասու գրող Յոհաննես Լեփսիուսը: Նա իր ելույթում անարգանքի սյունին գամեց հայ ժողովրդի դահիճներ Թալեաթին, Էմվերին և մյուսներին, պաշտպանեց հայության արժանապատվությունը: Դատարանի առջև նա հայտարարեց, որ հայերի՝ «ընդհանուր տեղահանությունը որոշեց երիտթուրքական կոմիտեն՝ հանձինս Թալեաթ փաշայի, որպես ներքին գործերի նախարարի, և Էմվեր փաշայի, որպես ռազմական նախարարի: Այն իրագործվեց երիտթուրքական կազմակերպության միջոցով: Տեղահանությունը, ընդհանուր աքսորը, որն արդեն որոշված էր 1915 թվականի ապրիլին, վերաբերում էր իր պատմական

<sup>54</sup> Ibid. S. 431.

<sup>55</sup> Lepsius J. Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke. Potsdam. 1919, S. 80.

<sup>56</sup> Ibid.

հայրենիքում ապրող ամբողջ հայ ժողովրդին: Թուրքիայի բնակչության մեջ պատերազմից առաջ հաշվվում էր 1.850.000 հայ<sup>57</sup>: Իհարկե, Թուրքիայի սման երկրում բացարժակ ստույգ մարդահամար չկար: Վերոհիշյալ թիվը բերվում է վիճակագրական տվյալներից, որը համաձայնեցված է հայ պատրիարքարանի մարդահամարների հետ: Պատերազմից առաջ հայ բնակչությունը սփռված էր եվրոպական Թուրքիայում (Կոստանդնուպոլիս, Ադրիանապոլիս, Ռոդոսթո) և ասիական Թուրքիայում (Անատոլիա, Կիլիկիա, Յուսիսային Ասորեստան, Միջագետք): Չայերի մեծ մասն ապրում էր Արևմտյան Անատոլիայում, Չայկա-կան լեռնաշխարհում, այդ ժողովրդի հինավուրց հայրենիքում, էրզրումի, Վանի, Բիթլիսի, Ղիարբեքրի, Սեբաստիայի, Խարբեբդի վիլայեթներում (մահանգներում): Արևմտյան Անատոլիայում բնակչության հիմնական զանգվածը կենտրոնացված էր Կոստանդնուպոլսում, Մարմարայի հարավային ծովեզերքին: Չարավային Անատոլիայում է Կիլիկիան՝ Տավրոսի տափաստանով, Ալեքսանդրետի ծովածոցի մոտ գտնվող հյուսիսային սիրիական մարզերով, որոնք հին հայկական հայրենիքի մի մասն են կազմում: Անատոլիայի ամբողջ հայ բնակչությունը բարձրագույն հրամանատարության հրամանով տեղահանվեց դեպի Միջագետքի անապատի հյուսիսային ու արևելյան եզրը՝ Տեր-Ձոր, Ռակկա, Մեսքենե, Ռաս-էլ-Աին, մինչև Մոսուլ: Յո. Լեփսիուսի տվյալներով տեղահանվեց մոտ 1.400.000 հայ:

Ի՞նչ էր ճշանակում այս տեղահանությունը: Յո. Լեփսիուսը հետևյալ պարզ ու հստակ պատասխանն է տալիս. «Թալեթի ստորագրած մի հրամանի մեջ կա հետևյալ արտահայտությունը. «տեղահանությունը՝ ոչնչացում է»<sup>58</sup>: Ամեն ինչ տեղի ունեցավ այդ հրամանագրի համաձայն, որովհետև Արևելյան Անատոլիայի վիլայեթներից դեպի հարավ տեղահանված բնակչության միայն 10 տոկոսը աքսորավար հասավ, մնացած 90 տոկոսը սպանվեց ճանապարհին: Բացի ոստիկանների կողմից վաճառված և քրդերի կողմից առևանգված կանանցից ու աղջիկներից, մնացածը սովահարությունից ու ուժասպառությունից մահացան: Այն հայերը, որոնք Արևմտյան Անատոլիայից, Կիլիկիայից ու Յուսիսային Աիրիայից քշվեցին անապատ, հավաքվեցին համակենտրոնացման ճամբարներում և ոչնչացվեցին սովից կամ պարբերական ջարդերից: Յո. Լեփսիուսը ցույց է տվել, որ երբ համակենտրոնացման ճամբարները մարդկանց նոր խմբերով էին լցվում, ոստիկանները նրանց հոծ զանգվածներով անապատ էին տանում և այնտեղ էլ մորթում: Նա մեջբերում է կատարում թուրքերի հայտարարություններից, որ նրանք համակենտրոնացման ճամբարների գաղափարին հանգել էին անգլիացիների օրինակով, որոնք նույն ձևով էին վարվում բուրերի հետ Չարավային Աֆրիկայում:

57 Der Prozeß Talaat Pascha. Stenographischer Bericht über die Verhandlung gegen den des Mordes an Talaat Pascha angeklagten armenischen Studenten Saloman Teilinian vor dem Schwurgericht des Landgerichts III zu Berlin, Aktenzeichen: C. J. 22/21, am 2. und 3. Juni 1921. Mit einem Vorwort von Armin T. Wegner und elmen Anhang. Berlin, 1921, S. 56.

58 Der Prozeß Talaat Pascha. Stenographischer Bericht über die Verhandlung gegen den des Mordes an Talaat Pascha angeklagten armenischen Studenten Saloman Teilinian vor dem Schwurgericht des Landgerichts III zu Berlin, Aktenzeichen: C. J. 22/21, am 2. und 3. Juni 1921. Mit einem Vorwort von Armin T. Wegner und elmen Anhang. Berlin, 1921, S. 56-57.



Պաշտոնապես հայտարարվում էր, որ տեղահանությունները միայն նախագ-  
գուշական միջոցառումներ են, սակայն թուրք պաշտոնյաները բացահայտորեն  
խոստովանում էին, որ տեղահանության նպատակը հայ ժողովրդի ոչնչացումն  
է: Այնուհետև Յո. Լեփսիուսը հայտարարում է, «Ինչ որ ես ծեղ ասում եմ, բխում  
է նաև կայգերական Պերմանիայի դեսպանության, արտաքին գործերի  
նախարարության այն փաստաթղթերից, որոնք ես հրատարակել եմ: Դա  
հատկապես ակնհայտ է գերմանական հյուպատոսների և Կոստանդնու-  
պոլսում գերմանական դեսպանների գեկուցագրերից...

Բնականորեն հարց է ծագում. ինչպե՞ս հնարավոր դարձավ, որ այդպիսի  
կարծ ժամանակում մեկ միլիոն մարդ ոչնչացվեց: Դա հնարավոր դարձավ այն  
վայրագ մեթոդների իրագործմամբ, որ ապացուցվեց նաև Կոստանդնու-  
պոլսում տեղի ունեցած Թալեաթ փաշայի և նրա գործակիցների դատավա-  
րության ժամանակ ազմական դատարանի բացահայտած նյութերով»<sup>59</sup>:

Թուրքական գինվորական դատարանի կազմի մեջ մտնում էին հայերի  
ցեղասպանության ականատես զորահրամանատարներ, որոնք լավ գիտակ  
էին պատերազմական գործերին: Ռազմական դատարանի 1919 թվականի  
հուլիսի 5-ին կայացած վճռով հայերի տեղահանության ու ցեղասպանության  
բոլոր գլխավոր հեղինակները՝ Թալեաթը, Էնվերը, Ջեմալը և դոկտոր Նազիմը,  
դատապարտվեցին զնդակահարության:

Այնուհետև Յո. Լեփսիուսը հայտարարեց, որ «Հայերի ոչնչացման մասին  
հրամանի կատարումը ապահովվեց նրանով, որ Կոստանդնուպոլսից այն  
հանձնարարվեց վալիներին (կուսակալներին - Ս. Ս.), մութեսարիֆներին  
(նահանգապետներին - Ս. Ս.) և գայմագամներին (քաղաքագլուխներին - Ս. Ս.),  
այսինքն՝ թուրքական տեղական իշխանությունների ղեկավարներին ու  
զանազան պաշտոնյաներին:

Իր ելույթում Յո. Լեփսիուսը հանգամանորեն վերլուծել է մեծ տերու-  
թյունների դիրքորոշումները հայկական հարցում: Այս կապակցությամբ էլ  
հարկ է նշել, որ Յո. Լեփսիուսը միշտ չէ, որ արդարացի է Ռուսաստանի  
քաղաքականության ու գործողությունների նկատմամբ: Նրա գնահատում-  
ներում որոշակիորեն թերազմահատվում են Ռուսաստանի դրական դերը  
հայկական հարցում և նրա հայանպաստ քաղաքականությունն ու քայլերը:  
Դրա հետ միաժամանակ, ըստ երևույթին ստիպված, նա որոշ չափով մեղմաց-  
նում է կայգերական Պերմանիայի կառավարողների և առանձին գործիչների  
մեղսակցությունը հայերի ցեղասպանությանն ու տեղահանությանը:

Միաժամանակ Յո. Լեփսիուսը նշել է, որ ռուսական առաջխաղացումը  
250.000 հայի կյանք փրկեց<sup>60</sup>: Փրկված հայությունը ապաստան գտավ  
Կովկասում:

Որպես հայկական հարցի փայլուն գիտակ, Յո. Լեփսիուսը Բեռլինի

<sup>59</sup> Der Prozeß Talaat Pascha. Stenographischer Bericht über die Verhandlung gegen den des  
Mordes an Talaat Pascha angeklagten armenischen Studenten Solomon Teilinan vor dem  
Schwurgericht des Landgerichts III zu Berlin, Aktenzeichen: C. J. 22/21, am 2. und 3. Juni  
1921. Mit einem Vorwort von Armin T. Vegner und einem Anhang. Berlin, 1921, S. 57.

<sup>60</sup> Թալեաթ փաշայի դատավարության սղագրության հայերեն թարգմանության մեջ նշվում է  
350.000, իսկ գերմաներեն հրատարակություն՝ 250.000 (հայերեն հրատարակություն,

դատարանում համակողմանիորեն բնութագրել է այդ խնդիրը: Այդ կապակցությամբ նա ասել է. «Ավամայից մարդն ինքն իրեն հարցնում է. ինչպե՞ս հնարավոր եղան պատմության մեջ կատարված ողբերգական այդպիսի դեպքերը: Ես ուզում եմ փորձել պատասխանել հակիրճ:

Հայկական հարցը ինքնածին տունկ չէ, այլ եվրոպական դիվանագիտության պտուղն է... Դիվանագիտական շախմատային խաղի մեջ հայը կատարում էր գինձորի դեր, որին երբեմն առաջ էին մղում կամ զոհաբերում: Մարդասիրական ու «քրիստոնյաների հովանավորության» մասին խոստումները պատրվակներ էին միայն»<sup>61</sup>:

Յո. Լեփսիուսը ցույց է տվել, որ հայերի բնաջնջումը հրամայված էր երիտթուրքերի կոմիտեի գլխավոր դեմք հանդիսացող և նրա ամենաազդեցիկ գործչի՝ Թալեաթի կողմից, և հասկանալի է, որ նա ոչինչ չէր ձեռնարկի այն արգելելու համար: Այդ ամենը լիովին հաստատվում է գերմանական ու թուրքական փաստաթղթերով:

Յո. Լեփսիուսն այն հետևությանն է հանգում, որ մեծ տերությունների դիվանագիտական խարդավանքների հետևանքով նախ Արդուլ Համիդը, ապա երիտթուրքերը հայերի նկատմամբ այնպես կասկածամիտ դարձան և այնպիսի եզրակացության եկան, որ հայերի հետ այլ կերպ չէին կարող վարվել, քան նրանց ոչնչացնել: Հայերի բնաջնջումը բազմազան ձևեր ընդունեց, որոնց մասին դատարանում պատմեցին ականատեսները:

Դատարանում պատասխանելով Ս. Թեխլերյանի դատապաշտպաններ Վերթհաուերի և Նիմայերի հարցերին, Յո. Լեփսիուսը մատնանշել է, որ թուրքական կառավարողները վախ ունեին, թե Հայաստանն անկախ կդառնա և դրանով ասիական թուրքիայի գոյությունը սպառնալիքի տակ կդրվի: Եւ անվիճելի փաստերով հաստատել է, որ երիտթուրքերը վաղուց ծրագրել էին ոչնչացնել այն, ինչ թուրքական չէ կամ ասենք՝ հայկական է<sup>62</sup>:

Յո. Լեփսիուսը շուրջ 30 տարի հետևողականորեն զբաղվեց հայկական հարցով, հայերի ցեղասպանության դատապարտման խնդիրներով, հաստատակամորեն զորավիճ կանգնեց բազմաչարչար արևմտահայությանը, մինչև վերջ մնաց հայ ժողովրդի ջերմեռանդ ու անշահախնդիր պաշտպանը: Եւ հաստատուն կերպով մտել է հայ ժողովրդի պատմության մեջ որպես մի պայծառ անուն:

Սողոմոն Թեխլերյանի դատավարությունը (սղագրություն), Երևան, «Արևագուն», 1990 թ., էջ 103):

<sup>61</sup> Der Prozess Talaat Pascha. Stenographischer Bericht über die Verhandlung gegen den des Mordes an Talaat Pascha angeklagten armenischen Studenten Solomon Teilinan vor dem Schwurgericht des Landgerichts III zu Berlin, Aktenzeichen: C. J. 22/21, am 2. und 3. Juni 1921. Mit einem Vorwort von Armin T. Wegner und elmen Anhang. Berlin, 1921, S. 59.

<sup>62</sup> Ibid., S. 61.

## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

### ԱՊՐԻԼԻ 23-Ը՝ ՆԱՀԱՏԱԿ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՈԳԵՎՈՉՄԱՆ ՕՐ

Վերջին տարիներին գեղեցիկ ավանդույթ է ստեղծվել Արարատյան Հայրապետական թեմում. ապրիլի 23-ին, ի հիշատակ Մեծ եղեռնի նահատակ հոգևորականների, Քաղաքային պանթեոնում, Կոմիտաս Վարդապետի շիրմի առջև, հոգեհանգստյան հանդիսավոր արարողություն է կատարվում: Այս անգամ, Արարատյան Հայրապետական թեմի Առաջնորդական փոխանորդի օգնական Տ. Թորգոմ Արեղա Տոնիկյանի գլխավորությամբ, հոգեհանգստյան արարողությանը մասնակցում էին թեմի բոլոր հոգևորականները, բազում հավատացյալներ, թեմի «Մանկունք» արական երգչախումբը: Մասնակիցները ծաղկեպսակ զետեղեցին Կոմիտաս Վարդապետի արձանին և ծաղիկներ՝ պանթեոնում հանգչող հայ մեծերի հուշաքարերին:

Պահ էր աղոթքի, պահ էր հաղորդակցության Աստծո հետ, մեր անցյալի հետ, նահատակ հոգևորականների հաղթական ոգու հետ: Արարողության ավարտին Հայր Սուրբն իր մտածումները կիսեց ներկաների հետ. «Հոգևորականներին չենք օգնում զատել անապատներում ու արևոթի ճանապարհներին գոնված մեր քաղմահազար նահատակներից, սակայն այսօր մենք այստեղ ենք՝ առավելաբար մեր հարգանքը, խոնարհությունն ու հավատարմությունը քերելու հայ մտքի ավագանուն ու Մեծ եղեռնին զոհ գնացած շուրջ չորս հազար հոգևորականներին: Այս պահը մեզ՝ հոգևորականներին համար հատկապես հոգեհանգստան արժեք ունի, Աստծու ու մեր Եկեղեցու հետ կնքած սրբազան ուխտի նորոգման արժեք: Մենք սգում ենք նրանց, խնկարկում նրանց հիշատակը, միաժամանակ հպարտանում նրանցով: Հպարտանում ենք, որ ժառանգորդներն ենք Կոմիտաս Վարդապետի, Արմաշական սերնդի փայլուն ներկայացուցիչներ Խոսրով եպիսկոպոսի, Պսակ վարդապետի, Մկրտիչ վարդապետի և բազում այլոց, որոնք նոր Գողգոթայի ճանապարհով քայլում էին լուսաշող այն հավատով, որ հայոց երկնակամարում հավիտյան անմար շողալու է Լուսավորչի կանթեղը ...»:

Պարտավորեցնող է Կոմիտաս Վարդապետի շիրմի առջև կանգնելը և վասն չորս հազար նահատակ հոգևորականների հոգեհանգստյան արարո-

դուք լուծում մատուցելը, հոգևորականներ, որ ապրած կյանքով կենսավորեցին ավետարանական լույս խորհուրդը՝ «Հովին քաջ զանձն իւր դմէ ի վերայ ոչխարաց»: Նրանք ամենուր եղան իրենց հոտի մեջ՝ անապատի դաժան ճանապարհներին և ավերվող քաղաքներում, հրդեհվող եկեղեցիներում, դպրոցներում ու սպանդանոցի վերածված քանտերում: Վաղը մենք ենք լինելու հոգևոր առաջնորդները հայոց ազգի: «Տեր, հիշիր նահատակ հոգևորականներին» քարթառելիս հոգուդ մեջ նաև մեկ այլ աղոթք է արձագանքվում. «Տեր, հիշիր նաև մեզ, որ շարունակողն ենք նրանց սրբազան առաքելության»:

Արարողությունն ուղեկցվում էր «Մանկունքի» արծաթաձայն երգեցողությամբ՝ ներկաների աղոթքն առ Աստված բարձրացնելով «Գ-թա Տեր», «Զահանայք» և հոգևոր այլ երգերի քնածումով:

*ՄԱՄՎԵԼ ՄՐԿ. ԿԻՐԱՆՈՍՅԱՆ  
Արարարյան Հայրապետական թիմ*

## ՍԱՆԿՏ-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅ ԳԱՂԹՈՋԱԽԸ

Սանկտ-Պետերբուրգի հայ գաղթօջախը գրեթե այնքան հին է, որքան՝ քաղաքը: Մեզ հասած տեղեկությունները վկայում են, որ դեռևս 1710 թվականին, քաղաքի հիմնադրումից յոթ տարի անց, այնտեղ արդեն գոյություն են ունեցել «հայկական գործակալություններ», որոնցից հետագայում կազմավորվել է հայկական գաղութը: «Հայերը, - գրել է ռուս գրող և պատմիչ Մ. Գլինկան,- արձագանքելով Պետրոս Մեծի կոչին, ամբողջ ընտանիքներով գաղթել են. բնակություն հաստատել Ռուսիայի սահմաններում... Երբ նրանք ներգաղթեցին Ռուսաստան, Մոսկվայում և Նևայի ափերին սահմանագծվեցին հայկական հողամասեր»: Այսպիսով Պետերբուրգի հայկական գաղթօջախը աստիճանաբար ձևավորվեց:

Դեռևս 18-րդ դարի վերջին Ս.-Պետերբուրգի հայ համայնքի ղեկավար կոմս Հ. Լ. Լազարևի (Լազարյան, և հայտնի այլ անձանց նախաձեռնությամբ ու օժանդակությամբ, զարմանալիորեն շատ կարճ ժամանակահատվածում, այստեղ կառուցվեցին Սուրբ Կատարինեն (1771-1780) և Սուրբ Հարություն (1791-1794) եկեղեցիները: Սուրբ Կատարինեի միազմբեթ եկեղեցին, որին պետերբուրգցիները «երկնագույն մարգարիտ» են անվանում, վաղ եվրոպական կլասիցիզմի օրինակ է: Հպարտորեն երկինք մխրճված այս փառահեղ տաճարը կառուցվել է տաղանդավոր ճարտարապետ Ֆելտենի նախագծով: Եկատերինա Բ կայսրուհին քազմիցս եղել է այստեղ և, նույնիսկ, զոհաբանական աղոթք պատվիրել: Թերևս քչերը գիտեն նաև, որ Սուրբ Կատարինեն գեղասքանչ եկեղեցին համարվում է ողջ եվրոպայի ամենամեծ հայկական եկեղեցին, որը մինչև օրս գործում է: Ս. Կատարինեն եկեղեցու կառուցումից կարճ ժամանակ անց, Վասիլկյան կղզում վեր հանեց Ս. Հարություն եկեղեցին: Վերջինս Հ. Լ. Լազարևը կառուցել է տվել իր վաղամեռիկ որդու՝ Հարությունի (իշխան Գ. Ա. Պետյունկինի համհարզը, գոհվել է ռուս-շվեդական պատերազմում) հիշատակը հավերժացնելու համար: Ռուսական կլասիցիզմի ոճով կառուցված այս եկեղեցին պետք է ծառայեր նաև իբրև դամբարան: Աստծու այս հրաշագեղ տաճարներն օժվել են Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արզուտինսկի-Ռոլզորուկովի (Արղության-Երկայնաբազուկի) կողմից:

Համայնքի կյանքի բնականոն ընթացքն ապահովելու համար, հետագայում կառուցվեցին նաև Ս. Կատարինեն եկեղեցուն կից եկեղեցապատկան շենքերը (Նևսկի 40-42) Վասիլկյան կղզում, Ս. Հարություն եկեղեցու հարևանությամբ՝ հովվատան շենքը, հայկական գերեզմանատունը:

Ցավոք, ժամանակին շատերի հոգացության կենտրոնում գտնվող այս հռչակապ ճարտարապետական կոթողները 20-րդ դարի սկզբներին ձեռքից ձեռք անցան, անուշադրության մատնվեցին: Թալանվեց և անխնամ մնաց

հայկական գերեզմանատունը, որի շիրմաքարերի մակագրությունները վկայում են, որ այնտեղ ամփոփված են այնպիսի նշանավոր մարդկանց՝ անյուններ, ինչպիսիք են՝ իշխան Հակոբ Ֆյոդորովիչ Արզումանյանի-Դուգոյուկովը, Տեր Գաբրիել ավագ քահանա Պատկանյանը, մեծանուն գիտնական Քերովբե Պատկանյանը (գրող Ռափայել Պատկանյանի հարազատներ), գեներալ Ալեքսանդր Ավշարովը, Պետերբուրգում առաջին հայկական տպարանի հիմնադիր Գրիգոր Խալդարյանը, գրող-լեզվաբան Ալեքսանդր Խուղարաշյանը և այլք:



Ս. Գարություն

Ժամանակի և մարդկանց քնահանույթին հանձնվեցին նաև հայկական եկեղեցիները: Դարերի համար կառուցված Աստծու տաճարները փակվեցին և դադարեցին գործելուց, Ս. Կատարինե եկեղեցին օգտագործվեց քաղաքիական պաշտպանության նպատակներով, այնուհետև դարձավ Երաժշտական կոնսերվատիվի թատրոնի արվեստանոցը և պահեստը, իսկ Ս. Հարությունը հանձնվեց քանդակագործ Վ. Պինչուկին՝ դառնալով վերջինիս արվեստանոցը:

Երևի գուր չեն ասում, թե ստեղծելն ավելի հեշտ է, քան պահպանելը, առավել և՛՝ վերականգնելը: Եվ երկու դար առաջ հայ համայնքի ուժերով ստեղծվածը ավերումից փրկվեց ու վերանորոգվեց երկու դար հետո՝ մեծ նախորդների արժանի հետնորդների՝ Ս.-Պետերբուրգի Հայ Եկեղեցու հոգևոր հովիվ Եզրաս արեղա Ներսիսյանի և նորօրյա բարերարների մեծ ջանքերի գնով, 90-ական թվականների սկզբներին վերանորոգվեցին ու բարեզարդվեցին Ս. Հարություն եկեղեցին, հովվատունը, բարեկարգվեց հայկական գերեզմանատունը, ավարտին են մոտենում Ս. Կատարինե եկեղեցու վերանորոգման աշխատանքները: Սակայն այսքանով չի սահմանափակվում Ս.-Պետերբուրգի Հայ Եկեղեցու գործունեությունը, որը շարունակական ընդգրկումությամբ է զարգանում:

1993 թ. իրականացավ դպրոց ունենալու նվիրական երազանքը. Ա. Հարություն եկեղեցուն կից բացվեց կիրակնօրյա հայկական դպրոց. ուր սկսեցին հաճախել յոթից մինչև տասնհինգ տարեկան ավելի քան յոթանասուն աշակերտներ: Երեք տարվա ընթացքում դպրոցը վերածվեց ուսումնական կենտրոնի, և եկեղեցապատկան շենքում (Նևսկի 40-42) իր դռները բացեց Հայ Եկեղեցու Լազարյանների անվան հայկական կրթական կենտրոնը: Այստեղ դասավանդվում են կրոնի պատմություն, հայոց լեզու և հայ գրականություն, հայ ժողովրդի պատմություն և երաժշտություն: Կենտրոնում գործում են նաև մանկական պարի խումբ և «Հայեցի ծայներ» երգչախումբը, որի երգացանկում ընդգրկված են հայկական հոգևոր, ազգային-հայրենասիրական և մանկական երգեր:

Հայեցի դաստիարակության այս կենտրոնը դժվար է պատկերացնել առանց գրադարանի: Այստեղ հավաքվել է ոչ միայն հոգևոր և գեղարվեստական, այլև գիտական գրականություն՝ հայերեն ու ռուսերեն լեզուներով: Գրադարանն ունի ավելի քան չորս հազար գիրք և դեռ շարունակում է հարստանալ հայ համայնքի ուժերով:

Ս. Կատարինե եկեղեցու հարևանությամբ է գործում նաև «Գթա» բարեգործական բժշկական կենտրոնը, որի գործունեության նպատակը քնակչության չունեող խավերին՝ ծերերին, հաշմանդամներին, պատերազմի վետերաններին, բազմազավակ մայրերին և այլոց, պետերբուրգաբնակ հայ բժիշկների կողմից ուժերի ներածին չափով բժշկական օգնություն ցույց տալն է:

Ս.-Պետերբուրգի Հայ Եկեղեցին ԱՊՀ երկրների փախստական երեխաների սոցիալական պաշտպանության և վերականգնողական կենտրոնի հիմնադիրն է նաև: «Ճիժեռնակ» մանկական վերականգնողական կենտրոնն իր բնույթով միակն է ԱՊՀ-ում: Այստեղի բժշկական ծառայություններից օգտվում են տարբեր ազգությունների պատկանող երեքից մինչև տասնհինգ տարեկան երեխաներ:

«Ողորմած եղեք, ինչպես ձեր Հայրն էլ ողորմած է» աստվածաշնչյան



հայտնի իմաստությամբ է առաջնորդվում Ս. Հարություն եկեղեցում կից գործող «Նկամակ» հացի փուռը: Ամեն օր այն թարմ հաց է առաքում երկու մանկատների:

«Ոչ միայն հացի, այլև քանին Աստուծոյ»,- սովորեցնում է Աստվածաշունչը: Հովվատան դահլիճում կազմակերպվում են հանդիպումներ, դասախոսություններ՝ զանազան թեմաներով: Այստեղ գործում է նաև պատկերասրահ, ուր ցուցադրվում են պետերբուրգաբնակ հայ քանդակագործների ու նկարիչների ստեղծագործությունները:

Ս.-Պետերբուրգի հայ համայնքի կյանքի ցկարագիրն ամբողջական չի լինի՝ առանց նրա ամենաերիտասարդ կազմակերպության: Հայ երիտասարդաց միությունը դեռևս մեկ տարեկան է, բայց օր օրի աճում է ու ամրապնդում իր տեղն ու դերը հայ համայնքի կյանքում:

Այս ամենի կողքին «ամենատարեցը», թերև, «Հավատամք» երկելզու թերթն է: Այն սկսել է լույս ընծայվել 1993 թ. փետրվարից՝ Ս.-Պետերբուրգի Հայ Եկեղեցու նախաձեռնությամբ և Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի օրհնությամբ: Ծարունակելով ավանդությունները Ս.-Պետերբուրգի հայտնի այնպիսի պարբերականների, ինչպիսիք են «Հյուսիսափայլը», «Շողերը», «Մանկավարժը» և «Արաքսը», թերթը կոչված է համախմբելու Ռուսաստանի հյուսիսարևել հայերին՝ հաղորդակից դարձնելու նրանց ազգային հոգևոր գանձերին և, իհարկե, ծառայելու հայ և ռուս ժողովուրդների ու Եկեղեցիների համագործակցությանը և բարեկամական կապերի ամրապնդմանը:

Կզդրվի պատմության անիվը... Այս գեղեցիկ ներկան էլ անցյալ կդառնա: Բայց նույնիսկ ժամանակի ամենակարող ձեռքն ի գորտու չի լինի ջնջելու մեր այսօրն ու վաղը կերտողների անունները, քանզի նրանք կատարում են աստվածաշնչյան պատգամը. «Գանձեր մի՛ դիզեք ձեզ համար երկրի վրա... այլ գանձեր դիզե՛ք ձեզ համար երկնքում... քանի որ ուր ձեր գանձերն են, այնտեղ և ձեր սրտերը կը լինեն»:

ԱՆՆԱ ԵՓՐԵՍՅԱՆ



## ԼՈՒՐԵՐ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

28 մարտ 1999 Ծաղկագարդի տունին սարկառագական ձեռնադրություն կատարուեցաւ Գերմանիոյ Զեյլն քաղաքի Ս. Սահակ-Մեսրոպ առաջնորդանիստ Մայր եկեղեցոյ մէջ:

Առաջնորդարանի դպիրներէն Արա Էօզնագոյշեան Սուրբ Պատարագի ընթացքին սարկառագ ձեռնադրուեցաւ ձեռամբ Գերմանիոյ Հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Պեքճեանի, խարտաւիլակութեամբ Զեյլնի հոգևոր հովի արժանապատիւ Տէր Միտռն քահանայ Սարգիսեանի, որ նաև մատուցանեց Սուրբ և անմահ Պատարագ:

Դպրաց բաժնի երգեցողութեան մասնակցեցաւ Զեյլնի «Կամիխաս» քառածայն երգչախումբը՝ ղեկավարութեամբ տիար Արեւ Պեքճեանի:

Պատարագէն յետոյ տրուեցաւ սիրոյ ճաշ, որու ընթացքին քարեշնորհ Արա սարկառագ Էօզնագոյշեան, որ ծանօթ է իբրև խոնարհ և համեստ անձ մը և 1991-ի Առաջնորդարանիս հաստատումէն ի վեր կը ծառայէ Մայր եկեղեցոյ, իր շնորհակալութեան և երախտիքի զգացումը յայտնեց Սրբազան Հօր և ներկայ գտնուող հաւատացեալներու խումբերամ բազմութեան: Վերջաւորութեան Սրբազան Հայրը նորընծայ սարկառագին մաղթեց, որ Աստուած իր մէջ աճեցնէ և բազմացնէ իր ունեցած առաքինութիւնները և ըստ ձեռնադրութեան աղօթքին յոյս յայտնեց, որ Տէրը օր մը արժանացնէ զինք քահանայութեան քարձր կոչման:

Սրբազան Հայրը օրուայ հանդիսութիւնը փակեց՝ ներկաներուն քաշխելով իր հայրական օրհնութիւնները:

23 ապրիլի 1999-ին առաջնորդ Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ ՀՀ Գերմանիոյ դեսպան մեծայարգ տիար Աշոտ Ոսկանեանի և իր գործակիցներուն, Ֆրանքֆուրթի օդանաւակայանը կարճ հանդիպում մը ունեցաւ ՀՀ նախագահ մեծարգոյ տիար Ռոպէր Քոչարեանին հետ, որ ԱՄՆ կը մեկնէր՝ ՆԱՏՕ-ի հիմնադրութեան յիսնամեայ յորելիմական հանդիսութիւններուն մասնակցելու: Այս հանդիպման ընթացքին Սրբազան Հայրը յարգելի նախագահին փոխանցեց թեմի հաւատացեալներուն, ինչպէս նաև թեմական խորհուրդի յարգանքներն ու ողջոյնները՝ անդրադառնալով միևնույն ժամանակ զաղոթի համայնապատկերին:

24 ապրիլի 1999-ին, ինչպէս ամէն տարի, այս տարի ևս Գերմանիոյ Հայոց Առաջնորդութիւնը իր մասնակցութիւնը բերաւ Հայոց Յեղասպանութեան յուշատօնին առթիւ կազմակերպուած տարրեր ձեռնարկներուն:

Առաջնորդ Գարեգին Սրբազան նոյն օրը, առաւօտեան ժամը 10.00-ին, իր հետն ունենալով հոգեշնորհ Տ. Անուշաւան արդ. Ժամկոչեանն ու քարեշնորհ Արմեն սրկ. Հարեյեանը, նախ այցելեց Ասորի համայնքի ներկայացուցիչները, որոնք Զեյլն քաղաքի կեդրոնական հրապարակներէն մէկուն վրայ, վրանի մը մէջ, հացաթուլի մէջն էին շարաթէ մը ի վեր, նոյնիմքն 1915-ի Մեծ եղեռնին զոհուած իրենց նահատակներուն ի յիշատակ: Սրբազանը տեղւոյն վրայ հանգստեան աղօթք մը արտասանելէ ետք, ներկայացուցիչներուն յայտնեց, թէ

ինք և հայ ժողովուրդը շատ զգայուն են այս պատահարներուն առնչութեամբ և կը բաժնեն ասորիներու ցաւը ևս. որ կը յառաջանայ նոյն աղտէն: Սրբազանը յայտնեց, թէ երկու ժողովուրդներն ալ տառապանքի նոյն ճակատագիրը ունեցած են պատմութեան մէջ. երկուքն ալ քրիստոնեայ են. հետևաբար պէտք է երկուքն ալ իրենց ներշնչումը ստանան Ս. Գիրքէն յոյսի և տոկոմութեան: Սրբազանը ապա հրաժեշտ տուաւ ասորի ներկայացուցիչներուն և մեկնեցաւ Պոնն քաղաքը:

Պոննի մէջ Առաջնորդ Սրբազանը շրջապատուած էր հոգևորական դասով. հոգեշնորհ Տ. Անուշաւան արդ. Ժամկոչեան, Տ. Միտոն քին, Սարգիսեան. քարեշնորհ սարկաւազներ Պետրոս Ատրեան և Արմեն Հարեյեան, ինչպէս նաև Ասորի համայնքէն Եաքոյ քահանայ: Սրբազանը յանուն Գերմանիոյ Հայոց թեմի ծաղկեպսակ մը զետեղեց իրեայ համայնքի ցեղասպանութեան յուշարձանին առջև: Ծաղկեպսակներ զետեղեցին յաջորդաբար ՀՀ Գերմանիոյ Դեսպանութիւնն ու Գերմանահայոց Կեդրոնական Խորհուրդը: Յուշարձանին առջև կարճ աղօթքէ մը ետք, ներկաները հաւաքուեցան մօտակայ Միմսթըր եկեղեցին, ուր տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն:

Արարողութենէն ետք նախ խօսք առաւ մեծայարգ դեսպան Աշոտ Ոսկանեան հայերէնով, ապա առաջնորդ Գարեգին արքեպս. Պեքճեան՝ գերմաներէն լեզուով: Ան հակիրճ ձևով անդրադարձաւ Եղեռնի հետևանքներուն, որոնք չեն դարմանուած մինչև այսօր, յայտնեց նաև իր յուզումը Զոզովայի մէջ գոհուածներուն, ինչպէս նաև ասորի և քիւրտ նահատակներուն:

Առաջնորդ Սրբազանը նոյն օրը, կէսօրէ ետք, ներկայ գտնուեցաւ Զեօլնի Մայր եկեղեցւոյ մէջ մատուցուած Ս. Պատարագին և նախագահեց հոգեհանգստեան պաշտօնին: Ս. Պատարագը մատուցանեց հոգեշնորհ Տ. Անուշաւան արդ. Ժամկոչեան:

Եկեղեցւոյ վարչութիւնը, ներկաներուն աւանդական հրուշակ հրամցնելէ ետք, համայնքի երիտասարդական յանձնախումբը ի գործ դրաւ յայտագիր մը, որ մեծ քծախնդրութեամբ պատրաստուած էր: Յայտագրին մասնակցեցաւ «Կոմիտաս» երգչախումբը թէ՛ Պատարագի երգեցողութեամբ և թէ՛ տարբեր երգերով՝ Արեւ Պեքճեանի զլխատրութեամբ:

Իսկ համայնքի սրահին մէջ ցուցադրուեցան նաև Եղեռնը ներկայացնող նկարներ և պատմութեան վերաբերեալ հատուածներ, որ զեղեցիկ շրջանակներու մէջ պատրաստած էր երիտասարդաց յանձնախումբէն Իլիաս Ույար:

Հանդիսութեան փակումը կատարեց Սրբազան Հայրը՝ օրհնելով ներկաներն ու կատարուած աշխատանքը:

**ԴԻՄԸ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ**

## 1700-ամյակին ընդառաջ

### ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ ԾԱՎ ԳԵՏՈՒՄ

Սյունիք: Սյունեցիների համար հայրենիքն այստեղից է սկսում՝ այս լեռ ու ձորից, այս մանուկատ ու քարակոփ ժայռերից, որոնք թե՛ անցյալում և թե՛ այսօր անխտցելի վահան են դարձել թշնամու դավադիր զնդակներին և պահել ու պահպանել իրենց ապավինած հայրենասեր այս լեռնակամների ոգին ու կորովը... Ճանապարհի երկայնքով ձգվող ժայռերից երաշքով կախված ծաղկած ծառերն ու փունջ-փունջ բացված ծաղիկները հավաստում են, որ այստեղ խաղաղ ու արարող մի գարուն է բացվել:

Այս ու բազում այլ խոհեր էին պաշարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայաստանի հարավային սահմանամերձ գյուղերը սրբազան առաքելությամբ մեկնող պատվիրակությունը գլխավորող Սրբազան Հորը՝ Հայաստանում Քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի եկեղեցական հանձնաժողովի վարիչ-քարտուղար Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճյանին:

Պատվիրակությանը և Սրբազան Հորը սահմանամերձ Դից Մայրի (աստվածների ամտառ) գյուղում պետք է միանային Սյունյաց ու Արցախի թեմերի հոգևոր հայրերը՝ այնտեղ կատարելու համար աննախադեպ մի մկրտություն, որի ընթացքում Ծավ գետում մկրտվելու էին հազարից ավելի երեխաներ ու չափահասներ: Իսկ աստվածահաճո այս գործի հովանավորներն էին 1700-ամյակի գրասենյակը և Սյունյաց ու Արցախի թեմերը:

Սահմանամերձ շատ գյուղերից և մերձակա շրջաններից այնտեղ էր շարժվում մարդկանց բազմությունը՝ ուրախության ու ցնծության ազդակներով: Այսօր նրանց կյանքում նշանավոր օր է: Հայ Եկեղեցու սրբազան ծիսակարգով, քրիստոնեական հնավանդ ու ավանդական սովորույթով նրանցից շատերը մկրտվելու են գետում: Նրանք այսօր ազնվանալու են սրբազան Մյուռոնով, որդեգիրն են դառնալու Ամենագոր Աստծու: Բոլորն են խանդավառ և ուրախ: Սրբազանը լուռ է և հուզված: Ի՞նչ խոհեր են պաշարել նրան... Արդյո՞ք եիշել է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Հորդանան գետում մկրտվելու մասին պատմող աստվածաշնչյան պատմությունը, թե հայոց քրիստոնեական դարձի արշալույսը, որն այսօր 1700-ամյա քրիստոնյա Հայաստանում կրկին պետք է բացվի շենշող ու արևոտ... Իսկ արևոտ այդ արշալույսը տարիներ շարունակ իրեն պարտադրված պայմաններից ձերբազատված ու անկախացած հայ մարդու՝ դեպի սրբազան հավատի ակունքները վերադարձնելու է խորհրդանշում: Սրբազանի հայացքի առջև վերհասնում է պատմական Դիցավանդը, ուր հայոց դարձի եկած Տրդատ արքան իր շքախմբով դիմավորեց Կեսարիայում եպիսկոպոս ձեռնադրված Գրիգոր Լուսավորչին: Այստեղ էր, Արածանի գետի ափին, ուր ապաշխարելուց հետո մեր հավատի հոր ձեռքով մկրտվեցին Տրդատ թագավորը, Աշխեն թագուհին, Խոսրովիդուխտ արքայաքույրը և քյուրավոր ուրիշներ:

Ահա երևում է Ծավ գետի եզերքին փոված բացատը: Այստեղ արդեն սկսվել է ժողովրդական ինքնատիպ մի տոնախմբություն: Զիչ անց սկսվում է մկրտության արարողությունը՝ Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճյանի և Սյունյաց

թեմի առաջնորդ Տ. Արքահամ Եպիսկոպոս Սկրտչյանի նախագահությամբ: Հոգևոր դասի ուղեկցությամբ դեպի Ծավ գետն են շարժվում մկրտվողները: Այստեղ նրանց մկրտում, դրամշում և հաղորդություն են տալիս Սրբազան Հայրերն ու նրանց միաբանակից եղբայրները՝ Աթանաս և Վրթանես վարդապետները, Ներսես, Աշոտ, Տրդատ արեղաները, Սահակ, Պարթև, Ջորայր քահանաները: Նրանց էր միացել նաև Մեծի Տանն Կիլիկիա հայոց կաթողիկոսության միաբան Վարազ արեղան: Այս արարողությանն իրենց մասնակցությունն ու աջակցությունն էին բերել նաև Երևանի Պետական Համալսարանի Աստվածաբանական ֆակուլտետի ուսանողները, Դից Մայրիի գյուղական համայնքը: Մեսրոպ Սրբազանը հայրական գործավազուք սիրով մտովի գրկում է բոլորին, նոր մկրտվածներին, որոնց վրա իջել էր Սուրբ Հոգին: Ավետարանական հիշատակությունն ակամա հայտնվում է նրա մտապատկերում. «Եվ երբ Հիսուս մկրտվեց, իսկույն ջրից դուրս եկավ, և ահա երկինքը բացվեց նրան. և նա տեսավ Աստծու Հոգին, որ իջնում էր ինչպես աղավթի և գալիս էր իր վրա» (Մատթեոս Գ 16):

Բազմության մեջ առանձնանում էին նոր մկրտվածները: Նրանք մկրտության առիթով 1700-ամյակի խորհրդանիշով հագուստներ ու խաչեր էին ստացել: Իսկ դրանք հնարավոր եղավ ձեռք բերել շնորհիվ մկրտության արարողության հովանավորների՝ 1700-ամյակի գրասենյակի, Կոնադայի հայոց թեմի Առաջնորդ Հովման Արքեպիսկոպոս Տերտերյանի, մկրտության կնքամոր՝ ամերիկահայ տիկին Պայծառ Կարապետյանի, ում ներկայացնում էին Վարսենիկ Սկրտչյանն ու Հիլդա Քարոլանյանը, ամերիկահայեր տեղ և տիկին Վազգեն Մարգարյանի և Երվանդ Չուլջյանի, «Ագապե» քարեգործական կազմակերպության, Քաջարանի մոլորեղենի արտադրության գործարար ղեկավարության:

Սկրտվող մանուկների կնքահայրերը դարձան Սյունիքի մարզպետ Ռոման Նավասարդյանը, ինչպես նաև Քաշաթաղի շրջանի ղեկավար Ալեքսան Հակոբյանը, Գագիկ Գևորգյանը, Նարեկ Աբրահամյանը, դոկտոր Մելս Պետրոսյանը, Տիգրան Սիմոնյանը:

Աբարողությանը ներկա էին նաև պետական այրեր՝ ՀՀ տարածքային կառավարման նախարար Դավիթ Ջադոյանը, նախագահի խորհրդական Վահան Հովհաննիսյանը, Հայաստանի և Սփյուռքի ճանաչված դեմքեր:

Հավաքական մկրտությունը Ծավ գետում եզրափակվեց ժողովրդական տոնախմբությամբ: Մորթվեցին մատաղացու գառները, բացվեցին սեղանները: Դից Մայրիի և շրջակա վան, Մուշ, Ալաշկերտ և հայոց ցմիրական քնակատեղիների անուններով վերանվանված այլ գյուղերի քնակիչները սրտաբաց հյուրասիրությամբ պատվեցին արարողության բոլոր մասնակիցներին:

Վերադարձի ճանապարհն սկսվեց Դից Մայրիից, որից արդեն շատ հեռու դեռ լսվում էր երգի ու նվագի ձայնը: Հիսուսի Հրաշափառ Հարության օրվա նախաշեմին նոր կյանքով կապրեն հազարից ավելի նոր մկրտված հայ մանուկներ ու չափահասներ: Վերադարձի ճանապարհին Սրբազանի շուրթերին աղոթքն է՝ «Տեղ Ամենագոր ու Ամենակարող, պաեիր ու պանպանիր մեր ժողովրդին, քո նոր ուղեգիրներին»:

## ԿԱՐՈՏԻ ԿԱՆՉ

Հայոց հիմնավորոց հողում, Տարոն գավառում, Քարքե լեռան լանջին, գողտրիկ մի վանք կար, համաժողովրդական մի ուխտատեղի: Այն Մշո Սուրբ Կարապետն էր, որ հիմնել էր մեր հավատի հայրը՝ Ս. Գրիգոր Լուսավորիչը՝ այնտեղ ամփոփելով Ս. Կարապետի և Աթանազիենտ Հայրապետի նշխարները: Վանքը մահ Գլակա է կոչվել՝ ի պատիվ իր առաջին վանահոր՝ Ջենոբ Գլակի, և Իննակնյան, որովհետև կառուցվել էր ինը աղբյուրների մոտ:

Ամեն առավոտ, բարի լույսի հետ, մշեցի հայերն իրենց հայացքն ուղղել են վանքին՝ «մուրագատու սրբին»: Նրանցից յուրաքանչյուրն իր ռուներ՝ խորունկ անթեղած հոգում, և աղոթում էր Աստծուն՝ ակնկալելով դրա իրականացումը: Մեկի համար այն լուսե երագ էր, մյուսների համար՝ ապաքինման հույս, սիրո, երջանկության սպասում... Իսկ ուխտի օրերին, հատկապես Վարդավառի և Աստվածածնի վերափոխման տոներին, այստեղ էին գալիս բազմաթիվ ուխտավորներ տարբեր բնակավայրերից, և սկսվում էր ժողովրդական բացառիկ մի տոնախմբություն, որի ընթացքում թևածում էր երգը, հողը թնդում էր պարերից, երկինք էր վերառաքվում աղոթքը...

Մուշն ապրում էր այս երգերում այնպես, ինչպես կար՝ իր հերոսական ժողովրդով, նրա խենթ երագներով, անսպառ հայրենասիրությամբ: Այսօր, ավա՜ղ, հայոց նվիրական ուխտատեղին ավեր է ու կործան: Իսկ նրան ձոնված ուխտի երգերում կարոտի չնարող կանչ կա, որը ձգվում է դեպի աշխարհի ամեն մի անկյուն, ուր գոնե մի հայ կա... Կարոտի այդ կանչն էր Ազգային օպերայի և բալետի պետական թատրոնի դահլիճում մեկտեղել բոլոր այն մարդկանց, ում համար թանկ է Մշո Սուրբ Կարապետ վանքի խորհուրդն ու հիշատակը:

Եվ պատահական չէր, որ թատրոնի բեմում կյանքի կոչված «Ուխտագնացություն Մշո Սուրբ Կարապետ» թատերականացված ներկայացման հովանավորն էր Հայաստանում Զրիստոնեությունը պետական կրոն հռչակաման 1700-ամյակի գրասենյակը, որին աջակցել էին Նյու Ջերսիում ապրող մեր հայրենակիցները՝ Տեր և Տիկին Հակոբ և Իգա Գույումճյանները:

«Մենք պարտավոր ենք առավել ևս այսօր՝ մեր քրիստոնեական դարձի 1700-ամյակի նախաշեմին, ոչ միայն ոգեկոչելու հիշատակը մեր ավերված սրբավայրերի, այլ նաև մտածելու դրանք վերականգնելու և վերաշինելու մասին: Այդ առումով մենք պարտ ենք մեր հայացքն ուղղելու մահ Մշո Սուրբ Կարապետին՝ հայ գրչության, մշակույթի պատմական կենտրոններից մեկին, հայոց հավատի սրբազան ուխտավայրին: Սուրբ Կարապետը մեր կորցրած երագն է, մահ մեր ապավենը, որի մեզ վերադառնալու հույսը երբեք չպետք է լքենք»,-ասում է 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար Մեսրոպ արքեպս. Աշճյանը:

Ժողովրդական տոնիկ երգի ու պարի «Ակունք» /գեղ. ղեկավար՝ Հ. Փանոսյան/, «Ամողք» /գեղ. ղեկավար՝ Ս. Հովհաննիսյան/, «Մասուն» /գեղ. ղեկավար՝ Ա. Մանուկյան/, «Կարոտ» /գեղ. ղեկավար՝ Թ. Սիմոնյան/, «Մարաթուկ» /գեղ. ղեկավար՝ Ա. Սահակյան/, Մայաթ-Նովայի անվան գուսանական երգի համույթ /գեղ. ղեկավար՝ Թ. Պողոսյան/, «Մերաստիա»

/զեղ. ղեկավար՝ Վ. Խանամիրյան/, «Ուրարտու» /զեղ. ղեկավար՝ Ս. Գալստյան/, «Օշական» /զեղ. ղեկավար՝ Ա. Մանուկյան/ խմբերը, ժողովրդական արտիստ Վանուշ Խանամիրյանի ղեկավարությամբ, ներկայացրին Մշո Սուրբ Կարապետի պատմական ուխտագնացությունները, երգվեցին Մշո զոդոտրիկ երգեր, բեմականացվեցին պարեր, կենցաղային բնորոշ տեսարաններ:

Ազգագրական ինքնատիպ այս տոնախմբություն-հանդիսության սկիզբն ազդարարեց մինչքրիեղեղյան և հետքրիեղեղյան տեսարանների բեմականացմամբ, տաճարի կառուցմամբ: Այնուհետև ներկայացվեց Ջրիստոսի Պայծառակերպության տեսարանը, սկսվեց եկեղեցու կառուցումը, և հնչեց «Սբ. Կարապետ» գովքաշարը:

Տոնախմբության հայտագրում բացառիկ տեղ էր հատկացվել Սուրբ Կարապետի ուխտագնացության ընթացքում ավանդաբար կազմակերպված սիրված խաղերին՝ լարախաղին ու ըմբշամարտին, իսկ հաղթողների պարգևատրումը նույնպես կատարվեց հատուկ արարողությամբ՝ հարազատ ժողովրդական ավանդությամբ:

Այս նվիրական ուխտատեղին դարեր շարունակ հայոց գործի պահպանում է համարվել. և ժողովուրդն ապավինել է նրան, աղոթքով դիմել պատերազմից առաջ, հաղթանակները վերագրել նրա գործությանը, իսկ ուխտի երգերում ոգեկոչել է հայրենյաց հերոսների հիշատակը: Հայրենիքի համար նահատակվածներին է ձոնված «Դառնամ զօդորմի տամ...» երգը, որի կատարումը հուզեց բոլորին:

Բեմի վրա Մշո Սբ. Կարապետի մանրակերտն էր: Ներկայացվում էր Մշո Սուրբ Կարապետի միժագույն ուխտը, որը կատարվում էր Վարդավառի օրը: Այդ գիշեր բոլոր սրբերի ու նահատակների վրա լույս էր իջնում, և ով տեսնում էր այդ լույսը, կատարվում էր նրա «մուրազը»: Այդ օրը հնչում էին հերոսական երգեր, կատարվում էին ռազմի պարեր, մոթփում էին մատաղներ: Այս ամենը հնարավորություն ունեցան տեսնելու շատերը՝ այդ յուրօրինակ հանդիսության օրը:

Այդ օրը Մուշն իր ծեսերով, երգ ու պարով, իսկ Սուրբ Կարապետի վանքը՝ իր սրբազան ուխտով, ներկայացվում էր հանդիսատեսին, ներկայացվում էր բացառիկ գեղեցկությամբ ու հմայքով: Տոնախմբության ոչ մի հատվածը ինքնանպատակ հնչեղություն չուներ, ամեն ինչ այստեղ խորհուրդ ու իմաստ ունեին՝ և՛ երգը, և՛ պարը, և՛ խաղը, և՛ ծեսը, և՛ ծիսական ճաշը...

Մի դեպքում դրանց խորհուրդը սերն էր, հայրենասիրությունը, մի այլ դեպքում՝ պտղաբերության գործությունը, ընտանիքի՝ իբրև սրբության գովաբանումը: Տոնախմբություն-հանդիսությունն ավարտվեց մրցույթների հաղթողների օրհնությամբ: Հնչեցին հաղթական երգեր: Դահլիճը թնդաց պարերից, որոնք կորցրած հայրենիքի կարոտ-բողոքի խորհրդանիշն էին: Իսկ ուխտավորների աղոթքի միմուսները դարձան կարոտի չմարող կանչ, որպեսզի արթուն պահեն սերունդների հիշողությունը:

## ՈՒՆՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԵՐՈՒՍԱԳԼԵՍ

Ապրիլ 7-14-ի օրերը Հայ Երուսաղեմի համար եղան խանդավառ ու ոգեշնչող օրեր: 1967 թուականին ասդին քաղաքական իրադրությանց հետևանօք՝ խմբային ուխտագնացութեանց այիքը դէպի Հայ Երուսաղեմ հանգած էր: Հին օրերու փառքին կարօա երուսաղեմացիք գրեթէ քառասուն տարի յետոյ կարծէք նորակնունք կը դառնային հայ ուխտատորներու աղօթքի ներկայութեամբ՝ Հայ Երուսաղեմ ուխտի այցելութեամբ: Սրբոց Յակոբեանց Մայրավանքը անօրինակ ուրախութեամբ կը լեցուէր Ամենիկայէն, Գանատայէն, Ֆրանսայէն և աշխարհի տարբեր շրջաններէն Երուսաղեմ ժամանած հայ ուխտատորներու մոմավառութեամբ: Աղօթաիրաւէր Սրբոց Յակոբեանց վանքը ուխտատորաց համար կը դառնար հաւատքի կենսատրման աղբիւր: Հոգեպարար ու սրբազան արարողութեանց ճոխութեան մէջ կը վերամկրտուէր հայու հոգին: Անբացատրելին կը թթխմորուէր բոլորիս հաւատքի կեանքին մէջ: Անտեսանելին Աստուած՝ մեր քայլերը կ'առաջնորդէր մեր հարց հաւատքի կեանքին հետ հաղորդակցութեան: Հնաբոյր, բայց ոչ հնացեալ Սրբոց Յակոբեանց վանքի պատերուն մէջէն նոր ծայն մը կը լսուէր, որուն մէջ ուժականացած՝ նոր տեսիլքով մը կը լեցուէր բոլորիս հոգևոր կեանքը: Դէպի Նոր Երուսաղեմ: Մեր կեանքին մէջ կը թթխմորուէր Երուսաղեմը, կը դառնար Նոր Երուսաղեմ ու կը նորոգէր մեր մէջ հին մարդը:

Հինգշաբթի, 8 Ապրիլին, Ընթրեաց Ս. Պատարագով կը կլանուինք սրբազան արարողութեանց հոգևոր հոսանքին ալիքներուն մէջ: Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ արևի լոյսին փոխարէն Քրիստոսի Փառքը կ'իշխէր: Կանթեղներու աղօտ լոյսերուն մէջ աւելի խօսուն ու ճառագայթող պատգամի կը վերածուէին Առաքելոց կեանքն ու սարտիրոսութիւնը: Սուրբ Պատարագի մէջ ամէն վայրկեան կը զգայինք առատահոս էջքը աստուածային շնորհաց, որուն մէջ կ'ապրէինք «առաւել կեանք»՝ Քրիստոսով տրուած: Սուրբ Պատարագի խորհուրդին հաստատումն էր, արդարև, որուն մէջէն հաւատացեալին հետ միութիւն մը կը հաստատուէին մեր հայրերը: Տաճարի պատերէն ներթափանցելով աշխարհի լոյսը կը վերածուէր հոգևոր կեանք տարածող լոյսի մը: Քրիստոս կը պատարագուէր և նոյն Պատարագին կը հրաւիրէր զմեզ բոլորս: Քիչ յետոյ աշխարհի առջև կը խոնարհուէր Աստուածորդին ու մէկ առ մէկ կը լուար իր առաքեալներու աղտոտած ոտքերը և պատուէր կուտար բոլորիս՝ կեանքն ապրելու խոնարհութեամբ: Այս պատկերը կը ներկայացուէր արարողական կեանքի այնքան ճոխութեամբ ու վեհութեամբ, որ չէինք կրնար չագգուիլ ու չյուզուիլ: Ուխտատոր դառնալու գիտակցութիւնը կը գործէր երկու իմաստով: Գիտակցաբար մեր քայլերը առաջնորդած էինք Սուրբ Տեղերը, բայց կը զգայինք, որ Սուրբ Տեղեաց մէջ կ'արձագանքէր ծայն մը, որու թրթռացումը կը դառնար մեր էութեան ապրումը: Սա այն պահն էր, երբ մեր մէջ կը ներգործէր հաւատքի կեանքին նորոգութիւնը՝

նոր ուխտ մը կը հաստատէինք Աստուծոյ հետ, ու ծառայութեան նոր դաշինք կը կնքուէր մեր աղօթքի տան հետ: Ասագ Հինգշաբթի, ամբողջ օրը, կլանուած եկեղեցական արարողութիւններով, Զրիստոսով հարստացած, մեր մէջ կը գտնէինք չմարմնատրուած երագանցներ, որոնք սակայն, որպէս արիւնը մեր հաւատքին. դեռ չէին մեռած մեր հոգևոր կեանքի երակներու մէջ:

Զրիստոս՝ Նոր արշալոյսը աշխարհի կեանքին մէջ: Անոր քալած ճամբան կը դառնար խաչի ճանապարհ ու այլ խօսքով՝ կեանքի ճանապարհ, բոլոր անոնց համար, որոնք հետևեցան ու պիտի հետևէին Անոր պատարագուած կեանքի օրինակին: Արարողութեանց մէջ սուգուող աղօթքի մեր կեանքը կը նմանէր ջուրերուն վրայէն զացող այն նաւուն, որը երբեմն խաղաղ ու երբեմն փոթորկուտ ջուրերու մէջէն կանցնէր: Շաբաթ, 10 Ապրիլին, լոյսի պատմական արարողութեան ընթացքին կ'ապրենք մեր կեանքի ամենէն դառն փորձառութիւններէն մէկը: Սուրբ Յարութեան Տաճարին մէջ հաւաքուած խելագարած ամբոխը իր ներկայութիւնը կը վերածէր աշխարհի մարդկութեան կեանքի հայելիին: Անբացատրելի վիճակի մը մէջ խառն ապրումներ ու զգացումներ գրեթէ կը ցնցէին բոլոր հոգևոր կեանքին անդորրը: Այդ պահուն ներկայ ժողովուրդը իր վերայ կը վերցնէր կարծէք գԶրիստոս խաչին վրայ բարձրացնելու պարտականութիւնը, մինչև որ Գերեզմանի լոյսով նոր կերպարանք կը հագնէր տաճարին մէջ խոնուած բազմութիւնը: Լոյսերու հեղեղ, խունկերու անուշաեռտ բուրմունքով գինովցած, զանգակներու ղողանցներով աւետուած Զրիստոսի Հրաշափառ Յարութիւնը կը տեսնէինք մեր հաւատքի աչքերով: Հոգիները կը լեցուէին: Ինչո՞վ և ինչպէ՞ս կը լեցուէին: Բացատրելի ու նկարագրելը կարելի չէ: Պետք է ըլլալ այնտեղ ու ապրիլ ամէն ինչ: Միայն թէ լուս հաղորդութեամբ: Զրիստոսի Յարութեան լոյսին խորհուրդով կը կերպարանափոխուէր ամբոխը: Ամբոխը կը վերածուէր եկեղեցիի ու եկեղեցին կազմող հաւատացեալներու հաւատքին սլաքը կը կենտրոնանար Աստուծոյ և իր միջև հաստատուող ուխտին վրայ:

Սուրբ Յարութեան լոյսի արարողութենէն յետոյ կենսախիճը բնութեան գիրկին մէջ հայ սկառուտներու երգին ու ձայնին մէջ նոր արձագանքը կը դառնար Զրիստոսի Յարութիւնը: Սուրբ Յարութեան Տաճարէն մինչև Սրբոց Յակոբեանց վանք սկառուտները մեզ կ'առաջնորդեն խանդավառութեան աւետարներ տրամադրութեամբ: Երուսաղէմ Սուրբ քաղաքի նեղլիկ փողոցներուն մէջէն քայլող ամբոխին հետ կը քալէր Զրիստոս, որուն խօսքը մեր հոգիներուն մէջ կը թրծուէր. «Ես եկի զի առաւել կեանս ունիցիք»:

Նոյն օրը, երեկոյեան, ճրագալոյցի Սուրբ Յարութեան Պատարագ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Ուխտատր հաւատացեալները յափշտակութեամբ լոյսին կ'երթային: Լոյսին մէջ կը ծնէր նոր կեանքը: «Տէր, ողորմես»-ի շարականը կը յայտարարէր Յիսուսի Յարութիւնը: ճրագալոյցի Սուրբ Հաղորդութիւնը կը դառնար լոյսը մեր հոգիին: Ձատիկը կ'իջնէր հայու կեանքին մէջ: Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կը հոգեկերտուէր նոր մարդը, հայ քրիստոնէան՝ վաղուան Եկեղեցին դառնալու տեսիլքով ու լոյսերով:



Կիրակի, 11 Ապրիլին, Հայ Երուսաղէմը կ'ապրէր աննախընթաց Ձատիկ մը: Սուրբ Յարութեան տօնը ներքափանցած էր ամէն հայ տունէ ներս: Սրբազան Պատարագի արարողութենէն յետոյ Սրբոց Յակոբեանց Մայրավանքի բակին մէջ տեղի կ'ունենար ամանդական անդաստանի արարողութիւնը՝ նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր՝ Նորին Ամենապատուութիւն Տ. Թորոս Արքեպիսկոպոսի, իր շուրջը ունենալով քարձրաստիճան հոգևորականներ, վարդապետներ և հաւատացեալ ամբոխը: Անդաստանի արարողութեան ատարտին Պատրիարք Սրբազան Հայրը պաշտօնապէս կ'ընդունի ուխտատու հաւատացեալները Պատրիարքարանի Մայր Դահլիճին մէջ: Իր խօսքին մէջ Պատրիարք Սրբազանը սիրով կ'ողջունէ անոնց ուխտի այցը Հայ Երուսաղէմ և ապա լայնօրէն կ'անդրադառնայ Հայ Երուսաղէմի առաքելութեան: Ուխտատուներու համար այս սրբազան պահը ոգեշնչող էր. հոգևոր նոր կապ մը կը ստեղծուէր Հայ Երուսաղէմի ու արտասահման ապրող մեր ժողովուրդի զաւակներուն միջև: Խանդավառութեան շափը հետզհետէ կ'ուճանար և իր գագաթնակետին կը հասներ Երկուշաբթի, 12 Ապրիլին, երբ Սրբոց Յակոբեանց Մայրավանքին մէջ Սրբազան Պատարագ կը մատուցէր Ամենապատիւ Պատրիարքը: Յընթացս Սուրբ Պատարագի արտասահման իր խօսքին մէջ ան պատգամ կը յղէր ուխտատուներուն՝ իրենց հետ տանելու համար դէպի Երուսաղէմ ուխտի զալու փափաքը, որպէսզի յարատև հոգևոր կապ մը ստեղծուէր դարատու հայ վանքին ու հայ ուխտատու հաւատացեալին միջև: Այս բոլորի կը յաջորդէր Չորեքշաբթի, 14 Ապրիլին, Ալեք և Մարի Մանուկեան դպրեվանքի սրահին մէջ կազմակերպուած գեղարուեստական ծրագիրը, կազմակերպութեամբ դպրեվանքի սաներուն ու երուսաղէմահայ արուեստագէտներու: Ինչքան ոգևորող էր երեկոն, ուխտատու հաւատացեալներու հոգիները հարստացած էին արդէն: Բոլորիս մէջ նոր խորհուրդ կը դառնային հայրենիքն ու Սուրբ Էջմիածինը: Մայր Հայրենիքն ու Սուրբ Էջմիածինը արձագանք կը դառնային Հայ Երուսաղէմի սրբատեղեաց մէջ: Հոգիները վերամկրտուած էին: Աստուածապարզ մեր կեանքը իմաստատրելու կոչումը առաւել շեշտով մը կը զգայինք մեր մէջ: Հաւատքի այս գիտակցութեամբ մեր քայլերը կ'առաջնորդէինք մեր հայրերու հաւատքի կեանքին աղբիւր՝ Սրբութիւն Սրբոց Սուրբ Էջմիածին, անդ քրծելու համար մեր հոգիներուն մէջ խմորուած հաւատքի նոր կեանքը և հասկնալու Գարեգին Վեհափառի պատգամը՝ թէ 1700-ամեակը պէտք է դարձնենք նոր հոգեգալուստը քրիստոնէական մեր հաւատքի կեանքին մէջ:

**ՅՈՎՆԱՆ ԱՐԷՊԵՏԿՈՊՈՍ ՏԵՐՏԷՐԵԱՆ**

16 Ապրիլ 1999 թ.

## ՈՒՆՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ ԳԵՊԻ ՕՉՈՒՆ

### «Ուխտս դիր եւ կատարեցէք»

Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարության շրջանակում կարևորագույն դեր ունեն ուխտագնացությունները: Ուխտագնացությունը յուրաքանչյուր քրիստոնյայի հարգանքի ու խոնարհության մատուցումն է պատմական այն դեմքերի նկատմամբ, ովքեր իրենց ապրած ու գործած ժամանակահատվածում «գրարուք պատերազմն պատերազմեցին»: Հայ Եկեղեցու պատմության մեջ այսպիսի դեմքերից է Ս. Հովհան Օձնեցիին՝ Ը դարի մեր նշանավոր Հայրապետը, ով հայ ժողովրդի կյանքում բացառիկ դեր է ունեցել արաբա-բյուզանդական հակամարտությունների շրջանում:

Երանաշնորհ Հայրապետի էիշատակին հարգանքի տուրք մատուցելու և նրանով նորոգվելու համար էր, որ ապրիլի 17-ին բազմաթիվ ուխտավորներ էին հավաքվել Գուգարաց թեմում:

Թեմի բարեջան առաջնորդ Ս. Սեպուհ եպս. Չուլջանի և Լոռիի մարզպետարանի նախաձեռնությամբ դեպի Օձուն կազմակերպված ուխտագնացությանը մասնակցելու էին եկել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարձրաստիճան հոգևորականներ, Մայր Աթոռի ղիվանապետ Ս. Ներսես արքեպս. Պոգոսյանը, Երևանի Պետական Համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Ս. Շահե արքեպս. Աճեմյանը, Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար Ս. Մեսրոպ արքեպս. Աշճյանը, Արցախի թեմի առաջնորդ Ս. Պարզն եպս. Մարտիրոսյանը, Արագածոտնի թեմի առաջնորդ Ս. Նավասարդ եպս. Կճոյանը, Ս. Եփրեմ արքեպս. Թապազյանը (Լիբանան), Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Փառեն ծ. վրդ. Ավետիքյանը :

### *Պատարագ Օչունի Ս. Հովհաննես եկեղեցում*

Վաղ առավոտյան ուխտավորների բազմությունը Վանաձորի առաջնորդանիստ Ս. Աստվածածին եկեղեցուց շարժվեց դեպի Օձուն: Այս նշանավոր գյուղը, ուր ծնվել էր իմաստասեր Հայրապետը, գտնվում էր աշխույժ եռուզեռի մեջ: Օձունցիները շտապով գնում էին դեպի եկեղեցի, որը, շուրջ 1600-ամյա մի կառույց, սքանչելի մի ներդաշնակություն էր ստեղծում վանքի շրջափակի կանաչագարդ տարածքի հետ և իր գմբեթավոր սլացքով կարծես մխրճվում էր երկնքի մեջ:

